

ԱՍՏՈՒԱ՛Ր, Ո՞ՒՐ ԵՍ

ԳՏԻՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՆՊԱՏԱԿ ԶՈՒ
ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ



ՃՈՆ ՊԻԿԻՐ

Թանկագին Ընկեր,

Երբ մենք կը բախիք դժուարին փորձութիւններու եւ մարտահրաւերներու, դիւրին է մոռնալ Աստուծոյ խոստումներուն մասին: Ես գրած եմ այս գիրքը ձեզ խրախուսելու համար. ամէն մէկ փուլ մեր կեանքին մէջ ունի նպատակ, Նոյնիսկ՝ անապատը:

Անապատային փուլերուն մէջ է, որ Աստուած կը փափկեցնէ մեր սիրտը եւ կը ձեւաւորէ մեր բնաւորութիւնը՝ պատրաստելով մեզ այն մեծ ծրագիրներուն, որոնք Ան որոշած է մեզի համար: Թերեւս թուայ, թէ Աստուած լուռ է, եւ Անոր ներկայութիւնը հեռու է ձեզմէ, սակայն Աստուած չէ ձգած ձեզ. Ան աշխատանք կը կատարէ ձեր մէջ: Կարդալով այս գիրքը՝ պիտի տեսնէք, որ յառաջխաղացումը կու գայ այն ժամանակ, երբ դուք բարեյաջող կ'անցնիք ձեր անապատը:

Այս գիրքը նուէր է ձեզի: Ազատօրէն բաժնեկցեցէ՛ք այս նիւթով այլ հաւատացեալներու հետ, որոնց անհրաժեշտ է այս խրախուսական ուղերձը: Նոյնպէս, այցելեցէ՛ք CloudLibrary.org կայքը՝ ներբեռնելու եւ ուսումնասիրելու համար բազմաթիւ այլ կեանք փոխող նիւթեր ձեր լեզուով:

Կ'աղօթեմ, որ դուք անցնիք ձեր անապատային ընթացքը եւ ստանաք Անոր զօրութեան եւ իշխանութեան ակտի մեծ չափ, լեցուցէ՛ք զթասրտութեամբ եւ ակտի լաւ ճանչցէք Անոր ձայնը: Կ'աղօթեմ, որ ինչպէս ոսկին կը մաքրուի կրակին մէջ, այնպէս ալ ձեր անապատային ընթացքը մաքուր ոսկիի պէս դարձնէ ձեզ:

Մշտապէս յիշեցէ՛ք Անոր խոստումները եւ գացէ՛ք մինչեւ վերջ:

Եղէ՛ք օրհնուած:

Ճոն



Ճոն Պիվի
JohnBevere@gmail.com



ԱՍՏՈՒԱ՛Ճ, Ո՞ՒՐ ԵՍ

ԳՏԻՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՆՊԱՏԱԿ ԶՈՒ
ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

ԱՍՏՈՒԱ՛ճ, Ո՞ՒՐ ԵՍ

ԳՏԻՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՆՊԱՏԱԿ ԶՈՒ
ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ



ՃՈՆ ՊԻՎԻՐ

God Where Are You? by John Bevere, Western Armenian

© 2019 Messenger International

www.MessengerInternational.org

Originally published in English as God Where Are You?

Additional resources in Western Armenian by John Bevere are available for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: JohnBevere@ymail.com

«ԱՍՏՈՒԱՎԾ, Ո՞ՒՐ ԵՍ», Ճոն Պիվիր, Արեւմտահայերէն

© 2019 Messenger International

www.MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով, «God Where Are You?» վերնագրով

Ճոն Պիվիրի այլ հեղինակային նիւթեր Արեւմտահայերէնով կրնաք անվճար ներբեռնել CloudLibrary.org կայքէն

Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	vii
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	1
1 «Ո՞ՒՐ ԵՍ ԴՈՒՆ»	5
2 ԼԱՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ	19
3 ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԱՊԱՏԸ	31
4 ՓՈԽՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ	43
5 ՆՈՐ ԳԻՆԻ	57
6 ԵՐԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԸ	75
7 ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՐԱԶԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ	89
8 ԼԱ՛Ւ ԿԱՌՈՒՑԵՑԷՔ	107
9 ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ	125
10 ԶՈՒՐ՝ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷԶ	141
11 ՊԱՏՐԱՍՏԵՑԷ՛Ք ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ	157
12 ՅԱԴԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷԶ	177
ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ	197
ՅԱԲԵԼՈՒԱԾ	205

ՆԱԽԱԲԱՆ

«Որովհետեւ Տէրը պիտի մխիթարէ Սիօնը, պիտի մխիթարէ անոր բոլոր ւաւերակները եւ անոր անապատը դրախտի նման պիտի շինէ եւ անոր ամայի տեղը՝ Տիրոջ պարտէզին պէս: Ցնծութիւն եւ բերկրութիւն պիտի գտնուի անոր մէջ, գովութեան եւ օրհներգութեան ձայն»:

– Եսայիա 51.3

Ես կը սիրեմ Եսայիայի գիրքը. ան իմ ամենասիրելի մարգարէն է Հին կտակարանին մէջ: Այս խօսքին մէջ Եսայիան այլաբանութիւններ կ'օգտագործէ, որպէսզի փաստէ մեզի, որ Աստուած կը ձգտի վերածել մեր կեանքի անպտուղ բնագաւառները կենարար պարտէզներու: Այս խօսքերը կը յայտնեն, որ ամայի անապատի չորցած հողը, ըստ էութեան, մեր վերափոխման խթանն է: Երբ այն, ինչ որ եղած է անցեալին, կը հեռացուի մեզմէ, մենք յայտնութիւն կը ստանանք այն մասին, ինչ որ պիտի կատարուի ապագային: Մեր Հայրը կ'անցընէ մեզ այս *պատրաստութեան փուլով*, որպէսզի հասնինք Իր խոստումներուն:

Ես պատիւ ունեցած եմ ըլլալու ամուսինիս կողքին, երբ մենք կ'անցնէինք հիասթափութեան անապատներով, որոնց մէջ յուսալքութեան աւագաբլուրները կը սպառնային ծածկել մեզ: Ես կը հետեւէի, թէ ինչպէս ան կ'աղօթէր, կը խորհէր եւ կ'աղաղակէր. «Աստուա՛ծ, ո՞ր ես»:

Մենք արթուն կը մնայինք գրեթէ ամէն գիշեր՝ մտածելով, թէ ո՞րն էր մեր սխալը: Թերեւս մենք սայթաքած էինք, իսկ թերեւս այնպիսի սխալ մը գործած էինք, որ կարելի էր ուղղել:

Ամէն օր ճոնը դուրս կ'ելլէր տունէն առտու կանուխ՝ մինչեւ արեւածագը, որպէսզի լսէր եւ պատասխաններ փնտռէր...՝ յուսալով, որ այդ օրը պարգութիւն եւ փոփոխութիւն պիտի բերէր: Ես անհանգիստ կը սպասէի անոր վերադարձին: Երբ ան տուն կու գար, մեր որդիները արդէն արթուն կ'ըլլային:

- Դու՛ն լսեցի՞ր ինչ որ բան մը,- կը շշմջայի ես: Ճո՛նը կը տարուբե-
քէր գլուխը: Տխրութիւնը կը համակէր իմ սիրտը եւ կը մթագնեցնէր իմ
յոյսը:

Թերեւս մենք խելագա՞ր էինք: Մենք իսկապէ՞ս լսած էինք Աստու-
ծոյ ձայնը: Մի՞թէ ատիկա հնարաւոր էր: Եթէ Աստուած առաջնորդած
էր մեզ այստեղ, ինչո՞ւ Ան կը լռէր մեր նեղութեան մէջ:

Այո՛, ես տրտնջացած եմ անապատին մէջ:

Երանի՛ այդ ժամանակ ես գիտնայի այն, ինչ որ հիմա գիտեմ:
Ես կ'անցնէի անապատը աւելի թեթեւ սրտով եւ հաւատքով լեցուած
քայլերով: Կը հասկնայի, որ այդ ընթացին ես կը մաքրուէի ու կը
պատրաստուէի:

Այս ամէնուն լոյսի ներքոյ, կը կարծեմ, որ այս գիրքը ուղեցոյց է, եւ
շատ առումներով, նուէր է: Ընդունեցէ՛ք անապատի դասերը, եւ ձեր
կեանքի յաջորդ փուլին մէջ ատոնք լաւ ծառայութիւն կը մատուցեն
ձեզի:

Բարձրացուցէ՛ք ձեր գլուխը. դուք մինա՛կ չէք:

– Լիզա Պիվիր

Հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք թայմզ»
ամսագիրին

«Մեսինճըր Ինթերնեշնըլ» ծառայութեան
համահիմնադիր

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այս գիրքը կը պատմէ իմ անապատային ընթացքին, ինչպէս նաեւ շատերու նմանատիպ փորձառութեան մասին: Ես դեռ չեմ «հասած», եւ ո՛չ ալ ստացած եմ այն, ինչ որ Աստուած պատրաստած է ինծի համար, բայց ես կ'աղօթեմ, որ այս էջերուն մէջ դուք գտնէք անհրաժեշտ ուժ եւ համարձակութիւն, որպէսզի հաստատակամօրէն երթաք դէպի ձեր կոչումը Աստուծոյ մէջ:

Ես չեմ պնդեր, որ այս գիրքը սպառիչ կամ ներառական ուսումնասիրութիւն է: Այս մասին կարելի է շատ ատելին գրել: Այնուամենայնիւ, գիրքին մէջ կը բաժնեկցիմ իմ սրտէն՝ անդրադառնալով անապատային ժամանակահատուածի գլխաւոր կողմերուն: Գիրքի նպատակն է ծանօթացնել ձեզ այս թեմային՝ թոյլ տալով Սուրբ Հոգիին անձնաւորել այս ուղերձը եւ կիրառել այն ձեր կեանքին մէջ:

Այս գիրքը կը խօսի այն մասին, թէ ինչ է անապատը եւ ինչ այն չէ: Այստեղ կը խօսուի անապատի նպատակին եւ օգուտին մասին: Իմ աղօթքն է, որ գիրքին մէջ ներկայացուած օրինակներու, նկարագրութիւններու եւ խրատներու միջոցով դուք հասկնաք, թէ ինչպէս իմաստութեամբ վարուիք անապատին մէջ:

Ինչպէս արդէն նշեցի, գիրքին մէջ իմ կեանքէն շատ օրինակներ պիտի տեսնէք, որոնք տեղի ունեցած են իմ առաջին երկու ծառայողական նշանակումներու ժամանակ: Առաջինը Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքին մէջ էր, ուր չորս ու կէս տարի ծառայեցի իմ հովիւին եւ անոր հիւրերուն: Իմ անապատային փուլը այդ նշանակման վերջին տասնութ ամիսներու ընթացքին էր: Յաջորդ անապատային փուլը իմ երկրորդ նշանակման ժամանակ էր. ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի Ֆլորիտա գտնուող Եկեղեցւոյ մը մէջ երկուք ու կէս տարի: Այս երկրորդ անապատի համեմատ, իմ առաջին անապատը Տալլասի մէջ զբօսախնճոյք թուաց ինծի: Տարօրինակ է, բայց այդ սաստիկ անապատային փորձառութիւնը նոյնպէս տեղի ունեցաւ այդ նշանակման վերջին տասնութ ամիսներու ընթացքին:

Մի՞թե՞ իմ կեանքին մէջ չեն եղած այլ անապատային փուլեր: Անշուշտ եղած են, բայց երբ ատոնք սկսան, ես արդէն շատ աւելի լաւ կը հասկնայի ատոնց բնոյթը: Որպէս արդիւնք՝ ես շարունակ չէի աղաղակեր. «Աստուա՛՛ծ, ի՞նչ կը կատարուի», կամ «Աստուա՛՛ծ, ո՞ւր ես»: Ես այնքան բան սորված էի նախորդ փուլերուն մէջ, որ գիտէի, թէ ինչ կը կատարուէր եւ ինչպէս պէտք էր վարուիլ այդ իրավիճակներուն մէջ:

Ես գրուցած եմ բազմաթիւ տղամարդոց եւ կիներու հետ, որոնք կը գտնուին այս փուլին մէջ: Որպէս կանոն, անոնք կը խօսին իրենց շփոթմունքի եւ հիասթափութեան մասին: Շատերը չեն ալ պատկերացներ, թէ ինչ տեղի կ'ունենայ: Վերջերս կինս՝ Լիզան, եւ ես երկու հաղորդում ծանագրեցինք այս մասին, եւ արծագանգը այս թեմային շատ աւելի լայն էր, քան մենք երբեք ստացած էինք: Ատիկա դրդեց գիս վերանայելու իմ կողմէն գրուած առաջին գիրքը, որ սկզբնապէս հրատարակուած էր «Յաղթանակ անապատին մէջ» վերնագիրով:

Ես գրած էի այդ գիրքը գրեթէ երեսուն տարի առաջ: Ուշադրութեամբ կարդալով՝ ես հասկցայ, որ այն մարգարէական ուղերձ էր ուշ 1980-ական եւ վաղ 1990-ական թուականներու համար: Այնպէս որ, իմ խմբագիրը եւ ես առանձնացուցինք այդ գիրքէն անժամանակեայ ճշմարտութիւնները, աւելցուցինք բազմաթիւ սկզբունքներ, որոնք քաղած էի վերջին երեսուն տարուան ընթացքին, եւ լիովին նոր գիրք գրեցինք: Այնպէս որ, ասիկա վերանայուած գիրք չէ, այլ՝ լիովին նոր ուղերձ: Համոզուած եմ, որ այն գիրքը, որ այժմ ձեր ձեռքին մէջ է, անժամանակեայ ուղերձ է, որ կ'օգնէ թէ՛ այսօր, թէ՛ գալիք սերունդներուն մէջ ապրող մարդոց անցնիլ կեանքի այս կարելոր փուլը:

Գրուած է. «Ամէն բանի ժամանակ կայ, եւ ժամանակ՝ երկնքի տակ ամբողջ ձեռնարկութեան» (Ժողովող 3.1): Մեր կեանքը փուլերու բաժնուած է, եւ ամէն մէկը ունի յատուկ նպատակ: Կարելոր է հասկնալ իւրաքանչիւր փուլի նպատակը՝ ատոր մէջ ճիշդ վարուելու համար: Հետաքրքրական կ'ըլլար, եթէ ձմեռնային մարգական հագուստով մարդ մը ճոպանուղի նստէր եւ լեռ բարձրանար՝ ծինատախտակի (սնոուպորտի) բոլոր պարագաներով, եւ իջնելով ճոպանուղիէն՝ երեսնիվայր իյնար՝ սահելու փոխարէն: Ինչո՞ւ, քանի որ ան բարձրացած էր ամառը, երբ լեռան վրայ ձիւն չկայ: Անոր գործողութիւնները արդիւ-

նաւէտ կ'ըլլային ձմեռը, սակայն ատոնք կործանարար հետեւանքներ ունեցան իրեն համար ներկայ փուլին մէջ:

Գիրքին մէջ ես կը ցանկամ սորվեցնել այս կարեւոր փուլի մասին, որ նախատեսուած է յօտելու՝ կտրել-հեռացնելու եւ մեր ուժերը աւելցնելու համար: Այն ունի մէկ նպատակ՝ *պատրաստել* մեզ: Դուք անմիջապէս կը նկատէք, որ ես շատ կը խօսիմ ծառայութեան մասին: Իւրաքանչիւրս կանչուած է որեւէ ոլորտի մէջ՝ գործարար, կրթական, առողջապահութեան, պետական կառավարման եւ այլն: Իմ կոչումը ծառայութեան հինգ պարգեւներն են. այնպէս որ, իմ պատմութիւնները այդ մասին են: Այնուամենայնիւ, դուք կրնաք կիրառել այս գիրքի սկզբունքները որեւէ ոլորտի մէջ, ուր Աստուած կանչած է ձեզ: Գործարար ոլորտին մէջ կանչուած մարդիկ պէտք է որոշ ժամանակ պատրաստուին իրենց կոչման համար նոյն կերպով, ինչպէս եւ Աւետարանի ծառայողները: Ասիկա կը վերաբերի կեանքի բոլոր ոլորտներուն:

Եւս մէկ բան. ես ընդգրկած եմ լրացուցիչ բաժիններ, որոնք կը կոչուին «Ինչպէս անցնիլ անապատը»: Ատոնց մէջ կան սեղմ, առանձին խորհուրդներ եւ խրախուսական խօսքեր, որոնք կ'օգնեն հնարաւորինս արդիւնաւէտ դարձնել ձեր անապատային ընթացքը: Յոյսով եմ այս ուղերձը յստակութիւն կը բերէ ձեր կեանքին մէջ, որպէսզի դուք վնաս չկրէք անապատի մասին անտեղեակ ըլլալու պատճառով, ինչպէս ատիկա տեղի ունեցաւ հետոս, եւ կը խրախուսէ ձեզ շարունակ ձգտիլ միակ Անձնաւորութեան, որ կրնայ բաւականութիւն տալ մեզի:

Անկեղծօրէն՝

Ճոն Պիվի,

Յունուար 2019


«Ո՞ՒՐ ԵՍ ԴՈՒՆ»

*«Երբ մենք անվորդով կը դիմանանք չորրութեան եւ ամա-
յութեան, մենք կը վկայենք, որ կը սիրենք զԱստուած,
բայց երբ Ան կ'այցելէ մեզ Իր ներկայութեան քաղցրու-
թեամբ, Ան կը վկայէ, որ կը սիրէ մեզ»:*

– Մատամ Կիյոն / Ժանն-Մարի Պուվլէ Տէ լա Մոթ-Կիյոն

*«Ահա կ'երթամ դէպի արեւելք, եւ Ան չկայ, եւ դէպի արեւ-
մուտք, եւ Ձինք չեն նշմարեր: Դէպի հիւսիս կ'երթամ,
ուր Ինք կը գործէ, եւ չեն իմանար. հարաւային կողմը կը
ծածկուի, եւ ես Ձինք չեն տեսներ»:*

– Յոբ 23.8,9



Ես բարկացած էի բոլորին վրայ եւ նոյնիսկ չէի գիտեր՝ ինչու:

Կը թուար՝ ոչինչ կը յաջողէր:

Մեր առաջնեկը՝ Էտիսընը, տասնութ ամսական էր, եւ ես անհամբեր էի անոր հանդէպ:

Ես կը պռռայի կնոջս՝ Լիզային վրայ:

Ես յուսահատած էի իմ հովիւէն:

Ես բարկացած էի այն մարդոց վրայ, որոնց հետ որ կ'աշխատէի:

Եթէ անկեղծօրէն խոստովանիմ, հաւանաբար, նաեւ յուսահատած էի Աստուծմէ եւ բարկացած էի Անոր վրայ: Ես կը տրտնջայի.

«Ի՞նչ կ'ընես Դուն»:

«Ինչո՞ւ Դուն չես գործեր իմ կեանքին մէջ»:

«Ո՞ւր է այն խոստումներու իրականացումը, որոնք Դուն տուած ես ինծի»:

«Ինչո՞ւ ոչինչ կը յաջողի»:

«Ինչո՞ւ Դուն չես խօսիր հետս»:

Ես կրկին ու կրկին կը փնթփնթայի՝ արտայայտելով իմ դժգոհութիւնը. «Ո՞ւր ես Դուն»:

Ձեր կեանքին մէջ եղած է այնպիսի ժամանակ, երբ կը թուար, թէ Տէրը այնքա՛ն մօտ էր, որ բաւական էր միայն շշնջալ Անոր անունը, եւ դուք *անմիջապէս* կը զգայիք Անոր ներկայութիւնը եւ կը լսէիք Անոր պատասխանը:

Այնուամենայնիւ, եկաւ ժամանակ մը, երբ դուք շարունակ կը դիմէիք Անոր, բայց ոչ մէկ պատասխան կը ստանայիք: Կը թուար՝ Ան

լիովին անհետացած է ձեր կեանքին: Թերեւս հիմա այդպիսի վիճակի մէջ էք եւ կ'ուզէք գոչել այդ լռութեան մէջ՝ տալով նոյն հարցումը, որ ես կու տայի. «Աստուած, ո՞ւր ես»:

Ես անապատի մէջ էի, բայց չէի գիտեր այդ մասին: Կ'ապրէի Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքին մէջ եւ կը համարէի զիս Յիսուսի բարի հետեւորդ, որուն մասին Աստուած մոռցած էր: Կարճ ժամանակ էր, որ քրիստոնէայ դարձած էի, եւ կը կարծեմ՝ ատիկա իմ առաջին իրական անապատային փորձառութիւնն էր:

Մինչ այդ բաւական էր կանչել, եւ Տէրը անմիջապէս կը պատասխանէր: Ես կը յիշեմ, որ Ան արագօրէն կը պատասխանէր նոյնիսկ իմ ամենաանհեթեթ խնդրանքներուն: Անոր ներկայութիւնը այնքա՛ն մօտ էր, այնքա՛ն ակնյայտ էր, եւ այնքա՛ն ուժգին էր: Այնպէս որ, ես չէի հասկնար, թէ ինչ կը կատարուէր: Ամէն օր ծնկաչոք կը հարցնէի Անոր. «Աստուած, ի՞նչ կը կատարուի: Դուն կարծես միլիոնաւոր քիլոմէթրերով հեռու ըլլաս ինձմէ»:

Ես շարունակ կը վերանայէի իմ կեանքը՝ հարցնելով. «Ի՞նչ սարսափելի մեղք գործած եմ»:

Անշուշտ, ինչպէս եւ իւրաքանչիւրը այս աշխարհին մէջ, ես ժամանակ առ ժամանակ կը սայթաքէի եւ կը մեղանչէի, բայց նոյնպէս արագօրէն կ'ապաշխարէի՝ խնդրելով Յիսուսին ներումը: Որքանով որ ես գիտէի, իմ կեանքին մէջ չկար շարունակական եւ միտումնաւոր մեղք:

Ամէն օր այդ չորութեան ընթացքին ես կը հարցնէի. «Աստուած, ինչո՞ւ Դուն այլեւս չես խօսիր հետս»:

Հազիւ թէ կարելի ըլլար համեմատել անձս Աստուածաշունչի մեծագոյն հերոսներէն մէկուն: Յոբին հետ, բայց իմ արծագանգը մասամբ նման էր անոր արծագանգին: Յոբին խօսքերը, որոնք ժամանակ մը օտար կը թուային ինձի, այժմ հասկնալի կը դառնային: Այդ գիրքի խօսքերէն քանի մը հատը շատ դիպուկ կը նկարագրէին անապատին մէջ լքուած (ձգուած) ըլլալու զգացումը, որ ես ունէի:

«Ահա կ'երթամ դէպի արեւելք, եւ Ան չկայ, եւ դէպի արեւմուտք, եւ Զինք չեմ նշմարեր: Դէպի հիւսիս կ'երթամ, ուր Ինք կը գործէ, եւ չեմ իմանար. հարաւային կողմը կը ծածկուի, եւ ես Զինք չեմ տեսներ»: Յոբ 23.8,9

Ես շարունակ կ'աղօթեի, բայց կը թուար՝ երկինքը պղինձի պէս ամուր էր:

Այդ ժամանակ Տէրը ցոյց տուաւ ինձի, որ քրիստոնէական կեանքին մէջ կան զուգահեռներ երեխայի աճին հետ: Ես հոգեւոր մանուկ էի, բայց այժմ անցում կը կատարէի դէպի նոր փուլ: Այդ ընթացքին ես ատիկա բնական օրինակով կը տեսնէի: Էտիսընը մտաւորապէս տասնութ ամսական էր: Լիզան հրաշալի մայր էր, եւ երբ Էտիսընը կու լար, ան անմիջապէս կը մօտենար ու կը խնամէր զինք: Ան մէկ ակնթարթի մէջ կը յայտնուէր մօր գիրկը եւ կը կերակրուէր՝ ստանալով սնուցում եւ մխիթարութիւն:

Բայց Էտիսընը, ինչպէս եւ ամէն երեխայ, պէտք է մեծնար եւ, ի վերջոյ, հասնէր հասունութեան: Եկաւ ժամանակը, երբ մեր բոլոր որդիները (մենք չորս որդի ունինք) պէտք է ինքնուրոյն սնունդ առնէին: Աստուած իմ, ինչպիսի՜ խառնաշփոթ կը սկսէր այդ ժամանակ: Ես գիտեմ, որ կը հասկնաք զիս: Երբ անոնք կը փորձէին ինքնուրոյն ուտել, կերակուրին կէսը կը թափէր կերակրման աթոռին եւ յատակին վրայ:

Երեխաները այնքա՛ն կը յուսահատին, որ առաջուան պէս չէք կերակրեր զանոնք, բայց դուք կը դադրիք զանոնք կերակրելէ, քանի որ դուք պատասխանատու մայր կամ հայր էք: Երբ մեր որդիները ուտելիքը իրենց շուրջը կը թափէին, մենք կ'ուզէինք անմիջապէս մօտենալ եւ կերակրել զանոնք, բայց զիտէինք, որ ատիկա պիտի խանգարէր անոնց զարգացումը: Մենք թոյլ կու տայինք մեր որդիներուն մեծնալ: Ոչ մէկ պարագային կ'ուզէինք դգալով կերակրել անոնցմէ ոեւէ մէկը մինչեւ տասնութ տարեկան:

Երբ նորածինները մեծնան, անոնց խնամքի ձեւը կը փոխուի՝ անոնց աճը եւ զարգացումը խրախուսելու համար: Աստուած կը վարուի մեզի հետ նման կերպով, որպէսզի մենք հոգեւորապէս զարգանանք եւ հասունանաք: Վերստին ծնած եւ Սուրբ Հոգիով լեցուած ժամանակ Ան կը պատասխանէ ամէն անգամ, երբ կը կանչենք Ձինք: Բայց որոշ ժամանակ յետոյ (եւ յոյսով եմ՝ մենք կը մեծնանք միայն կաթին կարօտ ըլլալու վիճակէն, Եբր. 5.12), Աստուած թոյլ կու տայ մեզի անցնիլ այնպիսի փուլերով, որոնց մէջ Ան անմիջապէս չի պատասխաներ մեր ամէն կանչին: Պատճառը այն է, որ Ան կ'ուզէ օգնել մեզի աճիլ եւ հասուննալ:

Երբ Տէրը օգնեց ինձի հասկնալ, որ հոգեւոր հասունութեան ընթացքը նման է այն ընթացքին, որ իւրաքանչիւրը պէտք է անցնի՝ մանկութենէն մինչեւ չափահաս տարիքը, եւ սկսայ աւելի շատ մտածել այդ մասին եւ հարցուցի ինձի. *«Արդեօք ես կը սխալ էի: Հնարաւոր է՝ այն, ինչով որ ես կ'անցնիմ, պատիժ չէ Տիրոջմէն: Կարելի՞ է, որ ես տարուած եմ անապատ, որ ինչ որ բան մը սորվիմ, որ աճ ունենամ, որուն շնորհիւ ես աւելի արդիւնաւէտ կերպով պիտի հետեւիմ եւ պիտի ծառայեմ Յիսուսին»:*

Այդ ժամանակ ես յիշեցի, որ նոյնը տեղի ունեցաւ Յիսուսին հետ: Գրեթէ անմիջապէս այն բանէն յետոյ, երբ Յովհաննէսը մկրտեց Ձինք, եւ Անոր Հայրը գովեց Ձինք, Սուրբ Հոգին անապատ տարաւ Յիսուսը: Յիսուսը կշտամբանք չէր ստանար եւ, անկասկած, ոչ մէկ մեղք գործած էր:

Այնպէս որ, այն ընթացքին, երբ լեցուած էի բարկութեամբ եւ ինքնախղճահարութեամբ, եւ, ի վերջոյ, մտածեցի. *«Հնարաւոր է, որ անապատը այնքան ալ սարսափելի չէ, որքան ես սարսափելի կը դարձնեմ»:*

Ինչպէ՞ս ընկալել անապատը

Եթէ մենք պէտք է Յիսուսին նմանինք, մեր բնաւորութիւնը պէտք է զարգանայ: Եւ, ըստ էութեան, անապատը այն վայրն է, որ Աստուած ընտրած է այդ նպատակին համար: Յաճախ, երբ մենք անապատի մէջ ենք, կը թուայ՝ Աստուած միլիոնաւոր քիլոմէթրերով հեռու է մեզմէ, եւ Անոր խոստումները դատարկ են: Բայց ատիկա պարզապէս տպաւորութիւն է, ոչ թէ իրականութիւնը: Իրականութեան մէջ, Ան շատ մօտ է մեզի, քանի որ խոստացած է երբեք չծօգել եւ չլքել մեզ (տե՛ս Եբր. 13.5):

Անապատով անցնիլը այնպիսի փուլ է, ուր, կը թուայ, թէ ձեր ընթացքը հակառակ է ձեր երազանքներուն եւ այն խոստումներուն, որոնք, ինչպէս դուք վստահաբար գիտէք, Ան տուած է ձեզի: Անապատին մէջ դուք չէք զգար հոգեւոր աճ եւ առաջընթաց: Իրականութեան մէջ, կրնայ թուալ, թէ դուք նոյնիսկ հետընթաց կ'ապրիք: Կը թուայ՝ Անոր ներկայութիւնը կը պակսի, ոչ թէ՝ կ'աւելնայ: Նոյնիսկ կրնայ այն-

պիսի զգացողություն յառաջանալ, որ դուք չսիրուած եւ անտեսուած էք, սակայն ատիկա ճիշդ չէ:

Անկասկած, անապատը այն վայրն է, ուր պիտի յայտնուին Քրիստոսի բոլոր անկեղծ հետեւորդները, թէեւ հոն, դուք ձեզ կրնաք խիստ միայնակ զգալ: Ճշմարտութիւնը այն է, որ անապատը անհրաժեշտ է Աստուծոյ իւրաքանչիւր զաւակին: Իրականութեան մէջ, Յիսուսին ողջամիտ եւ հասուն աշակերտը դառնալու համար, դուք թերեւս քանի մը անգամ անապատով անցնիք:

Երանի՛ ես կարենայի կարճուղի կամ զարտուղի ցոյց տալ ձեզի քարտեզին վրայ, որպէսզի չյայտնուէիք այդ ամայի վայրին մէջ, բայց նման բան չկայ: Եւ, իմ ընկե՛ր, ատիկա շատ լաւ է, քանի որ մեր ընթացքը անապատին մէջ եւ այդ փուլը ընդունիլը անհրաժեշտ է, եթէ կը ցանկանք հասնիլ մեր Խոստման երկիրը:

Ի՞նչ է անապատը

Գոհութի՛ւն Աստուծոյ, մեզմէ շատերը ստիպուած չեն ֆիզիքապէս գոյատեւել անբերրի վայրին՝ իրական անապատին մէջ, ուր գրեթէ ջուր չկայ եւ շատ դժուար է ապաստան գտնել: Ցերեկը տաք է, իսկ գիշերը՝ ցուրտ, եւ մենք միայնակ, ծարաւ եւ անօթի ենք: Ի լրումն այդ ամէնուն, մենք կորսուած ենք եւ չենք գիտեր, թէ ինչպէս դուրս ելլենք այդտեղէն: Թերեւս մենք չենք եղած այդպիսի վայրի մը մէջ, սակայն ունեցած ենք անապատային *զգացումներ*: Այս գիրքին մէջ ես քանի մը կարելոր իրադարձութիւններ պիտի պատմեմ իմ անապատային փորձառութենէն. իմ կեանքին մէջ եղած են շարք մը նման իրադարձութիւններ, եւ ատոնցմէ ոչ մէկը հաճելի եղած է:

Բարի լուրը այն է, որ անապատը պէտք չէ բացասական ընթացք ըլլայ, եթէ մենք պատրաստ ենք հնազանդիլ Աստուծոյ: Ես գիտեմ, որ ասիկա անտրամաբանական կը թուայ, բայց անապատին նպատակը դրական է՝ մարգել, մաքրել, զօրացնել եւ պատրաստել մեզ Անոր Հոգիին նոր շարժման համար, որուն արդիւնքով մենք աւելի պտղաբեր կը դառնանք:

Անապատին մէջ յայտնուելուն պէս շատերը անգիտակցաբար խու-

Ճապի կը մատնուին եւ կը սկսին անխոհեմ վարուիլ: Առանց հասկնալու՝ անոնք սխալ բաներու կը ձգտին եւ սխալ քայլերու կը դիմեն: Ատոր օրինակը կրնայ ըլլալ աշխատավայրի կտրուկ փոփոխութիւնը, մէկ եկեղեցիէ միւսը երթալը եւ որեւէ արմատական փոփոխութիւն, որ, անոնց կարծիքով, կրնայ երջանիկ դարձնել զանոնք կամ վերականգնել իրենց սովորական վիճակը: Օրինակ, ամուրիները կրնան անխոհեմաբար նոր յարաբերութիւն սկսիլ՝ ցաւոտ բաժանումէն յետոյ:

Եթէ դուք փորձէք ելք գտնել մինչեւ հասկնալը, թէ ինչու Աստուած բերած է ձեզ այդ չորութեան վայրը, ուր որ կը գտնուիք, դուք ակամայ կ'երկարածէք ձեր ժամանակը անապատին մէջ: Վերջաւորութեան կրնաք կրել աւելի շատ նեղութիւններ, հիասթափութիւններ եւ նոյնիսկ պարտութիւններ, քանի որ դուք չէք հասկնար այն փուլը եւ վայրը, որոնց մէջ Աստուած առաջնորդած է ձեզ:

Ասիկա տեղի ունեցաւ Իսրայէլի զաւակներուն հետ, որոնք անապատին մէջ քառասուն տարի անցուցին: Անոնք չհասկցան, թէ ինչ կը կատարուէր իրենց հետ, եւ վերջաւորութեան ամբողջ սերունդ մը դարձաւ ոչ յարմար՝ Խոստման երկիրը ժառանգելու համար: Որքա՛ն ողբերգական է: Աստուած անապատ տարաւ զանոնք՝ փորձելու, մարգելու եւ պատրաստելու համար, որպէսզի դարձնէր զօրաւոր եւ պատերազմող մարդիկ, որոնք պիտի կարենային տիրանալ Աստուծո՛ւ ստացած խոստումը՝ իրենց նոր հայրենիքին: Ատոր փոխարէն, Իսրայէլի զաւակները սխալմամբ դիտարկեցին անապատը որպէս պատիժ եւ սկսան շարունակ տրտնջալ, բողոքել եւ ցանկալ:

Երբ ժամանակն էր, որ անոնք հեռանային անապատէն եւ տիրանային Խոստման երկրին, անոնց լրտեսները վերադարձան եւ հետախուզական ձեպագրոյց անցուցին, որուն արդիւնքով ժողովուրդը լսեց տրտնջացողներու եւ բողոքողներու վատ լուրը: Անոնք պէտք է ընտրէին Աստուծոյ խոստումներու եւ կարողութեան ու մարդկային պատկերացումներու եւ անկարողութեան միջեւ, եւ որոշեցին հաւատալ մարդոց, ոչ թէ Աստուծոյ: Անոնք ընդունեցին այն սուտը, որ իրենք պիտի պարտուին եւ պիտի չստանան իրենց կաթ ու մեղր բխող երկիրը: Անոնք չարակամօրէն վարուեցան՝ Աստուծոյ բնաւորութիւնը եւ յատկանիշները չճանչնալու պատճառով:

Աստուած ծաւալուն պատասխան տուաւ անոնց, որուն իմաստը հետեւեալն էր. «Վարուեցէ՛ք՝ ինչպէս որ կ'ուզէք»: Այն կարճատեւ անապատային ընթացքը, որ պէտք է տեսէր մէկ տարի, տեսեց մինչեւ անոնց կեանքի աւարտը:

Ձգո՛յ՛ջ եղէք: Մենք չենք ցանկար, որ մեր կենսագրութեան մէջ գրուած ըլլայ նման որոշումի մը մասին: Բայց մենք կրնանք սորվիլ անոնց սխալներէն, եւ Պօղոս առաքեալը կը խօսի այս մասին. «Այս բաները կատարուեցան անոնց հետ՝ որպէս օրինակներ, եւ գրուեցան՝ մեզ խրատելու համար» (Ա. Կորնթացիս 10.11, CSB):

Եթէ մենք սորվինք ճանչնալ անապատային փորձառութիւնը՝ ասոր մէջ յայտնուելուն պէս, մեր ակռաները կրճտացնելու եւ տրտնջալու փոխարէն մենք շնորհակալ կ'ըլլանք՝ գիտնալով, որ ասոր կը հետեւի նոր հասունութեան, զօրութեան, օրինութիւններու, հնարաւորութիւններու եւ կատարուած խոստումներու «երկիրը»: Վերջաւորութեան այդ դժուար շրջանը այնքան ալ դժուար չի թուար, եւ մենք կը համաձայնինք Յակոբոսին հետ.

«Երբ կը բախիք ամէն տեսակի նեղութիւններու, համարեցէ՛ք ատիկա հնարաւորութիւն մեծ ուրախութեան համար... որովհետեւ երբ ձեր համբերութիւնը (կամ դիմացկունութիւնը) ամբողջովին կատարելագործուի, դուք լիարժէք եւ ամբողջական կ'ըլլաք եւ ոչ մէկ բանի կարիք կ'ունենաք» (Յակոբոս 1.2,4, NLT):

Արդեօ՞ք անապատին մէջ յայտնուիլը կը նշանակէ, որ ես լրջօրէն ձախողած եմ

Լա՛ւ հարցում է:

Յայտնուելով անապատին մէջ՝ շատերուս համար տրամաբանական կը թուայ հարցնելը. «Ո՞րն է իմ սխալը: Ի՞նչ ըրած եմ, որ այդքան բարկացուցած եմ զԱստուած»: Ասիկա սխալ պատկերացում է անապատի նշանակութեան կամ նպատակին մասին:

Աստուածաշունչին մէջ եւ ամբողջ պատմութեան ընթացքին ե՛ւ

Ինչպէս անցնիլ անապատը

#1 Հասկե՛ք ձեր ժամանակը

Գրեթէ բոլորս կը զարմանանք՝ յայտնուելով անապատին մէջ: Աստուած այնքա՛ն բարի է, եւ մենք կը վարժուինք Անոր օրհնութիւններուն, ներկայութեան եւ խոստումներուն: Մենք պարզապէս չենք սպասեր, որ այդ լաւ ժամանակը պիտի աւարտի, բայց օր մը կը գիտակցինք, որ ինչ որ բան մը փոխուած է: Այնպէս որ, խուճապի մատնուելու փոխարէն, կարելոր է վերանայիլ ստեղծուած իրավիճակը: Դուք պէտք է հասկնաք, թէ ինչով կ'անցնիք, քանի որ եթէ չհասկնաք, թէ կեանքի որ փուլին մէջ եւ ուր կը գտնուիք, ձեր արծագանգը սխալ կ'ըլլայ:

Ասիկա կարելի է համեմատել հարաւային Ֆլորիտայի արեւային կլիմայէն դէպի հիւսիս՝ Քանատա տեղափոխուելու հետ: Երբ ծմեռ կու գայ, եւ ջերմաստիճանը զերոյէն վար կ'իջնէ, կ'արժէ գիտնալ, որ առանց վերարկուի չէք կրնար տունէն դուրս ելլել:

Նոյն սկզբունքը կը վերաբերի անապատին: Եթէ դուք ուշադրութիւն չէք դարձներ այն նշաններուն, որոնք ցոյց կու տան, որ դուք ամայի վայրի մը մէջ էք, դուք կրնաք մեծ հիասթափութիւն ապրիլ եւ թերեւս այնպիսի սխալ գործել, որ հետագային սուղի կը նայի ձեզի: Հին կտակարանին մէջ գրուած է, որ Իսաքարի որդիները «կը հասկնային ժամանակները եւ գիտէին, թէ Իսրայէլը ինչ պէտք է ըներ» (Ա. Մնացորդաց 12.32, NET):

Երբ դուք հասկնաք, որ յայտնուած էք անապատին մէջ, նոյնպէս եւ կը գիտնաք, թէ ինչ պէտք է ընէք:

տղամարդիկ, ե՛ւ կանայք հասկցած են, որ անապատին մէջ իրենք պատրաստուած են, որպէսզի մուտք գործեն այն կոչումին մէջ, որ Աստուած տուած է իրենց: Այնպէս որ, անապատը չի նշանակեր, որ Աստուած կը մերժէ ձեզ. այն պատրաստուելու վայր է:

Անշուշտ, ես կը կարծեմ, որ հնարաւոր է յայտնուիլ անապատային իրավիճակին մէջ՝ սխալ որոշումներու պատճառով: Ճշմարտութիւնը այն է, որ անկախ այն բանէն, թէ որքան արդէն նմանած ենք Յիսուսին, մենք դեռ պէտք է պայքարինք մեղքին դէմ, եւ դեռ կրնանք ծախողիլ: Այնպէս որ, մենք կրնանք լուրջ խնդիրներ ունենալ, եթէ սխալ որոշում կայացնենք կամ շարք մը ոչ այնքան ճիշդ որոշումներ:

Այնուամենայնիւ, ճշմարտութիւնը այն է, որ մենք ունինք ներող Աստուած եւ մեծ Քահանայապետ, որ կը հասկնայ մեր տկարութիւնները: Այնպէս որ, մեր խնդիրներէն կամ մեր մեղաւորութեամբ յառաջացած անապատէն դուրս ելլելու համար առաջին հերթին պէտք է դիմենք մեր սիրող Հօրը. «Հայր, ես մեղանշած եմ. ես _____ եմ (ամբողջացուցէ՛ք պարապ ծգուած տեղը): Կը խնդրե՛մ, ներե՛ ինծի: Ես կ'ապաշխարեմ այս մեղքէն եւ այժմ, Քու շնորհքով, պիտի սկսիմ ուրիշ ձեւով ապրիլ»:

Իմ ըսելիքը այն է, որ նոյնիսկ եթէ դուք անջրդի վայրի մը մէջ յայտնուած էք՝ ձեր սխալներուն պատճառով, շտկեցէ՛ք ձեր յարաբերութիւնները Տիրոջ հետ, թո՛ղ տուէք, որ Ան աւարտէ այն, ինչ որ կը ցանկայ սորվեցնել ձեզի, եւ առաջ գացէ՛ք՝ հնարաւորինս շուտ դուրս ելլելով անապատէն: Անշուշտ, ժամանակը կախուած է Անորմէ: Սաղմոսերգուն կը գրէ. «Իմ ժամանակը Քու ձեռքիդ մէջ է» (Սաղմոս 31.15):

Եւ նոյնիսկ հաշուի առնելով այս ամէնը՝ ամենայն հաւանականութեամբ, դուք կը գտնուիք անապատին մէջ, քանի որ ներկայիս Աստուած կը ցանկայ, որ դուք ճիշդ հոն ըլլաք: Դուք չէք յայտնուած այս դժուարութիւններուն մէջ ձեր սխալներուն պատճառով: Ես գիտեմ, որ ինչ որ առումով ատիկա ա՛լ աւելի կը բարդացնէ իրավիճակը: Այս գիրքը գրելու հիմնական նպատակներէն մէկն է օգնել ձեզի, որ հասկնաք, թէ ինչպէս Աստուած կը դիտարկէ անապատը, եւ որքան Ան կը ցանկայ օգտագործել այն, որպէսզի օգնէ մեզի աճիլ եւ աւելի նմանիլ Յիսուսին:

Գոյութիւն ունի եւս մէկ ճշմարտութիւն, որ պէտք է պարզօրէն հասկնալ. Աստուած չէ բերած ձեզ անապատ, որպէսզի ձգէ սատանային հնարներուն եւ մոռնայ ձեր մասին: Մինչեւ որ Ելիցին մասնակցած երկրորդ սերունդին թոյլ տրուեցաւ մտնելու Խոստման երկիր, Աստուած յիշեցուց անոնց.

«Եւ յիշէ՛ այն ամբողջ ճանապարհը, որ քու Տէր Աստուածը այս քառասուն տարուան մէջ քեզ պտըտցուց անապատին մէջ, որ քեզ խոնարհեցնէ՝ քեզ փորձելու եւ սրտիդ մէջինը գիտնալու համար, թէ արդեօ՞ք Անոր պատուիրանները կը պահես» (Երկրորդ Օրինաց 8.2):

Այսպիսով, թէեւ Իսրայէլցիները լրջօրէն ծախողած էին եւ չափազանց երկար մնացած էին անապատին մէջ՝ իրենց անմտութեան, ապստամբութեան եւ ապերախտութեան պատճառով, Աստուած պիտի փոխէր ատիկա՝ բարիին վերածելով: Ան միշտ այսպէս կը վարուի, եւ եւ այնքա՛ն ուրախ եմ ատոր համար: Մի՞թէ դուք ուրախ չէք:

Մի՛ ունենաք սխալ պատկերացում անապատի մասին: Աստուած չի դադրիր մեր կեանքին մէջ գործելէ, միայն որովհետեւ մենք հոն ենք. Ան կ'անցըցնէ մեզ անապատով: Առանց Անոր՝ մենք երբեք դուրս չէինք ելլեր այնտեղէն: Աւելին՝ անապատը այնպիսի վայր չէ, ուր Ան կը նստեցնէ մեզ պահեստային նստարանին, մինչեւ ցանկայ գործածել: Մեր գթասիրտ Հայրը այդպէս չի վարուիր: Ընդհակառակը՝ Ան զօրաւոր կերպով կը գործէ մեր կեանքին մէջ այդ ժամանակ եւ այդ վայրին մէջ:

Կ'ըսեն՝ «Անտառը չ'երեւիր ծառերուն պատճառով»: Գրեթէ նոյնը կարելի է ըսել անապատի մասին. դուք չէք նկատեր, որ Աստուած կը գործէ, երբ կը գտնուիք Անոր գործունէութեան կեդրոնը:

Մենք պէտք է պարզօրէն նշենք եւս մէկ ճշմարտութիւն. անապատը պարտութեան վայր չէ, գոնէ՝ անոնց համար, որոնք հնազանդ են Աստուծոյ: Յիսուսը անապատին մէջ էր քառասուն օր շարունակ՝ անօթութենէն թուլցած, առանց ոեւէ մէկու մը, որմէ Ան կրնար ապաւինութիւն եւ խրախուսանք ստանալ, առանց մարմինի խնամքի եւ գերբնական դրսեւորումներու, երբ սատանան յարձակեցաւ Անոր վրայ: Յիսուսը պարտութեան մատնեց զինք Տիրոջ Խօսքով: Անապատը այն վայրը չէ, ուր Աստուծոյ զաւակները կը պարտուին. «Բայց գոհութիւն ըլլալ Աստուծոյ, Որ մշտապէս կ'առաջնորդէ մեզ յաղթական շքերթով Քրիստոսին մէջ... » (Բ. Կորնթացիս 2.14, NET):

Երբ Իսրայէլի ժողովուրդը կը բնակէր անապատին մէջ, հոն ապրող ազգերը կ'ասպատակէին զանոնք, եւ Տէրը կը պատուիրէր Իսրայէլին հակահարուած տալ: Իսրայէլի զաւակները պարտութեան մատնեցին

Ամորիացիներուն (տե՛ս Թուոց 21.21-25), Մադիանացիներուն (տե՛ս Թուոց 31.1-11) եւ Բասանի ժողովուրդին (տե՛ս Թուոց 21.33-35): Եթէ Աստուած կամենար, որ անոնք պարտութիւն կրէին, Ան չէր պատուիրեր անոնց պաշտպանել իրենց դիրքերը: Թէեւ անապատը պէտք չէ պարտութեան վայր ըլլար, այնուամենայնիւ, ժողովուրդին մեծ մասը մահացաւ՝ առանց Խոստման երկիր մտնելու: Ատիկա ոչ թէ Աստուծոյ կամքն էր, այլ անոնց անհնազանդութեան ցաւալի հետեւանքը:

Յոյսով եմ՝ դուք համոզուեցաք ձեր սրտին մէջ, որ անապատին մէջ յայտնուելու պատճառը Աստուծոյ դժգոհութիւնը կամ պատիժը չէ: Անապատը այնպիսի վայր մը չէ, ուր Աստուած կը լքէ ձեզ եւ կը մոռնայ ձեր մասին: Նոյնպէս, անապատը այնպիսի վայր մը չէ, ուր մենք գետին կ'իյնանք՝ ընդունելով մեր պարտութիւնը:

Աստուած կը պատրաստուի ինչ որ բարի բան մը ընել

Անապատային ընթացքը նշաններ, օրհնութիւններ, առատութիւն եւ հրաշքներ փնտռելու ժամանակ չէ: Այն Աստուծոյ սիրտը փնտռելու ժամանակ է, քանի որ ատիկա կը ձեւաւորէ ձեր բնաւորութիւնը եւ կ'աւելցնէ ձեր ուժը: Այն ձեր տեսողութիւնը պահպանելու ժամանակ է: Հակառակ պարագային, եթէ մենք պարզօրէն չտեսնենք Աստուծոյ խոստումները մեր սրտին մէջ, այդ ընթացքը վիատեցնող կը թուայ եւ տրտունջ կը յառաջացնէ:

Եթէ դուք հասկնաք, թէ ուր կը գտնուիք, կը սկսիք տեսնել ձեր ապագան: Այդ պարագային, դուք պիտի կարենաք տեսնել Աստուծոյ ձեռքը, նոյնիսկ եթէ չէք զգար Անոր հպումը: Ժամանակն է, որ ձեր սէրը Անոր հանդէպ հասուննայ, որպէսզի դադրիք հարցնելէ. «Ան ի՞նչ պիտի ընէ ինձի համար», այլ՝ հարցնէք. «Ան ի՞նչ կը ցանկայ, որ ես ընեմ»:

Աւելի առաջ ես յիշատակեցի այն հիասթափութիւնը, որ արտայայտեց հին ժամանակներու սուրբ Յորը՝ այն, որ ան չէր հասկնար, թէ Աստուած ինչ կ'ընէր: Որ կողմն ալ որ դառնար, ան զԱստուած չէր գտներ: Եթէ Յորի վերլուծութիւնը աւարտէր ատորմով, ատիկա խիստ ընկճութիւն պիտի յառաջացնէր անոր քով: Բայց Յորը չյուսահատեցաւ եւ չյանձնուեցաւ. ան շարունակեց՝ հաւատքի եւ յոյսի խօսքեր ըսելով:

«Սակայն Ան գիտէ իմ ճանապարհը. զիս փորձելու ժամանակ՝ ես ոսկիի պէս պիտի ելլեմ» (Յոբ 23.10):

Ինչպիսի՛ տպաւորիչ յայտնութիւն: Որքան ալ ջանք ընենք՝ հասկնալու համար, թէ Աստուած ուր կը տանի մեզ, Ան է, որ գիտէ ճանապարհը: Մենք կրնանք լիովին վստահիլ Անոր, քանի որ, ինչպէս որ Պօղոս առաքեալը կը գրէ. «Ես բոլորովին համոզուած եմ, որ Ան, որ սկսաւ շնորհքի այս փառաւոր արտայայտումը ձեր մէջ, հաւատարմօրէն կը շարունակէ ձեր հասունացման ընթացքը՝ Իրեն հետ ձեր միութեան միջոցով, եւ կ'աւարտէ այն» (Փիլիպպեցիս 1.6, TPT):

Եւ մենք գիտենք, որ ասիկա ճշմարիտ է... նոյնիսկ անապատին մէջ:

2

ԼԱԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

«Երբ քրիստոնեաները կը բախին հակառակութեան փոթորիկներուն, անոնք կրնան բարձրանալ՝ աւելի մեծ գեղեցկութեամբ: Անոնք նման են լեռնաշղթաներու վրայ աճող ծառերու, որոնք թէև ծեծուած են քամիներէն, սակայն ամենաամուր փայտը ունին»:

– Պիլի Կրեհէմ

«Եւ Յիսուսը՝ Սուրբ Հոգիով լեցուած... Հոգիով տարուեցաւ անապատ»:

– Ղուկաս 4.1



Բարի գալ՛ն՝ ստ անապատ: Դուք զարմացա՞ծ էք այսպիսի ուրախ ողջոյնէն: Սովորաբար մենք չենք համարեր, որ հոգեւոր անապատին մէջ մնալը լաւ է, սակայն պէտք է գիտնաք, որ մեր սիրելի Հայրը բարձր կը գնահատէ մնան վայրերը, եւ ներկայիս դուք լաւ ընկերակցութեան մէջ էք:

Եթէ կը կարծէք, որ լաւ կ'ըլլայ, որ ջայտնուիք անապատ ձեր հաւատքի ընթացքին, ես կոչ կ'ընեմ ձեզի վերանայիլ ձեր կարծիքը: Ճշմարտութիւնը այն է, որ անապատին մէջ մենք կը գտնենք անթիւ սուրբերու ոտնահետքեր, որոնք բաւականին ժամանակ անցուցած են հոն, եւ նոյնիսկ՝ Աստուծոյ Որդիի ոտնահետքերը:

Ուրիշ ձեւով ըսելու համար՝ երբ անապատի մէջ ենք, մենք լաւ ընկերակցութեան մէջ ենք... եւ միայնակ չենք:

Կը խնդրեմ, չմեղադրէք զիս յայտնի անուններով ձեզ տպաւորելու փորձի մէջ, բայց անապատին մէջ բնակողներու ցուցակը իրականութեան մէջ տպաւորիչ է:

Անշուշտ, ես արդէն յիշատակեցի Յոբը, որ, համաձայն Աստուածաշունչին, «բոլոր արեւելցիներէն մեծ էր» (Յոբ 1.3): Ան կորսնցուց ամէն ինչ՝ իր ունեցուածքը, երեխաները, առողջութիւնը եւ կնոջ աջակցութիւնը: Թէեւ Յոբը հիանալի եւ արդար մարդ էր, անոր մտերիմ ընկերները մեղադրեցին զինք ծածուկ մեղքի մէջ: Յոբը այնքա՛ն ընկճուած էր իր անապատին մէջ, որ, ինչպէս ինք կը մտածէր, աւելի լաւ կ'ըլլար, որ ընդհանրապէս ծնած չըլլար:

Երբ անապատին մէջ էք, դուք կը քալէք Աբրահամի անցած տեղե-

րով: Աստուած պատուիրեց Ուր քաղաքին մէջ ապրող այդ հարուստ մարդուն, որ յարմարաւէտ կեանք կը վարէր, ձգել ամէն ինչ եւ սկսիլ ընթացք մը՝ նոր խոստումի երկիր գտնելու համար: Աբրահամի հետ էր նաեւ Սառան, որ քայլ առ քայլ կը հետեւէր անոր: Անոնց կեանքի մեծ մասը անապատներուն մէջ անցաւ:

Մովսէսը նոյնպէս քաջ ծանօթ էր անապատին: Ան մեծցած էր փարաւոնի արքունիքին մէջ՝ արքայազնի պէս, բայց եգիպտացի մը սպաննելէն յետոյ ան յայտնուեցաւ անապատին մէջ, ուր քառասուն տարի ոչխար կ'արածէր: Ճիշդ հոն Աստուած յայտնուեցաւ Մովսէսին՝ վառող մորենիին մէջ:

«Եւ Մովսէսը Մադիամու քուրմին՝ իր աներոջ Յոթորի հօտը կ'արածէր: Եւ հօտը անապատի ետեւը քշելով՝ Աստուծոյ Քորեբ լեռը եկաւ: Եւ Տիրոջ հրեշտակը կրակի բոցով երեւցաւ անոր մորենիին մէջէն: Եւ ան տեսաւ, որ ահա մորենին կրակով կը վառէր, բայց մորենին չէր սպառեր: Եւ Մովսէս ըսաւ. «Հիմա դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թէ ինչո՞ւ համար մորենին չ'այրիր»: Եւ Տէրը տեսաւ, որ ան դարձաւ տեսնելու, եւ Աստուած մորենիին մէջէն կանչեց անոր եւ ըսաւ. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս»: Եւ ան ըսաւ. «Ահա՛ ես»» (Ելից 3.1-4):

Ատկէ յետոյ, ինչպէս գիտենք, Մովսէսը Եգիպտոս վերադարձաւ եւ իր ժողովուրդը դուրս հանեց հոնկէ... անշուշտ՝ դէպի անապատ:

Անապատին մէջ դուք կը հանդիպիք Յովսէփին՝ իր հօր սիրելի որդիին, որ իր եղբայրներուն կողմէ փոսը նետուեցաւ իր, իսկ յետոյ վաճառուեցաւ ստրկութեան եւ տարուեցաւ Եգիպտոս: Աւելի ուշ ան բանտարկուեցաւ՝ մեղադրուելով յանցանքի մը մէջ, որ չէր գործած: Այնուհետեւ փարաւոնի բանտին մէջ Աստուած յայտնուեցաւ Յովսէփին, եւ ան սկսաւ մեկնել հացթուխին ու մատռուակին երազները: Այդ փորձառութիւնը անգիտակցաբար պատրաստեց զինք անձամբ փարաւոնին երազը մեկնելուն:

Անապատին մէջ էր նաեւ Դաւիթ թագաւորը: Սամուէլը մարգարէացաւ, որ ան պիտի ըլլայ յաջորդ թագաւորը, եւ կարճ ժամանակ յետոյ Դաւիթը արդէն կը պատրաստուէր գահին՝ ապրելով քարանձաւներու

մէջ եւ թափառելով անապատներուն մէջ: Հոն Աստուած յայտնուեցաւ Ռաւիթին՝ որպէս անոր Հովիւը, Զօրութիւնը, Վահանը եւ Ամրոցը:

Յովհաննէս Մկրտիչը կանչուած էր մեծ մարգարէ ըլլալու համար. անոր հայրը պատմած էր անոր այն տեսիլքը, որուն միջոցով աստիկա գիտցուած էր: Այնուամենայնիւ, Աստուած յայտնուեցաւ Յովհաննէսին անապատին մէջ, ոչ թէ Աստուածաշնչեան դպրոցին մէջ: Ան կ'ապրէր Հրէաստանի անապատին մէջ, կենդանիներու կաշիէն կարուած հանդերձ մը կը կրէր եւ կը սնուէր միջատներով: Ղուկաս 3.2,3-ին մէջ գրուած է. «Աստուծոյ Խօսքը եղաւ Զաքարիայի որդի Յովհաննէսին անապատին մէջ: Եւ ան եկաւ Յորդանանի բոլոր կողմերը՝ ապաշխարութեան մկրտութիւնը քարոզելով մեղքերու թողութեան համար»:

Արաբիայի անապատին մէջ էր, որ Աստուած յայտնեց Պօղոս առաքելին այն առեղծուածները, որոնք պիտի կազմէին Նոր կտակարանի գգալի մասը: Ան կը գրէ, որ Աստուծոյ նպատակն էր, «որ Իր Որդին ինձմով յայտնէ, որ Անոր մասին հեթանոսներուն մէջ աւետարանեմ: Այդ ժամանակ իսկոյն մարմինի եւ արեան հետ խորհուրդ չըրի, եւ ո՛չ ալ գացի Երուսաղէմ՝ անոնց քով, որ ինձմէ առաջ առաքելներ էին, այլ գացի Արաբիա...» (Գաղատացիս 1.16,17):

Ո՞ւր էր Յովհաննէս առաքելը, երբ ան ստացաւ *Յիսուս Քրիստոսի Յայտնութիւնը*:

«Ես՝ Յովհաննէսս, ձեր եղբայրն եմ եւ գործակիցը չարչարանքի մէջ եւ Աստուծոյ Թագաւորութեան մէջ եւ այն համբերատար տոկունութեան մէջ, որուն Յիսուսը կը կանչէ մեզ: Ես արտաքսուեցայ Պատմոս կղզի՝ Աստուծոյ Խօսքը քարոզելու եւ Յիսուսին մասին ունեցած իմ վկայութեան համար» (Յայտնութիւն 1.9, NLT):

Պատմոսը ամայի կղզի էր եւ կատարեալ վայր՝ անապատային փորձառութեան համար:

Ամենակարեւորը՝ ձեզի կ'ուղեկցի Յիսուսը, որ, հրապարակաւ ստանալով Իր Հօր օրհնութիւնը եւ Սուրբ Հոգին, Աստուծային առաջնորդութեամբ տարուեցաւ անապատ՝ սատանայի գայթակղութիւններուն բախելու համար:

Ես նկատած եմ, որ յաճախ ճիշդ այսպէս կ'ըլլայ. Աստուած ցոյց կու տայ մեզի մեծ բաներ, որոնք Ան մտադրած է իրագործել մեր միջոցով ապագային մէջ, իսկ յետոյ կը տանի ուղիղ դէպի անապատ, որպէսզի պատրաստէ մեզ:

Եթէ անապատը անհրաժեշտ էր ակնառու սուրբերուն եւ մեր Տէր Յիսուսին, ես կրնամ ընդունիլ այն գաղափարը, որ լաւ կ'ըլլայ որոշ ժամանակ անցընեմ հոն, թէեւ, անկասկած, կը ցանկայի, որ աւելի դիրին ճանապարհի ըլլար: Անապատը այն վայրն է, ուր Աստուած կը փորձէ, կը խոնարհեցնէ, կը զօրացնէ եւ կը մաքրէ մեզ: Ճիշդ հոն կը ձեւաւորուի Անոր Աստուածային բնաւորութիւնը մեր մէջ: Անապատը պատրաստութեան վայր է՝ Անոր Արքայութեան մէջ պտղաբեր աշխատանք կատարելու համար:

Ամենագեշնչող իրողութիւնը անապատին մէջ այն է, որ հոն Աստուած նոր ձեւով կը յայտնուի: Եսայիա մարգարէն կը գրէ.

«Որովհետեւ Տէրը պիտի մխիթարէ Սիօնը, պիտի մխիթարէ անոր բոլոր աւերակները եւ անոր անապատը դրախտի նման պիտի շինէ եւ անոր ամայի տեղը՝ Տիրոջ պարտէզին պէս: Ցնծութիւն եւ բերկրութիւն պիտի գտնուի անոր մէջ, գովասանութիւն եւ օրհներգութեան ձայն» (Եսայիա 51.3):

Դրախտը կամ Եդեմի պարտէզը այն վայրն էր, ուր Աստուած Ինքզինքը Ադամին կը յայտնէր, եւ անոնք կը հաղորդակցէին:

Անապատին մէջ դուք անօթի ու ծարաւ կը զգաք Տիրոջ հանդէպ. դուք նեղութեան մէջ էք եւ աւելի ջանասիրաբար կը փնտռէք Զինք: Այնպէս որ, երբ Աստուած որոշէ Ինքզինքը յայտնել, նման վիճակի մէջ դուք աւելի դիրաբար պիտի կարենաք շրջուիլ այս կեանքի երեւոյթներէն եւ ձեր հայեացքը Անոր ուղղել: Եթէ մենք արծագանգենք Աստուծոյ կանչին, մեր կեանքին մէջ այսպիսի փորձառութիւն կ'ըլլայ: Անապատին մէջ է, որ Տէրը նոր ձեւով կը յայտնէ Ինքզինքը: Եսայիա 45.15-ին մէջ գրուած է. «Յիրաւի Դուն ծածկապատուած Աստուած ես, ո՛վ Իսրայէլի Փրկիչ Աստուած»: Ան կը ծածկէ Ինքզինքը այն մարդոցմէ, որոնք կը փափաքին Իրեն, որպէսզի աւելի մեծ քաղց յառաջացնէ մտերիմ հաղորդակցման բերկրանքի հանդէպ: Տէրը նոյնպէս կը ծած-

Ինչպէս անցնիլ անապատը

#2 Որքան ալ միայնակ զգաք, Աստուած ներկայ է

Յաճախ մեր անապատային փորձառութեան կարելորկողմերէն մէկը այն է, որ Աստուած կարծես բոլորովին կը բացակայի մեր կեանքէն: Այնպիսի տպաւորութիւն է, որ Ան միլիոնաւոր քիլոմետրերով հեռու է, երբ մենք ամէնէն շատ կը զգանք Անոր ներկայութեան կարիքը:

Կարելոր է, որ հասկնաք Աստուծոյ ներկայութեան երկու դրսեւորումները: Առաջինը հիմնուած է հետեւեալ Աստուածաշնչեան խօսքին վրայ. «Չե՛մ թողուր քեզ եւ երեսէ չե՛մ ձգեր» (Եբրայեցիս 13.5): Ասիկա Աստուծոյ ամենագոյութիւնն է: Դաւիթ թագաւորը կը խօսի այս մասին. «Եթէ երկինք ելլեմ, Դուն հոն ես, եւ եթէ դժոխքը անկողինս ընեմ, ահա Դուն հոն ես» (Սաղմոս 139.8): Եթէ կը հաւատաք Աստուածաշունչին եւ կը վստահիք Աստուծոյ, դուք գիտէք, որ անկախ ձեր զգացումներէն եւ իրավիճակներէն՝ Աստուած ձեզի հետ է:

Աստուծոյ ներկայութեան միւս դրսեւորումը, որ բոլորս կը

կէ Ինքզինքը այն մարդոցմէ, որոնք քաղց չեն զգար Իրեն հանդէպ, քանի որ Ան ոչ մէկ պարագային թոյլ կու տայ, որ Իրեն վերաբերին ոչ պատշաճ կամ սովորականի պէս:

Քաղց Աստուծոյ հանդէպ

Աստուած կը յայտնէ Ինքզինքը այն մարդոց, որոնք ամբողջ սրտով կը փնտռեն Զինք:

Յիշեցէք՝ Աստուած ըսաւ, որ Ան անապատ տարաւ Իսրայէլի զաւակները՝ զանոնք խոնարհեցնելու եւ քաղց յառաջացնելու համար: Այնուամենայնիւ, Յեսուին պէս Աստուծոյ հանդէպ քաղց զգալու փոխարէն, անոնք սկսան ցանկալ այն ամէնը, ինչ որ Տէրը հեռացուցած

սիրենք, եւ որ նոյնպէս քրիստոնէական կեանքի մասն է, Անոր յայտնուած ներկայութիւնն է: «Յայտնելը» կը նշանակէ տեսանելի դարձնել անտեսանելին, լսելի դարձնել անլսելին եւ իմանալի դարձնել անիմանալին: Մենք կը վերապրինք այն, երբ Աստուած Ինքզինքը կը յայտնէ մեր ֆիզիքական զգայարաններուն: Հրաշալի է վայելել այսպիսի հանդիպում Աստուծոյ հետ, որ կրնայ տեղի ունենալ երկրպագութեան կամ անձնական աղօթքի մէջ, անտառային զբօսանքի ժամանակ, առօրեայ գործերու ընթացքին եւ թերեւս անթիւ այլ ձեւերով:

Այնպէս որ, եթէ դուք հոգեւոր քաղց եւ ծարաւ կը զգաք անապատին մէջ, եւ Աստուած չ'օրհներ ձեզ Իր զարմանալի եւ յափշտակիչ ներկայութեամբ, պարզապէս հանդարտեցէք եւ *սպաւինեցէք Անոր խոստումներուն*, որոնցմէ գլխաւորը հետեւեալն է. «Չե՛մ թողուր քեզ եւ երեսէ չե՛մ ձգեր»: Այն, որ մենք կը ցնծանք Անորմով՝ չզգալով Անոր յայտնուած ներկայութիւնը, շատ աւելի արտայայտիչ կերպով ցոյց կու տայ մեր անսպառ սէրը Անոր հանդէպ:

էր իրենցմէ: Եւ երբ Աստուած եկաւ, որ յայտնէր Ինքզինքը, ինչպէս որ յայտնած էր Մովսէսին, անոնք չփափաքեցան հանդիպիլ Անոր: Փաստօրէն, անոնք մերժեցին Աստուծոյ: Երկրորդ Օրինաց գիրքին մէջ գրուած է.

«Եւ եղաւ, երբ որ այն ծայնը լսեցիք խաւարի միջէն, լեռը կրակով վառած ժամանակ, իմ քովս եկաք դուք, այսինքն՝ ձեր ցեղերու բոլոր գլխաւորները եւ ձեր ծերերը, եւ ըսիք. «Ահա մեր Տէր Աստուածը Իր փառքը եւ մեծութիւնը մեզի ցոյց կու տայ, եւ Անոր ծայնը կը լսենք կրակի միջէն: Այսօր տեսանք, որ Աստուած մարդու հետ խօսեցաւ, եւ մարդը ողջ մնաց: Եւ իհմա մենք ինչո՞ւ մեռնինք (որովհետեւ այս մեծ կրակը մեզ

պիտի սպառէ). եթէ մեր Տէր Աստուծոյ ծայնը նորէն լսելու ըլլանք, պիտի մեռնինք: Որովհետեւ բոլոր մարմինէն ո՞վ է ան, որ կրակի միջէն խօսող կենդանի Աստուծոյ ծայնը մեզի պէս լսեց եւ ողջ մնաց: Դո՛ւն մօտեցիր եւ մեր Տէր Աստուծոյն բոլոր ըսելու խօսքերը լսէ, ու մեր Տէր Աստուածը քեզի հետ ինչ որ խօսի, դուն մեզի ըսէ. մենք կը լսենք եւ կը կատարենք» (5.23-27):

Կրկին, Աստուած կը ցանկար յայտնել Ինքզինքը անապատին մէջ գտնուող ժողովուրդին, ինչպէս որ Ինքզինքը յայտնած էր Մովսէսին, բայց ժողովուրդը խուսափեցաւ այդ հանդիպումէն եւ խնդրեց Մովսէսէն. «Դո՛ւն մօտեցիր եւ մեր Տէր Աստուծոյն բոլոր ըսելու խօսքերը լսէ, ու մեր Տէր Աստուածը քեզի հետ ինչ որ խօսի, դուն մեզի ըսէ. մենք կը լսենք եւ կը կատարենք»:

Յաւոք, ժողովուրդը այդպէս ալ զԱստուած չճանչցաւ: Իսրայէլի գաւազները ընդամենը Անոր մասին գիտէին: Այդ պատճառով, անոնք այդպէս ալ չկրցան կատարել այն, ինչ որ Ան կը պատուիրէր: Ձինք չճանչնալու պատճառով անոնք այդպէս ալ չտեսան այն երկիրը, որ խոստացուած էր իրենց, եւ անապատին մէջ մահացան:

Աստուած անապատ կը տանի մեզ, ինչպէս որ տարաւ Յովհաննէսը, Մովսէսը, Դաւիթը, Յովսէփը, Պօղոսն ու միւսները, որպէսզի փորձէ եւ գիտնայ՝ արդեօք մենք քաղց կը զգանք Իր հանդէ՞պ, թէ՞ այն յարմարաւէտութեան եւ հաճոյքներու, որոնցմէ զրկուած ենք: Յակոբոսը կը գրէ.

«Կը խնդրէ՞ք եւ չէք աններ, որովհետեւ չար կերպով կը խնդրէք, որ ձեր ցանկութիւններուն բանեցնէք: Շնացողնէ՛ր, չէք գիտէ՞ր, որ աշխարհի սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ: Արդ, ով որ կարենայ աշխարհին բարեկամ ըլլալ, իր անձը Աստուծոյ թշնամի կ'ընէ: Կամ թէ կը կարծէք՝ Սուրբ Գիրքը պարա՞պ տեղը կ'ըսէ. «Նախանձով կը փափաքի Հոգին, որ մեր մէջ կը բնակի»: Բայց աւելի շնորհք կու տայ: Անոր համար կ'ըսէ. «Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ»: Արդ հնազան-

դեցե՛ք Աստուծոյ, հակառա՛կ կեցե՛ք սատանային, եւ ան կը փախչի ձեզմէ: Սօտեցե՛ք Աստուծոյ, եւ Ան կը մօտենայ ձեզի: Սրբեցե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղաւորներ, եւ ձեր սրտերը մաքրեցե՛ք, ո՛վ երկմիտներ» (Յակոբոս 4.3-8):

Երբ մենք մօտենանք Աստուծոյ՝ փնտռելով Ձինք մեր ամբողջ սրտով, Ան կը մօտենայ մեզի: Իսրայելի գաւակները աւելի հետաքրքրուած էին իրենց ցանկութիւններով (կիրքերով), քան Աստուծոյ ցանկութիւններով: Անոնք շնացողներ էին եւ կը ձգտէին այն յարմարաւէտութեան եւ ապահովութեան, որոնք այս աշխարհի ճանապարհները կրնային տալ: Անոնք շատ արագ մոռցան, որ այս աշխարհի ճոխութիւնը եւ հարստութիւնը չփրկեցին եզիպտացիներն ու անոնց բանակը:

Աստուած կ'ըսէ, որ Իրեն մօտենալու համար մենք պէտք է երկու բան ընենք: Առաջինը՝ մաքրենք մեր ձեռքերը: Երկրորդ Կորնթացիս 7.1-ին մէջ գրուած է. «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ՝, մեր անձերը սրբենք հոգիի եւ մարմինի ամէն պղծութենէ, սրբութիւնը կատարենք Աստուծոյ ահով»: Մեղքը մեզ Աստուծմէ կը բաժնէ. «Այլ՝ ձեր անօրինութիւնները կը բաժնեն ձեր եւ ձեր Աստուծոյ մէջտեղը, եւ ձեր մեղքերը ծածկեցին Անոր երեսը ձեզմէ, որ չլսէ» (Եսայիա 59.2):

Երկրորդը՝ մաքրենք մեր սրտերը: Յակոբոսը կը գրէ. «Ձեր սրտերը մաքրեցե՛ք, ո՛վ երկմիտներ» (4.8): Երկմիտ մարդիկ կը տատանին մե՛րթ դէպի Հոգին, մե՛րթ դէպի մարմինը: Անոնց միտքը եւ սիրտը հաստատուած չեն Աստուծոյ կամքին վրայ: Կողոսացիս 3.1-3-ին մէջ գրուած է. «Ուրեմն, եթէ դուք յարութիւն առիք Քրիստոսին հետ, ձգտեցե՛ք այն բաներուն, որոնք վերն են, ուր Քրիստոսը՝ Աստուծոյ աջ կողմը նստած է: Հաստատեցե՛ք ձեր միտքը այն բաներուն վրայ, որոնք երկինքն են, ոչ թէ այն բաներուն, որոնք այս երկրի վրայ են» (NKJV):

Ձեր սիրտը հաստատուած է այն բաներուն վրայ, որոնց դուք ջանասիրաբար կը ձգտիք: Գլխաւոր բառը այս հատուածին մէջ «*հաստատել*» բառն է: Երբ կինը կը զանգուրցնէ մազերը, ատոնք կ'ենթարկուին փոփոխութեան՝ քիմիական ազդեցութեան միջոցով: Անոր մազերը զանգուր կը դառնան, քանի որ ամէն մազափունջ կը յարդարուի այդ

ծեւով: Դուք կրնաք մազափունջ մը քաշել եւ ուղղել, բայց երբ կորսնցնէք, այն կրկին կը վերադառնայ իր յարդարման ձեւին:

Մարդիկ կրնան եկեղեցի յաճախել, փառաբանութեան խումբին մէջ երգել եւ քրիստոնէական միջոցառումներու մասնակցիլ, բայց ո՞ր է անոնց միտքը, երբ անոնք զբաղած չեն «քրիստոնէական» գործունէութեամբ. հոն, ուր այն հաստատուած է: Հազիւ որ մարդը կը հեռանայ եկեղեցւոյ շէնքէն կամ քրիստոնէական մթնոլորտէն, անոր միտքը կը վերադառնայ այն բանին, ինչին վրայ այն հաստատուած է՝ գանգուրցած մազափունջին պէս, որ կը վերադառնայ իր յարդարուած ձեւին, երբ կը կորսնցնէք այն:

Ես զրուցած եմ մեր երկրին մէջ եկեղեցի յաճախող շատ մարդոց հետ, որոնք փառաբանութեան երգեր կ'երգեն, իրենց հեռաձայններուն մէջ քարոզներու ժամանակ նշումներ կը կատարեն եւ նոյնիսկ ժամանակ կը յատկացնեն եկեղեցւոյ տարատեսակ ծառայութիւններուն համար: Անշուշտ, այդ ամէնը վատ չէ, սակայն երբ անոնք չեն մասնակցիր եկեղեցական հաւաքոյթներուն եւ կամաւորական ծառայութիւններուն, անոնք կը խօսին միայն դրամի, մասնագիտական մարզանքի, հագուստի, ընկերային ցանցերուն մէջ ներկայացուած նորոյթներու, նախասիրութիւններու, հակառակ սեռի, սնունդի, զնումներու, նախընտրելի հեռախօսային յաւելուածներու եւ այլ աշխարհիկ թեմաներու մասին: Անոնք կը պայծառանան, երբ կը խօսին այդ թեմաներով, սակայն Աստուածաշունչ կարդալը, աղօթելը, մարդոց ծառայելը եւ նոյնիսկ եկեղեցի յաճախելը այնպիսի բաներ են, որոնք կ'ընեն պարտաւորուած:

Երբ տղամարդը կը սիրահարուի ռեւէ կնոջ, կը նշանուի եւ կը պատրաստուի ամուսնանալ, կարիք չկայ ըսել անոր, որ ան պէտք է մտածէ այդ կնոջ մասին եւ հաղորդակցի անոր հետ: Այդ կինը մշտապէս անոր մտքին մէջ է, եւ անոր ծայնին երանգը կը փոխուի ամէն անգամ, երբ կ'արտասանէ այդ կնոջ անունը: Պատճառը այն է, որ անոր սէրը կամ սիրտը հաստատուած է այդ կնոջ վրայ: Ան երկմիտ չէ, չի մտածեր այլ կանանց մասին. ան սիրահարուած է:

Սաղմոս 16.8-ին մէջ Դաւիթը կ'ըսէ. «Ես իմ արջեւ դրի Տէրը ամէն ժամանակ»: Ան չէր երկմտեր: Անոր սիրտը մաքուր էր: Անոր սրտին մէջ չկային այնպիսի բաներ, որոնք ան կը սիրէր աւելի, քան Տէրը:

Անոր սերը Տիրոջ հանդէպ կը մթազնեցնէր որեւէ բարի բան, որ այս աշխարհը կրնայ առաջարկել: Այն բաները, որոնք մենք կը սիրենք, որոնք մենք հաւանութիւն կու տանք եւ կը վստահինք աւելի, քան Յիսուսին, կը կոչուին կուռքեր: Դաւիթը կը գրէ.

«Ո՞վ պիտի ելլէ Տիրոջ լեռը, կամ ո՞վ պիտի կենայ Անոր սուրբ տեղը: Ան, որ սուրբ է ձեռքով եւ մաքուր՝ սրտով, որ իր անձը անհրաւութեան չի տար եւ նենգութեամբ երդում չ'ընէր» (Սաղմոս 24.3,4):

Սուրբ սիրտ ունեցող մարդը անիկա է, որ կը սիրէ, հաւանութիւն կու տայ եւ կը վստահի Յիսուսին աւելի, քան որեւէ այլ բանի: Մատթէոս 10.37-ին մէջ Յիսուսը կ'ըսէ. «Ով որ հայրը կամ մայրը Ինձմէ աւելի կը սիրէ, ան Ձիս արժանի չէ, եւ ով որ որդին կամ աղջիկը Ինձմէ աւելի կը սիրէ, ան Ինձի արժանի չէ»:

Անապատին մէջ ըլլալու ժամանակ եկէք չըլլանք Իսրայէլի գաւակներուն պէս, որոնք այնքա՛ն կը սիրէին իրենց երկրային կեանքը, որ կորսնցուցին զԱստուած ճանչնալու հնարաւորութիւնը:

Եսայիա 35.1,2-ին մէջ գրուած է.

«Անապատն ու չոր երկիրը կ'ուրախանան,
 եւ կը ցնծայ ամային ու կը ծաղկի շուշանի պէս:
 Կը բացուի, կը ծաղկի եւ կը ցնծայ ցնծալով եւ բարձրաձայն
 երգելով.
 Լիբանանի փառքը անոր կը տրուի՝
 Կարմեղոսի եւ Սարօնի վայելչութիւնը.
 Անոնք կը տեսնեն Տիրոջ փառքը,
 մեր Աստուծոյ վայելչութիւնը»:

Տիրոջ փառքը կը յայտնուի յայտնապէս անապատին մէջ:

Եկէք միանանք բոլոր ակնառու սուրբերուն, որոնք ապրած են մեզմէ առաջ: Եկէք մօտենանք Աստուծոյ մաքուր ձեռքերով եւ սրտով, ինչպէս Դաւիթը, Մովսէսը, Պօղոսը, Յովսէփը եւ Աստուծոյ այլ նշանաւոր ծառայողներ՝ թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԱՊԱՏԸ

*«Մտովի վերլիչեցէ՛ք ձեր բոլոր փորձառութիւնները:
Մտածեցէ՛ք այն մասին, թէ ինչպէս Տէրը առաջնորդած է
ձեզ անապատին մէջ եւ կերակրած ու հագցուցած է ամէն
օր: Ինչպէս Աստուած դիմացած է ձեր անբարեացակա-
մութեան եւ հանդուրժած է ձեր բոլոր տրտունջներն ու
ձգտումները դէպի «Եգիպտոսի զգայական հաճոյքները»:
Մտածեցէ՛ք այն մասին, որ Տիրոջ շնորհքը բաւական է
ձեզի համար ձեր բոլոր նեղութիւններուն մէջ»:*

– Չարլզ Կ. Սփերձէն

*«Քու Տէր Աստուած... քեզ պտըտցուց անապատի մէջ,
որ քեզ խոնարհեցնէ՝ քեզ փորձելու եւ սրտիդ մէջիմը
գիտնալու համար...»:*

– Երկրորդ Օրինաց 8.2

Առաջին անգամ յայտնուելով անապատին մէջ՝ ես անասելի ցնցում ապրեցայ: Անկեղծ ըսելու համար, Քրիստոսին հետեւելու իմ առաջին երկու տարին նման էր երկարածգուած մեղրամիսի: Լիզան եւ ես բնակութիւն հաստատած էինք Թեքսաս նահանգի Տալլասա քաղաքին մէջ, եւ որոշ ժամանակ որպէս ինժեներ աշխատելէն յետոյ ես աշխատանքի անցայ մեր եկեղեցւոյ մէջ: Կը ծառայէի իմ հովիւին եւ անոր կնոջը եւ կ'ընդունէի մեր մեծ եկեղեցւոյ հիւր-քարոզիչները: Ինչպիսի՛ ուրախութիւն: Ես կը կարծէի, թէ յայտնուած էի երկինքի մէջ: Կը հիւրընկալէի երկիր մոլորակի վրայ ապրող մեծագոյն ծառայողները, քանի որ մեր եկեղեցին ամենայայտնի եկեղեցիներէն մէկն էր ամբողջ Ամերիկայի տարածքին:

Երբ այդ ակնառու համազգային եւ միջազգային առաջնորդները օղակայան կը ժամանէին, ես կը դիմաւորէի զանոնք եւ ինքնաշարժով կը տանէի եկեղեցի կամ այն վայրը, ուր որ պիտի հիւրընկալուէին: Անոնց այցելութիւններուն ընթացքին կ'ուղեկցէի ինքնաշարժով հոն, ուր պէտք է ըլլային, եւ կը ճաշէի անոնց հետ: Ես երկար ժամեր կ'անցընէի մեր սերունդի մեծագոյն ծառայողներուն հետ: Իմ առաջին տարիները այդ պաշտօնին մէջ աներեւակայելի եւ կեանքով լեցուն էին:

Այնուամենայնիւ, որոշ ժամանակ յետոյ իմ կեանքին մէջ դժուարութիւններ սկսան. շա՛տ մեծ դժուարութիւններ: Այդ ժամանակ ես չէի գիտեր, որ անապատ կ'երթայի, քանի որ Աստուած այս մասին չէր յայտնած ինձի: Անապատը այն վայրն է, ուր Աստուած կը պատրաստէ

մեզ: Անապատին մէջ կը ձեւաւորուի մեր բնաւորութիւնը եւ կ'ամրա-
նայ մեր հաւատքը: Այն *անհրաժեշտ* է մեզի:

Պատկերացուցէ՛ք հետեւեալը. դուք իսրայելցի էք, որ ամբողջ
կեանքը ստրուկ եղած էք եւ միայն վերջերս ազատութիւն ստացած էք:
Քիչ առաջ դուք ունեցաք խիստ սարսափազդու, բայց տպաւորիչ վե-
րապրում մը. դուք անցաք ծովի փոթորկոտ եւ ալեծուփ ջուրերէն կազ-
մուած երկու պատերու մէջէն՝ ապահով ու չոր վիճակի մէջ հասնելով
միւս ափը: Դուք ետ նայեցաք եւ տեսաք, որ նոյն պատերը, որոնք կը
պաշտպանէին ձեզ, թափեցան ձեր թշնամիներուն վրայ: Ձեզ կեղեքող-
ները յաւիտեան կործանուեցան: Դուք ուրախութեամբ տօնեցիք եւ
պարեցիք Աստուծոյ փառաւոր ազատագրման շնորհիւ: Դուք անպար-
տելի կը զգաք դուք ձեզ, քանի որ գիտէք, որ Աստուած ձեր կողմէն է:
Դուք այլեւս չէք կասկածիր անոր զօրութեան եւ հաւատարմութեան:

Բայց այժմ ամէն ինչ ուրիշ է: Քանի մը օր անցած է, եւ դուք յոգնած
էք, ծարաւ էք եւ տաքէն կը տանջուիք: Դուք «խոստման երկրի» սահ-
մանին չէք. փոխարէնը՝ աննպատակ կը թափառիք օձերով եւ կարիճ-
ներով լեցուն անապատին մէջ: Դուք այլեւս չէք պարեր Տիրոջ համար՝
երգելով, որ կառքն ու ձիաւորը նետուեցան ծովը, այլ կը բողոքէք ձեր
առաջնորդին՝ ըսելով. «Ինչո՞ւ հանեցիր մեզ Եգիպտոսէն. որ ծարաւի
մատնես եւ սպաննե՞ս մեզ, մեր երեխաներուն եւ մեր անասուններուն»:

Այժմ խօսինք ձեր մասին: Մի՞թէ դուք կը հաւատաք, որ Աստուած
զօրաւոր կերպով ազատեց ձեզ թշնամիին ձեռքէն, միայն որպէսզի
անապատին մէջ մատնէր աննպատակ եւ անորոշ դեգերումներու
շփոթմունքի եւ լռութեան: Մի՞թէ ատիկա էր Անոր նպատակը: Ան-
շուշտ՝ ո՛չ: Պարզապէս անհրաժեշտ է, որ դուք անցնիք անապատով,
որպէսզի հասնիք այն վայրը, որ խոստացուած է ձեզի:

Տէրը կ'առաջնորդէ ձեզ այնպէս, ինչպէս կ'առաջնորդէր Իսրայէլի
զաւակները՝ Եգիպտոսէն դէպի անապատ: Ձեզ անապատ տարած է
ոչ թէ սատանան, այլ՝ Աստուած: Եւ Ան ունի նպատակ ու գերբնական
ծրագիր այդ չորութեան փուլին համար: Սկիզբը Ան կը խոնարհեցնէ
մեզ, իսկ յետոյ՝ կը փորձէ: Ան այդպէս կը վարուի, որպէսզի մենք գիտ-
նանք, թէ *իրականութեան մէջ* ինչ կայ մեր սրտին մէջ:

Ինչպէ՞ս Ան կը խոնարհեցնէ մեզ: «Եւ քեզ խոնարհեցուց եւ անօթի

պահեց ու մանանա կերցուց» (Երկրորդ Օրինաց 8.3): Ան խոնարհեցուց իսրայելցիները՝ թոյլ տալով, որ անոնք անօթենային, բայց համաձայն յաջորդ պնդումին՝ Ան կերակրեց զանոնք մանանայով: Այս պնդումները հակասական կը թուան: Ինչպէ՞ս Ան կրնար անօթի պահել զանոնք եւ միաժամանակ կերակրել մանանայով:

Մանանան լաւագոյն կերակուրն է, որ մարդը կրնայ ուտել. այն հրեշտակներու սննդակարգի մէկ մասն է: Եղիան ուժ ստացաւ քառասուն օր քալելու համար՝ ընդամէնը ատորմէ պատրաստուած երկու շոթ ուտելով, իսկ իսրայելցիները առատօրէն կը ստանային այն: Անոնք մանանայի նոր բաժին կը ստանային երկնքէն շաբաթը վեց օր, իսկ վեցերորդ օրուան առաւօտեան հաւաքած մանանան հրաշքով կը պահուէր մինչեւ եօթներորդ օրուան աւարտը: Անոնք նոյնիսկ մէկ անգամ չմնացին առանց կերակուրի՝ սկսած այն օրուընէ, երբ Աստուած տուաւ անոնց մանանան, մինչեւ այն օրը, երբ անոնք բանակ դրին Խոստման երկրին մէջ:

Այդ պարագային, ինչո՞ւ Աստուած ըսաւ. «Ես անօթի պահեցի ձեզ»: Ինչպիսի՞ անօթութեան մասին Ան կը խօսի: Որպէսզի հասկնաք ատիկա, պատկերացուցէք անոնց վիճակը: Ենթադրենք, ձեր նախաճաշը բաղկացած է ընդամէնը մէկ կլոր հացէ, եւ ամէն երեկոյ ձեր ընթրիքը կրկին բաղկացած է մէկ կլոր հացէ: Դուք չունիք կարագ, գետնանուշի կարագ, ժելաթին, երշիկեղէն եւ ձկնեղէն. *միայն հաց*: Եւ անոնք այդպէս սնունդ կ'առնէին ոչ թէ քանի մը օր, այլ՝ *քառասուն տարի*:

Երբ ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի, յիսունվեց երիտասարդի հետ զացինք Թրինիտատ՝ ութօրեայ միսիոներական ճանապարհորդութեան: Մեր կերակուրը կը պատրաստուէր այն եկեղեցւոյ մէջ, ուր մենք էինք, եւ այդ մարդիկ շատ հիրաւսէր էին: Այնուամենայնիւ, ամէն օր հաւի միս կ'ուտէինք: Անոնք կը պատրաստէին այն տարբեր ձեւերով եւ կը մատուցէին բրինձով ու բանջարեղէնով, բայց *մենք մշտապէս հաւի միս կ'ուտէինք*:

Ութը օր հաւի միս ուտելէն յետոյ, մենք այլ ուտելիքի պահանջք կը զգայինք: Տուն վերադառնալով՝ մեր խումբի երիտասարդներէն մէկը հարցուց իր մօրը, թէ անոնք ինչ պիտի ուտէին ընթրիքին, եւ մայրը պատասխանեց. «հաւի միս»: Լսելով ատիկա՝ ան ճչաց, իսկ յետոյ սկսաւ խնդրել իր մօրմէն համալրկըր գնել իրեն համար:

Թրինիտատի մէջ, ընդամենը ութը օր յետոյ, մենք ծածուկ կը տրտնջայինք. Կրնա՞ք պատկերացնել քառասուն տարին: Ոչ թէ չորս տարի, այլ՝ *քառասուն* տարի՝ միեւնոյն ուտելիքով: Աստուած չէր տար անոնց այն, ինչ կը ցանկար անոնց փխրոժակը, այլ այն, ինչին կարիքը անոնք իրականութեան մէջ ունէին, որպէսզի ողջ ու առողջ ըլլային:

Ուրիշ ի՞նչը անոնց հանգամանքներուն մէջ կը դրդէր իրենց քաղց զգալու, այսինքն՝ ձգտելու այն բաներուն, որոնք իրենք չունէին: Կարդալով այս պատմութիւնը՝ մեզի համար խիստ ուշագրաւ կը թուայ, որ անոնց հագուստը եւ կօշիկները չէին մաշեր. ինչպիսի՜ խնայողութիւն ընտանեկան պիտակէի համար: Սակայն դուք կ'ուզէի՞ք կրել նոյն հագուստը քառասուն տարի շարունակ: Որքա՞ն ձանձորալի է: Ոչ մէկ գնում հանրախանութներէն եւ նորաճ հագուստի ոչ մէկ առջանց պատուէր. միեւնոյն շագանակագոյն սանտալներու զոյգը՝ քառասուն տարի շարունակ:

Այո՛, անոնց հիմնական կարիքները ամբողջացած էին. անոնք պաշտպանուած էին տաքէն եւ ցուրտէն, սակայն անոնց կեանքին մէջ շատ մը բաներ չկային, ինչ որ անոնք կը ցանկային:

Նոյնպէս, մտածեցէ՛ք այն միապաղաղ բնատեսարանի մասին, որ անոնց առջեւ էր ամէն օր՝ ոչ թէ քանի մը շաբաթ, այլ՝ *քառասուն տարի*: Մի՞թէ մենք կ'ուզէինք տեսնել նոյն կռափուշները (cactus), ճահճային եղէգներն ու չորցած գետիներ, եւ զրկուած ըլլայինք հանդարտ վտակներէն, փարթամ անտառներէն եւ գեղեցիկ խաղողի այգիներէն: Մի՞թէ մենք կ'ուզէինք ամէն օր միայն անապատ տեսնել:

Անոնք ունէին այն, ինչ որ անհրաժեշտ էր իրենց, ոչ թէ այն, ինչ որ իրենք կը ցանկային: Այս բոլորի լոյսին ներքոյ կրկին կարդանք այս հատուածը.

«Եւ քեզ խոնարհեցուց եւ անօթի պահեց եւ մանանա կերցուց, որ ո՛չ դուն կը ճանչնայիր, եւ ո՛չ քու հայրերդ, որ քեզ գիտցնէ, թէ ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլ մարդը Տիրոջ բերանէն դուրս եկած ամէն բանով (կամ՝ խօսքով) կ'ապրի» (Երկրորդ Օրինաց 8.3):

Աստուած անօթութիւն յառաջացուց՝ հեռացնելով այն, ինչ որ պիտի գոհացնէր անոնց մարմինի ցանկութիւններն ու ձգտումները,

սակայն շարունակեց հոգալ անոնց հիմնական կարիքները: Եւ այդ անօթութիւնը կը փորձէր զանոնք. Աստուած կը կամենար տեսնել՝ արդեօ՞ք անոնք կը ձգտէին Իրեն, թէ՞ այն ամէնուն, ինչ որ ձգած էին: Արդեօ՞ք անոնք պիտի փնտռէին Ջինք, թէ՞ այն ամէնը, ինչին որ կը ձգտէր իրենց մարմինը: Արդեօ՞ք անոնք քաղց ու ծարաւ պիտի ունենային արդարութեան հանդէպ, թէ՞ յարմարաւէտութեան եւ հաճոյքներու: Ցաւօք, իսրայէլցիներու սրտերը հաստատուած չէին միակ Անձնաւորութեան վրայ, որ կրնար յագեցնել զանոնք, եւ անոնք չանցան իրենց փորձութիւնը:

Ինչպէս անցնիլ անապատը

#3 Հակառակեցէ՛ք ձեր խնդիրները անձամբ լուծելու գայթակղութեան

Անապատին մէջ ինքնուրոյն եւ գործունեայ մարդոց ամենամեծ գայթակղութիւններէն մէկը ինչ որ բան մը ձեռնարկելն է: Երբ կը թուայ, թէ Տէրը միլիոնաւոր քիլոմէթրերով հեռու է մեզմէ, երբ Աստուծոյ Թագաւորութեան համար ինչ որ բան ընելու նոյնիսկ համեստ փորձերը կը ծախողին, երբ ժամեր տեւող աղօթքը միայն ծունկներու ցաւ կը յառաջացնէ, մենք, յուսահատութենէն դրդուած, կրնանք ընել՝ ինչ որ ըսես, որպէսզի ինչ որ բան մը տեղի ունենայ: Ատիկա վատ միտք է: Անապատին մէջ, ըստ էութեան, շատ բան տեղի չ'ունենար. հոն կայ միայն քիչ մը ջուր եւ ձանձրալի սննդակարգ: Այդ ամայութեան մէջ մենք կը սորվինք, որ կեանքը շատ աւելին է, քան այն, ինչ որ ունինք, եւ այն, ինչ որ կ'ընենք: Կեանքի իմաստը Ջինք մտերմօրէն ճանչնալն ու ամէն օր Անոր ցանկութիւնները կատարելն է:

Իմ անապատներէն մէկուն մէջ ամէն մէկ օրը մէկ շաբաթ կը թուար, եւ ամէն մէկ շաբաթը՝ մէկ ամիս, քանի որ ես

«Եւ անոնց մէջի խառնիճադանճ բազմութիւնը (կամ՝ օտարականներու խառնամբոխը) շատ փափաքեցան, եւ Իսրայէլի որդիներն ալ դարձեալ լացին ու ըսին. «Ո՞վ միս կու տայ մեզի ուտելու: Մենք կը յիշենք Եգիպտոսի մէջ մեր ծրի կերած ձուկերը, վարունգները ու սեխերը եւ պրասները ու սոխերը եւ սխտորները: Եւ հիմա մեր անձը չորցած է. ամէնեւին բան մը չկայ: Միայն այդ մանանայի վրայ են մեր աչքերը» (Թուոց 11.4-6):

Անոնք կը յիշէին այն, ինչ որ ձգած էին Եգիպտոսի մէջ: Նոյնիսկ Եգիպտոսի կեղեքիչ ստրկութիւնը աւելի գերադասելի կը թուար, քան

սահմանափակ տեսողութիւն ունէի եւ գրեթէ ոչ մէկ փափաք ու ձգտում: Չնայած ասորը՝ պէտք է շարունակէի իմ ընթացքը: Ես պէտք է շարունակէի յառաջ երթալ, շարունակէի վերցնել իմ սրտին մէջ պահուած Աստուծոյ խօսքէն, շարունակէի լաւագոյնս ծառայել, շարունակէի ներկայ ըլլալ հաւաքոյթներուն եւ զգուշանայի, որ անհամբերութենէն դրդուած որեւէ անխոհեմ արարք չգործէի: Ես պէտք է շարունակ յիշեցնէի ինձի, որ ես հոն էի, ուր Աստուած կը կամենար, որ ըլլայի: Ան ժամանակ չէր վատներ, եւ Ան պիտի կատարէր Իր խոստումները:

Եւ անշուշտ, անապատը այնպիսի վայր մը չէ, ուր դուք պէտք է փորձէք յառաջխաղացում ստանալ: Յիշեցէ՛ք՝ դուք կը մաքրուիք եւ կը պատրաստուիք: Այնպէս որ, դուք պէտք է ջանասէր ու հաստատուն ըլլաք եւ հակառակիք մեղանչելու որեւէ գայթակղութեան:

Գտնուելով այն ճանապարհի վրայ, որ Տէրը կը կառուցէ անապատին մէջ՝ մշտապէս գացէ՛ք անոր համընթաց: Ոչ մէկ պարագայի որոշեցէ՛ք առաջ անցնիլ Անորմէ, քանի որ Ան, ձեր կարծիքով, չափազանց դանդաղ կը շարժի:

այն ամայի վայրը, ուր Աստուած տարած էր զանոնք: Անոնք սկսան տրտնջալ ու բողոքել լալով միսի համար: Աստուած լսեց անոնց լացը.

«Եւ կերան ու խիստ կշտացան, եւ իրենց ցանկութիւնը տուաւ անոնց... Եւ Ան անոնց տուաւ իրենց ուզածը (միս, այսինքն՝ լորամարգիներ) եւ վատուծութիւն ուղարկեց անոնց անձերուն» (Սաղմոս 78.29, 106.15):

Անոնք ստացան այն, ինչ որ կ'ուզէին, բայց սուղ վճարեցին ատոր համար: Այդ միսի պատճառով անոնց անձերը տկարացան, եւ այդ տկարութիւնը թոյլ չտուաւ անոնց յարատեւել եւ անցնիլ իրենց փորձութիւնը: Վերջաւորութեան անոնք այդպէս ալ մուտք չգործեցին Խոստման երկիր: Մեղքը այն չէր, որ անոնք միս կը խնդրէին. մեղքը անոնց խնդրանքի դրդապատճառն էր: Այն կ'արտայայտէր անոնց սրտի դժգոհութիւնը Աստուծոյ հանդէպ, ինչպէս նաեւ՝ Անոր առաջնորդութեան եւ մատակարարման մեթոտներուն հանդէպ: Այն նոյնպէս ցոյց կու տար անոնց սաստիկ ցանկութիւնը այն կեանքին հանդէպ, որ անոնք ձգած էին Եգիպտոսի մէջ: Անոնք միայն կը յիշէին այդ կեանքի հաճելի կողմերը եւ կը մոռնային, որ իրենք ստրկութեան մէջ կ'ապրէին:

Ասիկա սթափեցնող դաս է բոլորիս համար: Եթէ մենք կը փնտռենք միայն խոստումները, եւ ոչ՝ Խոստացողը, մեր ուժը բաւական չ'ըլլար մեր կեանքի անապատներուն համար: Մենք անխուսափելիօրէն կը յիշենք հին բարի օրերը, որոնք, ճշմարտութեան տեսանկիւնէն, բոլորովին բարի չէին, այլ՝ ստրկութեան օրեր էին:

Ուրիշ բան է փնտռել Տէրը այն պատճառով, թէ Ան ինչ կրնայ *ընել ձեզի համար* կամ Ան ինչ կրնայ *տալ ձեզի*, եւ ուրիշ բան է փնտռել Տէրը այն պատճառով, թէ *Ով է Ան*: Առաջին տարբերակը շահադիտական է, եւ ձեր եսասիրական դրդապատճառները լաւագոյն պարագային կը յանգեցնեն Աստուծոյ հետ ոչ հասուն յարաբերութեան: Այնուամենայնիւ, եթէ մենք ձգտինք ճանչնալ Ձինք, ատիկա պիտի ձեւաւորէ ամուր փոխարաբերութիւն, որ բոլորս կը ցանկանք:

Սուրբ սակաւութիւն

Ինչպէս կարելի է ակնկալել, անջրդի անապատին մէջ ապրիլը կ'ենթադրէ միջոցներու սակաւութիւն: Այդ ընթացքին դուք կը ստանաք այն, ինչ որ անհրաժեշտ է ձեզի՝ զգացմունքօրէն, ֆիզիքապէս եւ միւթապէս, ոչ թէ այն, ինչ որ դուք կը ցանկաք: Աստուած խոստացած է հոգալ մեր հիմնական կարիքները. այնպէս որ, անապատին մէջ Ան կու տայ մեր հանապազօրեայ հացը, ոչ թէ ամէն ինչի առատութիւն:

Ամերիկայի մէջ, երբ կեանքը բարեկեցիկ է, մենք կ'ըսենք, որ մենք խոզի միսի ընտիր կտորներ կ'ուտենք: Անապատին մէջ չկայ խոզի միսի նոյնիսկ մէկ կտոր: Եւ այս փորձառութիւնը կրնայ ընդգրկել տարբեր տեսակի զրկանքներ: Այս ընթացքին դուք կը ստանաք այն հասարակական կեանքը, որուն կարիքը ունիք, ոչ թէ այն, որ դուք կը ցանկաք: Անապատին մէջ Աստուած գիտէ, թէ ինչը անհրաժեշտ է ձեր հոգեւոր կեանքին մէջ, եւ թերեւս աստիկա այն չէ, ինչ որ, ձեր կարծիքով, անհրաժեշտ է ձեզի: Այս ընթացքին Ան կը հոգայ մեր կարիքները, ոչ թէ կը կատարէ մեր ցանկութիւնները:

Անապատի նպատակն է մաքրել եւ զօրացնել մեզ: Մենք պէտք է ձգտինք Անոր *սրտին*, ոչ թէ Անոր *մատակարարման*: Եւ անկէ յետոյ, երբ յայտնուինք առատութեան մէջ, մենք չենք մոռնար, որ մեր Տէր Աստուած առատութիւն կու տայ մեզի, որպէսզի հաստատէ Իր ուխտը (տե՛ս Երկր. Օր. 8.2-18):

Գոյութիւն ունի հիմնարար խնդիր մը. այն, թէ ինչպէս *մենք* կը սահմանենք կարիքներն ու ցանկութիւնները, չի համապատասխաներ իրականութեան: Մենք «կարիքներ» կ'անուանենք մեր ցանկութիւնները, բայց իրականութեան մէջ՝ այդպէս չէ: Թերեւս հաւատացեալներու մեծ մասը դեռ պէտք է հասկնայ, թէ Պօղոսը ինչ նկատի ունէր՝ ըսելով.

«Ոչ թէ, որ կ'ակնարկեմ, որ ինչ որ անձնական կարօտութիւն ունէի, քանի որ ես սորված եմ գոհ ըլլալ (ուրեմնալ բաւականութիւն՝ այն աստիճան, որ անհանգիստ կամ խռոված չեմ), ինչ վիճակի մէջ ալ ըլլամ: Ես գիտեմ, ինչպէս ապրիլ պակասութեամբ եւ խոնարհ կերպով՝ նեղ հանգամանքներու մէջ, եւ ինչպէս վայելել լիութիւնը եւ առատութիւն ունենալ: Ես սորված

Եմ որեւէ հանգամանքներու մէջ որեւէ իրավիճակի բախելու գաղտնիքը՝ թէ՛ կուշտ ըլլալով, թէ՛ անօթի մնալով, թէ՛ ունենալով բաւականութիւն եւ ատելցուկ, թէ՛ չունենալով ոչինչ եւ ըլլալով կարիքի մէջ: Ես ուժ ունիմ ամէն ինչի համար Քրիստոսի մէջ, Որ կը զօրացնէ զիս» (Փիլիպպեցիս 4.11-13, AMPC):

Քրիստոսի զօրութեամբ Պօղոսը սորվեցաւ, որ չորութեան ժամանակ ինքը կրնար նոյնքան գոհունակ ըլլալ, որքան առատութեան ժամանակ: Կը թուայ, թէ մենք՝ Արեւմուտքի եկեղեցւոյ հաւատացեալներս, չենք սորված գոհունակ ըլլալ, քանի որ, ցաւօք, անոնք որ կ'ապրին առատութեան մէջ, նոյնքան դժգոհ են, որքան կարիքի մէջ ապրող մարդիկը: Եթէ մենք չունինք այն ամէնը, ինչ որ, մեր կարծիքով, պէտք է ունենանք, մենք մեզ զրկուած կը համարենք: Մենք կը դատենք մարդիկ հաւատքի եւ հոգեւոր վիճակի մասին անոնց ունեցուածքով, յաջողութեամբ եւ հասարակական կարգավիճակով, այնինչ պէտք է գնահատենք անոնց բնաւորութիւնը եւ հաւատքի չափը:

Իսրայէլի զաւակները հեռացան Եգիպտոսէն մեծ աւարով՝ արծաթէ եւ ոսկիէ իրերով եւ գեղեցիկ հանդերձներով, որոնք անոնք վերցուցին՝ կողոպտելով եգիպտացիները: Սակայն անոնք կուռք կառուցեցին անապատին մէջ այդ թանկարժէք մետաղներով, իսկ յետոյ հազան իրենց գեղեցիկ հանդերձները եւ պարեցին ատոր առջեւ: Ակնյայտ է, որ այդ ունեցուածքը չէր նշանակեր, որ անոնք Աստուածապաշտ էին, այլ նոյնիսկ՝ հակառակը: Միայն երկու մարդ, որոնք դուրս եկան Եգիպտոսէն, ունէին այնպիսի բնաւորութիւն, որ թոյլ տուաւ անոնց մուտք գործել Խոստման երկիր: Միայն Յեսուն եւ Քաղէբը մուտք գործեցին հոն, քանի որ անոնց մէջ այլ հոգի կար. անոնք ամբողջ սրտով կը հետեւէին Աստուծոյ (տե՛ս Թուոց 14.24):

Մեր արժեհամակարգը խեղաթիւրուած է, եթէ մենք կը գնահատենք մէկս միւսին ըստ մեր ունեցուածքին, ոչ թէ ըստ մեր ինքնութեան:

Միւս կողմէն, յաճախ, երբ քրիստոնէականները կը հասնին ֆինանսական առատութեան, ղեկավարող դիրք կը զբաղեցնեն կամ ազդեցութիւն ձեռք կը բերեն, անոնք կը համարեն, որ ատոր մէջ Աստուած թոյլ կու տայ իրենց ընել այն, ինչ որ իրենք կը ցանկան: Անոնք ձեռք կը բերեն այն, ինչ որ կ'ուզեն՝ ծախսելով իրենց դրամը իրենց ցան-

կութիւններուն վրայ, կամ կ'օգտագործեն իրենց դիրքը եւ պաշտօնը իրենց շահերուն համար: Յաճախ նման համոզմունքներ ունեցողները այն մարդիկ են, որոնք իմաստութեամբ չեն վարուած չորութեան ժամանակ: Իրականութեան մէջ, ֆինանսական օրհնութիւնը եւ արեւի մեծ իշխանութիւնը պէտք է դրդեն մեզ ա՛լ արեւի կախուած ըլլալ Աստուծմէ՝ Անոր նպատակներուն եւ առաջնորդութեան հետեւելու համար:

Մտածեցէ՛ք այն մասին, թէ ինչ դիրքորոշում ունէր Յիսուսը Իր ծառայութեան մէջ: Ան չունէր եսասիրական դրդապատճառներ: Ան Իր վրայ վերցուց մեր մեղքը, հիւանդութիւնը եւ մահապատիժը: Գնահատեց մեր բարեկեցութիւնը արեւի բարձր, քան Իրենինը, թէեւ Ան երբեք մեղք չէր գործած: Անոր կեանքի եւ ծառայութեան նպատակը ոչ թէ շահամոլութիւնն էր, այլ՝ անձնագոհութիւնը: Ուրանալով Իր Անձը՝ Ան տուաւ մեզի մեծագոյն պարգեւը՝ յաւիտենական կեանքը:

Աստուած նման հասուն բնաւորութիւն կը ձեւաւորէ մեր մէջ, երբ մենք անապատի մէջ ենք: Անապատը այն վայրն է, ուր կը հասունանայ Հոգիի պտուղը: Երբ մենք կ'ոռոգուինք Անոր ջուրերով, այսինքն՝ Զինք ճանչնալու սաստիկ ցանկութեամբ, մենք կը սորվինք վարուիլ այնպէս, ինչպէս, որ Ան կը վարուի:

4


ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

«Պարզապէս ապշեցուցիչ է, թէ որքա՛ն դժուարութիւններ կը հարթուին՝ առանց որեւէ ջանքի, երբ կը կարգաւորուի մարդու ներքին կեանքը»:

– Է. Ու. Թոզեր

«Եթէ կը սիրէք Ձիս, դուք կը հնազանդիք Իմ պատուիրաններուն»:

– Յովհաննէս 14.15, (NET)



Աստուած ի՞նչ կը փնտռէ Իրեն համար՝ մեզ անապատ տանելով: Մենք խօսեցանք մեր առաւելութիւններուն մասին եւ պիտի շարունակենք բացայայտել աւելին, սակայն կա՞յ արդեօք ինչ որ բան անապատին մէջ նաեւ Աստուծոյ համար: Այո՛, միանշանակ: Ան կը ցանկայ զարգացնել մեր յարաբերութիւններու մակարդակը: Ան կը փափաքի, որ մենք մտերմօրէն հաղորդակցինք Իրեն հետ: Ցաւոք, մեզմէ շատերը հակուած են շահագործել մեր յարաբերութիւնները մեր Տիրոջ հետ եւ թոյլ տալ, որ մեր սէրը Անոր հանդէպ պաղի:

Երբ ես նշանուած էի Լիզային հետ, մինչեւ ականջներուս ծայրը սիրահարուած էի անոր: Ես մշտապէս կը մտածէի անոր մասին: Ես ամէն ինչ կ'ընէի, որպէսզի հնարաւորինս շատ ժամանակ անցընէի անոր հետ: Եթէ Լիզային ինչ որ բան մը պէտք ըլլար, անկախ այն բանէն, թէ ինչով զբաղած էի՝ ես կը վազէի դէպի իմ ինքնաշարժը եւ կը գտնէի ուզածը իրեն համար:

Կը յիշեմ՝ անգամ մը մենք մօտաւորապէս հինգ ժամ միասին էինք անոր ծնողներուն տունը: Ես դժկամօրէն հեռացայ: Հազիւ տուն հասած էի, երբ իմ հեռաձայնը հնչեց: Լիզան էր: Ան ըսաւ իր քաղցր եւ հմայիչ ձայնով.

- Սիրելի՛ս, դուն բաճկոնդ մեր տունը մոռցած ես :

Ատիկա ըսես երաժշտութիւն ըլլար ականջներուս: Առանց վարաւելու՝ ես խանդավառութեամբ պատասխանեցի.

- Այդ պարագային, ես ստիպուած եմ վերադառնալ եւ վերցնել այն:

Ես այդպէս ալ ըրի, եւ մենք եւս երեքէն չորս ժամ միասին անցուցինք. ստիկա հրաշալի օր էր:

Այդ օրերուն, եթէ ան զանգահարէր ինծի գիշերուան կիսուն եւ ըսէր. «Սիրելի՛ս, պաղպաղակ կ'ուզեմ», ես ուրախութեամբ կը պատասխանէի. «Ընդամենը տասը վայրկեան, եւ ես հոն կ'ըլլամ: Իսկ ինչպիսի՞ համով պաղպաղակ կ'ուզես»: Ես ժամանակ եւ պատրուակ կը փնտռէի՝ անոր հետ ըլլալու համար: Քանի որ ես անչափ կը սիրէի զինք, ուրախութեամբ կը կատարէի այն, ինչ որ ան կը ցանկար: Ես չէի ընէր այդ ամէնը, որպէսզի *ապացուցէի* անոր իմ սէրը. Ես կ'ընէի ատիկա, որովհետեւ կը *սիրէի* զինք:

Կարիք չկար, որ ստիպէի ինքզինքս՝ մարդոց հետ խօսելու Լիզային մասին... Ես կը գովերգէի զինք բոլորին ներկայութեամբ, որոնք պատրաստ էին լսել: Եթէ խօսակցութեան նիւթը ռեւէ մէկուն հետ կ'աւարտէր, առանց որեւէ դժուարութեան՝ ես կը սկսէի խօսիլ Լիզային եւ մեր գալիք ամուսնութեան մասին: Ես սիրահարուած էի:

Մեր ամուսնութենէն ընդամենը քանի մը տարի յետոյ իմ ուշադրութիւնը կեդրոնացաւ այլ բաներու վրայ, որոնց կարգին էին մարզանքը, ընկերներու հետ հաղորդակցութիւնը, եւ յատկապէս, ծառայութիւնը: Այժմ ինծի համար ձանձրալի էր Լիզային հետ որակեալ ժամանակ անցընելը կամ անոր հետ ինչ որ բան մը ընելը: Ես այնքան ալ շատ չէի մտածեր Լիզային մասին: Ան նուէրներ կը ստանար միայն Սուրբ Ժննդեան, մեր ամուսնութեան տարեդարձին եւ իր ծննդեան օրը, եւ ատիկա նոյնիսկ քիչ մը դժկամութեամբ կ'ընէի: Մէկ անգամ Վալենթինի օրը ես նոյնիսկ մոռցայ նուէր գնել իրեն համար: Ան խիստ վշտացած էր: Ես կրնայի միայն ներողութիւն խնդրել: Ամենացաւալին այն էր, որ ես այնքան հասուն չէի, որ հասկնայի մեր ամուսնութեան «եղանակները» ցոյց տուող նշանները: Մեր միջեւ լարուածութիւն կը յառաջանար. իմ առաջին սէրը կը մահանար:

Ես այնքան շնորհակալ եմ, որ, ի վերջոյ, Աստուած գրաւեց իմ ուշադրութիւնը եւ փոխեց իմ սիրտը: Ան թոյլ տուաւ ինծի տեսնել, թէ որքան եսասէր դարձած էի: Իր ողորմութեամբ, Ան կրկին բոցավառեց մեր սիրոյ կրակը եւ բժշկեց մեր ամուսնութիւնը:

Նմանատիպ բան կրնայ տեղի ունենալ մեր եւ Աստուծոյ յարաբերութիւններուն մէջ: Քրիստոսի հետեւորդներէն շատերը կը հասնին որեւէ յարմարաւէտութեան գօտիի կամ բարձրակէտի, ուր անոնք այլեւս

ոչինչի կը ձգտին, այլ միայն կը պահպանեն իրենց ձեռքբերումները: Անոնք այլևս չեն փափաքիր Աստուծոյ: Անոնք կ'որոշեն իրենց հոգեւոր չափանիշները՝ համեմատելով իրենք զիրենք այլ մարդոց հետ կամ կատարելով այն, ինչ որ բաւական կը համարեն: Անոնք այլևս չեն ձգտիր խորապէս եւ անձնապէս ճանչնալ զԱստուած: Պարզապէս կը կենդրոնանան ամէնօրեայ գործերու, յաջողութեան ձգտելու եւ այս կեանքի հոգեբանութիւնը վրայ: Անոնք կը սկսին փնտռել զԱստուած ոչ թէ Ջինք ճանչնալու, այլ օրհնութիւններ ստանալու համար: Անոնք հետզհետէ կը սկսին մոլորուիլ իրենց սրտերուն մէջ՝ շրջուելով Աստուծմէ դէպի իրենց անձը: Թերեւս անոնք կը շարունակեն «քրիստոնէական» յարաբերութիւններ պահպանել մարդկանց հետ եւ կառուցել իրենց համբաւն ու դիրքը եկեղեցւոյ մէջ, բայց այլևս չեն փափաքիր Անոր, Որ կեանք կու տայ իրենց:

Երբ մենք ժամանակ կը տրամադրենք աղօթքի՝ փնտռելով շահ եւ օրհնութիւններ Աստուծմէ, ոչ թէ ձգտելով մտերիմ հաղորդակցութեան Անոր հետ, մենք դիւրաբար կը մոլորինք: Եկէք անկեղծ ըլլանք. մենք կը խրախուսենք մենք մեզ՝ աղօթքի ժամանակ տրամադրելու համար, սակայն, եթէ կարենայինք նայիլ մեր աղօթքներուն Անոր տեսանկիւնէն, պիտի հասկնայինք, որ կը փորձենք օգտագործել Ջինք: Մենք պզտիկցնենք զԱստուած՝ դարձնելով Ջինք օգնութեան աղբիւր մեր կարիքի ժամանակ: Բայց Ան այնքան կը սիրէ մեզ, որ առիթ չի տար մեզի խաբուած մնալու: Ան մեզի համար նոյնը կ'ընէ, ինչ որ ըրաւ Յիսուսը փնտռող բազմութեան համար.

«Հետեւեալ օրը այն ժողովուրդը... տեսաւ, որ Յիսուսը հոն չէ, եւ ո՛չ ալ Անոր աշակերտները, իրենք ալ նաւերը մտան եւ եկան Կափառնայում՝ Յիսուսը փնտռելով: Եւ երբ որ Ջինք ծովուն այն կողմը գտան, ըսին. «Ռաբբի՛, ե՞րբ եկար հոս»: Յիսուսը պատասխանեց անոնց եւ ըսաւ. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի. դուք Ջիս կը փնտռէք ոչ թէ անոր համար, որ նշաններ տեսաք, հապա անոր համար որ հացէն կերաք ու կշտացաք»» (Յովհաննէս 6.22-26):

Յիսուսը գիտէ մեր գործերուն իրական դրոշմատաճառները: Երբ բազմութիւնները եկան՝ *փնտռելով Ջինք*, Ան տեսաւ, որ անոնք աւելի շատ հետաքրքրուած էին այլ օրհնութեամբ (անվճար ճաշով), քան նշանները տեսնելով ու հասկնալով: Նշանը կ'նողորդէ կամ կը տեղե-

կացնէ. այն չի մատնանշեր ինքզինքը: Յիսուսը գիտէր, որ այդ բազմութիւնը իրականութեան մէջ չէր հետեւեր Իրեն այն պատճառով, որ Իր գործած նշանները յայտնած էին անոնց, թէ ով էր Ինքը. Անոնք կը հետեւէին Իրեն՝ պարզապէս կուշտ ըլլալու համար:

Դուք կը ճանչնա՞ք այնպիսի մարդ, որ կապ կը հաստատէ ձեզի հետ, երբ պէտք կ'ունենայ կամ ինչ որ բան կը ցանկայ ձեզմէ: Կամ՝ ձեր կեանքին մէջ եղա՞ծ է այնպիսի մարդ, որ, կը թուայ, թէ կ'ուզէր դառնալ ձեր ընկերը, սակայն որոշ ժամանակ յետոյ կը պարզուի, որ ան ընդամէնը կը փորձէր ինչ որ բան մը ստանալ ձեզմէ՝ ազդեցութիւն, դրամ կամ այլ նիւթական բան: Ան ճշմարտապէս մտահոգուած չէր ձեզմով եւ չէր սիրեր ձեզ. պարզապէս որոշ ժամանակով դուք կը ծառայէիք անոր նպատակներուն: Նման կերպով շահագործուիլը *ցաւոտ է*:

Նման եսակեդրոն դիրքորոշումը թափանցած է մեր հասարակութեան մէջ, ինչպէս նաեւ՝ Քրիստոսի մարմինին մէջ: Շատերը եկեղեցւոյ մէջ դժգոհ են. անոնց սէրը Յիսուսին հանդէպ պաղած է: Անոնք կը ծառայեն Աստուծոյ անձնական շահի համար, ոչ թէ Անոր հանդէպ ունեցած ջերմեռանդ սէրէն դրդուած: Եւ քանի դեռ Աստուած կը կատարէ անոնց *ցանկութիւնները*, անոնք երջանիկ են եւ ոգեշնչուած Անորմով: Այնուամենայնիւ, երբ նեղութիւններ կու գան, եւ կեանքը կը դժուարանայ, անոնց սրտի դրդապատճառները ի յայտ կու գան:

Երբ մարդը կեդրոնացած է *իր* վրայ, տրտունջը անխուսափելի է: Ինչո՞ւ: Քանի որ, վերջին հաշուով, մենք պիտի բախինք նեղութիւններու եւ դժուարութիւններու: Եւ հազիւ ատիկա տեղի ունենայ, կը սկսի տրտունջը՝ բորբոքած եսասիրութենէն: Տրտունջը կը շարունակուի այնքան ժամանակ, որքան կը տեւէ դժուարութիւնը: Մենք կը տեսնենք ասիկա Իսրայէլի գաւակներու կեանքին մէջ: Երբ Տէրը ազատեց գանոնք Եգիպտոսի զարհուրանքներէն, որ կը կրէին փարաւոնի իշխանութեան տակ, ժողովուրդը ցնծաց.

«Եւ Ահարոնի քոյր Մարիամ մարգարէուհին թմբուկը ձեռքը առաւ, եւ բոլոր կանայք թմբուկներով ու պարերով անոր ետեւէն դուրս ելան: Եւ Մարիամը պատասխանեց անոնց. «Երգեցէ՛ք Տիրոջը, որովհետեւ փառքով փառաւորուած է. ձին ու ձիաւորը ծովը նետեց»» (Ելից 15.20,21):

Ժողովուրդի երջանկութեան չափ չկար: Անոնք անսահմանօրէն տպաւորուած էին, որ Աստուած՝ Իր մեծութեամբ, հրաշագործ զօրութեամբ եւ բարութեամբ, ազատեց զանոնք իրենց ստրկացնող ժողովուրդէն: Այնուամենայնիւ, ընդամէնը երեք օր յետոյ, երբ անոնք հասան Սուր անապատի լեղի ջուրերուն, սկսաւ տրտունջը. «Ի՞նչ խմենք» (Ելից 15.24): Ըստ էութեան, տրտունջը անիմաստ էր: Մի՞թէ նոյն Աստուած, որ կարճ ժամանակ առաջ կիսեց Կարմիր ծովը, չէր կրնար խմելու ջուր տալ իրենց: Մի՞թէ Մովսէսը նոյն հերոսական առաջնորդը չէր, ինչ որ երեք օր առաջ:

Աստուած իսկապէս «քաղցրացուց լեղի ջուրերը», բայց այդ հրաշքը նոյնպէս արագօրէն մոռցուեցաւ: Քանի մը օր յետոյ ժողովուրդը շարունակեց տրտնջալ, այս անգամ՝ կերակուրի համար: Անոնք կը փնթփնթային. «Մենք աւելի լաւ կ'ապրէինք մինչեւ այն ժամանակ, երբ Աստուած ազատեց մեզ»: Իսկապէ՞ս: Մի՞թէ աղիւսներ պատրաստելը եւ իրենց մէջքին պահապաններու մտրակները զգալը աւելի լաւ էր:

«Եւ Իսրայէլի որդիներու ամբողջ ժողովքը անապատին մէջ Մովսէսի եւ Ահարոնի դէմ տրտունջ ըրին: Եւ Իսրայէլի որդիները ըսին անոնց. «Երանի՛ թէ Տիրոջ ձեռքով մեռած ըլլայինք Եգիպտոսի երկրին մէջ, երբ որ միսի կաթսաներու քով մտած էինք եւ կուշտ հաց կ'ուտէինք» (Ելից 16.2,3):

Ծանր ու չոր ժամանակներուն մէջ տրտունջը սովորաբար ուղղուած կ'ըլլայ առաջնորդներուն, ընտանիքի անդամներուն, ընկերներուն, թշնամիներուն, եւ նոյնիսկ՝ կառավարութեան: Մեզմէ շատերը (վախի պատճառով) երբեք չեն ըսեր, որ Աստուած է մեր խնդիրներու պատճառը: Նոյն կերպով, իսրայէլցիները կը տրտնջային Մովսէսի եւ Ահարոնի դէմ, բայց, անկասկած, անոնք կը մտածէին. «Տէրը յուսախաբ ըրաւ մեզ»: Մովսէսը հասկցաւ ատիկա եւ բացայայտ ըսաւ անոնց. «Ձեր տրտունջը մեր դէմ չէ, այլ՝ Տիրոջ դէմ» (Ելից 16.8):

Անապատը կը յայտնէ մեր սրտի դրդապատճառները՝ ատոնք *եսակեդրո՞ն* են, թէ՞ *անձնուրաց*: Խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն ցոյց տալ, թէ իրականութեան մէջ ի՞նչ տեղի կ'ունենայ ձեր սրտին մէջ: Որո՞նք են ձեր շարժառիթները: Ինչպիսի՞ դիրքորոշումներ կամ վարքագծեր

Ինչպես անցնիլ անապատը

#4 Յստակացուց՝ք ձեր ծրագիրները

Իմ վաղ անապատային փորձառութիւններէն մէկուն ընթացքին ինծի համար շատ դժուար էր դրական վերաբերմունք պահպանելը, քանի որ այնպիսի տպաւորութիւն էր, որ ոչինչ պիտի փոխուէր: Ձիս կը մտահոգէր ոչ այնքան սպասելը, որքան այն ցաւը, որ կը զգայի սպասման ընթացքին: Ես պարզապէս յոգնած էի վրդովեցուցիչ հանգամանքէ մը, որ, կը թուար, թոյլ չէր տար ինծի իրագործել այն երազանքը, որ ստացած էի Աստուծմէ՝ շրջիկ քարոզիչի ծառայութիւն սկսիլը: Տէրը ըսած էր ինծի, որ Ան կ'օգտագործէր այդ անապատը՝ զիս մաքրելու համար: Բայց մէկ անգամ, երբ ես կրկին կ'աղաչէի Տիրոջ բացատրել, թէ ինչու այդ «անապատային ընթացքը այդքան երկար կը տեւէ», Տէրը յիշեցուց. «Ես կ'ուզեմ տեսնել՝ դուն կը ծառայես Ի՞նծի, թէ՞ քու երազանքին»:

Ատիկա լրջօրէն գրաւեց իմ ուշադրութիւնը: Ես պէտք է աւելի շատ մտորէի եւ աղօթէի, որպէսզի հասկնայի՝ արդե՞օք ես կը ցանկայի իրագործել իմ նուիրական երազանքը՝ տարածել Աւետարանը աշխարհով մէկ, թէ՞ ես ունի՞ աւելի ազնիւ նպատակ՝ հնազանդ կերպով վստահիլ Աստուծոյ եւ սպասել, որ Ան խօսէր ու շարժէր իմ կեանքին մէջ: Միայն այդ պարագային իմ ցանկութիւնները կը համապատասխանէին Անոր ցանկութիւններուն:

Այսպիսով, իմ խորհուրդը հետեւեալն է. թոյլ մի՛ տաք, որ Աստուծմէ տրուած հրաշալի երազանքը դառնայ ձեզի համար աւելի առաջնահերթ, քան Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլը եւ միայն ձեր Հօր ցանկութիւնները կատարելը:

ստրկացած կը պահեն ձեզ ձեր «Եգիպտոսին մէջ» կամ կը դողէ ձեզ տրտնջալու ձեր անապատին մէջ: Ապագային յաջողութեան հասնելու համար անչափ կարելորդ է, որ ազնուութիւն ցուցաբերէք եւ բաց ըլլաք Անոր սիրառատ շտկումին համար:

Իւրաքանչիւրիս համար բարի լուր գոյութիւն ունի. ոչինչ կ'արգիլէ մեզ ապաշխարել եւ փոխել մեր սրտի դիրքը: Մէկ ակնթարթի մէջ մենք կրնանք վերջ տալ տրտունջին եւ վերադառնալ Աստուծոյ հետ հաղորդակցութեան՝ դադարելով դիտարկել Անոր ընդամէնը որպէս ինչ որ բան մը ստանալու միջոց:

Այսպիսով, Աստուած կրնայ ուղարկել մեզ անապատ՝ սէրէն դիրքուած:

Աստուած աւելին է, քան ինչ որ բանաձեւ

Քանի որ Իսրայէլի գաւակները չէին ձգտեր Աստուծոյ, անոնք չէին գիտեր Անոր ճանապարհները: Անոնք կ'ոգեշնչուէին Աստուծոյ զօրաւոր գործերով, բայց երբ Անոր գերբնական զօրութիւնը չէր յայտնուեր, կը հեռանային Անորմէ: Երբ Մովսէսը լեւան վրայ էր, անոնք հեռացան եւ սկսան խաղալ: Անոնք կը բաւարարուէին ընդամէնը փրկութեան առաւելութիւններով եւ չէին ձգտեր մտերմօրէն ճանչնալ եւ վերապրիլ Աստուծոյ:

Օր մը, անապատին մէջ, Աստուած յանձնարարեց Մովսէսին երթալ ժողովուրդին քով եւ պատուիրել, որ անոնք սրբուին, քանի որ Ինքը Սինա լեւան վրայ պիտի իջնէր, որպէսզի խօսէր անոնց հետ, ինչպէս որ ատկէ առաջ խօսած էր Մովսէսին հետ: Այնուամենայնիւ, երբ այդ օրը եկաւ, եւ Տէրը յայտնուեցաւ Իր վեհաշուք փառքով ու մեծութեամբ, ժողովուրդը չկրցաւ դիմանալ ասոր:

«Եվ ամբողջ ժողովուրդը կը տեսնէր որոտումներն ու կայծակները եւ փողի ձայնն ու լեւան ծխելը: Եւ ժողովուրդը տեսաւ եւ ետ քաշուեցաւ ու հեռու կանգնեցաւ եւ ըսաւ Մովսէսին. «Ղո՛ւն խօսիր մեզի հետ, եւ մենք կը լսենք, բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որ չմեռնենք»» (Ելից 20.18, 19):

Անոնք կ'աղաչէին Մովսէսին. «Խօսի՛ր Աստուծոյ հետ մեր փոխարէն, ըսէ՛ մեզի այն, ինչ որ Ան կը պատուիրէ, եւ մենք կը կատարենք» (շրջասութիւն)՝ կրկին ցոյց տալով, որ իրենք եսասիրաբար կը ցանկային օգուտ ստանալ Աստուծմէ՝ առանց Անոր հետ *հաղորդակցութեան*: Թերեւս անոնք բարի դրոշմապատճառներ ունէին (անոնք կը ցանկային պահել Աստուծոյ խօսքը), սակայն առանց Աստուծոյ հետ մտերիմ *հաղորդակցութեան*՝ անոնք չէին կրնար յարատեւել ասոր մէջ:

Իսրայէլցիները կը ցանկային պատասխաններ ստանալ իրենց խնդիրներուն, ոչ թէ փոխյարաբերութիւն ունենալ: Եւ ի՞նչ տեղի ունեցաւ: Աստուած տուաւ անոնց Տասը պատուիրանները: Այնուամենայնիւ, ատիկա նոյնպէս չլուծեց խնդիրը: Ամէն սերունդ կրկին ու կրկին կ'ապացուցէր, որ մարդիկ անկարող էին պահել այդ պատուիրանները:

Իսկ ի՞նչ կրնանք ըսել մեր սերունդի մասին: Քանի՞նե՞ր այսօր կը փորձեն պահել Աստուծոյ ճանապարհները՝ լաւագոյն մտադրութիւններ ունենալով: Մենք ուխտեր կ'ընենք եւ խոստումներ կու տանք, բայց չենք կատարեր, մինչեւ որ ատոնց բեռը այնքան կը ծանրանայ մեր վրայ, որ հազիւ կրնանք բարձրացնել մեր ծայրը աղօթքի ժամանակ: Մենք կրնանք լսել ռեւէ հովիւի, մեր կողակիցին, ընկերոջը կամ ռեւէ նախընտրելի պլոքըրի (blogger) մը՝ յոյս ունենալով իւրացնել այն փորձառութիւնը, որ անոնք ձեռք բերած են՝ փնտռելով զԱստուած, եւ ատով բարելաւել մեր յարաբերութիւնները Աստուծոյ հետ: Նման Իսրայէլի զաւակներուն՝ մենք կը փորձենք պահել Աստուծոյ խօսքը կամ Անոր պատուիրանները՝ առանց Անոր հետ կենդանի եւ անձնական հաղորդակցութեան: Յովհաննէս 14.21-ին մէջ Յիսուսը կ'ըսէ. «Ով որ Իմ պատուիրանները ունի եւ ատոնք կը պահէ, ան է Ձիս սիրողը: Եւ Ձիս սիրողը Իմ Հօրմէն կը սիրուի, եւ Ես կը սիրեմ Ձիւնք եւ Ինքզինքս կը յայտնեմ Անոր»:

Ես կը կարդայի այս խօսքը՝ մտածելով, որ Տէրը նկատի ունի. «Ճո՛ն, եթէ պահես Իմ պատուիրանները, դուն կ'ապացուցես, որ կը սիրես Ձիս»: Մէկ անգամ Տէրը պատուիրեց ինծի կրկին կարդալ այս խօսքը: Երբ կարդացի, Ան ըսաւ. «Դուն դեռ չես հասկնար, թէ ինչ կ'ըսեմ ես. կրկին կարդա»: Ատիկա կրկնուեցաւ այնքան, մինչեւ որ կարդացի այդ խօսքը ինը, թէ տասը անգամ:

Ի վերջոյ, ես բացականչեցի. «Տէ՛ր, ներէ՛ իմ անմտութիւնը. ցո՛յց տուր ինձի, թէ Դուն ինչ կ'ըսես»:

«Ճո՛ւն, Ես չեմ ըսեր, որ պահելով Իմ պատուիրանները՝ կ'ապացուցես, որ կը սիրես Ձիս, - ըսաւ Ան: - Ես արդէն գիտեմ՝ կը սիրե՞ս Ձիս, թէ՞ ոչ: Ես նկատի ունիմ, որ եթէ մարդը մինչեւ ականջները սիրահարուի Ինձի, ան Իմ պատուիրանները պահելու կարողութիւն կը ստանայ»:

Ես հասկցայ՝ Այս խօսքը *հաղորդակցութեան* մասին է, ոչ թէ *օրէնքի*: Ես կը դիտարկէի այն որպէս պատուիրան կամ օրէնք, բայց Աստուած ցոյց տուաւ, որ այն *հաղորդակցութեան* կարելորութեան մասին է:

- Աստուծոյ անկարելի է ճանչնալ կանոններու եւ դրոյթների միջոցով:
- Աստուծոյ անկարելի է գտնել մեթոտներու միջոցով:
- Սուրբ, Ամենակարող Աստուծոյ անկարելի է փոքրացնել՝ ինչ որ բանաձեւի մը վերածելով:

Այնուամենայնիւ, մեզմէ շատերը Տիրոջ մասին այսպէս կը մտածեն: Մենք կը փոխարինենք հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ «օրէնքներով եւ բանաձեւերով», օրինակ՝ եօթ քայլ դէպի երջանիկ կեանք, փրկութեան ծրագիրը՝ բաղկացած հինգ կէտէ, յաջողակ յարաբերութիւններու հինգ կողմերը, ստուգուած միջոց՝ աղօթքի պատասխան ստանալու համար: Մենք կ'երեւակայենք, որ Աստուած սահմանափակուած է խոստումներու տուփի մէջ, որմէ կարելի է վերցնել առանձին խոստումներ՝ ըստ անհրաժեշտութեան: Եթէ մարդիկ այս կերպով կը մօտենան Աստուծոյ, արժէ՞ զարմանալ, որ անոնք չեն կրնար յաղթահարել մեղքը:

Աստուած ինքնակատարելագործման նորագոյն բանաձեւը չէ: Ան կենդանի Աստուած է, Որ կը բնակի Իր գաւակներուն՝ ձեր եւ իմ ներսը: Ան կը ցանկայ ճանչնալ մեզ եւ ներգրաւուած ըլլալ մեր ամբողջ կեանքի եւ մեր բոլոր գործերու մէջ: Անոր նպատակը մտերիմ հաղորդակցութիւնն է: Հաշուի առնելով, որ մարդիկ հակուած են թոյլ տալ,

որ իրենց սէրը պաղի, դուք կրնաք հասկնալ, թէ ինչու Յիսուսը ըսաւ.

«Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ քու առաջին սէրդ ձգած ես: Արդ յիշէ՛, թէ ուրկէ վար ինկար, եւ զոջա՛, ու առաջուան գործերդ ըրէ: Ապա թէ ոչ, շուտով քովդ կու գամ եւ քու ճրագակալը տեղէն կը շարժեմ, եթէ չապաշխարես» (Յայտնութիւն 2.4,5):

Ի հակադրութիւն իսրայէլցիներուն՝ Մովսէսը չէր բաւարարուած Աստուծոյն հեռուէն երկրպագելով: Տեսնելով Աստուծոյ ներկայութեան յայտնուիլը՝ Ան չընկրկեցաւ, այլ՝ մօտեցաւ: Ելից 20.21-ին մէջ գրուած է. «Եւ ժողովուրդը հեռու կանգնեցաւ, եւ Մովսէսը մօտեցաւ այն թանձր խաւարին, ուր որ Աստուած էր»: Թէեւ Մովսէսը ունէր մեծ իշխանութիւն եւ ազդեցութիւն, թէեւ ան երեք միլիոն մարդու առաջնորդ էր, թէեւ ան մասնակցութիւն ունեցած էր Հին կտակարանի ամենաապշեցուցիչ հրաշքներուն, ան գիտէր, որ այդ ամէնը երբեք չէին կրնար գոհացնել զինք: Կարդացէ՛ք անոր աղօթքը այն բանէն յետոյ, երբ ան կը վերապրէր բոլոր այդ զարմանալի նշաններն ու հրաշքները.

«Եւ հիմա կ'աղայեմ, եթէ Քու առջեւ շնորհք գտայ, կը խնդրե՛մ, ինձի իմացուր Քու ճանապարհներդ, որ ճանչնամ Քեզ, որ Քու առջեւ շնորհք գտնեմ... Եթէ Քու երեսդ (կամ՝ ներկայութիւնդ) մեզի հետ չերթայ, մեզ այս տեղէն մի՛ հաներ... Կ'աղայե՛մ, Քու փառքը ցո՛յց տուր ինձի» (Ելից 33.13-18):

Աստուած ուշագրաւ առաջարկ ըրաւ Մովսէսին: Ան կը գտնուէր անջրդի անապատին մէջ, եւ Աստուած պատուիրեց անոր պատրաստել ժողովուրդը եւ Խոստման երկիր տանիլ: Ան նոյնիսկ առաջարկեց ուղարկել ընտիր հրեշտակ մը, որ ապահով տեղ պիտի հասցնէր զանոնք: Ան յիշեցուց Մովսէսին, թէ որքան լաւ էր այդ երկիրը. այն կաթ ու մեղր կը բխեցնէր եւ առատ էր գեղեցիկ բնատեսարաններով, պարտէզներով եւ մրգաստաններով: Այնուամենայնիւ, Աստուած ըսաւ, որ Ինքը պիտի չերթար անոնց հետ: Հազիւ որ Մովսէսը լսեց ատիկա, ան մերժեց Աստուծոյ առատածեռն առաջարկը: Ըստ էութեան, ան յայ-

տարարեց. «Ես կը գերադասեմ ունենալ Քու ներկայութիւնը՝ առանց Քո խոստումներուն, քան Քու խոստումները՝ առանց Քո ներկայութեան»: Համոզուած եմ՝ Աստուծոյ հաճելի էր, որ Մովսէս այդ կերպով կը փափաքէր Իրեն:

Մովսէս կը ցանկար շատ աւելին, եւ ան համարձակ խնդրեց. «Կը խնդրե՛մ, ինձի իմացուր Քու ճանապարհներդ, որ ճանչնամ Քեզ» (Ելից 33.13): Որպէսզի ճանչնանք զԱստուած, մենք պէտք է ճանչնանք Անոր *ճանապարհները*: Ան կը յայտնէ Իր ճանապարհները անոնց, որոնք կը ձգտին ճանչնալ Իր սիրտը, ոչ թէ միայն Իր զօրութիւնը եւ մատակարարումը: Անոր սիրտը ճանչցող մարդիկ պիտի գործեն Անոր զօրութեամբ: «...բայց այն մարդիկ, որոնք իրապէս կը ճանչնան իրենց Աստուածը, կը զօրանան եւ սխրանքներ կը գործեն» (Դանիէլ 11.32, KJV):

Երբ սկսայ ծառայել Աստուծոյ, ամէն առաւօտ մօտաւորապէս երկու ժամ կ'աղօթէի: Իմ աղօթքները գրեթէ այսպիսին էին. «Աստուած, գործածե՛՛ զիս՝ մարդիկ փրկելու համար, գործածե՛՛ զիս՝ հիւանդները բժշկելու համար, գործածե՛՛ զիս՝ դեւեր հանելու համար»: Ես շարունակ կը կրկնէի նոյն աղօթքը՝ տարբեր բառերով: Կը թուար՝ իմ աղօթքները անձնագոհ էին, եւ ես կ'աղաղակէի Աստուծոյ՝ ազդեցիկ ծառայութիւն ունենալու համար:

Եւ օր մը Տէրը խօսեցաւ հետս. «Որդի՛ս, քու աղօթքներդ եսակեդրոն են եւ չեն դպչիր նշանակէտին»: Ես զարմացայ Անոր խօսքերէն:

«Դուն կը ցանկաս այդ բաները, բայց ո՞րն է քու դրդապատճառը, - հարցուց Ան: - Ես միայն կը լսեմ քեզմէ՝ գործածե՛՛ զիս... Քու աղօթքի կեդրոնը դուն ես: Ես չեմ ստեղծած քեզ, որպէսզի մարդիկ շահիս, դեւեր հանես եւ բժշկես հիւանդները: Ես ստեղծած եմ քեզ մտերիմ հաղորդակցութեան համար. ատիկա՛ է քու նպատակդ»:

Ատիկա շատ զարմացուց զիս: Ատկէ յետոյ Ան բան մը ըսաւ, ինչ որ երբեք չեմ մոռնար. «*Յուդան մարդիկ կ'ազատագրէր եւ հիւանդները կը բժշկէր. ան կ'ընէր այդ ամէնը Յիսուսի անունով*»: Այո՛, ուղարկելով տասներկուքը՝ Յիսուսը ուղարկեց բոլորը, ինչպէս նաեւ՝ Յուդան, որ հետագային դաւաճանեց Ջինք: Ես կեդրոնացած էի սխալ բաներու վրայ: Աստուծոյ նպատակը մեզի համար, այսինքն՝ Անոր երկնային

մրցանակը *Յիսուսը Քրիստոսին ճանչնալն է* (տե՛ս Փիլիպ. 3.10):

Ասկէ քանի մը տարի յետոյ Լիզան կ'աղօթէր գրեթէ նոյն կերպով՝ պատրաստուելով հաւաքոյթի: Այդ օրը ան եւ Տէրը գրուցեցին: Ան ըսաւ.

«Լի՛զա, ես չեմ օգտագործեր մարդիկ. ես կ'օծեմ զանոնք, ես կը բժշկեմ զանոնք, ես կը փոխեմ զանոնք, ես կը վերափոխեմ զանոնք՝ ըստ Իմ պատկերի, բայց չեմ օգտագործեր մարդիկ»: Ան շարունակեց.

«Լի՛զա, քու ընկերներէն ոեւէ մէկը երբեք օգտագործա՞ծ է քեզ»:

«Այո՛», - պատասխանեց ան:

«Ինչպէ՞ս կը զգայիր դուն քեզ», - հարցուց Տէրը:

«Կարծես զիս դաւաճանած էին»:

Տէրը շարունակեց. «Շատ ծառայողներ աղաղակած են դէպի Ինծի, միայն որպէսզի գործածեմ զանոնք. «Գործածէ՛ զիս՝ բժշկելու համար, ազդեցութիւն ձգելու համար, փրկելու համար»: Ես պատասխանեցի անոնց՝ շարունակ յուսալով, որ անոնք պիտի նուիրէին Ինծի իրենց սիրտը, սակայն անոնք չափազանց զբաղած էին ծառայութեամբ՝ Ինծի նուիրուելու համար: Անոնք այդպէս էլ չփափաքեցան սորվիլ Իմ ճանապարհները եւ վերջաւորութեան օգտագործեցին Իմ պարգելը՝ իրենց թագաւորութիւնը կառուցելու համար: Երբ նեղութիւններ եկան, անոնք սկսան աղաղակել դէպի Ինծի եւ վիրաւորուեցան, երբ չպատասխանեցի անոնց աղօթքներուն իրենց ուզած ժամանակ եւ իրենց ուզած կերպով: Անոնք օգտագործուած զգացին իրենք իրենց եւ բարկացան վրաս: Այդպիսի ծառայողները ինկան, քանի որ չէին ճանչնար Ձիս»:


Ի՞նչ կ'ըսէիք այն կնոջ մասին, որ միայն կը ձգտի երեխաներ ունենալ իր ամուսինէն եւ հետաքրքրուած չէ զինք անձնապէս ճանչնալով: Պատկերացուէք, որ ան կ'իյնայ իր ամուսինին ոտքերուն քով եւ կը բացականչէ. «Ո՛վ իմ ամուսին, կը խնդրե՛մ, գործածէ՛ զիս, որպէսզի ես երեխաներ ունենամ քեզի համար: Կը խնդրե՛մ, կը խնդրե՛մ, տո՛ւր ինծի երեխաներ. եթէ ոչ, ես կը մահանամ»: Ատիկա անհեթեթ կը թուայ, սակայն մենք կը վարուինք նոյն կերպով, երբ կ'աղաղակենք Աստուծոյ՝ խնդրելով, որ Ան «գործածէ մեզ՝ մարդիկ փրկելու համար», այնինչ մենք անձնապէս գրեթէ չենք հաղորդակցիր Անոր հետ: Երբ մենք մտերմանանք Աստուծոյ հետ, երեխաները կը ծնին՝ նման այն բանին,

ինչ տեղի կ'ունենայ, երբ կինը մտերմօրէն կը հաղորդակցի իր ամուսինին հետ:

Այսպիսով, իսրայէլցիներու ձգտումները ճիշդ չէին: Անոնք կը ձգտէին *արարուած* բաներուն, ոչ թէ *Արարիչին*: Եւ մենք գիտենք, թէ ինչ տեղի ունեցաւ: Անապատը անոնց պատրաստման վայրը դառնալու փոխարէն՝ տալով անոնց իմաստութիւն եւ ուժ առջեւը եղող մարտահրաւերներուն համար, այն դարձաւ ունայնութեան երկիր եւ, ի վերջոյ, կլանեց ամբողջ սերունդ մը: Ինչպիսի՛ վատնում՝ այն պարագային, երբ անոնք կրնային ըլլալ Խոստման երկրին մէջ:

Ինչպիսի՛ դաս բոլորիս համար: Մենք պէտք է պատրաստակամօրէն ընդունինք մեր անապատային ընթացքը այս փառաւոր մտերմութեան ճանապարհին:

ՄԵՐ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ
ՀԻՄՔԸ ՈՉ ԹԷ ՄԵՐ
ԶԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԵՆ,
ԱՅԼ ԱՆ:



ԱՆԱՊԱՏԸ ոչ թէ
ՊԱՏԻԺ Է, ԱՅԼ ԱՍՏՈՒԾՈՅ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
ԻՐ ԽՈՍՏՈՒՄԻՆ ՅԱՄԱՐ:





ՔՐԻՍՏՈՍՈՎ ՄԵՆՔ ԿՐՆԱՆՔ
ՆՈՅՆՔԱՆ ԳՈՐՈՒՆԱԿ ԸԼԼԱԼ
ՉՈՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՈՐՔԱՆ
ԱՌԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ:







ԱՆ ԿԸ ԽՈՆԱՐՅԵՑՆԷ
ՄԵՁ ԵՒ ԿԸ ՓՈՐՁԷ
ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ,
ՈՐՊԵՍՁԻ ԳԻՏՆԱՆՔ
ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒ
ԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ:



ՁԵՐ ԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՏ ԱԻԵԼԻ ԿԱՐԵԻՐ Է, ՔԱՆ ՁԵՐ ՕՇՈՒԹԻՒՆԸ:



Անվճար ներբեռնեցե՛ք և դիտեցե՛ք բազմաթիվ նիւթեր:
Այցելեցե՛ք CloudLibrary.org



5

ՆՈՐ ԳԻՆԻ

*«Թող որ մենք ըլլանք անօթներ Քու նոր Գինիին համար,
որ կը նորոգէ ամէն ինչ»:*

– Եփրեմ Ասորի

*«Առաջինները մի՛ յիշէք, եւ հին բաները մի՛ մտաբերէք:
Ահա Ես նոր բան կ'ընեմ. հիմա կը յայտնուի. մի՞թէ չէք
գիտնար: Նաեւ ճանապարհ մը պիտի շինեմ անապա-
տին մէջ, ամայի տեղերու մէջ ալ՝ գետեր»:*

– Եսայիա 43.18,19



Մենք պետք է պատրաստակամօրէն ընդունինք փոփոխութիւնները, որպէսզի աւելի մտերմօրէն ճանչնանք զԱստուած: Եւ չկայ աւելի լաւ վայր՝ փոփոխութիւն վերապրելու համար, քան անապատը: Այս ամայի եւ լքուած թուացող վայրին մէջ մենք ականատես պիտի ըլլանք Անոր Հոգիի թարմ շարժումին:

Հարցում մը կայ, որ կը յառաջանայ շատերուն քով. *«Ինչո՞ւ կը պահանջուին դժուարին կամ չոր ժամանակներ՝ փոփոխութիւն բերելու համար»:* Այս գլուխին մէջ մենք պիտի փորձենք պատասխանել այս հարցումին:

Երբ ես անցայ իմ դժուարին անապատային ընթացքը, որ տեսց տասնութ ամիս, ես նշանակուեցայ երիտասարդական հովիւ Ֆլորիտա գտնուող եկեղեցւոյ մը մէջ (ատիկա շատ տարիներ առաջ էր): Այդ ժամանակ այն ամենաարագ աճող եկեղեցիներէն մէկն էր ԱՄՆ-ի մէջ, եւ ես քիչ մը անվստահ էի, քանի որ չունէի երիտասարդական ծառայութեան հովիւի փորձառութիւն: Այնուամենայնիւ, գիտէի, որ Աստուած ուղարկած էր զիս, եւ եթէ ես ջանասիրաբար փնտռէի Ձինք, ամէն ինչ լաւ պիտի ըլլար:

Այդ երիտասարդական ծառայութիւնը կառուցուած էր աւանդական ձեւով, ըստ որուն երիտասարդները ներգրաւուած էին բազմաթիւ հետաքրքրական զբաղումներու մէջ: Ցաւօք, այդ ծառայութեան մէջ ընդգրկուած երիտասարդներու մեծ մասը հոգեւոր աճ չունէր: Անոնցմէ շատերը անկանոն կեանք կը վարէին: Երբ ես ստանձնեցի ծառայութիւնը, զգացի, որ Սուրբ Հոգին ըսաւ. «Դուն պէտք է քարո-

զես ապաշխարութեան, սրբութեան, հնազանդութեան եւ Աստուծոյ իշխանութեան մասին»: Ես սկսայ քարոզել եւ սորվեցնել այդ մասին, եւ ժամանակի ընթացքին այդ ծառայութեան մէջ շրջադարձային փոփոխութիւն տեղի ունեցաւ:

Արդիւնքները զարմանալի էին: Երիտասարդներու թիւը եռապատկուեցաւ քանի մը ամսուան մէջ: Բազմաթիւ յանցագործ խումբերու անդամներ, այլ կրօններու հետեւորդներ եւ Աստուծոյ հեռու գտնուող երիտասարդներ կ'ընդունէին Յիսուսը: Երիտասարդներէն շատերը, որոնք նախկինին նահանջած էին, բռնկեցան այդ կրակով: Բոլորս կը վայելէինք Աստուծոյ առատ ներկայութիւնը, եւ մեր սէրը Անոր հանդէպ շարունակ կ'աւելնար: Աստուած մեծապէս կ'օրհնէր մեզ եւ մեր աշխատանքը:

Ես նոր դուրս ելած էի իմ առաջին անապատէն, որ անցած էի Տալլաս քաղաքին մէջ, եւ կը կարծէի, որ իմ անապատային փորձառութիւնը մէկընդմիջտ աւարտած էր: Այժմ ես իմ կոչման մէջ էի եւ Աւետարանը կը քարոզէի: Ես այսպէս կը մտածէի. քանի որ Յիսուսը միայն մէկ անգամ անցած էր անապատով, ես նոյնպէս պէտք է ըլլայի անապատին մէջ միայն մէկ անգամ: Ես խիստ կը սխալէի: Պէտք է ա՛լ աւելի մաքրուէի եւ զօրանայի եւ իմանայի աւելին անապատային ընթացքի մասին: Եւ յաջորդ անապատը, որ կը սպասէր ինձի, այնպիսին էր, որուն համեմատ նախորդը նման էր մանկական խաղի:

Սուրբ Հոգին բազմաթիւ նորարարական գաղափարներ կու տար մեր ծառայողական խումբին: Ասիկա տեղի կ'ունենայ, երբ Երկինքէն նոր զինի կը տրուի, երբ մենք «կ'ուղարկուինք Աստուծոյ» անապատային պատրաստութեան շրջանէն յետոյ: Ան կը սորվեցնէ մեզ արդիւնաւէտ եւ պողաբեր ըլլալ, ինչպէս որ կը սորվեցնէր Սովսէսին, Դաւիթին, Յովսէփին եւ այլոց:

Մեր երիտասարդական ծառայութիւնը իսկապէս գերբնականօրէն կ'աճէր: Այնուամենայնիւ, թէեւ մենք յաջողութեան հասած էինք, ես սաստիկ բեռ կը զգայի, որ կը վերաբերէր ոչ միայն մեր տեղական խումբին: Ես կը զգայի, որ մենք պէտք է հասնէինք կեդրոնական Ֆլորիտայի բոլոր երիտասարդներուն: Այնպէս որ, աղօթքի ժամանակ քովս միտք մը ծագեցաւ. *«Ի՞նչ կը կատարուի, եթէ մենք հեռարձա-*

կենք երիտասարդական ծառայութիւնը հեռատեսիլով»: Այդ ժամանակ՝ 1980-ականներու կէսերուն, ատիկա մարդոց հասնելու լաւագոյն միջոցն էր: Չկային ո՛չ համացանց, ո՛չ ընկերային ցանցեր, ո՛չ «YouTube», ո՛չ սմարթֆոններ՝ ոչինչ: Ես գիտցայ, որ մեր տեղական հեռուստակայաններէն մէկը հասանելի էր չորս միլիոն ներունակ (ներուժ ունեցող) ու պատրաստական հեռուստադիտողի: Ջարմանալիօրէն, այն ազատ եթերաժամ ունէր երեկոյեան ժամը 10:00-ին: Ես գիտէի, որ ատիկա լաւ ժամ էր՝ երիտասարդները «որսալու» համար:

Այդ մասին պատմեցի մեր աւագ հովիւին, եւ ան ըսաւ, որ եկեղեցին չունի միջոցներ ատոր համար: Ես հարցուցի՝ կրնա՞մ կոչ ընել մեր երիտասարդներուն գումար հանգանակել՝ հեռուստատեսային հաղորդում հովանաւորելու համար: Ան համաձայնեցաւ, եւ ես ներկայացուցի երիտասարդներուն տեսիլքը այն մասին, թէ ինչպէս մենք կրնայինք հասնիլ ամբողջ Կեդրոնական Ֆլորիտայի երիտասարդներուն, որոնք կախուած էին թմրադեղերէն, ալքոհոլային խմիչքէն, ինչպէս նաեւ շատ այլ խնդիրներ ունէին: Երիտասարդները ընդունեցին այդ տեսիլքը եւ խոստացան նուիրաբերել այն գումարներէն, որոնք անոնք կը վաստկէին մասնակի դրոյքով աշխատանքներու միջոցով՝ որպէս թերթեր ցրողներ, վաճառողներ՝ արագ սնունդի կէտերուն եւ խանութներուն մէջ, եւ այլն: Կերջաւորութեան մենք հանգանակեցինք բաւականաչափ գումար՝ խոստումներու տեսքով, որպէսզի ամէն շաբաթ երեկոյեան հեռարձակուէինք հեռատեսիլով:

Մեր աւագ հովիւը զարմացաւ՝ հասկնալով, որ ատիկա Աստուծոյ գործն էր: Ատիկա նոր գինիի հետեւանքն էր. չլսուած բան էր, որ որեւէ եկեղեցւոյ երիտասարդական ծառայութիւնը հեռարձակուէր հեռատեսիլով, շաբաթ երեկոյեան, ժամը 10:00-ին: Բայց ամէն ինչ յաջողեցաւ: Շուտով մենք ունեցանք երիտասարդներու առատ հունձք, որոնք չէին լսեր Աւետարանը, եթէ մենք ընդունած չըլլայինք «նոր գինին»: Երիտասարդականի հովիւի ծառայութիւնը ձգելէն շատ տարիներ յետոյ ես տակաւին կը լսէի վկայութիւններ այն մասին, որ մարդոց կեանքերը փոխուած էին այդ հեռուստատեսային հաղորդման միջոցով, որ մենք անուանեցինք «Կրակոտ երիտասարդութիւն»:

Փոփոխությունը լաւ է

Շուտով կը վերադառնանք երիտասարդական ծառայութեան: Բայց մինչ այդ խօսինք այն մասին, թէ ինչ է նոր գինին եւ ինչու այն է կարելորդ:

Այն փոփոխությունը, որուն Աստուած կը դրդէ մեզ, որպէս կանոն, դիրին չէ, սակայն միշտ դրական է եւ պտղաբեր: Յաճախ մենք կը հակառակինք փոփոխութեան, քանի որ այն կ'ազդէ մեր յարմարաւետութեան վրայ: Կարելի է ըսել, որ մենք բաղկացած ենք մեր սովորություններէն: Հազիւ որ ատոնք կ'արմատաւորուին մեր մէջ, փոփոխելը անյարմարութիւն կը պատճառէ մեզի: Բայց որպէսզի աւելի արդիւնաւետ կառուցենք Աստուծոյ Արքայութիւնը, մենք պէտք է բաց ըլլանք փոփոխութեան համար:

Եթէ մենք մեծցած ենք հաւատացեալ ընտանիքին մէջ, մեր հաւատքի գործելակերպը, սովորոյթները եւ ամանոյթները ձեւաւորուած են վաղ տարիքէն եւ խորապէս արմատաւորուած են մեր մէջ: Անշուշտ, բոլոր ամանոյթները չէ, որ սխալ են, բայց երբ մարդիկ ինչ որ բան մը կ'ընեն՝ մեկնելով միայն ամանոյթէն, ոչ թէ իրենց սրտէն, կը նշանակէ՝ անոնց Աստուածապաշտութիւնը բաղկացած է անկեանք գործերէն:

Իրականութեան մէջ, այդ գործերը կրնան նոյնիսկ վերածուիլ կրօնական ամրութեան: Այն մարդը, որ հետադիմած է՝ կրօնական դառնալով, ունի Աստուածապաշտութեան կերպարանք եւ կ'ընդունի այն ամէնը, ինչ որ Աստուած *կ'ընէր* անցեալի մէջ, սակայն կը հակառակի այն ամէնուն, ինչ որ Ան *կ'ընէ* ներկայիս:

Յիսուսի օրերուն ապրող փարիսեցիները եւ այլ կրօնական առաջնորդներ այսպիսին էին: Անոնք կը պարծենային՝ ըսելով, որ իրենք Աբրահամի զաւակներն էին, ուխտի որդիներն էին եւ Մովսէսի աշակերտներն էին: Անոնք կ'ընդունէին այն ամէնը, ինչ որ Աստուած ըրած էր, սակայն կը հակառակէին Աստուծոյ Որդիին, Որ կանգնած էր իրենց միջեւ: Անոնք նախանձաւոր էին իրենց ամանոյթներու եւ իրենց պաշտամունքի ձեւին համար: Այդ պատճառով, անոնք հակառակեցան, երբ Յիսուսը եկաւ՝ մարտահրաւէր նետելով բոլոր բնագաւառներուն, որոնց մէջ իրենք յարմարաւետութիւն եւ կայունութիւն ունէին: Յիսուսը յստակ ցոյց տուաւ, որ Աստուած պիտի չյարմարէր անոնց

պայմաններուն... անո՛նք պէտք է յարմարէին Աստուծոյ պայմաններուն: Անոնք ընդդիմացան այդ փոփոխութեան եւ կառչած մնացին իրենց ականդոյթներէն:

Կրօնական մարդոց քով վերնախաւային եսակեդրոն դիրքորոշում կը ձեւաւորուի. «Աստուած պիտի գործէ միայն մեր միջոցով եւ միայն ըստ մեր չափանիշներուն»: Այդ դիրքորոշումը կը յառաջացնէ նախապաշարմունք, եւ եթէ ասոր վերջ չտրուի, նաեւ՝ ատելութիւն եւ դաւաճանութիւն: Ասիկա տեղի ունեցաւ Յիսուսի օրերուն եւ տեղի ունեցած է եկեղեցւոյ ամբողջ պատմութեան ընթացքին:

Որպէսզի փոխուինք եւ անցում կատարենք փառքի մէկ մակարդակէն միւսը, մենք պէտք է ցանկանք ձգել մեր յարմարաւէտութիւնը եւ երթալ այն ճանապարհով, որուն միջոցով Աստուծոյ Հոգին կ'առաջնորդէ մեզ: Յաճախ այդ ճանապարհը կ'անցընէ մեզ անապատով, որուն մէջ Աստուած նոր կեանք կը բխեցնէ:

Այս յաջորդականութիւնը պարզօրէն կ'երեւի Յովհաննէս Մկրտիչի կեանքին մէջ: Անոր հայրը քահանայ էր, եւ ժամանակ մը նոյնիսկ քահանայապետ էր: Յովհաննէսը պէտք է քահանայ դառնար՝ իր հօր նման: Եւ քահանայ դառնալու համար ան պէտք է ուսում ստանար Երուսաղէմի մէջ՝ Գամաղիէլ անունով յայտնի ուսուցիչի քով: Բայց օր մը Տիրոջ Հոգին անապատ կանչեց զինք: Որքան ատելի Յովհաննէսը կ'աղօթէր, այնքան անապատ երթալու ներքին մղումը կը զօրանար: Համոզուած եմ, որ անոր ներսը պայքար էր, եւ թերեւս ան մտածէր.

«Իմ բոլոր ընկերները, որոնց հետ ես մեծցած եմ, «Աստուածաշնչեան դպրոց» կ'երթան: Անոնք վկայականներ կը ստանան եւ կը դառնան ընդունուած առաջնորդներ:

Անոնք կը ձեռնադրուին եւ կարողութիւն կ'ունենան քարոզել երկրի բոլոր ժողովարաններուն մէջ: Ի՞նչ պիտի մտածեն անոնք իմ մասին: Ինչպէ՞ս եւ պիտի կատարեմ իմ կոչումը, եթէ «Աստուածաշնչեան դպրոց» չերթամ:

Ես գիտեմ, որ իմ կեանքին մէջ կանչ կայ: Հայրս ըսած է ինձի, որ իրեշտակապետ մը ազդարարած է իմ ծննդեան մասին եւ ըսած է, որ

Ես ծառայող կ'ըլլամ: Բայց եթէ ես անապատ երթամ, ոչ ոք այդպէս ալ չի գիտնար, թէ ով եմ ես: Զիս երբեք չեն հրաւիրեր քարոզելու»:

Ինչպէս անցնիլ անապատը

#5 Ապրեցէ՛ք վրանին մէջ. տուն մի՛ կառուցէք

Երբեք մի՛ մոռնաք, որ անապատը ժամանակաւոր է, եւ դուք պարզապէս կ'անցնիք ատորմով: Այնպէս որ, մինչ անապատի մէջ էք, ապրեցէ՛ք վրանի մէջ, եւ ոչ մէկ պարագայի տուն կառուցեցէ՛ք:

Թէեւ իսրայէլցիները տասնեակ տարիներ անցուցին՝ դեգերելով անապատին մէջ, Աստուած չէր ծրագրած ատիկա: Ան չպատուիրեց անոնց գտնել լաւագոյն վայրը անապատին մէջ, բնակուիլ հոն եւ տուներ կառուցել՝ համակերպուելով այն իրականութեան հետ, որ, կը թուար, պիտի չփոխուէր: Ո՛չ, անոնք կ'ապրէին վրաններուն մէջ՝ մշտապէս պատրաստ հաւաքելու իրենց իրերը եւ տեղափոխուելու, երբ ամպը կը սկսէր շարժիլ: Անապատը մշտապէս նախատեսուած եղած է որպէս ժամանակաւոր բնակավայր, ոչ թէ նպատակավայր: Աստուած երբեք չըսաւ. «Անապատը այնքան ալ վատ տեղ չէ: Ո՞րուն պէտք է խոստման երկիրը: Եկէ՛ք հիմքեր փորենք եւ ամուր տուներ կառուցենք ձեզի եւ Ինծի համար»: Նոյնիսկ Աստուած բնակեցաւ վրանին մէջ անապատը անցնելու ամբողջ ընթացքին:

Ճամբարելը կրնայ զուարճալի եւ նոյնիսկ հաճելի ըլլալ կարճ ժամանակով, բայց մեզմէ շատերը կը գերադասեն հեռանալ բացօթեայ տարածքներէն եւ ապրիլ իսկական տունի մէջ: Մի՛ ապակողմնորոշուիք եւ մի՛ կառուցէ՛ք ձեր հիմքը անապատին մէջ: Ամէն ժամանակ պատրաստ եղէ՛ք հաւաքել ձեր իրերը, շարժիլ առաջ եւ, ի վերջոյ, դնել ձեր հին վրանը պահեստանոցին մէջ:

Այնուամենայնիւ, քանի որ անապատ երթալու կանչը կը վառէր իր ներսը, Յովհաննէսը անտեսեց իր միտքը ռմբակոծող հարցերը: Ան որոշեց հետեւիլ Հոգիին՝ անապատ երթալով: Անոր մասին գրուած է. «Եւ երեխան կ'աճէր ու կը զօրանար հոգիով եւ անապատներուն մէջ էր, մինչեւ այն օրը, որ ան երեւցաւ Իսրայէլին» (Ղուկաս 1.80): Հետաքրքրական է, որ Յովհաննէսը սկսաւ իր անապատային պատրաստութիւնը, երբ դեռ երեխայ էր: Տարիներ շարունակ ան պատրաստուեցաւ ծառայութեան համար, որ տեսց ընդամէնը վեց ամիս: Այնուամենայնիւ, Յիսուսը ըսաւ, որ ան «կնոջմէ ծնած» մեծագոյն մարգարէն էր:

Սուրբ Գիրքը կը լռէ այն մասին, թէ որքան ժամանակ Յովհաննէսը անցուցած է անապատին մէջ, քանի՞ անապատներ ան անցած է եւ ինչպիսի՞ ծանր պայմաններու մէջ եղած է: Ղուկաս 3.2-ին մէջ գրուած է. «Աննայի եւ Կայիափայի քահանայապետութեան օրերուն, Աստուծոյ Խօսքը եղաւ Չաքարիայի որդի Յովհաննէսի անապատին մէջ»: Ուշագրաւ է, որ մինչ Աննան եւ Կայիափան կը գործէին Աստուծմէ օտարացած եւ կրօնական դարձած համակարգին մէջ,

խստաշունչ եւ անջրդի վայրերուն մէջ նոր անօթ կը ձեւաւորուէր: Յատկապէս հոն պիտի յայտնուէր նոր գինին:

Աստուած պատրաստեց Յովհաննէսը անապատին մէջ, ոչ թէ իր օրերուն ընդունուած «Աստուածաշնչեան դպրոցին մէջ»: Ամբողջ Հրէաստանէն եւ Երուսաղէմէն հոծ բազմութիւններ կու գային լսելու Տիրոջ Խօսքը, որ Յովհաննէսը կը խօսէր անապատին մէջ: Հոգիի թարմ քամին սկսած էր փչել. Կը հոսէր նոր գինին, բայց այն *անապատին մէջ* էր, ոչ թէ *կրօնական հաստատութիւններուն մէջ*: Այն մարդիկ, որոնք յոգնած էին կրօնական կեղծաւորութենէն եւ աւանդոյթներէն, որոնք սրտանց կը ցանկային փոխել, գացին Յովհաննէսի քով՝ պատրաստուելով Աստուծոյ Որդիին յայտնուելուն:

Ատորմէ կարճ ժամանակ յետոյ եկաւ Յիսուսը, որպէսզի մկրտուէր Յովհաննէսի կողմէն Յորդանան գետին մէջ: Թէեւ Յովհաննէսը կը զգար, որ անարժան էր Ձինք մկրտելու համար, Յիսուսը պնդեց, որ ան ընէր ատիկա: Անհրաժեշտ էր, որ Յիսուսի ծառայութիւնը ծնունդ առնէր այն բանէն, ինչ Աստուծոյ Հոգին կ'ընէր երկրի վրայ այդ ժամանակ: Ատորմէ յետոյ Յիսուսը լեցուեցաւ Հոգիով եւ անմիջապէս տարուեցաւ անապատ:

Աստուածաշունչը պարզօրէն կը նշէ, որ երբ Յիսուսը տարուեցաւ անապատ, Ան *լեցուած էր Հոգիով*, բայց քառասուն օր տեւող փորձութիւններէն յետոյ անապատէն վերադարձաւ Հոգիի *զօրութեամբ*: Այժմ Ան սպառազինուած էր, որպէսզի կատարէր այն ծառայութիւնը, որուն համար եկած էր: Յովհաննէս Մկրտիչի ծառայութենէն ընդամէնը քանի մը ամիս յետոյ անապատէն ծագեցաւ եւս նոր բան մը՝ Յիսուսը Քրիստոսի ծառայութիւնը:

Նոր տիկեր

Կարճ ժամանակ յետոյ այն բանէն ետք, երբ Յիսուսը սկսաւ Իր ծառայութիւնը, մենք կը կարդանք. «Անոնք ալ ըսին Անոր. «Ինչո՞ւ Յովհաննէսին աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն եւ աղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցիները, իսկ Քու աշակերտները կ'ուտեն ու կը խմեն»» (Ղուկաս 5.33): Առաջին հարցումը, որ պէտք է տանք, հետեւեալն է. որո՞նք են «անոնք»: Մենք կը գտնենք պատասխանը Մատթէոսի Աւետարանին մէջ. «Այն ժամանակ Յովհաննէսի աշակերտները Անոր (Յիսուսի) քով եկան եւ ըսին...» (9.14): Տարիներ շարունակ ես կը կարծէի, որ այս հարցումը տուին փարիսեցիները, բայց երբ իմացայ, որ այն տուողները Յովհաննէս Մկրտիչի աշակերտներն էին, ես տեսայ այս հատուածը բոլորովին այլ լոյսի ներքոյ: Անոնք բարկացած էին, քանի որ իրենք յաճախ ծոմ կը պահէին ուտելիքէն եւ ժամեր շարունակ կ'աղօթէին, իսկ Յիսուսին աշակերտները այդպէս չէին վարուեր: Յովհաննէսի հետեւորդները մեծ զոհեր կ'ընէին, սակայն ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր Յիսուսի աշակերտներուն:

Այն միջոցներէն մէկը, որոնցմով Սուրբ Հոգին կը շարժէր Յովհաննէս Մկրտիչի օրերու ընթացքին, տեսական ծոմերն էին: Այնուամենայնիւ, Յովհաննէսի աշակերտները անցում չկատարեցին Յովհաննէսի ծառայութեան ձեւէն դէպի այն, ինչ որ Աստուծոյ Հոգին կ'ընէ *հիմա*: Անոնք համոզուած էին, որ այդ ժամանակուան հոգեւոր պտուղը յառաջացած էր իրենց ծառայութեան եւ երկրպագութեան արդիւնքով: Անոնք մեծ գին վճարած էին՝ Յովհաննէս Մկրտիչին հետեւելու համար: Անոնք ձգած էին իրենց ընտանիքները, կ'ապրէին անապատին

մէջ եւ կը սնուէին միջատներով, իսկ այժմ անոնց առաջնորդը բանտն էր: Նոր Ծառայողի աշակերտները չէին «խաղար իրենց կանոններով»: Յովհաննէսի խումբը վիրաւորուած էր եւ կանգնած էր կրօնական դառնալու վտանգին առջեւ:

Յիշեցէք՝ կրօնական հոգիները մշտապէս կը կը յարին այն ամէնուն, ինչ որ Աստուած *ըրած է* անցեալին, սակայն կ'ընդդիմանան այն ամէնուն, ինչ որ Ան *կ'ընէ* հիմա: Հնարաւոր է, որ Յովհաննէսի հետեւորդները սկսած էին աւելի շատ շեշտադրել իրենց առաջնորդին հաւատարիմ ըլլալը եւ անոր հետեւորդներուն յատուկ վարք ունենալը, քան այն, ինչ որ Աստուած կ'ըսէր եւ կ'ընէր *հիմա*: Անոնք այլեւս կեդրոնացած չէին Աստուծոյ սրտին վրայ: Այժմ անոնք կեդրոնացած էին այն *ծելին* վրայ, որ ժամանակ մը կրնար առաջնորդել դէպի Աստուծոյ սիրտը:

Հպարտութիւնը եւ վիրաւորանքը գլուխ բարձրացուցին: Յովհաննէսին հետ եղող մարդիկ ներդրած էին այդ ծառայութեան մէջ իրենց ժամանակը եւ, հաւանաբար, դրամական միջոցները: Այժմ այն ամէնը, ինչ որ անոնք ըրած էին, ինչին կը սատարէին եւ ինչ որ ձեռք բերած էին, վտանգուած էր: Այնպէս որ, անոնք մեկուսացան եւ ընդդիմացան փոփոխութեան, թէեւ անոնց առաջնորդը Յիսուսին մասին յայտարարեց. «Անոր պէտք է աճիլ, եւ ինձի՝ փոքրանալ» (Յովհաննէս 3.30):

Ահա թէ ինչ պատասխանեց Յիսուսը անոնց. «Ան ալ ըսաւ անոնց. «Մի՞թէ կրնաք հարսանիքի տղաներուն, քանի որ փեսան անոնց հետ է, ծոմ պահել տալ» (Ղուկաս 5.34): Ան բացայայտեց անոնց կրօնական վարքը՝ ըսելով. «Ինչո՞ւ անոնք պէտք է ծոմեր պահեն, եթէ Աստուծոյ Որդին անոնց հետ է: Եթէ անոնք ինչ որ բան մը ուզեն Աստուծմէ, անոնք կրնան գալ քովս» (շրջասութիւն): Կրօնական մտածելակերպը դրդած էր զանոնք հաւատալու, որ իրենք պէտք է վաստակէին Աստուծոյ բարեհաճութիւնը ծոմերով եւ այլ կրօնական գործերով: Ծոմը անոնց համար Աստուծոյ քով մուտք գործելու միջոց էր, որ, իրենց կարծիքով, կը բարձրացնէր զիրենք այլ մարդոցմէ, որոնք ծոմ չէին պահեր (եւ չէին օգտագործեր իրենց միւս մեթոտները): Այդ կերպով հպարտութիւնը թափանցեց անոնց կեանքը: Անոնց ծառայութեան ձեւը դարձաւ աւելի կարեւոր, քան աստոր սկզբնական պտուղը:

Թէեւ կերակուրէն ծոմ վերցնելու մէջ օգուտ կայ, աստոր նպատակը

Աստուծոյ շահարկելը չէ, այլ՝ Անոր ձայնը աւելի պարզօրէն լսելը: Ուրեմն, ինչո՞ւ աշակերտները պէտք է ծոմ պահէին՝ Աստուծոյ ձայնը լսելու համար, երբ Ան իրենց կողքին էր: Կրկին կարդացէք Ղուկաս 5.34,35-ը. «Մի՞թէ կրնաք հարսանիքի տղաներուն, քանի որ փեսան անոնց հետ է, ծոմ պահել տալ: Բայց օրեր պիտի գան, երբ որ փեսան վեր պիտի առնուի անոնցմէ. ապա այն օրերուն ծոմ պիտի պահեն»:

Ան չըսաւ, որ այդ օրերուն անոնք *թերեւս* ծոմ պահեն: Ան ըսաւ, որ անոնք *անպայման* ծոմ կը պահեն: Այդ մարդիկ կը խօսէին միայն կերակուրէն ծոմ վերցնելու մասին, իսկ Յիսուսը այլ ծոմ նկատի ունէր: Ուշադրութիւն դարձուցէք, որ այդ ծոմը պիտի ըլլայ այն օրերուն, երբ Փեսան վեր պիտի առնուի անոնցմէ: Ատիկա ծոմ է Անոր յայտնուած ներկայութենէն, ոչ թէ պարզապէս ուտելիքէն: Մենք գիտենք այս մասին, քանի որ Ան բացատրեց ասիկա առակով մը: Յիշեցէք, որ անապատը կարելի է սահմանել նաեւ որպէս Աստուծոյ յայտնուած ներկայութեան բացակայութիւն:

Կարդանք այն առակը, որ Ան օգտագործեց՝ Իր ըսածը բացատրելու համար.

«Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ չի դներ: Ապա թէ ոչ, նոր գինին տիկերը կը պատռէ, ինքն ալ կը թափի, տիկերն ալ կը կորսուին» (Ղուկաս 5.37):

Աստուածաշունչին մէջ գինին Աստուծոյ ներկայութեան խորհրդանիշն է: Պօղոսը կը գրէ Եփեսացիներու 5.18-ին մէջ. «Եւ մի՛ գինովնաք գինիով, որուն մէջ անառակութիւն կայ, այլ լեցուեցէ՛ք Հոգիով»:

Մենք պէտք է լեցուինք գինիով՝ Աստուծոյ ներկայութեամբ: Նոր գինին Անոր Հոգիին նոր շարժումն է:

Թոյլ տուէք անգամ մը եւս մէկ անգամ կարճ անդրադառնալ այս կարեւոր հարցումին: Կը յիշէ՞ք, թէ որքան հրաշալի էր, երբ դուք նոր լեցուած էիք Հոգիով: Աստուծոյ ներկայութիւնը քաղցր եւ զօրաւոր էր: Ամէն անգամ, երբ կ'աղօթէիք, Անոր ներկայութիւնը անմիջապէս կը յայտնուէր, եւ դուք կը զգայիք այն ամբողջ օրուան ընթացքին: Երբեմն եկեղեցւոյ մէջ դուք պարզապէս նստած կու լայիք, քանի որ Ան այնքա՛ն մօտ էր ձեզի:

Այնուամենայնիւ, որոշ ժամանակ յետոյ կը սկսիք նկատել, որ այդ-քան դիւրաբար չէք զգար Անոր ներկայութիւնը: Դուք կը շարունակէք աղօթել՝ ինչպէս միշտ, սակայն ձեր քով հարցում մը կը յառաջանայ. «Աստուած, ո՞ւր ես»: Դուք անապատի՛ մէջ էք:

Այդ անապատը կամ ծոմը Աստուծոյ ներկայութենէն յատուկ պատ-ճառ ունի: Աստուած կը պատրաստէ ձեզ՝ նոր տիկ դառնալու համար: Դուք չէք կրնար լեցնել նոր գինին՝ Աստուծոյ Հոգիի նոր շարժումը, հին տիկերու մէջ:

Յիսուսի օրերուն օգտագործուող գինիի տիկերը կը պատրաս-տուէին ոչխարի կաշիէն: Երբ գինին կը լեցուէր ամառին անգամ, տի-կերը ձկուն եւ ամառձական էին: Ատոնք դիւրաբար կը քաշուէին եւ չէին վնասուէր, երբ գինին կը տարածուէր: Սակայն տարիներու ըն-թացքին Մերձաւոր Արեւելքի օդը կը չորցնէր գինիի տիկը՝ դարձնելով այն կարծր ու դիւրութեամբ վնասուող: Եթէ ատոր մէջի գինին թափէր եւ նոր գինի լեցուէր, այդ տիկը չէր դիմանար ո՛չ նոր գինիի ծանրու-թեան, ո՛չ ալ խմորման, քանի որ այն դիւրաբար կը ճաքէր կամ կը պատռուէր: Այդ խնդիրը լուծելու համար հին տիկերը քանի մը օրով ջուրի մէջ կը դնէին, իսկ յետոյ ատոնց վրայ ձիթապտուղի իւղ կը քսէին: Ատիկա կը վերականգնէր տիկի ձկունութիւնը եւ ամառձականութիւնը:

Ասիկա կը նկարագրէ այն, ինչ որ տեղի կ'ունենայ մեզի հետ, քանի որ մենք հոգեւոր նոր գինիի տիկ ենք: Մենք կանչուած ենք՝ ըլլալու Աս-տուծոյ ներկայութիւնը կրողները: Այն մթնոլորտը, որուն մէջ կ'ապրինք, կրնայ թուլցնել մեր զգայունութիւնը Աստուծոյ ճանապարհներու հան-դէպ: Մենք երկինքը չենք. մենք կ'ապրինք քայքայման ենթակայ միջա-վայրի՝ այս աշխարհի մէջ: Այնպէս որ, մեր միտքը պէտք է նորոգուի: Որպէսզի մեր տիկերը ամառձական ըլլան, որպէսզի ատոնք մշտապէս պատրաստ ըլլան նոր գինիի համար, մենք պէտք է ընկղմինք Աստուծոյ Խօսքին մէջ: Եփեսացիներու 5.26-ին մէջ Պօղոսը կը գրէ. «Որ (Յիսուսը) գինք (եկեղեցին) կը սրբացնէ՝ մաքրելով ջուրի աւազանով՝ Խօսքով»: Տիկի վրայ ձիթապտուղի իւղ քսելը կարելի է համեմատել աղօթքի մէջ զԱստուած փնտրելուն հետ: Երբ մենք ժամանակ կ'անցընենք Աստու-ծոյ հետ՝ Անոր Խօսքի եւ աղօթքի մէջ, մեր միտքը կը նորոգուի, եւ մեր ճանապարհներն ու վարքը կը դադրին կարծր ըլլալէն:

Այնուամենայնիւ, հին տիկը նորոգելու համար նախ պէտք է թափել հին գինին: Այսինքն, տիկը պէտք է մնայ առանց գինիի՝ առանց Աստուծոյ յայտնուած ներկայութեան: Ատիկա կարելի է անուանել ծոմ Աստուծոյ յայտնուած ներկայութենէն, կամ, ինչպէս մենք շարունակաբար կ'ըսենք, չորութեան ժամանակահատուած: Ձեր կեանքի նման փուլերուն մէջ դուք *փոփոխութեան* կը պատրաստուիք:

Ինչո՞ւ Աստուած կը հեռացնէ Իր շօշափելի ներկայութիւնը: Որպէսզի դուք յուսալքուի՞ք: Ո՛չ, թէեւ ասիկա տեղի պիտի ունենայ: Թէ՞, որպէսզի «դարակի մէջ դնէ» ձեզ, մինչեւ որ կրկին պէտք ըլլաք Իրեն: Ո՛չ: Ան կը հեռացնէ Իր ներկայութիւնը, որպէսզի դրդէ ձեզ ա՛լ աւելի ջանասիրաբար փնտռելու Ձինք: Աստուած փնտռելը կրկին ճկուն եւ առաձգական կը դարձնէ: Կարծր եւ ոչ ճկուն մարդիկ անոնք են, որոնք դադրած են զԱստուած փնտռելէն: Անոնք կը կարծրանան իրենց գործելակերպի մէջ եւ այն բանաձեւերու մէջ, որոնք կազմած են նախկինին ունեցած իրական վերապրումներէն:

Յովհաննէս Մկրտիչի հետեւորդները յայտնուած էին նման վիճակի մէջ: Անոնք միացած էին Յովհաննէսին՝ տեսնելով, որ Տէրը զօրաւոր ծելով կը գործէր անոր միջոցով: Այնուամենայնիւ, շարունակ դէպի երկնային մրցանակ երթալու փոխարէն, որ Աստուծոյ մտերմօրէն ճանչնալն է, անոնք կարծրացած էին իրենց համոզմունքներու եւ գործելակերպի մէջ:

Աստուծոյ ամէն մէկ շարժումին մէջ կը ծնի թարմ ուսմունք: Ուսմունքները եւ առողջ վարդապետութիւնները միջոցներ են, որոնք կը մօտեցնեն մեզ Աստուծոյ սրտին: Այնուամենայնիւ, եթէ մենք կեդրոնանանք առանձին ուսմունքներու կամ վարդապետութիւններու վրայ, ատոնք, ի վերջոյ, կը տանին կրօնական գերութեան, օրինապաշտութեան կամ հերձուածութեան, իսկ, թերեւս, երեքին ալ միաժամանակ:

Դուք չէք կրնար ճանչնալ զԱստուած՝ հետեւելով պաշտամունքի որեւէ կարծրացած ձեւի, այնինչ շատ քրիստոնէաներ անգիտակցաբար այդպէս կը վարուին: Անոնք կը հաստատեն իրենց համար պաշտամունքի ձեւեր եւ մեթոտներ: Եւ երբ անոնց կեանքին մէջ վերջապէս օրինակելի քրիստոնէական վարք կը ձեւաւորուի, անոնք կը դադրին զԱստուած *փնտռելէն* եւ կը սկսին ապրիլ համաձայն այն սովորոյթ-

ներուն եւ աւանդոյթներուն, որոնք ձեւաւորած են: Այնուամենայնիւ, անոնք անբացատրելի դատարկութիւն կը զգան իրենց ներսը, թէ եւ կը համարեն, որ կ'ապրին ըստ ամբողջական Աւետարանի:

Երեմիա 29.12,13-ին մէջ գրուած է.

«Եւ դուք կը կանչէք Ջիս եւ կ'երթաք ու աղօթք կ'ընէք դէպի Ինծի, եւ Ես կը լսեմ ձեզ: Եւ դուք Ջիս կը փնտռենք եւ կը գտնէք, որովհետեւ Ջիս կը խնդրէք ձեր ամբողջ սրտով»:

Աղօթքը ինքնին բաւական չէ՝ զԱստուած գտնելու համար: Անոնք, որոնք կը հետեւին կրօնական սովորոյթներու, ճշդապահօրէն կ'աղօթեն, սակայն Աստուած կ'ըսէ, որ ձեր աղօթքներուն մէջ դուք պէտք է ջանասիրաբար փնտռէք *Ջիսը*: Այս խօսքին մէջ Ան յստակ ցոյց կու տայ, որ աղօթքի մէջ պէտք է որոնում ըլլայ, իսկ ասոր համար կը պահանջուի աւելին, քան պարզապէս սովորոյթին հետեւիլը: Ասոր համար անհրաժեշտ է ջերմեռանդ ցանկութիւն եւ Անոր սիրտը ճանչնալու ձգտում: Ահա թէ ինչու Եբրայեցիներու 11.6-ին մէջ Աստուած կ'ըսէ. «Բայց առանց հաւատքի անկարելի է հաճոյ ըլլալ, որովհետեւ Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւատայ, թէ Ան կայ, եւ թէ Իրեն խնդրողներուն վարձայատոյց կ'ըլլայ»:

Այժմ եկէք կրկին կարդանք Յիսուսին խօսքերը.

«Եւ ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ չի դներ: Ապա թէ ոչ, նոր գինին տիկերը կը պատռէ, ինքն ալ կը թափի, տիկերն ալ կը կորսուին: Այլ նոր գինին նոր տիկերու մէջ պէտք է դրուի, եւ երկուքն ալ կը պահուին: Եւ ոչ ոք կայ, որ հինը խմէ, շուտով նորը կամենայ, որովհետեւ կ'ըսէ, թէ «Հինը աւելի քաղցր է»» (Ղուկաս 5.37-39):

Ան, որ վարժուած է հին գինիին, «շուտով» չի փափաքիր նորը: Բանալի բառը այս պնդումին մէջ «շուտով» բառն է, քանի որ մենք մարդիկ ենք՝ մեր սովորութիւններով եւ գործելակերպերով: Աստուած պէտք է հեռացնէ մեր յարմարաւէտութեան գօտիները՝ դատարկելով *հին գինին* եւ թոյլ տալով, որ մենք պատրաստման անապատային ըն-

թացք անցնինք, որպեսզի ծարաւ ունենանք *նոր գինիին* համար: Երբ դուք ծարաւ ըլլաք եւ խմելու ոչինչ ունենաք, դուք չէք տրտնջար. «Ես չեմ ուզեր այս նոր գինին: Ես կ'ուզեմ հինը»: Եթէ կը փափաքիք Աստուծոյ ներկայութիւնը եւ զօրութիւնը, դուք կ'ընդունիք Աստուծոյ Հոգիի նոր շարժումը ձեր կեանքին մէջ: Դուք կ'ըլլաք Դաւիթի պէս, որ իր անապատային ընթացքի ժամանակ ըսաւ.

«Ո՛վ Աստուած, Դո՛ւն ես իմ Աստուածը.

Առաւօտեան Քեզ կը փնտռեմ:

Հոգիս ծարաւ է Քեզի համար.

Մարմինս Քեզի կը ցանկայ ցամաք եւ ծարաւ երկրին մէջ,
ուր ջուր չկայ:

Այնպէս սրբութեան տեղը նայեցայ Քեզի,

որ Քու զօրութիւնն ու փառքը տեսնեմ» (Սաղմոս 63.1,2):

Դաւիթը ծարաւ էր Աստուծոյ զօրութեան եւ ներկայութեան: Այդ պատճառով, երբ մտաւ իր կոչումին մէջ, ան ճկուն էր Տիրոջ ցանկութիւններուն համար՝ ի տարբերութիւն Սաւուղ թագաւորին, որ ամէն ինչ կ'ընէր իր ուզած ձեւով, ոչ թէ՝ Աստուծոյ:

Եւս մէկ անապատ

Ինչպէս աւելի վաղ կը պատմէի այս գլխուն մէջ, երիտասարդական հովիւի ծառայութիւնը իմ առաջին ուսուցչական ծառայութիւնն էր: Հեռուստատեսութեամբ հեռարձակուող հաւաքոյթները մեծ յաջողութիւն ունեցան: Մենք նոյնպէս կը հեռարձակէինք կարճ աւետարանչական հոլովակներ ռատիոկայանով մը, որ երկրորդ ամենայայտնի կայանն էր մեր տարածաշրջանին մէջ: Ամէն ինչ հրաշալի էր:

Այնուամենայնիւ, օր մը, երբ կ'աղօթէի, Աստուծոյ Հոգին ըսաւ, որ մեր կեանքին մէջ փոփոխութիւն կը սպասուի. «Քեզ կը հեռացնեն երիտասարդական ծառայութեան հովիւի պաշտօնէն,- ըսաւ Ան,- եւ Ես կ'իւղարկեմ քեզ եկեղեցիներու եւ համաժողովներու Ամերիկայի բոլոր քաղաքներուն մէջ՝ արեւելեան ափէն մինչեւ արեւմտեան ափը եւ Քա-

նատայի սահմանէն մինչեւ Մեքսիքայի սահմանը, դէպի Ալիասքա եւ Հաուայեան կղզիներ...»:

Ես պատմեցի Լիզային այն, ինչ որ Աստուծոյ Հոգին ըսաւ, եւ երկուքով սկսանք խորհիլ ատոր շուրջ: Մենք այդ մասին ոչ ոքի պատմեցինք՝ բացի մէկ ընկերոջմէ, որ հովիւ էր այլ նահանգի մը մէջ: Աստուած ըսաւ, որ Ինքը պիտի ընէր ատիկա, եւ ես գիտէի, որ եթէ իսկապէս Ան ըսած էր ատիկա, կարիք չկար, որ օգնէի Անոր՝ ատիկա իրագործելու համար:

Այնուամենայնիւ, անցաւ աւելի քան մէկ տարի, բայց ոչինչ տեղի ունեցաւ: Այդ սպասման ընթացքին ես աւելի ու աւելի մեծ դժուարութեամբ մուտք կը գործէի Աստուծոյ ներկայութեան մէջ, մինչեւ որ ատիկա սկսաւ անկարելի թուալ: Ես կ'աղօթէի աւելի շատ, քան երբեք աղօթած էի, սակայն ամէն ինչ ապարդիւն կը թուար: Բացի այդ՝ իմ տեսիլքը երիտասարդական ծառայութեան համար կը մարէր (հին գինին կը թափէր): Որքան աւելի կ'աղօթէի, այնքան այն կը թուլնար: Արտաքուստ ոչինչ կը փոխուէր, բայց ներքուստ իմ ձգտումը կը նուազէր:

Ես ժամեր շարունակ կ'աղօթէի մեր երիտասարդական ծառայութիւններէն առաջ, եւ քանի մը անգամ նոյնիսկ կ'աղաչէի Աստուծոյ, որ ուղարկէր այլ մարդ մը՝ քարոզելու համար: Ես կ'երթայի ծառայութեան դատարկութեան զգացումով, բայց Աստուծոյ ներկայութիւնը ծածկոցի պէս կ'իջնէր իմ վրաս՝ մինչ ես կը ծառայէի: Երբ կը վերջացնէի եւ տան ճանապարհին էի, Անոր ներկայութիւնը կրկին կը վերցուէր եւս մէկ շաբաթով:

Ի լրումն այդ ամէնուն, մեր կեանքին մէջ սկսած էին արտաքին եւ ներքին նեղութիւններ, ինչպիսիք երբեք չէինք ունեցած: Ես կը հարցնէի ինծի՝ արդեօ՞ք խնդիրը իմ մէջս է: Կը խոստովանէի ամէն մէկ մեղք, որ, ինչպէս կը յիշէի, գործած էի, բայց ոչ մէկ թեթեւութիւն կը զգայի իմ չորութենէն:

Անգամ մը, երբ կը փորձէի հասկնալ, թէ ինչ մեղք գործած էի, Տէրը ըսաւ. «Դուն անապատի մէջ չես այն պատճառով, որ մեղանչած ես: Ես կը պատրաստեմ քեզ գալիք փոփոխութեան համար»:

Ան կը ձեւաւորէր իմ մէջ այն բնաւորութիւնը, որ անհրաժեշտ էր, որպէսզի ընդունէի Անոր կանչը իմ ծառայութեան յաջորդ փուլին համար: Կարդացէ՛ք Եսայիա 43.18,19-ը.

«Առաջինները մի՛ յիշէք, եւ հին բաները մի՛ մտաբերէք: Ահա
Ես նոր բան կ'ընեմ. հիմա կը յայտնուի. մի՞թէ չէք գիտեր:
Նաեւ ճանապարհ պիտի շինեմ անապատին մէջ, ամայի
տեղերն ալ՝ գետեր»:

Աւելի ուշ այս գիրքին մէջ պիտի պատմեմ, թէ ինչպէս ժամանակին
Տէրը հրաշքով յայտնեց այդ «գալիք փոփոխութեան» մանրամասները:
Ամբողջ այդ ընթացքին՝ իմ անապատի ամենածանր օրերուն, Տէրը
կը պատրաստուէր ծնունդ տալ մեր ծառայութեան, որ ազդեցութիւն
պիտի ձգէր Ամերիկայի, իսկ յետագային՝ բազմաթիւ ազգերու վրայ:

Իմ ընկե՛ր, Աստուած կը դատարկէ ձեր *հին* գինին, որպէսզի, երբ
գայ *նորը* (իսկ *նոր* գինիին հետ փորձութիւններ կու գան), դուք չցան-
կաք վերադառնալ *հինին*:

ԵՐԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԸ

«Որոշ մարդիկ կը վերադառնան իրենց անցեալին եւ կը քրքրեն բոլոր նեղութիւնները, որոնք իրենց կեանքի ընթացքին ունեցած են, իսկ յետոյ կը նային ապագային եւ կ'ակնկալեն, որ պիտի ունենան աւելի շատ նեղութիւններ, եւ այդպէս ալ օրօրուելով ու տատանելով կ'ապրին իրենց ամբողջ կեանքը»:

– S. L. Մուտի

«Ո՛չ, թանկագին եղբայրներ եւ քոյրեր, ես չեմ հասած, բայց կը կեդրոնանամ մէկ բանի վրայ. մոռնալով անցեալը եւ ակնկալելով այն, ինչ որ առջեւն է՝ ես ջանասիրաբար կը ձգտիմ հասնիլ այս ընթացքի աւարտին եւ ստանալ այն երկնային մրցանակը, որուն համար Աստուած՝ Յիսուս Քրիստոսով, կը կանչէ մեզ»:

– Փիլիպպեցիս 3.13,14, (NLT)

Պօղոս առաքելը գրեց Նոր կտակարանի նամակներու երկու երրորդը եւ հիմնադրեց բազմաթիւ եկեղեցիներ: Անոր ծառայութիւնը տարածուեցաւ աշխարհով մէկ, սակայն կեանքի վերջաւորութեան ան ըսաւ. *«Ես դեռ չեմ հասած»*: Ան գոհ չէր, եւ չէր ալ ըլլար, մինչեւ որ չաւարտէր իր ընթացքը եւ չստանար երկնային մրցանակը:

Որպէսզի աւարտենք մեր ընթացքը եւ ստանանք մեր մրցանակը, առաջինը, որ պէտք է վստահ ըլլանք մեր սրտին մէջ այն է, որ մենք դեռ չենք հասած ատոր:

Մենք կատարեալ չենք դարձած. մենք պէտք է շարունակենք փոխուիլ ու աճիլ:

Մովսէսը նոյնպէս ուշագրաւ կոչում ունէր. ան առաջնորդեց երեք միլիոն մարդէ բաղկացած ամբողջ ազգ մը եւ եզակի մասնակցութիւն ունեցաւ Հին կտակարանի շարք մը նշաններուն եւ հրաշքներուն: Այնուամենայնիւ, Աստուած ըսաւ, որ Մովսէս ամենաաւանելի մարդն էր ամբողջ երկրի վրայ: Ան չէր համարեր, որ ինքը հասած էր, այլ ջանասիրաբար կը ծագտէր աւարտել իր ընթացքը եւ ստանալ երկնային մրցանակը: Որպէսզի փոխուինք եւ աճ ունենանք, մենք պէտք է ուսանելի ըլլանք:

Երկրորդը՝ որպէսզի աւարտենք մեր ընթացքը Աստուծոյ համար, մենք պէտք է մոռնանք *«ետեւի բաները»* (յաղթանակները եւ պարտութիւնները): Կրկին, Եսայիա 43.18,19-ին մէջ Աստուած կ'ըսէ.

«Բայց մոռցե՛ք այդ ամենը. Ատիկա ոչինչ է՝ այն բանին համեմատ, ինչ որ Ես կը պատրաստուիմ ընել: Որովհետեւ Ես նոր բան մը պիտի ընեմ: Տեսե՛ք, Ես արդէն սկսած եմ: Մի՞թէ չէք տեսներ ատիկա: Ես ճանապարհ կը պատրաստեմ անապատին մէջ: Ես գետեր կը ստեղծեմ չոր եւ ամայի վայրին մէջ» (NLT):

Եթէ մենք շարունակ մտածենք անցեալի ձախողութիւններու, մեր-ժուածութեան եւ մեղքերու մասին, ատիկա թոյլ չի տար մեզի առջեւ երթալ Քրիստոսի մէջ: Այնուամենայնիւ, մեր անցեալի *յաղթանակները* նոյնպէս կրնան ետ պահել մեզ: Եթէ մենք անձնապաստան եւ ինքնավստահ դառնանք եւ թոյլ տանք, որ անցեալի ձեռքբերումները դառնան մեր յենարանը, մենք կը կորսնցնենք այն, ինչ որ Աստուած պատրաստած է ներկայի համար: Աստուած ճիշդ ասիկա կ'ըսէ Եսայիա 43-րդ գլուխին մէջ: Այն, ինչ որ եղած է անցեալին, նոյնպէս Անորմէ էր, բայց որպէսզի առաջ շարժինք եւ իրագործենք Անոր ծրագիրները, մենք պէտք է պատրաստ ըլլանք հրաժարիլ այն բանէն, թէ ինչպէս Աստուած կը գործէր մեր միջոցով անցեալին: Հակառակ պարագային, մեզ վտանգ կը սպառնայ. մենք կրնանք հին տիկ դառնալ:

Պօղոսը նոյնպէս շեշտեց այս ճշմարտութիւնը:

«Երբ որ երեխայ էի, երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը մտածէի, երեխայի պէս կը կարծէի: Բայց երբ մարդ եղայ, այն երեխայութեան բաները մէկդի ձգեցի: Որովհետեւ հիմա հայելիի մէջ օրինակով կը տեսնենք, բայց այն ժամանակ՝ դէմ առ դէմ: Հիմա շատէն քիչ տեղեակ եմ, բայց այն ատեն այնպէս պիտի գիտնամ, ինչպէս գիտցուած եմ» (Ա. Կորնթացիս 13.11,12):

Երեխան սխալ չէ. ան պարզապէս հասուն չէ: Երբ Ես հինգ տարեկան էի, իմ ամբողջ աշխարհը բաղկացած էր խաղալիք ինքնաշարժներէն եւ աղիւսախաղերու հաւաքածուէն (Lego): Այբուբենը անգիր կրկնելը մեծ ձեռքբերում կը համարուէր: Ես կը նայէի կեանքին գունաւոր ակնոցով, քանի որ այնքան հասուն չէի, որ կարենայի ընկալել ատոր աւելի բարդ եւ ընդարձակ ոլորտները:

Երբ տասնութ տարեկան դարձայ, խաղալիք ինքնաշարժները եւ աղիւսախաղերը անցեալին էին: Այժմ, տարիներ շարունակ հասուն-նալէն յետոյ, ես այլեւս չէի նայեր կեանքին գունաւոր ակնոցով: Իմ հասկացողութեան մակարդակը եւ կարողութիւնները աւելցած էին: Երբ տասնութ տարեկանը կը վարուի հինգ տարեկանի պէս, ասիկա բնական չէ: Մեծնալով՝ մենք կը մոռնանք նախկին մանկական վարքն ու պատկերացումները, որոնք այլեւս օգտակար եւ գործածական չեն՝

Ինչպէս անցնիլ անապատը

#6 Ինչ պէտք չէ ընել

Հիմնուելով այն բանին վրայ, ինչ որ Աստուածաշունչը կը պատմէ մեզ իսրայէլցիներու տխրալի փորձառութեան մասին՝ կան բաներ, որոնք մենք պէտք չէ ընենք անապատին մէջ՝ այդ անջրդի վայրը, ուր մենք ժամանակաւորապէս կը գտնուինք: Իրականութեան մէջ, այդ անընդունելի արարքներու կամ մեղքերու ցուցակը կը վերաբերի քրիստոնէական կեանքի իւրաքանչիւր փուլին, սակայն ատոնց գայթակղութիւնը, հաւանաբար, աւելի մեծ է, երբ մենք կը պայքարինք անապատին մէջ: Ահա անոնց գործած ամենածանր արարքներու առնուազն մասնակի ցուցակը.

1. Չար բաներ ցանկալը: Երբեմն, երբ գրկանքներ կը կրենք, մենք կրնանք մտածել, որ սխալ արարքները կ'օգնեն, որ աւելի լաւ եւ երջանիկ զգանք:
2. Կուռքերու ձգտիլը: Ասիկա կը նշանակէ՝ ձգտիլ մեր ցանկութիւններուն, երբ մենք գիտենք, որ ատոնք հակառակ են Աստուծոյ Խօսքին, նաեւ՝ երբ կը նուիրենք մեր սէրը ինչ որ մէկուն կամ ինչ որ բանի մը աւելի, քան Յիսուսին:
3. Սեռական գայթակղութեան եւ անբարոյութեան առիթ տալը:
4. Տէրը փորձելը:

մեր կարիքները հոգալու եւ մեր ցանկութիւնները իրագործելու համար:

Նմանապէս, աճելով Աստուածային իրողութիւններուն մէջ եւ անցնելով կեանքի փուլերով՝ մենք պէտք է ձգենք նախկին ոչ հասուն մտածելակերպն ու վարքը: Պօղոսը կ'ըսէ, որ ներկայիս մենք մշուշոտ կը տեսնենք Աստուծոյ ճանապարհներն ու փառքը, բայց որքան աւելի ձգտինք երկնային մրցանակին, այնքան աւելի յստակ կը սկսինք տեսնել, մինչեւ այն պահը, երբ կը տեսնենք զԱստուած երես առ երես,

5. Տրտնջալը, տրտնջալը, տրտնջալը:

Կորնթոսի հաւատացեալներուն ուղղուած իր առաջին նամակին մէջ Պօղոսը կը նշէ, որ մենք կրնանք շատ բան սորվիլ կեանքի մասին անապատին մէջ գտնուող մեր նախնիներէն:

«Թանկագին՝ եղբայրներ եւ քոյրեր, ես չեմ ուզեր, որ մոռնաք մեր նախնիներուն մասին, որոնք անապատի մէջ էին վաղ անցեալին... Աստուած չհաւնեցաւ անոնցմէ շատերը, եւ անոնց մարմինները ցրուեցան անապատին մէջ: Այս բաները տեղի ունեցան՝ որպէս զգուշացում մեզի, որպէսզի մենք չար բաներ չցանկանք, ինչպէս որ անոնք ցանկացին» (Ա. Կորնթացիս 10.1,5,6, NLT):

Իսրայէլցիները սուղ վճարեցին. այնպէս որ, եկէք սորվինք անոնց օրինակէն:

Իմ ընկեր, անապատին մէջ դուք կրնաք գտնել Աստուծոյ ճանապարհները եւ նոյնիսկ՝ Անոր սիրտը, բայց պէտք է հաստատակամ ըլլաք ձեր սրտին մէջ եւ վստահաբար ըսէք. «Աստուած, ես կը հաւատամ, որ Դուն բարի ես, եւ որ Դուն կը սիրես զիս, նոյնիսկ երբ չեմ զգար Քու բարութիւնն ու սէրը»:

այսինքն՝ կը ճանչնանք Ձինք այնպէս, ինչպէս որ Ան կը ճանչնայ մեզ:

Ո՞րն է այն երկնային մրցանակը, որուն մասին Պօղոսը կը խօսի: Ան պատասխանեց այս հարցումին նախորդ խօսքերէն մէկուն մէջ: Փիլիպպեցիս 3.10-ին մէջ գրուած է. «Որ ճանչնամ Ձինք եւ Անոր յարութեան զօրութիւնը եւ Անոր չարչարանքին մասնակից ըլլալը՝ Անոր մահուան կերպարանակից ըլլալով»: Աստուծոյ երկնային մրցանակը՝ Անոր Որդի Յիսուս Քրիստոսի պատկերին կերպարանուիլն է եւ Ձինք ճանչնալը այնպէս, ինչպէս որ Ան կը ճանչնայ մեզ: Քանի դեռ չենք հասած այս նպատակին, պէտք չէ բաւարարուինք: Այնպէս որ, մենք երբեք պէտք չէ դադրինք Աստուծոյ սիրտը փնտռելէն:

Երրորդը՝ որպէսզի հասնինք երկնային մրցանակին, մենք պէտք է «հետեւինք նպատակին (կամ՝ ջանասիրաբար ձգտինք նպատակին)»: Ասիկա կը նշանակէ, որ մենք պիտի բախինք հակառակութեան կամ ճնշման: Գոյութիւն ունի ընդդիմութիւն Տէրը ճանչնալուն:

Սատանային համար մեծագոյն սպառնալիքը Յիսուս Քրիստոսի պատկերով կերպարանուած մարդն է, եւ խաւարի ուժերը կը պայքարին ատոր դէմ աւելի շատ, քան որեւէ այլ բանի: Երբ հաւատացեալները կը կերպարանուին Քրիստոսի պատկերով, անոնք այլեւս չեն ապրիր իրենց համար, այլ՝ Անոր համար, Որ կ'ապրի իրենց մէջ: Այդ հաւատացեալները կը սկսին արտայայտել իրենց կեանքը Քրիստոսին մէջ աւելի առատ եւ ազդեցիկ կերպով: Ահա թէ ինչու Պօղոսը ըսաւ, որ Ձինք ճանչնալու համար մենք պէտք է ըլլանք Անոր չարչարանքներու մասնակիցը: Այն մարմինի չարչարանքը, որ ան նկատի ունի, մարդկային «ես»-ի մահն է, որուն կը հետեւի յարութեան կեանքը: Պետրոսը կը գրէ.

«Արդ Քրիստոս, որ մարմինով մեզի համար չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուեցէք, որ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ: Որ այլեւս ոչ թէ մարդոց ցանկութիւններու պէս, այլ Աստուծոյ կամքին պէս ապրիք մարմինի մէջ մնացած ժամանակը» (Ա. Պետրոս 4.1,2):

Եթէ մարմինով չարչարուինք, մենք այլեւս չենք առաջնորդուիր մեր ճանապարհներով եւ կեդրոնացած չենք ըլլար ատոնց վրայ, այսինքն՝ չենք ձգտիր այս աշխարհի մեղսալի նպատակներուն: Մեր մէջ

կը գործէ Քրիստոսի բնաւորութիւնը: Ասիկա է այն նշանակէտը, որուն մենք պէտք է հարուածենք:

Չարչարուիլ Քրիստոսի հետ

Որո՞նք են Քրիստոսի չարչարանքները: Շատերուն քով թիրըմբունում կայ այս մասին, քանի որ որոշ կրօնական ուսմունքներ խեղաթիւրած են այս Աստուածաշնչեան հասկացութիւնը: Չարչարանքը *չի նշանակեր* մահանալ ինչ որ հիւանդութենէ մը կամ չունենալ գումար՝ հաշիւները փակելու համար: Այն *չի նշանակեր* շաբաթներ շարունակ ոչինչ ուտել, որպէսզի Աստուած զգացուած ու գոհ ըլլայ ձեր գոհով: Չարչարանքը գոհ չէ, այլ՝ հնազանդութիւն: Եբրայեցիներու հեղինակը յստակ ցոյց կու տայ, թէ որոնք են Քրիստոսի չարչարանքները.

«Ան, որ Իր մարմնի օրերուն աղօթք եւ աղաչանք՝ սաստիկ աղաղակով եւ արցունքով, կը մատուցէր Անոր, որ կրնար ազատել Ձինք մահէն, եւ լսուեցաւ Իր բարեպաշտութեան համար: Թէեւ Որդի էր, այն չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ» (Եբրայեցիս 5.7,8):

Յիսուսը հնազանդութիւնը չէր բերած այս երկիր. Ան ստիպուած էր սորվիլ այն: Ան սորվեցաւ՝ հնազանդելով Իր Հօրը այն ժամանակ, երբ չինազանդիլը աւելի դիւրին էր: Ան չէր ձգտեր հաճեցնել մարդոց: Ան գիտէր, որ վերջաւորութեան մարդիկ մեծ օգուտ պիտի ստանային Իր հնազանդութենէն: Պետրոսը ցոյց տուաւ, որ ճշմարիտ չարչարանքը կը նշանակէ ապրիլ համաձայն Աստուծոյ կամքին, ոչ թէ մարդկային ցանկութիւններուն (Ա. Պետրոս 4.2):

«Քրիստոսի չարչարանքները» արտայայտութիւնը կը նշանակէ երթալ Աստուծոյ ճանապարհով այն պարագային, երբ մեր միտքը, զգացումները եւ ֆիզիքական զգայարանները կը դրդեն մեզ հեշտասիրութեան, փոխզիջման եւ հաճոյքներու: Յաճախ մենք կը գտնուինք նման պայքարի մէջ, երբ Աստուած կը պատուիրէ *մեզի* երթալ այլ ճանապարհով, իսկ մեր ընկերները, ընտանիքի անդամները, աշխատա-

կիցները եւ միւսները կը ցանկան, որ մենք երթանք այլ ճանապարհով: Դժբախտաբար, կը թուայ, թէ այս հակառակութիւնը սովորաբար կու գայ այն մարդոցմէ, որոնք ամէնէն մօտն են մեզի: Այս իրողութեան դասական օրինակներէն մէկը այն է, որ Պետրոս անհամաձայնութիւն յայտնեց Յիսուսի մահուան եւ թաղման վերաբերեալ:

«Այնուհետեւ Յիսուսը աշակերտներուն յայտնեց, որ պէտք է Անոր Երուսաղէմ երթալ եւ ծերերէն եւ քահանայապետներէն եւ դպիրներէն շատ չարչարանքով չարչարուիլ, սպաննուիլ եւ երրորդ օրը յարութիւն առնել: Եւ Պետրոսը Ձինք մէկ կողմ տանելով սկսաւ յանդիմանել եւ ըսել. ««Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր, այդ բանը Քեզի չըլլայ»: Եւ ան դարձաւ եւ Պետրոսին ըսաւ. «Ետի՛ս գնա, սատանա՛, դուն գայթակղութիւն ես Ինձի, որովհետեւ դուն Աստուծոյ բաները չես մտածեր, այլ՝ մարդոց բաները»» (Մատթէոս 16.21-23):

Յիսուսը յայտնեց Իր աշակերտներուն, որ Աստուծոյ հնազանդելու համար պէտք է Երուսաղէմ երթար, չարչարուէր, սպաննուէր եւ երրորդ օրը յարութիւն առնէր: Ակնյայտ է, որ Պետրոսը չէր լսած Յիսուսին խօսքերը յարութեան վերաբերեալ, հակառակ պարագային, ան այդքան չէր մտահոգուեր Յիսուսի յայտարարութեամբ Իր մտալուտ մահուան մասին:

Կը կարծեն՝ կարելի է հասկնալ, թէ Պետրոսը ինչ կը մտածէր.

«Սպասէ՛, Դուն Մեսիան ես (քիչ առաջ ատիկա յայտնուած էր անոր), եւ Դուն պէտք է վերականգնես ու հաստատես Իսրայէլի թագաւորութիւնը: Ես ձգած եմ իմ գործը, իմ կիներն ու ընտանիքը՝ Քեզի հետեւելու համար: Ես կորսնցուցած եմ ընկերներս՝ Քեզի հետեւելու պատճառով: Ես շատ ժամանակ ներդրած եմ այս գործի մէջ: Ես վատ անուն ձեռք բերած եմ: Ժողովարաններու առաջնորդները կը մտածեն, որ Դուն խելագար ես. թերթերը եւ ամսագրերը մշտապէս յօդուածներ կը գրեն այն մասին, թէ որքան հակասական ես Դուն: Դուն ամենաթէժ թեման ես ընկերային ցանցերուն մէջ, եւ մարդոց

կարծիքներուն մեծ մասը դրական չէ: Դուն աղանդաւոր կը համարուիս շատ ճանչցուած Աստուածաբաններու եւ կրօնական առաջնորդներու կողմէն: Եւ Դուն կը խօսիս մահուան մասի՞ն: Իսկ ի՞նչ պիտի ըլլայ հետս: Ես այսքան ժամանակ ներդրած՝ Քեզի հետեւելու համար. ես ձեռնունայն կը մնամ եւ ոչինչ կ'ունենամ՝ բացի վատ համբաւէն»:

Պետրոսը առանց մտածելու ըսաւ. «Ո՛չ, Տէ՛ր, Դուն չէ՛ս կրնար այդպէս վարուիլ» (շրջաստութիւն):

Յիսուսը ստիպուած էր անմիջապէս ցոյց տալ, որ Պետրոսին մտքերը եսասէր եւ աշխարհիկ էին: Ան չէր նայեր Աստուծոյ աչքերով: Սատանան («այս աշխարհի աստուածը», Բ. Կորնթացիս 4.4) սորվեցուցած է այս աշխարհին փնտռել սեփական շահը: Երկինքի Թագաւորութեան մէջ ամէն ինչ ճիշդ հակառակն է: Այնպէս որ, Աստուծոյ կամքը կատարելու համար մենք պէտք է հակառակ երթանք մշակոյթի հոսանքին, նոյնիսկ եթէ ատիկա կը նշանակէ հակառակ երթալ որեւէ «եղբօր կամ քրոջ՝ Տիրոջ մէջ», որուն մտածելակերպը չափազանց աշխարհիկ է: Պետրոսը չար մարդ չէր, բայց այդ հարցին մէջ անոր միտքը կը կրէր այս աշխարհի ազդեցութիւնը, ոչ թէ Քրիստոսի: Ան կը հակառակէր այդ փոփոխութեան, քանի որ ուրիշ ձեւով կը պատկերացնէր ամէն ինչ:

Այս իրողութեան եւս ուրիշ օրինակ մը Իսրայէլի գաւազներու կողմէն ուղարկուած լրտեսներն էին, որոնք գացած էին Քանանի երկիրը հետախուզելու համար: Անոնք մէկ տարիէն աւելի անապատի մէջ էին, եւ Աստուած պատուիրեց Մովսէսին, որ մարդիկ ուղարկէ Խոստման երկիր՝ ստանալու համար այնպիսի տեղեկութիւն, որ Ան կը ցանկար, որ անոնք ունենային: Մովսէս ընտրեց տասներկու առաջնորդներ՝ իւրաքանչիւր ցեղէ մէկ առաջնորդ: Անոնցմէ երկուքը Յեսուն եւ Քաղէբն էին:

Երբ լրտեսները վերադարձան երկիրը հետախուզելէն, իրար հակասող լուրեր բերին այն մասին, թէ ինչ տեսած էին եւ ինչ անհրաժեշտ էր ընել: Լրտեսներէն տասը հոգի ըսին.

«Այն երկրի մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է, եւ քաղաքները պարսպաւոր ու խիստ մեծ են: Նաեւ հոն Եմակի

որդիները տեսանք: Ամաղեկացիները կը բնակին այն երկրի հարաւային կողմը, եւ Քետացիները եւ Յեբուսացիները եւ Ամօրիացիները լեռները կը բնակին, եւ Քանանացիները ծովուն քով ու Յորդանանի եզերքը կը բնակին... Մենք չենք կրնար այն ժողովուրդին վրայ ելլել, որովհետեւ անոնք մեզմէ զօրաւոր են»: Եւ իրենց լրտեսած երկրին համար վատ լուր բերին Իսրայէլի որդիներուն համար՝ ըսելով. «Այն երկիրը, որուն մէջտեղէն անցանք՝ զանիկա լրտեսելու համար, իր բնակիչները ուտող երկիր մըն է, եւ անոր մէջի բոլոր ժողովուրդը, որ մենք տեսանք, յաղթահասակ մարդիկ են»» (Թուոց 13.29-30, 32,33):

Քաղէթի եւ Յետուի լուրը տարբեր էր.

«Եւ Քաղէթը ժողովուրդը Մովսէսին առջեւ լռեցուց եւ ըսաւ. «Աղէ, ելլենք ու ժառանգենք այն, որովհետեւ անշուշտ մենք կրնանք անոր տիրել... Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այն երկիրը պիտի տանի եւ այն մեզի պիտի տայ, որ կաթ ու մեղր բխող երկիր է: Միայն թէ Տիրոջ դէմ մի՛ ապստամբիք եւ այն երկրի ժողովուրդէն մի՛ վախնաք, որովհետեւ անոնք մեր կերակուրն են, անոնց պաշտպանութիւնը գացած է անոնց վրայէն, ու Տէրը մեզի հետ է. անոնցմէ մի՛ վախնաք» (Թուոց 13.31, 14.8,9):

Տասներկու լրտեսները միասին գացած էին՝ երկիրը հետախուզելու համար: Անոնք տեսած էին նոյն երկիրը, քաղաքները եւ մարդիկ: Ինչո՞ւ անոնցմէ տասն ուրիշ լուր բերին, իսկ միւս երկուքը՝ ճիշդ հակառակը: Խնդիրը անոնց ընկալման մէջ էր:

Աստուած ըսաւ Քաղէթին եւ Յետուին մասին, որ անոնք ուրիշ հոգի ունէին, քանի որ ամբողջովին հնազանդեցան Իրեն (Թուոց 14.24): Ուրիշ ձեւով ըսելու համար՝ անոնք անցում կատարած էին կատարելու մարդկային ցանկութիւններէն դէպի Աստուծոյ կամքը: Անոնք կը նայէին Աստուծոյ աչքերով, ոչ թէ ամէն ինչ կը դիտարկէին ինքնապահպանման տեսանկիւնէն: Ասիկա կ'օգնէ մեզի հասկնալ, թէ ինչու տասը լրտեսները տեսան միեւնոյն բանը, բայց ոչ այնպէս, ինչպէս Յետուն եւ

Քաղէբը: Անոնք ասելի շատ մտահոգուած էին իրենց յարմարաւէտութեամբ, ապահովութեամբ եւ ընտանիքներով, քան Աստուծոյ ցանկութիւններով: Անոնք կը մտածէին իրենց կեանքի մասին, ոչ թէ՛ Աստուծոյ Թագաւորութեան: Անոնք չէին գիտակցեր, որ Աստուած երբեք չէր ձգեր զիրենք եւ յաջողութիւն կու տար Իր բերած բոլոր ճանապարհներուն մէջ: Այս սխալ մտածելակերպը յատուկ էր նաեւ մնացած ժողովուրդին, քանի որ անոնք ըսին.

«Եւ տրտնջացին Իսրայէլի բոլոր որդիները Մովսէսի եւ Ահարոնի դէմ, եւ ամբողջ ժողովքը ըսաւ անոնց. «Երանի՛ թէ Եգիպտոսի երկիրը մեռած ըլլայինք, կամ երանի՛ թէ այս անապատին մէջ մեռած ըլլայինք: Եւ ինչո՞ւ համար Տէրը մեզ այս երկիրը բերաւ, որ սուրով իյնանք, եւ մեր կանայք ու մեր որդիները յափշտակուին: Լաւ չէ՞ մեզի համար, որ Եգիպտոս դառնանք»» (Թուոց 14.2,3):

Իսրայէլի գաւակները կը յիշէին Եգիպտոսի «հին լաւ օրերը», երբ իրենց փորը կուշտ էր, եւ իրենց կեանքին մէջ ինչ որ չափով կայունութիւն կար: Թէեւ անոնք ստրուկներ եղած էին Եգիպտոսի մէջ, այն, ինչին կը բախէին, ստրկութենէն ասելի ծանր կը թուար: Բոլորը կը հակառակէին այն փոփոխութեան, որ անհրաժեշտ էր իրենց: Անոնք սկսած էին ապահով զգալ զիրենք անապատին մէջ, քանի որ արդէն ծանօթ էին ասոր, թէեւ անոնց քոչուոր կեանքը եւ սննդակարգը հեռու էր կատարելութենէն: Վերջաւորութեան անոնք այդպէս ալ չտեսան խոստման երկիրը եւ այդպէս ալ չկատարեցին Աստուծոյ կամքը:

Այնուամենայնիւ, Յեսուն եւ Քաղէբը պէտք է *շարունակէին առաջ երթալ*: Այն հակառակութիւնը, որուն անոնք բախեցան, եկաւ իրենց «եղբայրներէն», որոնք կ'ուզէին բոլորովին լռեցնել զիրենք. «Բայց ամբողջ ժողովուրդը սկսաւ խօսիլ Յեսուն եւ Քաղէբը քարկոծելու մասին» (Թուոց 14.10, NLT): Այն մարդիկ, որոնք կը հակառակէին Յեսուին եւ Քաղէբին, չնորոգուած միտք ունէին եւ դեռ կը մտածէին եւ կը տեսնէին ամէն ինչ այս աշխարհին պէս: Անոնք յամառօրէն կառչած էին իրենց ճանապարհներէն... եւ անապատային մտածելակերպէն:

Նման Յեսուին եւ Քաղէբին Պօղոս առաքեալը ըսաւ, որ ինք պէտք

է մոռնար այն բաները, որոնք մնացած էին ետեւը, եւ *ջանասիրաբար ձգտէր երկնային մրցանակին* (Փիլիպպեցիս 3.14):

Կրկին կարդացէք Եսայիա 43.18,19-ը. այս ցուցնունքերը, անկասկած, պէտք է խրախուսեն մեզ.

«Բայց մոռցէ՛ք այդ ամէնը.

Ատիկա ոչինչ է այն բանին համեմատ, ինչ Ես կը պատրաստուիմ ընել:

Որովհետեւ Ես նոր բան պիտի ընեմ:

Տեսէ՛ք, Ես արդէն սկսած եմ: Մի՞թէ չէք տեսներ ատիկա:

Ես ճանապարհ պիտի պատրաստեմ անապատով:

Ես գետեր պիտի ստեղծեմ չոր եւ ամառի վայրին մէջ» (NLT):

Յաւոք, այսօր ալ շատերը կը գերադասեն մնալ իրենց «ապահով» ստրկութեան մէջ, ջանասիրաբար ազատութեան ձգտելու փոխարէն՝ կատարելով Աստուծոյ կամքը: Անոնք աւելի շատ կը վախճան իրենց ամօքէն գտնուող փոփոխութիւններէն, քան ծանօթ, բայց ճնշող ներկայէն: Կան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք կը գոհանան այն ամէնով, ինչ որ Աստուած արդէն ըրած է իրենց կեանքին մէջ, եւ չեն կամենար նոր մարտահրաւերներ ընդունիլ: Այո՛, Աստուած մեծ բաներ ըրած է անոնց միջոցով, բայց անոնք կեցած են իրենց անցեալի յաջողութիւններուն վրայ:

Աստուծոյ կամքին հնազանդիլը կեանք եւ ազատութիւն կը պարգեւէ, եւ այն միակ միջոցն է՝ ճշմարիտ բաւականութիւն ունենալու համար: Այնուամենայնիւ երկնային մրցանակին ջանասիրաբար ձգտիլը կրնայ անկարելի թուալ ձեր ներկայ հանգամանքերուն մէջ: Աստուած ըսաւ Եսայիա մարգարէին միջոցով, որ Ան նոր բան մը պիտի ընէ, բայց ատիկա ի յայտ պիտի գայ անապատին մէջ: Ուրիշ ձեւով ըսելու համար, երբ մենք հետեւինք Աստուծոյ Հոգիին՝ ցանկալով կատարել այն, ինչ որ Ան կը կամենայ, մենք կը յայտնուինք անկարելի եւ չոր թուացող իրավիճակներու մէջ: Սակայն մենք գիտենք՝ այն, ինչ որ անկարելի է մարդոց համար, հնարաւոր է Աստուծոյ համար (տե՛ս Ղուկ. 18.27): Ձեր այսօրուան անապատէն յետոյ կան յաղթանակներ, բաւականութիւն եւ լիարժէք կեանք:

Մի՛ ըլլաք այն տասը լրտեսներու եւ ժողովուրդին պէս, որոնք չկամեցան ընդունիլ Աստուծոյ ցանկութիւնները եւ ընդդիմացան այն փոփոխութեան, որ պիտի ազատէր զանոնք անապատի զրկանքներէն: Փոխարէնը, շարունակեցէք վստահաբար առաջ երթալ դէպի ձեզի խոստացուած երկիրը՝ Աստուծոյ երկնային մրցանակը, որ պատրաստուած է ձեզի համար:

ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՐԱԶԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Դժուարությունը սովորական գործիք չէ: Այն Աստուծոյ ամենաարդիւնաւէտ գործիքն է մեր հոգեւոր կեանքի յառաջխաղացման համար: Այն հանգամանքները եւ իրադարձութիւնները, որոնք կը դիտարկենք որպէս հետընթաց, յաճախ սկիզբ կը դնեն բուն հոգեւոր աճի փուլերու: Հազիւ որ կը սկսինք հասկնալ ասիկա եւ ընդունիլ որպէս հոգեւոր իրողութիւն, մենք կրնանք աւելի դիւրաբար դիմանալ դժուարութեան»:

– Չարլզ Սթենլի

«Անապատի մէջ կանչողի ձայնը. «Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը եւ ուղի՛դ ըրէ՛ք ամայութեան մէջ շաւիղը մեր Աստուծոյ համար»:

– Եսայիա 40.3

Որքան ալ զարմանալի թուայ, անապատը այն վայրն է, ուր Աստուած գերազանց ճանապարհ տեղորոշած է: Ճիշդ հոս կը պատրաստուի Անոր ճանապարհը՝ Անոր շաւիղը դէպի բարձր եւ վեհ կեանքը, որուն միջոցով քալող մարդը կրնայ ապրիլ եւ մտածել այնպէս, ինչպէս որ Ան:

Ամբողջ պատմութեան ընթացքին քիչերը գացած են այս ճանապարհով: Այնուամենայնիւ, այժմ Աստուած կը պատրաստէ շատերուն այս ընթացքին համար: Այս մասին գրուած է Եսայիա 35.6,8-ին մէջ.

«Որովհետեւ անապատին մէջ ջուրեր պիտի բխին, եւ ամայի տեղը՝ առուններ... Եւ հոն պողոտայ ու ճանապարհ պիտի ըլլայ, եւ անոր Սուրբ ճանապարհ պիտի ըսուի»:

Աստուծոյ ճանապարհը անապատին մէջ յիշուող անուանում չունի, օրինակ՝ «Ի-95» կամ «66-րդ ճանապարհ»: Այն պարզապէս *սրբութիւն* կը կոչուի:

Սրբութեան սահմանումներէն մէկը «մաքուր ըլլալու վիճակն» է: Յիսուսը կ'ըսէ. «Աստուած կ'օրհնէ զանոնք, որոնց սրտերը մաքուր են, քանի որ անոնք պիտի տեսնեն զԱստուած» (Մատթէոս 5.8, NLT): Յիսուսը պիտի չվերադառնայ անսուրբ եւ անմաքուր եկեղեցւոյ համար. Ան պիտի գայ այնպիսի եկեղեցւոյ ետեւէն, որ ոչ մէկ արատ ու կնճիռ ունի:

Քանի մը տասնամեակ առաջ, երբ տակաւին երիտասարդ էի իմ առաջին քայլերը կը կատարէի ծառայութեան մէջ, Տէրը աղօթքի

Ժամանակ ցոյց տուաւ, որ Ան պիտի մաքրէ իմ կեանքը: Ես այնքան՝ ոգեշնչուեցայ, որ ըսի Լիզային. «Աստուած պիտի հեռացնէ ամէն անմաքրութիւն ինձմէ», եւ սկսայ թուարկել անոր բոլոր անցանկալի բաները, որոնք Ան պիտի հեռացնէր (Թերեւս Լիզան ալ աւելցուց քանի մը հատ, որոնք ես պատահաբար չէի ներառած ցուցակիս մէջ):

Յաջորդ երեք ամսուան մէջ ոչինչ տեղի ունեցաւ: Իրականութեան մէջ, ամէն ինչ իմ կեանքին մէջ ա՛լ աւելի վատթարացաւ, եւ ես ա՛լ աւելի մաքրուելու պէտք ունէի: Ես գացի Տիրոջ քով եւ հարցուցի. «Ինչո՞ւ իմ վատ սովորութիւնները աւելի կը վատանան՝ հեռանալու փոխարէն»:

«Որդի՛ս, - պատասխանեց Ան, - Ես ըսի, որ *Ես* պիտի մաքրեմ քեզ: Դուն կը փորձէիր ատիկա քու ուժերով ընել: Այժմ Ես ատիկա *Իմ* ձեռով կ'իրագործեմ»:

Ես նոյնիսկ գաղափար չունէի, որ պիտի սկսէր իմ առաջին անապատային ընթացքը, եւ որ այն պիտի տւէր տասնութ ամիս:

Անոր ճանապարհները մեր ճանապարհները չեն

Իմ հոգեւոր կեանքի սկզբնական շրջանին ես ծանօթացայ թի էլ Օսպըրնի ծառայութեան հետ: Դոկտոր Օսպըրնը հոյակապ ծառայող եւ հեղինակ էր: Ան եւ կինը՝ Տէյզին, կը ղեկավարէին զօրաւոր աւետարանչական, հրաշքներու եւ բժշկութեան ծառայութիւն, որ քանի մը տասնամեակ շարունակ կը գործէր աշխարհով մէկ: Անոնց ծառայութիւնը փրկութեան բերած է տասնեակ միլիոնաւոր մարդիկ:

Այնպէս որ, կրնաք պատկերացնել, թէ որքան ոգեշնչուած էի ես՝ հանդիպելով Դոկտոր Օսպըրնին, երբ ան եկաւ Տալլաս՝ քարոզելու մեր եկեղեցւոյ մէջ: Աւելին՝ քանի որ իմ աշխատանքը մեր եկեղեցւոյ հիւր-քարոզիչները ընդունիլն էր, ես անձամբ ծանօթացայ անոր հետ: Թի էլը զարմանալի անձնաւորութիւն էր: Երբ ես անոր հետ էի, կարծես Յիսուսին հետ ըլլայի:

Թի էլը քանի մը անգամ եկաւ մեր եկեղեցին, եւ մենք շատ մտեր-

մացանք: Ան նուիրեց ինձի իր բոլոր գիրքերը, որոնք կ'ուսումնասիրեր երիտասարդ տարիքին, երբ իր ծառայութեան կը պատրաստուէր: Բացի այդ, երկու անգամ ան նուիրեց ինձի իր հագուստներէն շատերը (մենք նոյն չափը կը հագնէինք): Այդ ժամանակ Լիզան եւ ես չունէինք գումար հագուստ գնելու համար. այնպէս որ, երկու անգամ եղած այդ նուէրները մեծ օգնութիւն էին ինձի համար: Այդ այցելութիւններէն յետոյ ան եւ Տէյզին դարձան ինչպէս հայր եւ մայր Լիզային եւ ինձի համար:

Տարիներ առաջ, երբ տակաւին կ'աշխատէի ամերիկեան ընկերութեան մը մէջ, ես ներկայ էի ծառայութեան մը, ուր կը քարոզէր Թի էլը, եւ Սուրբ Հոգին շնջաց ինձի. *«Օր մը դուն պիտի ծառայես անոր: Դուն պիտի աշխատիս Դոկտոր Թի էլ Օսպըրնին համար»*: Ես մտածեցի, որ այդ ամէնը հաստատում էր, որ ես պիտի ըլլայի անոր խումբին մէջ, եւ ապագային նմանատիպ ատետարանչական ծառայութիւն պիտի սկսէի:

Այնուամենայնիւ, ոչինչ տեղի կ'ունենար. ես տակաւին անապատի մէջ էի: Օսպըրններու ծառայութեան գլխամասային գրասենեակը Թալսա քաղաքի մէջ էր, բայց անոնք կ'ապրէին Օռլանտո քաղաքը: Ժամանակը կ'անցնէր, եւ ես իմ ծառայութիւնը սկսելու ուժգին մղում կը զգայի՝ այն աստիճան, որ որոշեցի տեղափոխուիլ Օռլանտո, որպէսզի անուր մտիկ ըլլայի Օսպըրններուն: Իմ նպատակը երկակի էր: Առաջինը՝ Թի էլը կը տեսնէր, որ ես այլեւս ոչ մէկ եկեղեցւոյ մէջ կը ծառայեմ: Ան բացարձակ ազնուութեան տէր մարդ էր: Ես գիտէի, որ ան երբեք աշխատանքի չէր առներ զիս՝ հեռացնելով մեր եկեղեցիէն: Երկրորդը՝ քանի որ Լիզան եւ ես կ'ապրէինք Օռլանտո, դիւրաբար պիտի կարենայինք միանալ անոնց ծառայութեան: Հազիւ որ մենք տեղափոխուէինք Ֆլորիտա նահանգի մէջ գտնուող այդ քաղաքը, ես հասանելի կը դառնայի անոր համար:

Անշուշտ, ես գիտեմ՝ ատիկա քիչ մը չափազանցութիւն էր իմ կողմէն: Այնուամենայնիւ, ես պատրաստ էի «օգնել» Աստուծոյ, որպէսզի Ան ուղղորդէր զիս դէպի իմ ճշմարիտ կոչումը:

Ես խնդրեցի իմ հովիւէն, որ հանդիպի հետս, որպէսզի տեղեկացնեմ աշխատանքէն դուրս ելլելու եւ Օռլանտո տեղափոխուելու հա-

մար: Սակայն մեր հանդիպման նախորդ երեկոյեան երեք հովիւ, երեք տարբեր քաղաքներէն, հեռաձայնեցին ինձի: Ամէն մէկը, իմանալով, թէ ինչ կը պատրաստուէի ընել յաջորդ առաւօտեան, հարցուցին ինձի ճիշդ նոյն բանը. «Լիզան համաձայն է քեզի հետ»:

Լիզան համաձայն չէր: Քանի մը անգամ Ան ըսած էր ինձի. «Ճո՛ւն, ես կը հնազանդիմ քու առաջնորդութեան, բայց չեմ կրնար ըսել քեզի, թէ սրտանց կը զգամ, որ ճիշդ կը վարուիս»: Ես կ'անտեսէի անոր խօսքերը: Կը մտածէի. «Լիզան պարզապէս չի հասկնար, եւ քանի որ ես եմ տան գլուխը, ան պէտք է հնազանդի իմ առաջնորդութեան»: Որքա՛ն անմիտ եւ ոչ հասուն միտք էր ատիկա:

Երբ երրորդ հովիւը հեռաձայնեց ինձի ուշ երեկոյեան եւ հարցուց միեւնոյն բանը, ինչ որ բան մը իմ ներսը կոտրեցաւ: Իմ աչքերը բացուեցան, եւ ես հասկցայ, որ կը փորձէի օգնել Աստուծոյ իրագործելու Իր ծրագիրը, թոյլ տալու փոխարէն, որ Ինքը ընէր ատիկա:

Յաջորդ օրը Լիզան եւ ես հանդիպեցանք իմ հովիւին եւ անոր կնոջը: Ես պատմեցի անոնց, թէ ինչու խնդրած էի հետս հանդիպիլ, եւ որ ես մտափոխուած էի նախորդ երեկոյեան ստացած երեք հեռաձայններէն յետոյ: Անոնք շատ սիրալիր էին մեր հանդէպ եւ ըսին, որ կը ցանկան, որ մենք մնանք իրենց հետ: Ես կրնայի շարունակել իմ ծառայութիւնը:

Ես զգացի, որ կարծես բեռ մը ինկաւ իմ ուսերէն, եւ այժմ ես պատրաստ էի, որ Աստուած Ինքը գործէր մեզի համար: Նոյնիսկ գաղափար չունէի, որ իմ մաքրման ընթացքը տակաւին չէր աւարտած: Կար մաքրման եւս մէկ ալիք, որ իմ վրայ պիտի գար ճիշդ այդ օրը:

Մեր հովիւին եւ անոր կնոջ հետ հանդիպումէն ընդամենը վեց ժամ յետոյ, երբ ես տունն էի եւ մեր եկեղեցւոյ աշխատակիցներուն հետ կը պատրաստուէի երթալ պասքէթպոլ խաղալու, հեռախօսը հնչեց. Թի էլ Օսպըրնն էր: Ես ամբողջովին ցնցուած էի:

Իննսուն վայրկեան տեւող հեռախօսագրոյցի ընթացքին ան առաջարկեց Լիզային եւ ինձի աշխատանք իր ծառայութեան մէջ: Մենք պէտք է օգնէինք Տէյզիին եւ անոր, ինչպէս նաեւ ճամբորդէինք անոնց հետ աշխարհով մէկ: Մենք նոյնպէս եկեղեցի մը պիտի հիմնէինք Թալսայի մէջ, որ պէտք է այլ եկեղեցիներու հիմնադրման նմուշ դառնար:

Նպատակն էր՝ սկսիլ նմանատիպ եկեղեցիներ աշխարհով մէկ՝ այն վայրերուն մէջ, որոնց մէջ անոնք կ'անցընէին իրենց մեծածաւալ աւետարանչական հաւաքոյթները:

Այդ երկար հեռախօսազրոյցի ընթացքին ես շարունակ կը մտածէի. «Հայր, ես գիտէի, որ *Դուն պիտի գործես, բայց զարմացած եմ, թէ որքա՛ն արագ ատիկա տեղի ունեցաւ: Դո՛ւն ըրիր ատիկա*»: Դժուար է նկարագրել այն զարմանքն ու ոգեւորութիւնը, որ ես կը զգայի, երբ հեռածայնով կը խօսէի Թի էլ Օսպըրնին հետ: Ես համոզուած էի, որ ատիկա այն ելքն էր իմ անապատէն, որուն կը սպասէի: Ես այնքա՛ն երջանիկ էի, որ ինծի թուաց, թէ կրնամ ցատկել եւ գլխով հարուածել մեր բնակարանի առաստաղին: Խօսափողը դնելէն յետոյ տունէն դուրս ելայ՝ Աստուծմէ՛ գոհանալու համար, բայց հոգիիս մէջ արգելքի եւ վարանման պէս բան մը զգացի: Իմ ներսի խորքը ըսես տհաճ եւ տանջալի զգացում ըլլար:

Ես մտածեցի. «Ո՛չ, Աստուա՛ծ, ո՛չ, ո՛չ, ո՛չ: Դուն չե՛ս կրնար այդպէս վարուիլ: Դուն վաղուց խոստացած ես, որ օր մը ես պիտի աշխատիմ Թի էլ Օսպըրնին համար: Դուն չե՛ս կրնար արգիլել ատիկա»:

Արգելքի զգացումը չէր հեռանար: Երեք օր շարունակ ես կը փորձէի ընել՝ ինչ որ կրնայի, որպէսզի հեռացնէի այն աղօթքի միջոցով: Ես կը փորձէի ազատիլ այդ անհանգստութիւն պատճառող զգացումէն: Ես կ'աղաղակէի. «Աստուա՛ծ, տո՛ւր ինծի ուրախութիւն այս հարցին մէջ»: Լիզան նոյնպէս կը զգար այդ արգելքը, թէեւ ան ալ շատ կը ցանկար աշխատիլ Օսպըրններուն քով:

Ի վերջոյ, ես որոշում կայացուցի չհաւատալ, որ այդ վարանումը կրնար Աստուծմէ՛ ըլլալ (որ եւս մէկ՝ ոչ հասուն եւ վտանգաւոր քայլ էր իմ կողմէն): Այնպէս որ, Լիզան եւ ես օդանաւով ուղեւորուեցանք Օքլահոմա նահանգ՝ հարցազրոյցի, եւ կը թուար՝ ամէն ինչ կարգին էր եւ զիրար ամբողջացնող: Թի էլը եւ Տէյզին պաշտօնապէս առաջարկեցին մեզի այդ աշխատանքը եւ Սուրբ ծննդեան երեկոյին ծանօթացուցին մեզ իրենց ամբողջ խումբին հետ:

Մենք վերադարձանք Տալլաս, եւ ես հրաժարեցայ իմ աշխատանքէն եկեղեցւոյ մէջ: Բայց արգելքի զգացումը չէր հեռանար: Ես ժամեր կ'անցընէի աղօթքի մէջ, բայց միեւնոյն է՝ անհանգիստ էի: Շարունակ

կը փորձէի հեռացնել այդ անյարմարաւէտ զգացումը՝ աւելի երկար աղօթելով, սակայն ոչինչ կը փոխուէր:

Ի վերջոյ, Լիզային ըսի.

- Չեմ գիտեր, թէ ինչ կը կատարուի, բայց ինչ որ բան ճիշդ չէ:

Ան համաձայնեցաւ.

- Ես կրնամ նոյնը ըսել :

Ես հեռաձայնեցի թի էլ Օսպըրնին եւ պատմեցի իմ զգացումին մասին: Ան ըսաւ.

- Եկէք միասին հանդիպինք եւ խօսինք այս մասին:

Մենք օդանաւով ուղեւորուեցանք Թալսա, եւ երկու ժամ տեւող հանդիպումէն յետոյ թի էլը ըսաւ.

- Մենք առաջարկեցինք ձեզի այս աշխատանքը, քանի որ մենք սրտանց կը սիրենք ձեզ, եւ գիտենք, որ դուք նոյնպէս կը սիրէք մեզ: Բայց մենք կը մտածենք, որ թերեւս ատիկա Աստուծմէ չէ:

- Ես նոյնպէս չեմ հասկնար ատիկա, - ըսի, - բայց կը կարծեմ՝ դուք ճիշդ էք:

Չէի կրնար հաւատալ, որ այդ բառերը դուրս ելան իմ բերանէն: Պահանջուեցաւ իմ ամբողջ ինքնատիրապետումը, որ ըսէի ատիկա: Թի էլ Օսպըրնին հետ աշխատիլը իմ կեանքի երազանքն էր:

Այդ տարիներուն ես դուրս կ'ելլէի տունէն առաւօտեան կանուխ եւ մէկէն երկու ժամ կ'աղօթէի: Բայց իմ հերոսի՝ թի էլ Օսպըրնի հետ կապուած հիասթափութեան յաջորդող երկու շաբթուան ընթացքին ես հազիւ կրնայի աղօթել, երբ առաւօտեան տունէն դուրս կ'ելլէի: Կը թուար՝ ես միայն կրնայի լալ: Ես կրնայի միայն վերոյիշել այն, ինչ որ տեղի ունեցած էր վերջին քանի մը ամիսներուն՝ չհաւատալով այդ ամէնուն: Իմ տրտմութիւնը աննկարագրելի էր: Ես կարծես կը սզայի իմ սիրելիներէն մէկուն մահը: Երկու շաբաթ այդպիսի վիճակի մը մէջ ըլլալէն յետոյ ես վայր մըն էի, ուր ոչ ոք կրնար լսել զիս, եւ ես պարզապէս պոռացի այնքան բարձր, որքան կրնայի.

- *Ինչո՞ւ*: Ինչո՞ւ Դուն այնպէս ըրիր, որ ես ձգէի ատիկա: Վեց տարի առաջ Դուն խօսեցար հետս՝ ըսելով, որ ես կ'աշխատիմ անոր համար:

Ինչո՞ւ:

Ես երբեք չեմ մոռնար այն, ինչ որ Տէրը ըսաւ ինձի. «Որովհետեւ

Ես կ'ուզէի տեսնել, որ դուն Ինծի՞ կը ծառայէիր, թէ՞ այդ երազանքին»:
Ես ապշեցայ:

Ան շարունակեց. «Ահա թէ ինչու ես պատուիրեցի Աբրահամին զոհասեղանի վրայ դնել Իսահակը: Ես կ'ուզէի տեսնել՝ արդեօ՞ք ան աւելի քիչ կը սիրէր Զիս, քան այն խոստացուած օրհնութիւնը, որ տուի անոր: Ատիկա ցոյց պիտի տար՝ արդեօ՞ք ան կը ծառայէր այդ երազանքին, արդեօ՞ք ան կը ծառայէր Ինծի՞ այդ երազանքը ստանալու համար, թէ՞ ան կը ծառայէր Ինծի եւ կը վստահէր Իմ ազնուութեան՝ հաւատալով, որ կ'իրականացնէի այդ երազանքը»:

Ինչպէս անցնիլ անապատը

#7 Զգուշօրէ՛ն ընտրեցէք ձեր ընկերները

Թերեւս ասիկա պէտք չէ զարմացնէ մեզ, բայց յաճախ մեր ամենասուր քննադատները եւ ամենախիստ հակառակորդները այն մարդիկ են, որոնց համարած ենք մեր խմբակիցները: Յաճախ հալածանքը կու գայ այն մարդէն, որուն դուք ձեր ընկերը համարած էք:

Անապատին մէջ կրնայ իրական հալածանք սկսիլ, եւ մենք պէտք է գիտակցինք, որ կրնանք սպասել հալածանքի, եթէ հետեւինք Քրիստոսին: Պօղոս առաքեալը կը գրէ. «Եւ ամէնը, որ կը կամենան Աստուածապաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսին մէջ, հալածանք պիտի կրեն» (Բ. Տիմոթէոս 3.12): Հալածանքը մեր մաքրման ընթացքի մասն է: Իսկ ո՞վ կրնայ ըլլալ հալածողի դերին մէջ: Հալածել կրնան ինքնակոչ խաբէբաները, որոնք, հաւատացեալ ձեւանալով, թափանցած են Աստուծոյ ժողովուրդին մէջ, սակայն, իրականութեան մէջ, սրտանց չեն սիրեր զԱստուած: Ահա թէ ինչու Պօղոսը կը գրէ Հանէսի եւ Համրէսի մասին, որոնք կը հակառակէին Մովսէսին: Այդ մարդիկ օտարականներ չէին. անոնք Տիրոջ ժողովուրդէն էին:

Անոր խօսքերը պատասխանեցին բոլոր հարցումներուս, որոնց հետ ես կը պայքարէի վերջին երկու շաբթուան ընթացքին: Եւ առաջին անգամ, աւելի քան տասնութ ամսուան ընթացքին, ուրախութիւնը պոռթկաց իմ հոգիս մէջ: Իմ կեանքը կարծես կրկին բացուեցաւ եւ հասկցայ, թէ որքան օրհնուած էի այդ պահուն: Ես ամուսնացած էի գեղեցիկ կնոջ հետ, ունէի հրաշալի փոքրիկ որդի: Ես կրկին սիրահարուեցայ իմ կնոջը եւ իմ փոքրիկ որդիին: Ես կը մտածէի, որ մենք կ'ապրինք նորակառոյց բնակարանի մէջ, որմէ ընդամէնը երեսուն քայլ հեռու գեղեցիկ լողաւազան մը կար, եւ գրեթէ ամէն օր երկինքը

Պօղոսը կը պատմէր որոշ հալածանքներու եւ վտանգներու մասին, որոնց ինքը բախած էր՝ գրելով, որ նեղութիւններ կրած էր նաեւ «սուտ եղբայրներէն» (Բ. Կորնթացիս 11.26):

Անապատին մէջ շատ օգտակար է, եթէ ձեր կողքին կան մարդիկ, որոնք կը սիրեն ձեզ, կը հոգան ձեր մասին եւ կը յայտնեն Աստուծոյ կամքը: Ձեզի պէտք չեն քննադատներ եւ այնպիսի մարդիկ, որոնք կը դրդեն ձեզ անհնազանդ ըլլալու Տիրոջը, ինչպէս Յոբին կինն ու ընկերները: Եւ ձեզ պէտք չեն սուտ մարգարէներ, որոնք կը շողոքորթեն ձեզ, երբ դուք Աստուածային շտկումի կարիքը ունիք: Ձեզի պէտք են մարդիկ, որոնք կը սիրեն ձեզ եւ կը յայտնեն Աստուծոյ իմաստութիւնը:

Այնուամենայնիւ, զգո՛յշ եղէք, երբ ինչ որ մէկը կը սկսի քննադատել կամ նոյնիսկ մեղադրել ձեզ՝ ըսելով, որ դուք մեղաւոր էք անապատի մէջ յայտնուելու համար: Թերեւս այդ մարդը իրականութեան մէջ ձեր ընկերը չէ: Սուրբ Հոգին կը յանդիմանէ մեզ մեղքի մէջ, եւ յաճախ Ան կ'օգտագործէ այլ մարդիկ, որպէսզի օգնէ տեսնելու մեր սխալմունքը եւ ապաշխարել: Սակայն շարունակական մեղադրանքները, որոնցմէ նոյնիսկ յոյսի նշոյլ չկայ, թշնամիէն են: Զգո՛յշ եղէք:

պայծառ ու արեւոտ էր: Ես չէի նկատեր այդ ամէնը, քանի որ բոլորովին կլանուած էի ծառայութեան ճնշումով՝ այն ամէնով, ինչ որ, իմ կարծիքով, ես պէտք էր ընէի, որպէսզի Աստուծոյ հաճեցնէի:

Այժմ, ետ նայելով, ես կը հասկնամ հետեւեալը. Աստուած ըսած էր, որ ես պիտի աշխատէի Թի Էլ Օսպըրնի համար, եւ իսկապէս ունեցած էի այդ արտօնութիւնը: Ես շատ ու շատ անգամներ ծառայած էի անոր, երբ ան հիւրընկալուած էր Տալլաս գտնուող մեր եկեղեցւոյ մէջ:

Այնուամենայնիւ, ես արդէն աշխատանք չունէի: Ես խոնարհաբար վերադարձայ եկեղեցի եւ հարցուցի, թէ արդեօ՞ք կրնամ ետ ստանալ իմ աշխատանքը: Կը յիշեմ, որ նայեցայ ընկերոջս, որ հովիւի օգնականներէն էր, եւ ըսի. «Ես այնքա՛ն փոքր կը զգամ ինձի, որ կը կարծեմ՝ կրնամ անցնիլ դրան տակէն»: Ճիշդ այդպէս ալ ըսի: Ես պատմած էի բոլորին, որ պիտի աշխատէի Թի Էլին եւ Տէյզիին քով: Մեր հովիւը նոյնիսկ յայտարարած էր այդ մասին բեմէն, սակայն աստիկա տեղի չունեցաւ:

Եկեղեցին ողորմածաբար մասնակի դրոյթով աշխատանք առաջարկեց ինձի: Ես ծառայեցի հոն եւս ութը ամիս, ինչէն յետոյ սկսաւ իմ կոչման յաջորդ փուլը, որուն համար Աստուած կը պատրաստէր զիս: Ինձի աշխատանք առաջարկեցին Ամերիկայի ամենաարագ աճող եկեղեցիներէն մէկուն մէջ: Ատիկա տեղի ունեցաւ հրաշքով: Լիզան եւ ես գիտէինք, որ աստիկա Աստուծմէ բացուած դուռ էր: Այդ պահուն իմ հոգիին մէջ նոր կեանք եւ տեսիլք կար, քանի որ ես նոր գինիով լեցուն տիկ էի՝ պատրաստուած այդ նոր աշխատանքին համար:

Մաքրման ճանապարհը

Դարեր շարունակ՝ սկսած այն պահէն, երբ Յիսուսը հեռացաւ այս երկրէն, Անոր հետեւորդները փորձած են սրբութեան հասնիլ իրենց ջանքերով: Իրականութեան մէջ, նման անարդիւնք փորձերէն ծնած են ամբողջ եկեղեցական յարանուանութիւններ: Սակայն մենք ընդամէնը ստրկացուցած ենք մեզ օրինապաշտութեան, քանի որ սրբութիւնը կը ծնի Աստուծոյ շնորհքի աշխատանքի վերջաւորութեան, ոչ թէ մարմինի արտաքին սահմանափակման:

Աստուած շնորհք կու տայ խոնարհներուն, ոչ թէ հպարտներուն:

Հպարտ մարդը կը կարծէ, թէ ինքը կրնայ հասնիլ սրբութեան՝ առանց Աստուծոյ օգնութեան, հետեւելով գրուած օրէնքներու, կանոններու եւ դրոյթներու: Խոնարհ մարդը գիտէ, որ աստիկա անիմաստ է, եւ կ'ապաւինի Տիրոջ շնորհքին (գօրութեան): Սրբութիւնը կը յառաջանայ Աստուծոյ հետ մտերիմ հաղորդակցութենէն, քանի որ միայն նման հաղորդակցութեան միջոցով մարդը կրնայ գօրութիւն ստանալ, որպէսզի պահէ իր սրտի վրայ գրուած օրէնքները:

Շատերը փորձած են հասնիլ սրբութեան՝ հնազանդելով Նոր կտակարանի տառին, կամ ալ ոչ սուրբգրային համոզմունքներուն, եւ ցաւալիօրէն ձախողած են: Ինչպէս որ հրեաները ապարդիւն կը փորձէին փրկութիւն ստանալ՝ պահելով օրէնքի տառը, այնպէս ալ մենք անկարող ենք սուրբ ըլլալ՝ հետեւելով կանոններու: Շատերը սահմանափակած են իրենց օրինապաշտական գաղափարներով՝ ապրելով ըստ որոշակի վարքագիծերու կամ գործերու: Անոնք օգտագործած են արտաքին սահմանափակումներ՝ փորձելով հասնիլ ներքին սրբութեան:

Այնուամենայնիւ, Աստուած չի փնտռեր արտաքին սրբութիւն: Ան կը ցանկայ, որ փոխուի ձեր սիրտը, քանի որ մաքուր սրտէն կը բխի մաքուր վարք: Մատթէոս 23.26-ին մէջ Յիսուսը ըսաւ. «Առաջ մաքրէ բաժակին եւ սկաւառակին մէջը, որ անոնց դուրսն ալ մաքուր ըլլայ»:

Եթէ ձեր սիրտը մաքուր ըլլայ, դուք չէք ցանկար ընել այնպիսի բաներ, որոնք անպատուութիւն կը բերեն Յիսուսի անուանը: Դուք հեռու կը մնաք պոռնոգրաֆիք էջերէն համացանցի մէջ եւ ճչացող հագուստ չէք կրեր: Թերեւս ինչ որ տղամարդ կամ կին պարծենայ, որ ինք երբեք չէ անուսնալուծուած, բայց իր սրտին մէջ ան լեցուած է կիրքով իր աշխատակիցներէն մէկուն հանդէպ կամ պարբերաբար պոռնոգրաֆիք կայքեր կը դիտէ համացանցով: Արդեօ՞ք աստիկա սրբութիւն է:

Եթէ ձեր սիրտը մաքուր ըլլայ, համակարգիչը եւ հեռաձայնը չեն դրդեր ձեզ ոչ կառուցողական նիւթեր փնտռելու: Թէքնիքական սարքերը ինքնին անմաքուր չեն դարձնել ձեզ: Ձեզ այդ քայլին կը դրդէ այն, ինչ որ ձեր սրտին մէջ է: Եթէ ձեր սիրտը մաքուր ըլլայ, դուք կը ցանկաք միայն այնպիսի բաներ, որոնք Աստուած կը ցանկայ:

Անապատը այն հալոցներէն մէկն է, որոնք Աստուած կ'օգտագործէ, որպէսզի մաքրէ մեր դրոյթապատճառներն ու շարժառիթները:

Աստուած կը պատրաստէ մեր սրտերը, նախքան Իր եկեղեցւոյ համար վերադառնալը: Աստուած կը բարձրացնէ այնպիսի սերունդ, որ կը յայտնէ Իր փառքը, ոչ թէ իրենինը՝ այնպիսի մարդոց, որոնք ե՛ւ ստեղծուած են Իր պատկերով, ե՛ւ կը վարուին՝ ըստ Իր բնաւորութեան.

«Բայց մեծ տունի մը մէջ ոչ միայն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներ կան, այլեւ փայտէ եւ հողէ ալ: Կան, որ պատուի համար են, եւ կան, որ անարգութեան համար են: Եթէ մէկը իր անձը մաքրէ այդպիսիներէն, ան պատուական անօթ կ'ըլլայ սրբուած եւ իր Տիրոջը օգտակար, ամէն բարի գործերու համար պատրաստուած» (Բ. Տիմոթ. 2.20,21):

Ուշադրութիւն դարձուցէք, որ կան երկու տեսակի անօթներ՝ պատուական եւ անարգ: «Անարգանք» բառը յունարէնով *«աթիմիա»* բառն է, որ կը նշանակէ «անպատուութիւն, նախատիինք, ամօթ, անարգանք»: «Պատիւ» բառը յունարէնով *«թիմէ»* բառն է, որ կը նշանակէ «թանկարժէք»: Աստուած կ'ըսէ. «Եթէ հանես պատուականը անարգէն, Իմ բերանին պէս կ'ըլլաս» (Երեմիա 15.19): Պատուականը կը հեռացուի անարգէն մանրակրկիտ մաքրման կամ անմաքրութիւնները հեռացնելու միջոցով:

Մաղաքիան հինկտակարանեան մարգարէ էր, որ շարք մը մարգարէութիւններ ըրաւ Նոր կտակարանի ժամանակներու մասին: Հասկնալի է, որ ան չունէր նորկտակարանեան բառապաշար: Այդ պատճառով, ան օգտագործեց «ղետացի» եւ «քահանայ» բառերը՝ նկարագրելով այն, ինչ որ Սուրբ Հոգին ցոյց կու տար եւ կ'ըսէր իրեն Նոր կտակարանի քրիստոնեաներու մասին:

Մաղաքիան նախապէս ըսաւ, որ Տէրը պիտի *գար* Իր տաճար (Իր եկեղեցի) մինչեւ Իր տաճարի համար *վերադառնալը*, եւ Ան պիտի գայ, որպէսզի մաքրէր այն: Ան կը գրէ.

«Եւ Ան պիտի նստի իբրեւ արծաթ հալեցնող եւ մաքրող, եւ պիտի մաքրէ Ղեւիի որդիները եւ պիտի գտէ զանոնք ոսկիի եւ արծաթի պէս, եւ անոնք պիտի ըլլան արդարութեամբ ընծայ մատուցողներ Տիրոջ համար» (Մաղաքիա 3.3):

Ղեւտացիները «թագաւորական քահանայութեան» (Ա. Պետր. 2.9) եկեղեցւոյ մէջ գտնուող Քրիստոսի հետեւորդներու խորհուրդն են: Քանի որ Աստուած կը համեմատէ այս քահանաներու մաքրումը ոսկիի եւ արծաթի մաքրման ընթացքին հետ, օգտակար կ'ըլլայ հասկնալ, թէ ինչ առանձնայատկութիւններ ունին ոսկին եւ արծաթը, եւ ինչպէս ասոնք կը մաքրուին: Ես կը խօսիմ միայն ոսկիի մասին, քանի որ այս երկու մետաղներու մաքրումը կը կատարուի նմանատիպ կերպով:

Ոսկին ունի գեղեցիկ դեղին գոյն եւ թոյլ մետաղական փայլ: Այն կարելի է գտնել բազմաթիւ վայրերու մէջ, բայց մշտապէս՝ փոքր քանակութեամբ, եւ հազուադէպ՝ մաքուր վիճակի մէջ: Մաքրուելէն յետոյ ոսկին փափուկ է, դիւրաբեկ է եւ ազատ է ժանգէն ու կողմնակի նիւթերէն: Խառնուելով այլ մետաղներու հետ (պղինձ, երկաթ, նիքել)՝ ոսկին կը դառնայ աւելի կարծր, պակաս դիւրաբեկ եւ աւելի ենթակայ ժանգոտման: Նման խառնուրդը կը կոչուի համաձուլուածք: Որքան բարձր է օտար մետաղի տոկոսային չափը, այնքան ոսկին աւելի կարծր է, եւ որքան այն ցած է, այնքան ոսկին փափուկ եւ դիւրաբեկ է:

Զուգահեռը անմիջապէս կ'երեւի. մաքուր սիրտը Աստուծոյ առջեւ նման է մաքուր ոսկիի: Մաքուր սիրտը փափուկ, մեղմ եւ դիւրաբեկ է: Ահա թէ ինչու Սուրբ Հոգին կ'ըսէ.

«Այսօր, երբ լսէք Անոր ձայնը,
Մի՛ խստացնէք ձեր սրտերը,
Ինչպէս Իսրայէլը, երբ անոնք ապստամբեցան,
Երբ անոնք փորձեցին Ձիս անապատին մէջ...
Դուք պէտք է մէկզմէկ զգուշացնէք ամէն օր, քանի տակաւին
«այսօր» է, որպէսզի ձեզմէ ոչ ոք խաբուի մեղքով ու խստանայ...» (Եբրայեցիս 3.7,8,13, NLT):

Մեղքը այն աւելցուած նիւթն է, որ կը վերածէ մեր *մաքուր* ոսկին համաձուլուածքի՝ խստացնելով մեր սրտերը: Չունենալով սրտի փափկութիւն՝ մենք կը կորսնցնենք մեր զգայունութիւնը եւ չենք կրնար լսել Տիրոջ ձայնը:

Դժբախտաբար, այսօր չափազանց շատ մարդիկ այսպիսի վիճակի մէջ են. անոնք ունին Աստուածապաշտութեան կերպարանք,

բայց ոչ՝ զգայուն սիրտ, որ կը վառի Յիսուսին համար: Աստուծոյ հանդէպ կրակոտ սէրը փոխարինուած է պաղ եսասիրութեամբ, որ կը ձգտի միայն սեփական հաճոյքին, յարմարաւէտութեան եւ շահին: Համարելով, որ Աստուածապաշտութիւնը անձնական շահ ձեռք բերելու միջոց է (տե՛ս Ա. Տիմոթ. 6.5), անոնք միայն կը ձգտին Աստուծոյ խոստումներէն բխող շահին՝ անգիտակցաբար կամ յարմարաւէտ կերպով բացառելով Խոստացողը: Նման խաբուած վիճակի մէջ գտնուող մարդիկ կը վայելեն այս աշխարհը՝ ակնկալելով, որ պիտի ստանան նաեւ Երկինքը: Աստուած չի ցանկար այսպիսի դիրքորոշում.

«Մաքուր եւ ճշմարիտ կրօնը Աստուծոյ եւ Հօր արջեւ՝ կը նշանակէ... թոյլ չտալ, որ աշխարհը պղծէ ձեզ» (Յակոբոս 1.27, NLT):

Յիսուսը պիտի վերադառնայ այնպիսի եկեղեցւոյ ետեւէն, որ սուրբ է եւ չունի որեւէ արատ, բիծ կամ անմաքրութիւն (տե՛ս Եփես. 5.27)՝ Իր մարմինին ետեւէն, որ բաղկացած է այս աշխարհի ճանապարհներով չապականուած մարդոցմէ:

Ոսկիի առանձնայատկութիւններէն եւս մէկը՝ չժանգոտիլն է: Թէեւ միւս մետաղները կը խամրին մթնոլորտային պայմաններէն, մաքուր ոսկին չի կրեր նման ազդեցութիւն: Արոյրը (պղնձի եւ գինկի դեղին համաձուլուածք) նման է ոսկիին, սակայն այլ բնոյթ ունի: Այն դիրաբար կը ժանգոտի: Այն արտաքնապէս նման է ոսկիին, սակայն ոսկիի յատկանիշները չունի: Եկեղեցւոյ մէջ կան արոյրէ անօթներ, որոնք արտաքնապէս նման են ոսկիին, բայց ոսկի չեն: Միայն մաքրող կրակը ցոյց կու տայ տարբերութիւնը այս երկուքին միջեւ: Մաղաքիան կը գրէ, թէ ինչ տեղի կ'ունենայ մաքրումէն յետոյ.

«Այդ ժամանակ դուք կրկին պիտի տեսնէք տարբերութիւնը արդարին եւ անօրէնին միջեւ, անոնց միջեւ, որոնք կը ծառայեն Աստուծոյ, եւ որոնք չեն ծառայեր Անոր» (Մաղաքիա 3.18, NLT):

Վերադառնանք ոսկիի մաքրման: Օտար նիւթերու բարձր քանակը ոսկիի մէջ՝ այն կը դարձնէ ոչ միայն կարծր, այլեւ ենթակայ ժանգոտման եւ քայքայման: Այն աւելի դիւրին կը կրէ այս աշխարհի մթնոլորտի ազդեցութիւնը:

Այսօր այս աշխարհի ճանապարհները թափանցած են եկեղեցի: Այս աշխարհի մշակոյթը խառնուած է մեզի հետ, եւ մենք արատաւորուած ենք ատորմով: Ամերիկայի մէջ եկեղեցւոյ արժէքները արատաւորուած են աշխարհիկութեամբ: Շատերը անզգայ դարձած են եւ չեն հասկնար, որ մաքրման կարիք ունին:

Մաղաքիա 3.3-ը ցոյց կու տայ, որ Յիսուսը պիտի մաքրէ Իր եկեղեցին այս աշխարհի ազդեցութենէն՝ ինչպէս արծաթ եւ ոսկի մաքրողը: Այդ մաքրման ընթացքին ոսկին կ'աղան եւ կը խառնեն ֆլիւս կոչուող լուծիչին հետ: Այս երկու նիւթերը կը դրուին հալոցի մէջ եւ կը հալեցուին ուժգին կրակով: Օտար ծուլուածքները կամ խառնուրդները կը միանան ֆլիւսին եւ կը բարձրանան մակերեսի վրայ: Ոսկին (որ աւելի ծանր է) կը մնայ վար: Խառնուրդները կամ խարամը (ինչպիսիք են պղինձը, երկաթը եւ զինկը՝ ֆլիւսի հետ միասին) կը հեռացուին:

Այժմ ուշադրութեամբ կարդանք, թէ ինչպէս Աստուած կը մաքրէ.

«Ես կը դարձնեմ Իմ ձեռքը դէպի քեզի եւ կը մաքրեմ քու կղկղանքը (կամ՝ խարամը) ինչպէս թէ բորակով, եւ կը հեռացնեմ քու բոլոր անագը (կամ՝ խառնուրդները): Եւ ետ կը բերեմ քու դատաւորներդ (առաջնորդները), ինչպէս որ առաջ էր, եւ քու խորհրդականները (հաւատացեալները), ինչպէս որ սկիզբը: Այնուհետեւ քեզի պիտի ըսեն «Արդարութեան քաղաք, հաւատարիմ աւան»» (Եսայիա 1.25,26):

Ի՞նչ տեսակի կրակ Աստուած պիտի օգտագործէ՝ մեզ մաքրելու համար: Պատասխանը հետեւեալ հատուածին մէջ է.

«Որ անորմով կ'ուրախանաք, թէ եւ հիմա, ինչպէս որ հարկը կը պահանջէ, քիչ մը տրտմած էք կերպ-կերպ փորձանքներու մէջ, որ ձեր հաւատքի փորձառութիւնը աւելի պատուական գտնուի, քան կորստեան ոսկին, որ կրակով կը փորձուի՝ գովութեան, պատիւի եւ փառքի համար Յիսուս Բրիստոսի յայտնութեան մէջ» (Ա. Պետրոս 1.6,7):

Աստուծոյ մաքրման կրակը *նեղութիւնները* եւ *փորձութիւններն* են,

որոնք, անշուշտ, գլխաւոր գործիքներն են անապատին մէջ: Ատոնց շիկացած տաքութիւնը կը բաժնէ մեր անմաքրութիւնները մեր մէջ գտնուող Աստուծոյ բնաւորութենէն: Ասիկա տեսականօրէն կ'առաջնորդէ մեզ դէպի սրբութիւնը (շուտով կը բացատրեմ, թէ ինչու կ'օգտագործեն «տեսականօրէն» բառը):

Ոսկիի եւս մէկ յատկանիշը՝ ամենամաքուր վիճակին մէջ իր թափանցիկութիւնն է (որուն սահմանումն է՝ այն, ինչի միջէն, որ կարելի է տեսնել այնպէս, ինչպէս ապակիի մէջէն): «Եւ քաղաքի հրապարակը՝ մաքուր ոսկի՝ ինչպէս թափանցիկ ապակի» (Յայտնութիւն 21.21): Մաքրուելով կրակէ փորձութիւններով՝ դուք թափանցիկ կը դառնաք: Թափանցիկ անօթը փառք կը բերէ ոչ թէ իրեն, այլ՝ իր պարունակութեան: Այն չի յառաջացներ խոչընդոտներ եւ գրեթէ աննկատ է:

Հազիւ որ մենք մաքրուինք, այս աշխարհը կրկին Յիսուսը կը տեսնէ: Երբ մենք դառնանք թափանցիկ, այսինքն՝ ըլլանք այնպիսի մարդիկ, որոնք կը խօսին ճշմարտութիւնը, ամբարտաւան չեն, կը պահեն իրենց խօսքը, ազնիւ են եւ պահելու ոչինչ ունին, այս աշխարհի մարդիկ կը նկատեն ստիկա:

Եսայիա մարգարէի գիրքին մէջ մենք աւելի յստակ կը տեսնենք ստիկա.

«Ես մաքրած եմ քեզ, բայց ոչ այնպէս, ինչպէս արծաթը կը մաքրուի: Փոխարէնը, Ես մաքրած եմ քեզ չարչարանքի հալոցին մէջ: Ես կը փրկեմ քեզ յանուն Ինծի, այո՛, յանուն Ինծի: Ես առիթ չեմ տար, որ Իմ համբաւը արատաւորուի, եւ Ես չեմ կիսեր Իմ փառքը կուռքերու հետ» (Եսայիա 48.10,11, NLT):

Կրակէ հալոցը տառապանք է, ոչ թէ նիւթական կրակը, որուն միջոցով կը մաքրուի արծաթը (կամ ոսկին), եւ ասիկա կը բացատրէ, թէ ինչու Ան կ'ըսէ. «բայց ոչ այնպէս, ինչպէս արծաթը»: Մեր փորձութիւնները այն սաստիկ կրակն են, որ կ'առանձնացնէ թանկարժէքը անարգէն:

Աստուած չի հեռացներ մեր մէջ գտնուող անարգ բաները մեր կամքին հակառակ: Ահա թէ ինչու Պօղոսը կը գրէ Բ. Տիմոթէոս 2.21-ին մէջ, թէ այն մարդը, որ կը ցանկայ մաքուր ըլլալ, «կը մաքրէ իր ան-

ծը»: Եթէ դուք կը ցանկաք արդարացումներ ընել՝ թոյլ տալով, որ ձեր բնաւորութեան արատները ետ պահեն ձեզ, Աստուած չի հարկադրեր ձեզ ձգել ատոնք: Այդ չարչարանքի ընթացքը անօգուտ կ'ըլլայ (եւ յատուկ այս պատճառով է, որ վերը ես օգտագործեցի «տեսականօրէն» բառը): Մաքրման գործընթացը սրբութեան ճանապարհին՝ մշտական է, շարունակական է եւ յաճախ ցաւոտ է: Այնուամենայնիւ, ես կ'ընդունիմ այն՝ հասկնալով, թէ ինչ պտուղ պիտի տայ այն:

Եբրայեցիներու թուղթի հեղինակը կը պնդէ. «Հետեւեցէ՛ք... սրբութեան, որ առանց անոր ոչ ոք կը տեսնէ Տէրը» (12.14): Յիսուսը կ'ըսէ. «Երանի՛ անոնց, որ սրտով մաքուր են, որ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (Մատթէոս 5.8): Դաւիթը, որ սրտանց կը ձգտէր Աստուծոյ, կ'աղաղակէ. «Ո՞վ կրնայ գիտնալ իր յանցանքները. ծածուկ սխալներէն ալ զիս մաքրէ» (Սաղմոս 19.12):

Թող որ ասիկա ըլլայ մեր աղաղակը: Եթէ մենք խնդրենք Աստուծո՛մ մաքրել մեր սրտերը, Ան պիտի հեռացնէ այն անմաքրութիւնները, որոնք պահուած են մեզմէ: Աստուած գիտէ մեր սրտի մտքերն ու դրդապատճառները, նոյնիսկ եթէ մենք տեղեակ չենք ատոնց մասին:

Ես կը յորդորեմ, որ սորվիք ճանչնալ եւ ընդունիլ հոգեւոր անապատի ժամանակաշրջանը: Երբ կրակոտ փորձութիւնները կու գան, մի՛ բարկանաք եւ մի՛ մեղադրէք մարդիկը, այլ նայեցէ՛ք այդ փորձութիւններու նպատակին: Քննեցէ՛ք ձեր սիրտը եւ թոյլ տուէք Աստուծոյ հեռացնել անարգը թանկարժէքէն: Ան կը պատուիրէ. «Սո՛ւրբ եղէք, որովհետեւ ես սուրբ եմ» (Ա. Պետրոս 1.16):

Յիշեցէ՛ք՝ մաքրման ընթացքը կը զօրացնէ այն, ինչ որ արդէն իսկ բարի է, եւ կը հեռացնէ այն, ինչ որ կը տկարացնէ կամ կ'ապականէ: Ընդունեցէ՛ք Անոր մաքրման ընթացքը, որպէսզի դառնաք պատուի անօթ, որ կրնայ հրաշալի եւ թափանցիկ կերպով ցոյց տալ Անոր փառքը:

ԼԱՒ ԿԱՌՈՒՑԵՑԷՔ

«Ոչ մէկ տեղ աստղերը այնքան վառ չեն փայլիր, որքան բուեռային երկինքը: Ոչ մէկ ջուր այնքան քաղցրահամ չէ, որքան անապատի աւազներէն բխող ջուրը: Եւ ոչ մէկ հաւատք այնքան սուղ է, որքան այն հաւատքը, որ կ'ապրի եւ կը յաղթէ դժուարութիւններուն մէջ: Փորձուած հաւատքը փորձառութիւն կը բերէ: Դուք երբեք չէիք հաւատար, որ տկար էք, եթէ ստիպուած չըլլայիք անցնիլ դժուարութիւններով: Եւ դուք երբեք չէիք ճանչնար Աստուծոյ զօրութիւնը, եթէ չունենայիք Անոր զօրութեան կարիքը՝ ձեզ ատոնց մէջէն անցընելու համար»:

– Չարլզ Սփերձէն

«Որովհետեւ մարմնաւոր եղողները մարմինի բաները կը մտածեն, իսկ հոգեւոր եղողները՝ Հոգիի բաները»:

– Հռովմայեցիս 8.5

Աստուծոյ ծառայողը՝ թէ՛ կին, թէ՛ տղամարդ, կը կայանայ շնորհիւ բնաւորութեան, ոչ թէ օծութեան: Իսկ բնաւորութեան ձեւաւորումը կամ մաքրումը տեղի կ'ունենայ անապատին մէջ, երբ ճնշումներ կու գան, հիասթափութիւններ կը յառաջանան, եւ երազանքները անհասանելի կը թուան:

Ես կը յիշեմ այնպիսի ժամանակ անապատին մէջ, երբ կը պայքարէի՝ յաղթահարելու համար իմ մէջ բարձրացող բարկութիւնը: Առաջին գլուխին մէջ կարճ անդրադարձայ ատոր: Ես հարցուցի Աստուծոյ. «Ինչո՞ւ բարկացած եմ բոլորին վրայ: Ի՞նչ պէտք է կապեմ իմ կեանքին մէջ կամ հեռացնեմ իմ կեանքէն»:

Ան պատասխանեց. «Որդի՛ս, դուն չես կրնար կապել կամ հեռացնել քու մարմինը. դուն պէտք է խաչես այն»:

Առաւել յուսահատած ես հարցուցի. «Իսկ ուրկէ՞ է այս բարկութիւնը: Ես երբեք նման բան չեմ զգացած, նոյնիսկ մինչեւ փրկուիլը»:

«Այն եղած է քու մէջ տարիներ շարունակ,- պատասխանեց Ան,- բայց այն անտեսանելի է, ինչպէս որ քու ոսկիէ մատանիի մէջի անմաքրութիւնները: Ատոնք անտեսանելի պիտի մնան, քանի տակաւին չես հալեցուցած հալոցի մէջ, բայց երբ հալեցնես այն, այդ անմաքրութիւնները դուրս պիտի ելլեն մակերես: Ես ցոյց տուի քու բարկութիւնը՝ բերելով քեզ այս տառապանքներու հալոցին մէջ:

Ես չէի գիտեր, թէ ինչպէս կիրառել այն, ինչ որ Աստուած ըսաւ ինձի. այնպէս որ, Ան ա՛լ ատելի մանրամասնեց.

- Դուն կրնաս մեղադրել քու կինը, քու աշխատակիցները, քու

ընկերները, այն ճնշումը, որ կու գայ նորածին երեխայ ունենալու պատճառով, եւ քու հանգամանքները: Եթէ այդպէս վարուիս, այդ բարկութիւնը պիտի մնայ, եւ երբ կրակը թուլնայ, այն կրկին պիտի վերադառնայ մէջդ, եւ կարիք պիտի ըլլայ վերսկսելու ամբողջ այս ընթացքը: Բայց դուն կրնաս ապաշխարել՝ աղօթելով. «Աստուած, ես կը զղջամ. հեռացո՛ւր ինձմէ՛ այս բարկութիւնը»: Եթէ այդպէս վարուիս, Ես կը վերցնեմ Իմ մեծ շերտիդ եւ կը հեռացնեմ այն քեզմէ՛»:

Ես ճիշդ այդպէս ալ վարուեցայ: Երբ կրակէ անապատի ճնշումը բացայայտեց իմ բարկութիւնը, ես խոստովանեցայ իմ մեղքը, ապաշխարեցի եւ խնդրեցի Աստուծմէ՛ վերցնել այն:

Ահա եւս պատճառ մը, թէ ինչու անապատը անչափ արժէքաւոր է: Թէեւ այն կրնայ շատ խիստ ըլլալ, այն, ի վերջոյ, մեծ ուրախութիւն կը պարգեւէ մեզի:

«Որ անորմով կ'ուրախանաք, թէեւ հիմա, ինչպէս որ հարկը կը պահանջէ, քիչ մը տրտմած էք կերպ-կերպ փորձանքներու մէջ, որ ձեր հաւատքի փորձառութիւնը աւելի պատուական գտնուի, քան կորստեան ոսկին, որ կրակով կը փորձուի՝ գովութեան, պատիւի եւ փառքի համար Յիսուս Քրիստոսի յայտնութեան մէջ» (Ա. Պետրոս 1.6,7):

Անապատը այն վայրն է, ուր մենք կը մաքրուինք, եւ ուր կը ձեւաւորուի մեր բնաւորութիւնը: Ճիշդ այս տառապանքի եւ հալածանքի հալոցին մէջ կը կայանայ ճշմարտապէս Աստուածապաշտ մարդը: Հռովմայեցիս 5.3,4-ին մէջ գրուած է. «Նոյնպէս, մենք կրնանք ցնծալ, երբ կը բախինք խնդիրներու եւ փորձութիւններու, քանի որ մենք գիտենք, որ ատոնք կ'օգնեն մեզի համբերութիւն ձեւաւորել: Իսկ համբերութիւնը կը ձեւաւորէ հաստատուն բնաւորութիւն» (NLT):

Աստուած կը հաւնէր Ղաւիթը, քանի որ ան Իր սրտին համեմատ մարդ էր. ան կը ձգտէր Աստուծոյ սրտին, ոչ թէ որեւէ երկրային թագաւորութեան: Սաւուղ թագաւորը այդպէս ալ չանցաւ անապատէն, որ պիտի մաքրէր զինք, եւ անոր ներսը անմաքրութիւն եւ անապահովութիւն կար: Ղաւիթը մաքրուեցաւ անապատին մէջ, եւ Աստուած նոյնիսկ գործածեց Սաւուղը՝ զինք հոն ուղարկելու համար:

Աստուծոյ ճանապարհները կրնան առեղծուածային ըլլալ, բայց Անոր ծրագիրները միշտ բարի են:

Երազանքը կը յետաձգուի՞

Այնուամենայնիւ, մաքրումը կրնայ ցաւոտ ըլլալ: Ես չեմ ստեր. անապատը նման չէ «Տիգրիլենտ» երթալուն: Չարչարանքը չարչարանք է, եւ երբեմն այն կը հարուածէ մեզ շատ ցաւոտ ձեւերով:

Թերեւս Աստուած ցոյց տուած է ձեզի տեսիլքներ կամ երազներ ձեր կոչման մասին: Թերեւս Ան խօսած է ձեզի հետ այն ծրագիրներուն մասին, որոնք որոշած է ձեզի համար: Սակայն անապատին մէջ յաճախ կը թուայ, թէ որքան ատելի կը փնտռէք Տէրը եւ կը հնազանդիք Անոր Խօսքին, այնքան ատելի կը հեռանաք այն երազանքէն, որ Ան դրած է ձեր սրտին մէջ:

Մտածեցէ՛ք Յովսէփին մասին. ան երազ տեսած էր, ըստ որուն ինք առաջնորդ պիտի ըլլար, եւ նոյնիսկ իր եղբայրներն ու ընտանիքը պիտի հնազանդէին իր իշխանութեան: Ի՞նչ կատարուեցաւ անկէ յետոյ: Այն մարդիկ, որոնք պէտք է պաշտպանէին զինք՝ անոր աւագ եղբայրները, փոսը նետեցին զինք եւ կարճ ժամանակ յետոյ զինք վաճառեցին ստրկութեան օտար երկրի մը մէջ: Կրնա՞ք պատկերացնել անոր շփոթմունքը, յուսահատութիւնը եւ ցաւը:

Ես գրեթէ համոզուած եմ՝ ան կը մտածէր, որ Աստուած գերբնականօրէն պիտի միջամտէր եւ կարճ ժամանակ յետոյ պիտի ազատէր զինք: Այդ յոյսը ի վերջոյ պիտի մարէր, քանի որ անոր ստրկութիւնը չտուեց քանի մը ամիս կամ քանի մը տարի, այլ՝ տասը տարիէն ատելի: Ատիկա երկար ժամանակ է: Ամբողջ այդ ընթացքին ան գիտէր, որ իրեն ցաւ պատճառողները կ'ապրէին ազատութեան մէջ եւ կը վայելէին կեանքը իրենց մեծահարուստ հօր տունը:

Ի՞նչ կ'ընէր Յովսէփը: Ինչպիսի՞ն էր անոր արծագանգը իր անապատային շրջանին մէջ: Ան կը պահէր իր հաւատքը, կը ծառայէր եւ չէր մոռնար Աստուծոյ խոստումը: Ան հաւատարիմ էր, իմաստուն էր, աշխատասէր էր եւ, որպէս արդիւնք, ան հասաւ օրհնութեան եւ յաջողութեան:

Այնուամենայնիւ, անոր պայմանները անգամ մը եւս յանկարծ փոխուեցան եւ շատ ատելի վատթարացան: Անոր դեկավարին կինը ցանկութեամբ լեցուն հայեացքներ կ'ուղղէր անոր վրայ: Ան կ'ուզէր գայթակղեցնել զինք՝ շնութեան դրողելով, ոչ թէ մէկ կամ երկու անգամ, այլ՝ շատ անգամներ: Նոյնիսկ այդ պարագային Յովսէփը հնազանդեցաւ Աստուծոյ՝ ամէն անգամ հեռանալով սեռական անբարոյութենէն: Ի վերջոյ, այդ կինը այնքան կաշուն դարձաւ, որ Յովսէփը բառացիօրէն ստիպուած էր փախչիլ անոր ճանկերէն: Արհամարհանքի արժանանալէն յետոյ ան մեղադրեց Յովսէփը այն բանին մէջ, ինչ որ վերջինս չէր ըրած: Զինք անարդարացի կերպով «դատապարտեցին» եւ բանտարկեցին (սովորաբար օտարերկրացի ստրուկը, որ թագաւորի պաշտօնեային կինը բռնաբարելու փորձ ըրած էր, երբեք ցերեկային լոյս պիտի չտեսնէր):

Բանտին մէջ գտնուող մարդը մտածելու շատ ժամանակ ունի: Կը պատկերացնէ՞ք, թէ ինչպիսի մտքերու հետ Յովսէփը ստիպուած էր պայքարիլ. *«Ես ամբողջ կեանքիս մէջ հաւատարմօրէն ծառայած եմ Աստուծոյ եւ ի՞նչ ստացած եմ: Ես առանց մեղաւորութեան յայտնուեցայ այս բանտին մէջ, ուր պիտի փոխիմ ալ: Իմ կեանքս աւարտած է: Իմ չար եղբայրներս ազատ են եւ, ամենայն հաւանականութեամբ, լիառատ կեանք կը վայելեն: Ի՞նչ սխալ գործած եմ: Ես միայն պատմեցի եղբայրներուս այն երազը, որ, ինչպէս կը կարծէի, Աստուած տուած էր ինձի, եւ ահա թէ ինչ կատարուեցաւ: Ի՞նչ օգուտ, որ ես ծառայեցի Աստուծոյ: Կը թուայ՝ որքան ատելի կը հնազանդիմ Անոր, այնքան ատելի կեանքս կը վատթարանայ»:*

Ո՞վ կրնար մեղադրել Յովսէփը այսպիսի մտքերու համար: Ատոնք լիովին տրամաբանական կը թուան, այնպէս չէ՞:

Եւ օր մը բանտին մէջ Յովսէփը բախեցաւ իր մեծագոյն անապատային փորձութեան: Աստուած բերաւ անոր քով երկու մարդ՝ մատռուակն ու հացթուխը, որոնցմէ ամէն մէկը երազ տեսած էր: Անոնք խիստ շփոթած էին իրենց երազներուն պատճառով եւ կը ցանկային գիտնալ ատոնց մեկնութիւնը: Եթէ Յովսէփը կորսնցուած ըլլար իր հաւատքը Աստուծոյ եւ Անոր խոստումին հանդէպ, ան եսակեդրոն կը դառնար եւ չէր ծառայէր անոնց: Ան կրնար ըսել. «Դուք երազնե՞ր տե-

սած էք անցեալ գիշեր: Մէկ անգամ ես ալ երազ տեսայ: Ես նոյնպէս մտածեցի, որ այդ երազը Աստուծմէ էր: Բայց գիտէք, երազները չեն կատարուիր: Երազները անօգուտ են, դատարկ են եւ մոլորեցնող են: Կրնա՞ք հանգիստ ձգել գիս»:

Եթէ Յովսէփը այդպէս վարուէր, ան կրնար մնալ իր անապատին մէջ շատ աւելի երկար, նոյնիսկ՝ մինչեւ կեանքի աւարտը: Ան պիտի կորսնցնէր ազատութիւն ստանալու հնարաւորութիւնը (յետագային մատուակը պատմեց թագաւորին, որ Յովսէփը կրնար երազներ մեկնել, որուն արդիւնքով ան ազատեցաւ բանտէն եւ յառաջխաղացում ունեցաւ): Եթէ ան սկսէր խղճալ ինքնիրեն, այդպէս ալ պիտի մահանար բանտին մէջ: Ան դառնացած, կասկածամիտ եւ յուսալքուած մարդ մը պիտի դառնար եւ ամէն ձեւով մարդոց պիտի ըսէր. «Աստուած հաւատարիմ չէ. Ան Իր խոստումները չի պահեր»:

Սակայն Յովսէփը այդպէս չվարուեցաւ: Ան վանեց իրմէ այն մտքերն ու տրամաբանութիւնը, որոնք կ'ընդդիմանային Աստուծմէ ստացած խոստումին, եւ որոշեց ծառայել մատուակին եւ հացթուխին: Ան հետեւողականօրէն հնազանդեցաւ Աստուծոյ: Եւ ի՞նչ տեղի ունեցաւ: Եկաւ այն օրը, երբ ան ազատ արձակուեցաւ եւ յառաջխաղացում ունեցաւ՝ դառնալով փարաւոնին տեղակալը:

Յովսէփին առաջնորդ դառնալէն ինը տարի յետոյ խիստ սովի պատճառով անոր եղբայրները Եգիպտոս եկան եւ կանգնեցան անոր առջեւ: Յովսէփը չփորձեց վրէժ լուծել անորմէ, ինչպէս որ շատերը կ'ընէին: Անոր մէջ ձեւաւորուած էր Աստուծոյ Թագաւորութեան ճշմարիտ առաջնորդի բնաւորութիւնը: Ան բարութիւն ցուցաբերեց իր հանդէպ չարութեամբ վարուողներուն: Ան դառնացած մարդ չէր. ան լեցուած էր հաւատքով, սիրով եւ ներումով այն մարդոց հանդէպ, որոնք դաւաճանած էին զինք: Սաղմոսերգուն կը գրէ Յովսէփի մասին.

«Ան [Աստուած] մարդ ուղարկեց անոնց առջեւէն՝ Յովսէփին, որ վաճառուեցաւ որպէս ստրուկ: Անոնք ցաւցուցին անոր ոտքերը կապանքներով. ան դրուեցաւ երկաթի մէջ: Մինչեւ այն ժամանակը, երբ *Անոր Խօսքը* կատարուեցաւ, Տիրոջ Խօսքը փորձեց զինք» (Սաղմոս 105.17-19, NKJV):

Միայն Աստուած գիտէր, թէ երբ պիտի իրականանար այն խոստումը, որ Ինքը տուած էր Յովսէփին (աւելի քան քսան տարի յետոյ՝ անոր երագէն ետք): Անապատը ձեւաւորեց անոր մէջ այնպիսի բնաւորութիւն, որուն շնորհիւ ան ճիշդ պիտի կառուցէր իր կեանքը, ընտանիքը եւ այն ամէնը, ինչ որ ինք պիտի ղեկավարէր: Անոր յաջողութեան բանալին Տիրոջ հանդէպ ունեցած ակնածանքն ու երկիւղն էին: Անկախ իր հանգամանքներէն՝ Յովսէփը կը քարոզէր Աստուծոյ խօսքը, կը վարուէր ըստ Աստուծոյ խօսքին եւ կը հնազանդէր Աստուծոյ խօսքին:

Իսկ ինչպիսի՞ն էք դուք: Ինչպէս արդէն նշեցի, թերեւս Աստուած տուած է ձեզի երագներ եւ տեսիլքներ այն մասին, թէ ինչի համար կանչած է ձեզ: Թերեւս Ան խօսած է ձեզի հետ այն ծրագիրներուն մասին, որոնք Ան որոշած է ձեզի համար: Բայց, ինչպէս եւ Յովսէփը, դուք անապատի մէջ էք, եւ կը թուայ՝ որքան աւելի կը փնտռէք Տէրը եւ կը հնազանդիք Անոր խօսքին, այնքան աւելի կը հեռանաք այն երագանքէն, որ Ան դրած է ձեր սրտին մէջ:

Թերեւս դուք տեսած էք, որ այլ մարդիկ, նոյնիսկ անոնք, որոնք թշնամաբար վերաբերած են ձեզի, յառաջխաղացում ունեցած են ծառայութեան մէջ (կամ կեանքի որեւէ բնագաւառի մէջ), մինչ դուք կարծես կը շարունակէք հեռանալ այն երագանքէն, որ ստացած էք Աստուծմէ: Թերեւս դուք կ'ընէք այն, ինչ որ գիտէք, բայց ձեր երագանքը չի կատարուիր:

Թերեւս ձեր շուրջը կան մարդիկ, որոնք մարմնաւոր են եւ չեն փնտռէր Տէրը, բայց անոնք յառաջխաղացում կ'ունենան, եւ կարծես թէ կը բարգաւաճին: Անոնք կը ստանան բոլոր նիւթական եւ հասարակական «օրհնութիւնները»: Թերեւս անոնց առաջընթացը պայմանաւորուած է շողոքորթութեամբ եւ շահարկումներով: Թերեւս անոնք յաջողութեան կը հասնին, քանի որ անազնիւ կը վարուին եւ կը խաբեն մարդիկ, սակայն, միեւնոյնն է, կը թուայ՝ անոնք «օրհնուած» են, իսկ դուք նման էք Յովսէփին՝ շղթայուած փարաւունի բանտին մէջ:

Ինչպէ՞ս դուք կը վարուիք այդ պարագային: Դուք կը տրտնջա՞ք: Աստուած կ'ըսէ հետեւեալը.

«Ձեր խօսքերը ծանր են Ինձի դեմ,- կ'ըստ Տէրը: - Բայց դուք կ'ըսէք. «Մենք Քեզի դեմ ի՞նչ կը խօսինք»: Դուք կ'ըստք. «Պարապ է Աստուծոյ ծառայելը, եւ ի՞նչ օգուտ, որ մենք Անոր պահպանութիւնը պահած ենք եւ սուգով վարուեցանք Ձօրաց Տիրոջ առջեւ: Եւ հիմա մենք գործունէրուն երանի կ'ըսենք, եւ անօրինութիւն ընդունելը նոյնիսկ բարեշէն կ'ըլլան, մինչեւ անգամ զԱստուած կը փորձեն ու կը պրծին»» (Մաղաքիա 3.13-15):

Ի՞նչ կ'ըսէին այդ տրտնջացողները: Անոնք կ'ըսէին. «Ի՞նչ օգուտ, որ մենք հնազանդեցանք Աստուծոյ, քանի որ մեր կեանքին մէջ ոչինչ կը փոխուի: Իսկ անօրէնները՝ մարմնաւոր եւ խաբէբայ մարդիկ, յառաջխաղացում կ'ունենան, կ'օրհնուին եւ կը բարգաւաճին» (ասիկա «Պիվիրի շրջասութիւնն» է): Աստուած կ'անուանէ անոնց ըսածը սարսափելի կամ ծանր խօսքեր եւ կը համարէ, որ ատոնք ուղղուած են Իրեն դէմ: Աւելի պարզ ըսելու համար՝ ատիկա տրտունջ ու բողոք է: Տրտունջը թոյլ չտուաւ Իսրայէլի զաւակներուն մուտք գործել Խոստման երկիր: Ինչո՞ւ տրտունջը վիրաւորական է Աստուծոյ համար, եւ ինչո՞ւ այն այդքան խիստ դատաստանի արժանացաւ: Այն անուղղակիօրէն կ'ըսէ Աստուծոյ. «Ինձի հաճելի չէ այն, ինչ որ Դուն կ'ընես իմ կեանքին մէջ, եւ եթէ ես Քու տեղդ ըլլայի, ուրիշ ձեւով կը վարուէի»: Ատիկա Աստուծոյ հանդէպ ակնածանքի իսպառ բացակայութիւն է:

Աստուած կը պարզէ, թէ ով կը ձգտի Իրեն, իսկ ով՝ Իր տուած օրհնութիւններուն: Առաջինները նպատակաւորուած են. վերջինները կը տրտնջան, որ, իրենց կարծիքով, ամէն ինչ ճիշդ չէ: *Իրական* օրհնութիւնները այն չեն, ինչ որ ոմանք օրհնութիւն *կ'անուանեն*: Որոշ օրհնութիւններ կրնան մնայուն չըլլալ, եթէ ձեր դիրքորոշումը (սիրտը) ճիշդ չէ: Դիմելով եսասիրական դրդապատճառներ ունեցող մարդոց, որոնք կը տրտնջան՝ Տէրը կ'ըստ, թէ ինչպէս պիտի վարուի թէ՛ իրենց, թէ՛ իրենց օրհնութիւններուն հետ:

««Լսեցէ՛ք, դո՛ւք, քահանանէ՛ր [տրտնջացող հաւատացեալներ], այս պատուէրը ձե՛զի համար է: Լսեցէ՛ք Ինձի եւ որոշեցէ՛ք պատուել Իմ Անունը», - կ'ըստ երկնքի զօրքերու Տէրը, - «այլապէս Ես սարսափելի անէծք պիտի բերեմ ձեզի դէմ: Ես

Կ'անիծեմ նոյնիսկ այն օրհնութիւնները, որոնք դուք կը ստանաք: Այո՛, Ես արդէն անիծած եմ ատոնք, քանի որ դուք լրջօրէն չէք վերաբերիր Իմ զգուշացումին» (Մաղաքիա 2.1,2, NLT):

Մեր վարձատրութիւնը կամ ժառանգութիւնը՝ առարկաները կամ ունեցուածքը չեն. մեր ժառանգութիւնը՝ Ինքը Տէրն է:

Եգեկիէլ 44.28-ին մէջ գրուած է. «Եւ ասիկա անոնց համար ժառանգութիւն ըլլայ. Ես եմ անոնց ժառանգութիւնը... Ես եմ անոնց կալուածը»: Շատ քրիստոնեաներ այսօր հեռացուցած են իրենց հայեացքը *Ճշմարիտ* ժառանգութենէն, եւ փոխարէնը կեդրոնացած են ունեցուածք կամ դիրք ստանալու վրայ, թերեւս նոյնիսկ լաւ բաներու, որոնք տրուած են Աստուծմէ: Բայց անոնք նման են այնպիսի որդիի, որ աւելի հետաքրքրուած է իր հօրմէն ինչ որ բան մը ստանալու մէջ, քան անոր հետ հաղորդակցելու: Ես չորս որդի ունիմ եւ սիրով նուէրներ կու տամ անոնց: Այնուամենայնիւ, եթէ անոնք հաղորդակցէին հետս միայն ինձմէ ինչ որ բան մը ստանալու համար, ատիկա ցաւ պիտի պատճառէր իմ սրտին: Մաղաքիան կը շարունակէ.

«Այն ժամանակ Տիրոջմէն վախեցողները իրար հետ խօսեցան, եւ Տէրը ականջ դրաւ ու լսեց, եւ յիշատակի գիրք գրուեցաւ անոր առջեւ Տիրոջմէն վախցողներուն համար եւ Անոր անունը պատուական համարողներուն համար» (Մաղաքիա 3.16):

Այս մարդիկ կ'ապրէին նոյն անապատային պայմաններուն մէջ, ինչ որ «տրտնջացողները», սակայն անոնց առաջնահերթութիւնը դիրք, ճանաչում կամ ինչ որ բան մը ստանալը չէր: Անոնք կը փնտռէին Տիրոջ սիրտը: Նման մարդոց մէջ կը վառի Ջինք Ճանչնալու ցանկութիւնը: Դուք կրնաք գրուցել անոնց հետ հասարակութեան կամ աշխատանքին վերաբերող թեմաներով, բայց անոնց սիրտը կը վառի, երբ անոնց հետ կը խօսիք Տիրոջ եւ Անոր Խօսքին մասին:

Այսպիսի մարդոց մասին Դուկաս կը գրէ. «Չէ՞ որ մեր սրտերը կը բորբոքէին մեր մէջ, երբ որ ճանապարհին մեզի հետ կը խօսէր, եւ ինչպէս գիրքերը կը բանար մեզի համար» (Դուկաս 24.32): Անոնք կը ձգտին Հոգիի իրողութիւններուն եւ կ'ըսեն. «Ես միայն կը ցանկամ

զԱստուած ճանչնալ. ես կը ցանկամ հաճելի ըլլալ Անոր. ես անօթի ու ծարաւ կը զգամ Աստուծոյ Խօսքին հանդէպ. ես կը ցանկամ ուրախացնել Ձինք, քանի որ Ան իմ ուրախութեան աղբիւրն է»: Ասիկա ամենակարեւորն է անոնց համար: Անոնց առաջին սէրը Յիսուսն է, ոչ թէ դիրքը, կարգավիճակը կամ ունեցուածքը:

Անոնց վարքը չի փոխուիր, անկախ այն բանէն՝ անոնք անապատի՞ մէջ են, թէ՞ կը քարոզեն միլիոնաւոր մարդոց:

«Որովհետեւ մենք Աստուծոյ գործակիցներն ենք. դուք Աստուծոյ դաշտն էք, դուք Աստուծոյ շինութիւնն էք: Համաձայն Աստուծոյ շնորհքին, որ տրուեցաւ ինձի, ինչպէս իմաստուն ճարտարապետ՝ ես դրի հիմքը, եւ ուրիշ մէկը կը կառուցէ ատոր վրայ: Բայց թող ամէն մէկը ուշադրութիւն դարձնէ, թէ ինչպէս կը կառուցէ ատոր վրայ» (Ա. Կորնթացիս 3.9,10, NKJV):

Մենք պէտք է մեծ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս կը կառուցենք մեր կեանքը: Աստուածաշունչին մէջ տուն կառուցելը կը խորհրդանշէ այն, թէ ինչպէս մենք կը կառուցենք մեր կեանքը եւ կը ծառայենք Աստուծոյ Թագաւորութեան: Մենք Աստուծոյ կը պատկանինք, քանի որ մենք Անոր շինութիւնն ենք.

«...Քրիստոս Յիսուսին, որ հաւատարիմ է Ձինք Հաստատողին, ինչպէս Մովսէսն ալ՝ Անոր բոլոր տան մէջ: Որովհետեւ Ան Մովսէսէն աւելի փառքի արժանացաւ, որքան որ տունէն աւելի պատիւ ունի այն շինողը: Որովհետեւ ամէն տուն մէկէ կը շինուի, բայց Ան, որ ամէն բաները ըրաւ, Աստուած է» (Եբրայեցիս 3.1-4):

Ուշադրութիւն դարձուցէք, թէ ով կը կառուցէ տունը. Տէրը: Այն չի կառուցուիր մեր ուժերով: Տիրոջ կառուցածը մնայուն է. մեր կառուցածը՝ ոչ: «Եթէ Տէրը չչինէ տունը, զուր տեղ կ'աշխատին անոր շինողները» (Սաղմոս 127.1): Այն, ինչ որ մարդը կը կառուցէ առանց Աստուծոյ՝ կեանքը, տունը, նոյնիսկ՝ ծառայութիւնը, մնայուն չ'ըլլար:

Ծննդոց 11.4-ին մէջ գրուած է օրինակ մը այս մասին. «Եւ ըսին.

«Եկէք մեզի համար քաղաք մը շինենք եւ աշտարակ մը, եւ անոր գլուխը մինչեւ երկինքը ըլլայ, եւ մեզի համար անուն ստանանք»»:

Ո՞րն էր Բաբելոնի աշտարակը կառուցողներու դրոպապատճառը: Անոնք կը ցանկային հասնիլ իրենց շահադիտական նպատակներուն, կանգնեցնել իրենց շինութիւնը՝ իրենց փառքին համար: Անոնք կը ցանկային ըլլալ Աստուծոյ պէս, բայց բոլորովին Անորմէ անկախ: Անոնց նախաձեռնութիւնը կը կատարէր իրենց ցանկութիւններն ու կամքը, ոչ թէ Աստուծոյնը: Աստուծմէ առանձին կառուցելը երբեք արդիւնք չի տար, քանի որ որքան ալ ազնիւ ըլլան մեր դրոպապատճառները, առանց Աստուծոյ՝ ատիկա դատարկ զբաղում է: Ահա թէ ինչու մեզի տրուած է հետեւեալ զգուշացումը.

«Բայց թող ամէն մէկը ուշադրութիւն դարձնէ, թէ ինչպէս կը կառուցէ ատոր վրայ... Եթէ ինչ որ մէկը կառուցէ այդ հիմքին վրայ (որ Քրիստոս Յիսուսն է) ոսկիով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով, ամէն մէկուն գործը յայտնի պիտի դառնայ, որովհետեւ այն Օրը («ո՞վ կրնայ դիմանալ Անոր գալու օրուան») կը յայտնէ ատիկա, քանի որ ատիկա կրակով պիտի յայտնուի, եւ կրակը պիտի փորձէ ամէն մէկուն գործը, թէ ինչ տեսակի է այն» (Ա. Կորնթացիս 3.10-13, NKJV):

Ոսկին, արծաթը եւ թանկարժէք քարերը կը խորհրդանշեն Աստուծոյ կամքով կառուցելը: Փայտը, խոտը եւ եղէգը կը խորհրդանշեն կառուցման մեր մեթոտները՝ համաձայն այս աշխարհի օրինակին: Մի՞թէ այս խօսքերը միայն երկնքի մէջ դատաստանը կը նկարագրեն: Ո՛չ: Այս խօսքերը այն մասին են, որ երբ Ան գայ Իր տաճարը (Մաղաքիա 3.16-4.1 եւ Ա. Կորնթացիս 3.16,17), կու գայ որպէս կրակ, որ կա՛մ *կը սպառէ* փայտը, խոտը եւ եղէգը, կա՛մ *կը մաքրէ* ոսկին եւ արծաթը: Ահա թէ ինչու Ան կը շարունակէ. «Եթէ մէկուն գործը այրի, ան կորուստ կը կրէ, բայց ինքը կը փրկուի, սակայն իբրեւ թէ կրակի մէջէն» (խս. 15, NKJV):

Եթէ դուք կառուցէք ձեր կեանքը, գործը կամ ծառայութիւնը ձեր պատրաստած աղիւսներով, օրինակ՝ ձեր անյատականութեան ուժով կամ աշխարհիկ մեթոտներով... եթէ կառուցէք՝ վախի միջոցով

շահարկելով կամ վերահսկելով մարդոց... եթե յաջողութեան հասնիք՝ շողոքորթութեան կամ այլ մարդոց ձեռքբերումներու հաշուին... եթե կառուցելու ընթացքին քանդէք այլ մարդոց գործը՝ քննադատութեան կամ բամբասանքի միջոցով... այն ամէնը, ինչին դուք կը հասնիք այդպիսի մեթոտներով, կ'այրի ու կը կորսուի:

Շատերը կը դիմեն խաբէութեան եւ նոյնիսկ բացայայտ կը ստեն, որպէսզի իրենց համար յառաջխաղացում ապահովեն: Ասիկա նոյնպէս պիտի այրի: «Չըլլայ, որ մէկը ինքզինք խաբէ: Եթէ ձեզմէ մէկը կը կարծէ, թէ իմաստուն է այս աշխարհին մէջ, թող ան յիմար ըլլայ, որպէսզի իմաստուն ըլլայ: Որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է Աստուծոյ առջեւ» (Ա. Կորնթացիս 3.18,19):

Որեւէ բնագաւառ ձեր կեանքին մէջ, որուն մէջ ձեր դրոյսապատճառը շահադիտական է, փայտ, խոտ եւ եղէգ է Աստուծոյ համար: Անկախ այն բանէն, թէ առաջին հայեացքէն որքան ատիկա կ'օգնէ մարդոց, որքանով ատիկա կը կատարուի Տիրոջ անունով կամ որքան ժամանակ զոհաբերուած է ատոր համար, այդ ամէնը պիտի այրին:

Այս աշխարհի իմաստութիւնը եսակեղրոն է. «Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունիք ձեր սրտերուն մէջ... Այս իմաստութիւնը վերէն իջած չէ, այլ՝ երկրաւոր, շնչաւոր եւ դիւական» (Յակոբոս 3.14,15): Նախանձը մրցակցութիւն եւ կասկածամտութիւն կը ծնի: Մեր դիրքը պահպանելու համար մենք կրնանք դիմել խարդաւանանքներու, որոնց պատճառով կրնանք կորսնցնել մեր ընկերները, մեր ազնուութիւնը եւ ամենակարեւորը՝ մեր յարաբերութիւնները Աստուծոյ հետ: Նոյնիսկ հովիւները եւ ծառայողները կրնան դրդուած ըլլալով՝ պահպանել իրենց դիրքը, տիտղոսը կամ աշխատավարձը եւ անտեսն իրենց մտերմութիւնը Աստուծոյ հետ:

Իսկ անկեղծօրէն զԱստուած փնտռող մարդոց կրնայ թուալ, թէ որքան աւելի կը փնտռեն Ձինք, այնքան աւելի կը հեռանան Անորմէ: Անոնք յուսահատօրէն կ'աղաղակեն. «Աստուած, որքան աւելի կը փնտռեն Քեզ, այնքան աւելի կ'իջնեն՝ բարձրանալու փոխարէն»: Իսկ Աստուած կը պատասխանէ. «Աւելի՛ խորացուր քու յարաբերութիւնները Ինձի հետ»:

«Ան, որ Ինծի կու գայ եւ Իմ Խօսքերը կը լսէ ու զանոնք կը կատարէ, ցոյց տամ ձեզի, թէ որուն կը նմանի: Նման է տունը շինող մարդուն, որ փորեց եւ խորացուց ու հիմը ժայռի վրայ դրաւ...» (Ղուկաս 6.47,48):

Երբ մեր ընտանիքը Տալլասի մէջ կ'ապրէր, ես կը հետեւէի, թէ ինչ-պէս շինարարները երկնաքեր շէնքեր կը կառուցէին: Սկիզբը գործը գրեթէ առաջ չէր երթար, քանի որ ամիսներ շարունակ անոնք միայն կը քանդէին ընդերքը եւ կը փորէին՝ հիմք դնելու համար: Որքան մեծ էր շէնքը, այնքան խորունկ էր այդ փոսը, եւ այնքան ընդարձակ էր շէնքի հիմքը: Գետնի վրայ կը թուար, թէ շինարարները դանդաղ կ'աշխատէին եւ գրեթէ առաջընթաց չունէին: Բայց յանկարծ այդ բարձրայարկ շէնքը կը սկսէր արագօրէն կառուցուիլ: Կառուցումը ըսես տեղի ունենար մէկ օրուան մէջ՝ նախապատրաստական աշխատանքներուն համեմատ:

Այդ վերընթաց կառուցումը ոչինչ էր՝ վարընթաց պատրաստութեան համեմատ:

Ես կը հաւատամ, որ շատերը Քրիստոսի մարմինին մէջ կը գտնուին վարընթաց պատրաստութեան փուլին մէջ, հնարաւոր է՝ յատկապէս երիտասարդ սերունդի ներկայացուցիչները: Ես փա՛ռք կու տամ Աստուծոյ ատոր համար: Թերեւս անոնք կանչուած են ծառայող դառնալու համար կամ այլ երազանք ունին Տիրոջմէն, սակայն ներկայիս անոնք չեն զբաղեցներ կարելոր ծառայողական դիրքեր: Ամէն ինչ շատ արագ չի կատարուիր, բայց համոզուած եմ, որ անոնք մանրակրկիտ պատրաստութիւն կ'անցընեն անապատին մէջ՝ Աստուծոյ հսկողութեամբ: Անոնց կեանքին մէջ կը դրուի հիմքը՝ կը ձեւաւորուի Քրիստոսի բնաւորութիւնը, որ տարիներ շարունակ կը հաստատէ զանոնք, որոնք մեծ աւիւնով կը ծառայեն Քրիստոսին եւ Անոր Թագաւորութեան:

Անոնք, որոնք անապատին մէջ չեն, կարծես արագօրէն կը բարձրանան՝ քաղաքական ճանապարհներով կամ այլ կերպերով ապահովելով իրենց յառաջխաղացումը: Անապատին մէջ բնակողներուն կրնայ թուալ, թէ իրենք լճացման մէջ են: Թերեւս անոնք նոյնիսկ գայթակղութիւն ունենան ընտրելու արագ եւ դիրին ճանապարհ՝ այդ վիճակէն դուրս ելլելու համար: Այնուամենայնիւ, հասկնալով, որ այդ

Ինչպես անցնիլ անապատը

#8 Յեսուն ճիշդ հասկցալ

Եթէ անապատը նախատեսուած է մեր օգուտին համար, ինչպէ՞ս ստանանք բարին անապատին մէջ եւ խուսափինք չարէն:

Յեսուն այնպիսի մարդու օրինակ է, որուն սիրտը ուղիղ էր անապատին մէջ գտնուելու ընթացքին: Երբ Մովսէսը բարձրացաւ Սինա լեռը, Յեսուն մնաց լեռան ստորոտը: Ան կը ցանկար հնարաւորինս մօտ ըլլալ Տիրոջ ներկայութեան: Երբ Մովսէսը Աստուծոյ կը հանդիպէր խորանին մէջ, Յեսուն կրկին հոն էր, որպէսզի մօտիկ ըլլար Տիրոջ ներկայութեան: Նոյնիսկ երբ Մովսէսը կ'աւարտէր Տիրոջ հետ խօսիլը, Յեսուն կը մնար ժողովքի խորանը (տե՛ս Ելից 33.11):

Յեսուի գիրքին մէջ կը տեսնենք, որ մեղքի հինգ բնագաւառները, որոնցմէ իսրայէլցիներու աւագ սերունդը այդպէս ալ չկրցաւ ազատիլ, նոյն կերպով չդրսելորուեցան անապատին մէջ գտնուող երկրորդ (Յեսուի) սերունդին մէջ: Ատիկա տեղի ունեցաւ միայն մէկ անգամ՝ Աքար անունով մարդու կեանքին մէջ, սակայն առաջնորդները եւ ժողովուրդը անմիջապէս փնտռեցին զԱստուած, որպէսզի լուծէին այդ խնդիրը: Երկրորդ սերունդը ճիշդ վարուեցաւ, քանի որ անոնք տեսած էին նախորդ սերունդի ծախողումները՝ այն, թէ ինչպէս իրենց ծնողները մահացան անապատին մէջ՝ այդպէս ալ չստանալով Աստուծոյ խոստումը:

Յեսուն եւ անոր սերունդը կեդրոնացան Արարչին վրայ եւ մտան խոստման երկիրը: Անոնք հաստատուն կերպով պահեցին Աստուծոյ խօսքը եւ չտրուեցան յուսահատութեանը: Անոնք հրաժարեցան տրտնջալէն եւ պատրաստակամօրէն հաւատացին Աստուծոյ:

Ճանապարհը մնայուն բնաւորութեան պտուղ պիտի չտայ եւ պիտի դրդէ փոխզիջման ենթարկել այն բնաւորութիւնը, որ իրենք արդէն իսկ ձեռք բերած են, անոնք կ'որոշեն, որ ռիսքը չափազանց մեծ է: Սպասելով Աստուծոյ՝ անոնք առիթ կու տան Ճարտարապետին հաստատուն հիմք դնել ժայռի վրայ:

Ներկայիս կան հովիւներ, որոնք ջանասիրաբար կը փնտռեն զԱստուած, բայց կրկին, կը թուայ՝ տեղի կ'ունենայ շատ քիչ բան կամ գրեթէ ոչինչ. անոնք չորութեան վայրի եւ փուլի մէջ են: Անոնք կը հետեւին, թէ ինչպէս միւսները յաջողութեամբ կը զովագղեն իրենք զիրենք եւ իրենց ծառայութիւնները՝ օգտագործելով աշխարհիկ շուկայավարական (մարքեթինկի) մեթոտներ եւ ստեղծելով երջանկութեան ու յաջողութեան պատրանք ընկերային ցանցերուն մէջ: Այնուամենայնիւ, Աստուած թոյլ չի տար, որ անապատը անցնող մարդիկ կառուցեն այդ մեթոտներով, քանի որ Ան հաստատուն եւ մնայուն հիմք կը պատրաստէ անոնց համար:

Կան նաեւ մարդիկ, որոնց Աստուած տակաւին յստակ ցոյց չէ տուած որեւէ դիրք կամ վայր, այլ միայն երազանք տուած է: Անոնք կը մտածեն, թէ ինչպէս այն պիտի կատարուի, եւ կը թուայ՝ այն ա՛լ ատլի կը հեռանայ իրմենցէ:

Այս չոր անապատային փուլին մէջ Աստուած կ'առանձնացնէ զանոնք, որոնք պատրաստ են հնազանդութեամբ սպասել Իրեն, եւ կ'առանձնացնէ անոնցմէ, որոնք պատրաստ են կառուցել խաբէութեամբ, շահարկումներով եւ հաշուենկատօրէն ապահովելով սեփական յառաջխաղացումը: Ճշմարիտ եւ Աստուծմէ որոշուած յառաջխաղացումը, այսինքն՝ ելքը անապատէն, կը ստանան այն մարդիկ, որոնք կը սպասեն, որ Աստուած գայ Իր տաճարը: Գրուած է.

«Երբ որ պատշաճ ժամանակ ունենամ (կամ՝ ընտրեմ), ուղիղ կը դատեմ Ես... Որովհետեւ բարձրանալը ո՛չ արեւելքէն է, եւ ո՛չ արեւմուտքէն, եւ ո՛չ անապատէն: Բայց Աստուած է դատաւոր. ասոր կը խոնարհեցնէ եւ անոր կը բարձրացնէ»
(Սաղմոս 75.2-7):

Մարմնական բնութեան անարդիւնաւէտութիւնը

Ճշմարտութիւնը այն մասին, որ մարմինն ու Հոգին մշտական պայքարի մէջ են, կը վերաբերի կեանքի բոլոր բնագաւառներուն, ոչ թէ միայն ծառայութեան: Յիշեցէք, որ մարմինը, այսինքն՝ մարմնական բնութիւնը, երբեք չի կրնար ծնունդ տալ Աստուծոյ խոստումներուն: Եթէ մարմինը ծնունդ տայ ինչ որ բանի, դուք խնդիրներ կ'ունենաք, քանի որ մարմինն ալ ստիպուած կ'ըլլայ պահպանել ատիկա: Եթէ Հոգին ծնունդ տայ ինչ որ բանի, Աստուած կը մատակարարէ ատոր համար:

Մարմնաւոր ծառայութիւնը սովորաբար կը յանգեցնէ շահարկման եւ վերահսկողութեան մթնոլորտի: Առաջնորդները կը վարուին հարկադրանքով կամ կ'ազդեն մարդոց զգացումներու վրայ՝ արդիւնքներ ստանալու համար: Եթէ դուք անոնց հետեւորդներէն մէկն էք, յանկարծ պատասխանատու կը դառնաք *անոնց* յաջողութեան կամ ծախողման համար՝ կախուած այն բանէն, թէ ինչպէս կ'արձագանգէք անոնց ցուցմունքներուն: Մարդիկ կը գտնուին բազմաթիւ ճնշումներու, օրինապաշտութեան, տիրապետման եւ շահարկումներու մթնոլորտին մէջ:

Թէեւ ես հիմնականին կը խօսիմ ծառայողական հարցերու մասին, կ'ուզեմ շեշտադրել, որ ասիկա *չի* վերաբերիր միայն հոգեւոր ծառայութեան: Ես նկատի ունիմ *որեւէ բան*, ինչ որ կը ստեղծուի մարմինի կամ մարմնական բնութեան ուժերով: Ասիկա կրնայ վերաբերիլ մեր կոչումին գործարարութեան եւ կրթութեան մէջ, առողջապահութեան, կառավարման եւ ռազմական ոլորտներուն մէջ, արհեստավարժ մարզանքի եւ բազմաթիւ այլ բնագաւառներուն մէջ, որոնց մէջ Աստուած կը կանչէ Իր ժողովուրդը՝ ծառայելու համար:

Միւս կողմէն, Հոգիէն ծնածը կը հասկնայ, որ ինքը դեր չէ խաղացած իր կազմաւորման մէջ եւ, այդ պատճառով, կը գիտակցի, որ անկարող է պահպանել ինքզինքը կամ ապահովել իր աճը: Աստուած Ինքն է պատասխանատու այն բանին համար, ինչ որ Ինքը ստեղծած եւ կառուցած է:

Երբ Իսահակը ծնաւ, Իսմայէլի դիրքը արդէն հաստատուած էր (տե՛ս Ծննդ. 16-21 գլուխներ): Համաձայն իմ փորձառութեան՝ Իսմայէլը մշտապէս կը փորձէ հաստատուիլ, մինչեւ որ կը ծնի երազանքը

Իսահակի մասին: Ղուք պետք է հակառակիք այն գայթակղութեան, որ ծնունդ տաք Աստուծմէ ստացած խոստումին ձեր ուժերով: Յիշեցէ՛ք այս խօսքը. «Դո՛ւրս դիր այս աղախինը եւ իր որդին, որովհետեւ այս աղախինի որդին իմ որդի Իսահակին հետ ժառանգ պիտի չըլլայ» (Ծննդոց 21.10):

Կու գայ այն օրը, երբ Տէրը պիտի ըսէ Իր ժողովուրդին. «Մէկ կողմ նետեցէ՛ք ձեր ջանքերը, որոնք ծնունդ տուին Իսմայէլին, որովհետեւ մարմնական բնութենէն ծնածը ժառանգութիւն չ'ունենար խոստումէն ծնածին հետ»: Թէեւ այն, ինչ որ ստեղծուած է մեր ուժերով, արդիւնաւէտ կը թուայ, Աստուած պիտի ըսէ. «Մէկ կողմ նետեցէ՛ք այդ ամէնը», որպէսզի ոչ մէկ մարմին փառաւորուի Անոր ներկայութեան մէջ:

Երբ յայտնուի Աստուծոյ դատաստանը, ձեր կեանքի այն մասը, որ կառուցուած էր ձեր կարողութեամբ, չի դիմանար մաքրող կրակին: Եթէ ձեր բոլոր ջանքերը այս կեանքին մէջ ուղղուած եղած են ինքնապահպանման եւ ձեր յառաջխաղացման, այդ ամէնը կ'այրի, բայց դուք կը փրկուիք՝ «այնպէս, ինչպէս թէ կրակով» (Ա. Կորնթացիս 3.15):

Կը մնան միայն այն գործերը, որոնք կ'ընդունուին համաձայն խոստումին եւ կը յղանան ու կը ծնին Աստուծոյ Հոգիին եւ շնորհքի միջոցով:

ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ

«Տէրը կը ստանայ Իր լաւագոյն զինուորները տառապանքներու բարձունքներէն»:

– Չարլզ Սփերձէն

«Եւ երեխան կ'աճէր ու կը զօրանար հոգիով, եւ անապատներուն մէջ էր մինչեւ այն օրը, որ ան Իսրայէլին երեւցաւ»:

– Ղուկաս 1.80



Տարիներ առաջ ես բախեցայ խնդիրի մը, որ ցոյց կու տայ, որ մենք՝ Քրիստոսի հետեւորդներս, պէտք է ժամանակ յատկացնենք պատրաստութեան համար, որպէսզի զօրանանք եւ ամրապնդենք մեր հաւատքը: Կը հաւատաք, թէ ոչ, աստիկա տեղի ունեցաւ ոչ թէ չոր, անբերրի անապատին մէջ, այլ՝ մարգասրահներուն մէջ:

Ես երեսունհինգ տարեկան էի եւ կը քարոզէի Ճորճիա նահանգի Աթլանթա քաղաքի եկեղեցիներէն մէկուն մէջ: Իմ սրտէն բխող ուղերձը աւարտելէն յետոյ գրեթէ ուշագնաց եղայ բեմին վրայ: Ես հասկցայ, որ լաւ առողջական վիճակի մէջ չէի եւ պէտք է իմ վրայ աշխատէի, եթէ կը ցանկայի հաւատարմօրէն շարունակել իմ ծառայութիւնը:

Տուն վերադարձայ Ճորճիայէն եւ պատմեցի Լիզային տեղի ունեցածին մասին: Ատկէ յետոյ ես յայտարարեցի.

- Ես մարգասրահ պիտի երթամ:

Ես շատ զարմացայ, երբ ան պատասխանեց.

- Փա՛ռք Աստուծոյ: Ես կ'աղօթէի, որ դուն մարգասրահ երթայիր:

Իսկապէս հրաշալի է ունենալ այնպիսի կին, որ գիտէ, թէ ինչպէս աղօթէ իր ամուսինին համար:

Այդ ժամանակ մենք Ֆլորիտա կ'ապրէինք, եւ մեր փողոցին մէջ՝ մեր տունէն երկու տուն հեռաւորութեան վրայ, կ'ապրէր Քիփ անունով ըմբիշ մը, որ Ըմբշամարտի համաշխարհային ֆետերասիոնի անդամ էր: Մեր ընտանիքները մտերմացան, քանի որ մեր երեխաները մօտաւորապէս միեւնոյն տարիքին էին: Ան յաճախ առաջարկած էր մարգասրահ տանիլ եւ մարզել զիս, բայց ես միշտ կ'ըսէի. «Ո՛չ, ես շատ

զբաղած եմ, ժամանակ չունիմ»։ Ես զբաղած էի, բայց նաեւ քիչ մը կը վախնայի. ո՞վ կ'ուզէր մարգուիլ արհեստավարժ ըմբիշի հետ։

Քիչը մարմնեղ էր՝ 190 սանթիմէթը հասակով, 108 քիլոկրամ կշիռքով, եւ ընդամէնը վեց տոկոս մարմինի ճարպով։ Անոր կրծքավանդակը կատարեալ V-աձեւ տեսք ունէր, իսկ որովայնի վրայ արտայայտիչ կ'երեւային չորս գոյգ մկանները։ Ան, մեր երեխաները եւ ես յաճախ պասքէթպոլ կամ փողոցային հոքի կը խաղայինք։ Երբ ես կը բախէի անոր, ան նոյնիսկ չէր հրեր գիս, բայց ես մէկուկէսէն երկու մէթը ետեւ կը ցատկէի։

Աթլանթա կատարած այդ ճամբորդութիւններէն յետոյ ես այցելեցի զինք եւ ըսի.

-Քի՛ւր, ես պէտք է մարգասրահ երթամ։ Դուն կ'ըսէիր, որ կրնաս մարգել գիս. դուն տակաւին պատրա՞ստ ես։

Ան արագ պատասխանեց.

- Անշո՛ւշտ, ես քեզ մարգասրահ կը տանիմ։

Ես պէտք է աւելի մեծ ուշադրութիւն դարձնէի անոր սատիստական (դաժան) ժպիտին։ Ես նոյնիսկ գաղափար չունէի, թէ ինչ կը սպասէր ինծի։

Յաջորդ առաւօտ երկուքով մարգասրահ գացինք։ Ես անմիջապէս հասկցայ, որ հոն կը յաճախէին միայն լուրջ մարզիկներ։ Մթնոլորտը լիցքաւորուած էր թեսթոսթերոնով, իսկ մարմինի հոտը գրեթէ անտանելի էր։ Առաջին դասերէն մէկը, որ սորվեցայ մարգասրահին մէջ առաջին օրը, այն էր, որ մկանները չեն մեծնար՝ ծանրածողի վրայ փոքր ծանրութիւն դնելով եւ այն քսան-երեսուն անգամ բարձրացնելով։ Ծանրածողի վրայ պէտք է մեծ ծանրութիւն դնել, որ հնարաւոր է բարձրացնել ամենաշատը երեք կամ չորս անգամ։

Ճիշդ այդ երրորդ կամ չորրորդ հրման ժամանակ է, որ ձեր մկաններու մէջ փոփոխութիւն կը սկսի։ Այդ ժամանակ է, որ ամէն ինչ ձեր մէջ կ'ըսէ. «Ես այլեւս չե՛մ կրնար բարձրացնել ատիկա», բայց երբ ձեր նստարանի շուրջը հաւաքուած բոլոր տղաները կը գոչեն. «Հրէ՛, հրէ՛, բարձրացո՛ւր», ինչ որ բան ձեր ներսը կը դրդէ ձեզ լարելու բոլոր ուժերը եւ բարձրացնելու այդ ծանրութիւնը չորրորդ կամ հինգերորդ անգամ։ Որպէս բարդ գործընթացի պարզ բացատրութիւն՝ մկանները ճիշդ այդպէս կ'աճին։

Պէտք է ամչնալով ըսեմ, որ առաջին օրը, պառկած դիրքէն ես կրցայ բարձրացնել ընդամենը 40 քիլոկրամ: Համոզուած եմ՝ Քիվը գիտէր, որ իր դրացին պէտք է տակաւին երկար ճանապարհ անցնէր: Քանի մը շաբաթ մարզասրահ յաճախելէն յետոյ ես կրցայ բարձրացնել 45 քիլոկրամ: Եւս քանի մը շաբաթ յետոյ ես արդէն կը բարձրացնէի 50 քիլոկրամ: Որոշ ժամանակ յետոյ ես հասայ 55 քիլոկրամի: Հասնելով 60 քիլոկրամի՝ ես այնքան հպարտ էի, որ կրնայի օրինաչափ երեսուն քիլոկրամի մէկական սկաւառակ դնել ծանրածոդի ամէն մէկ կողմէն: Ես այլեւս չէի ամչնար վարժութիւններ կատարելու ժամանակ:

Քիչ մը ուշ այս մասին աւելին պիտի պատմեմ, բայց իմ ուժերը դանդաղօրէն աւելցնելու ընթացքը շատ նման է այն բանին, ինչ որ տեղի կ'ունենայ, երբ Տէրը կը տանի մեզ Իր «անապատային մարզասրահը» եւ կ'օգնէ զարգացնելու մեր հոգեւոր մկանները:

Յատկապէս անապատին մէջ է մեր հոգին զօրութիւն կը ստանայ, քանի որ անապատը միայն անջրդի վայր չէ, ուր մենք կ'աղաղակենք. «Աստուած, ո՞ւր ես», այլ՝ մեծ փորձութիւններու եւ գայթակղութիւններու վայր: Բարի լուրը այն է, որ թէեւ անապատին մէջ մեծ դժուարութիւններ կան, մենք պէտք է յիշենք, թէ ով կը խրախուսէ մեզ, որ բարձրացնենք այդ ծանրութիւնները մեր հոգեւոր մարզման ժամանակ.

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ է մեզի հակառակ»
(Հռովմայեցիս 8.31):

Բացի այն, որ Ան մեր կողմն է եւ կը խրախուսէ մեզ, նոյնպէս անխախտ խոստում կու տայ.

«Դուք կրնաք վստահիլ Աստուծոյ, որ թոյլ չի տար, որ գայթակղիք աւելի, քան կրնաք դիմանալ» (Ա. Կորնթացիս 10.13, NCV):

Այնպէս որ, անկախ այն բանէն, թէ ինչ փորձութեան մէջ էք, եւ որքան դժգոյն ու չոր անապատով կ'անցնիք՝ Աստուած կը խոստանայ, որ մենք երբեք չենք բախիր այնպիսի գայթակղութեան, որ յաջողութեամբ յաղթահարելու համար մեր ուժերը բաւական չեն ըլլար: Իսկա-

պէս զարմանալի է, երբ կը մտածէք այս մասին:

Երբ կը բախիք փորձութիւններու, երբեք մի՛ մոռնաք, թէ ով էք դուք: Դուք Աստուծոյ սիրելի զաւակն էք, եւ Յիսուսը կ'ըսէ ձեզի. «Ահա՛ իշխանութիւն տուի ձեզի... օծերու եւ կարիճներու վրայ եւ թշնամիի ամբողջ զօրութեան վրայ, եւ ձեզի ոչինչ կը վնասէ» (Դուկաս 10.19): Համաձայն այս խօսքին՝ մենք կը հասկնանք, որ կրնանք յաղթահարել թշնամիի որեւէ յարձակում: Հակառակ պարագային, Աստուած թոյլ չէր տար, որ այդ յարձակումը տեղի ունենար:

Այնուամենայնիւ, խնդիր մը կայ, որուն պէտք է անդրադառնանք: Շատերը աճ չեն ապրիր, որպէսզի կարենան բախիլ աւելի մեծ մարտահրաւերներու: Անոնք, այսպէս ըսելով, կը խուսափին մարգաստահէն կամ կը տրտնջան ու կը բողոքեն, հազիւ որ կը յայտնուին հոն: Պօղոսը բոլորովին այլ վերաբերմունք կը նկարագրէ: Ան կը գրէ.

«Եւ ձեզ Աստուծմէ այդ շնորհքը եղաւ Քրիստոսի համար՝ ոչ միայն հաւատալ Անոր, այլ Անոր համար չարչարուած ալ»
(Փիլիպպեցիս 1.29, NKJV):

Մի՞թէ տարօրինակ չի թուար, երբ կը կարդաք, որ ձեզի չարչարանք «շնորհուած» է: Իրականութեան մէջ ատիկա ի՞նչ կը նշանակէ: Եթէ ինչ որ մէկը ըսէր ինձի. «Քեզ ինչ որ բան մը շնորհուած է», ես կը սպասէի ինչ որ օրհնութեան: Ես սպասումով կը մտածէի. «Հետաքրքրական է՝ ի՞նչ պիտի ստանամ ես»:

Ինչպէ՞ս կարելի է համատեղել «շնորհք» եւ «չարչարուիլ» բառերը միեւնոյն նախադասութեան մէջ: Ատիկա նոյնն է, ինչ ըսէք մէկուն. «Դուն շնորհք ստացած ես քու ծննդեան օրը, որ երթաս ատամնաբոյժի քով՝ ատամնախոռոչի վիրահատութեան համար»: *«Իսկապէ՞ս: Շնորհակալութիւն, բայց ես չեմ ուզեր»*: Ատիկա անիմաստ կը թուայ, քանի որ, ապրելով Միացեալ Նահանգներու պէս ժամանակակից երկրի մը մէջ, մենք կը ձգտինք յարմարաւէտ եւ յարաբերականօրէն դիւրին կեանքի: Այնպէս որ, գաղափարը այն մասին, որ մեզի չարչարանք շնորհուած է, կրնայ շփոթեցնող ըլլալ: Շատերը, բախելով որեւէ դժուարութեան, կ'ըսեն.

«Չեմ կրնար հաւատալ, որ ասիկա հետս կը կատարուի»:

«Ինչո՞ւ ես»:

«Ինչո՞ւ ես պէտք է անցնիմ այս ամէնուն մէջէն»:

«Չեմ կրնար դիմանալ այս վիճակին»:

«Ոչ ոք կը հասկնայ, թէ ինչով կ'անցնիմ ես»:

«Մի՞թէ հնարաւոր չէ ապրիլ սովորական կեանքով»:

«Աստուած, կը խնդրե՛մ, հեռացո՛ւր ասիկա»:

«Ինչո՞ւ պայքարի: Աւելի լաւ է՝ յանձնուիմ...»:

Համոզուած եմ, որ ժամանակ առ ժամանակ, իւրաքանչիւրս բախելով նեղութեան՝ կա՛մ մտածած է, կա՛մ արտայայտուած է այսպէս: Ցաւալի է, բայց շատ յաճախ մենք պարզապէս չենք հասկնար նեղութիւններու եւ տառապանքի (անապատի) նպատակը:

Այնուամենայնիւ, ինչպէս միշտ, Աստուած գիտէ, թէ ինչ հարկաւոր է մեզի, եւ որքան ուժ մեզի անհրաժեշտ է, որպէսզի արդիւնաւէտ ըլլանք Իր Թագաւորութեան համար: Ահա թէ ինչու Պօղոսը կը յայտնէ մեզի Աստուծոյ խոստումը այն նասին, որ մեզի «պիտի շնորհուին» չարչարանքներ՝ մարտավարական նպատակով, որպէսզի մեր հաւատքի մկանները զարգանան:

Գայթակղութեան դերը

Ինչպէս արդէն նշեցի, մեր անապատային պատրաստութեան նպատակներէն է՝ զարգացնել գայթակղութիւնը ճանչնալու եւ ատոր հակառակելու կարողութիւնը: Յիսուսը վերապրեցաւ ասիկա Իր ծառայութեան վաղ շրջանին, երբ Հայրը թոյլ տուաւ սատանային գայթակղեցնել Ձինք անապատին մէջ: «Անկէ յետոյ Յիսուսը՝ լեցուած Սուրբ Հոգիով, վերադարձաւ Յորդանանէն եւ Հոգիէն անապատ տարուեցաւ՝ գայթակղուելով քառասուն օր սատանային կողմէ» (Ղուկաս 4.1,2 NKJV):

Ես յատուկ օգտագործեցի «թոյլ տալ» բառը, քանի որ Աստուած ոչ մէկ պարագային գայթակղութեան հեղինակը չէ. «Թող ոչ ոք ըսէ, երբ կը գայթակղի. «Ես կը գայթակղիմ Աստուծմէ», քանի որ Աստուած չի կրնար գայթակղեցնել չարիքով, ո՛չ ալ Ինքը մէկը կը գայթակղեցնէ» (Յակոբոս 1.13, NKJV):

Իրականության մէջ, ի՞նչ տեղի կ'ունենայ մեզի հետ, երբ կը գայթակղինք: Մենք գիտենք, որ սատանան կը դրդէ մեզ մեղանչելու, որպէսզի հեռացնէ մեզ Աստուծոյ հնազանդելու ուրախութենէն եւ Անոր հետ հաղորդակցութենէն: Եթէ սատանան կը գայթակղեցնէ մեզ այդ նպատակով, ի՞նչ նպատակով Աստուած թոյլ կու տայ մեզի բախտելու գայթակղութեան: Պետրոս առաքեալը կ'առաջարկէ հետեւեալ պատասխանը. «Արդ Քրիստոս, որ մարմինով մեզի համար չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուեցէք, որ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ» (Ա. Պետրոս 4.1):

Ուրիշ ձեւով ըսելու համար, գայթակղութեան միջոցով փորձուելու, մեղքը յաղթահարելու եւ անապատին մէջ այլ խնդիրներու բախտելու նպատակն է, որ մենք զարգացնենք մեր հոգեւոր մկանները եւ աւելի հասունանանք: Բանալին այս խօսքին մէջ «զինուիլ» բառն է:

Կրնա՞ք պատկերացնել, որ զինուորական ստորաբաժանումը անգէն կռիւի երթայ: Առանց զինուորական ուղղաթիռներու, թանկերու, հրացաններու եւ ռազմամթերքի՝ ընդհանրապէս առանց որեւէ գէնքի: Ատիկա աղէտ կը դառնայ: Նոյնպիսի աղէտի կը բախի Քրիստոսի հետեւորդը, եթէ զինուած կամ պատրաստուած չէ չարչարանքներու եւ փորձութիւններու համար:

Օդային ընկերութեան օդաչուները հնարաւոր խնդիրներու համար պատրաստուած մարդոց լաւագոյն օրինակն են: Վեց ամիս անգամ մը, այն օդային ընկերութեան մէջ, ուր անոնք կ'աշխատին, կ'ուղարկէ զանոնք հերթական վերապատրաստման: Անոնք կը մարզուին օդանաւի կեղծակերպիչի (simulator) միջոցով՝ արծազանգելով տարատեսակ հնարաւոր բացասական իրավիճակներու: Նպատակն է, որ օդաչուն աւելի հմտօրէն կարենայ վերահսկել արտակարգ իրավիճակները: Սովորաբար, երբ օդանաւին մէջ ճգնաժամային իրավիճակ կը ստեղծուի, ուղեւորները, որոնք, անկասկած, *պատրաստուած չեն*, պարզապէս կը հակազդեն ասոր, իսկ օդաչուն կը գործէ: Ինչո՞ւ: Քանի որ օդաչուն *պատրաստուած է*:

Ահա թէ ինչ կ'ընէ անապատը հնազանդ քրիստոնեայի կեանքին մէջ: Մենք կը բախինք հակառակութեան, որուն նպատակն է զինել եւ պատրաստել մեզ ապագայ նուաճումներու համար: Մենք պէտք

է հասկնանք, որ պիտի բախինք դժուարություններու, այսինքն՝ անապատի: Յիսուսը ըսաւ, որ այս աշխարհին մէջ նեղություններ կ'ունենանք, բայց Ան կ'օգնէ մեզի յաղթահարել ատոնք: Եւ այդ ընթացքին մենք աւելի գորաւոր կը դառնանք:

Մեծ հնարաւորութիւնը

Մենք պէտք է դիտարկենք անապատը որպէս մեր հոգեւոր մկանները զարգացնելու եւ մեր ուժերը աւելցնելու հնարաւորութիւն, որպէսզի կարենանք վերցնել այն ամէնը, ինչ որ Տէրը կը կամենայ մեզի տալ մեր կեանքի յաջորդ փուլին մէջ: Յակոբոս առաքեալը կը գրէ.

Ինչպէս անցնիլ անապատը

#9 Մի՛ ծնիք «Իսմայէլ»

Երբ մենք կը հասկնանք, որ անապատի մէջ ենք, եւ կը կարծենք, որ չափէն երկար մնացած ենք հոն, մենք կը գայթակղինք, որ պարզապէս ինչ որ բան մը ձեռնարկենք՝ մեր երազանքը իրագործելու համար: Ես կ'անուանեմ ասիկա «ծնիլ Իսմայէլ», ինչ տեղի կ'ունենայ, երբ կը փորձենք մենք մեզ իրագործել այն, ինչ որ Աստուած խոստացած է մեզի: «Իսմայէլները» յաճախ կը ծնին ի պատասխան որեւէ հիմնաւորուած կարիքի, սակայն՝ մեր իսկ ուժերով:

Այս գաղափարը սկիզբ կ'առնէ Աբրահամի եւ Սառայի պատմութենէն, որոնց Աստուած որդի խոստացաւ: Անոնք սպասեցին տասնմէկ տարի: Աբրահամը արդէն 86 տարեկան էր, իսկ Սառան շատ ծեր էր՝ երեխայ ունենալու համար: Այնպէս որ, անոնք անցան պահուստային ծրագրի. Սառան առաջարկեց, որ Աբրահամը ստանար խոստացուած երեխան իր աղախին Հագարին միջոցով:

«Թանկագին եղբայրներ եւ քոյրեր, երբ բախիք ամէն տեսակի նեղութիւններու, ատիկա հնարաւորութիւն համարեցէք...» (Յակոբոս 1.2, NLT):

Մենք կը հասկնանք, թէ ինչ է հնարաւորութիւնը: Մենք՝ ամերիկացիներս, կը սիրենք գործարարները: Գործարարութեան մէջ հնարաւորութիւնները թոյլ կու տան աճ ունենալ, յաջողութեան հասնիլ եւ բարգաւաճիլ: Հնարաւորութիւնները թոյլ կու տան մեզի ընդլայնել մեր հորիզոնները: Եւ մենք պէտք է դիտարկենք նեղութիւնները ճիշդ նոյն կերպով, քանի որ Յակոբոսը կը շարունակէ. «Որովհետեւ դուք գիտէք, որ երբ ձեր հաւատքը կը փորձուի, ձեր համբերութիւնը (կամ դիմացկունութիւնը) աճելու հնարաւորութիւն կ'ունենայ: Այնպէս որ, թոյլ տուէք, որ

Ատիկա շատ վատ գաղափար էր: «Իսմայէլ» ծնելու որեւէ մօտեցում, նոյնիսկ եթէ այն դրական կը թուայ, վատ գաղափար է: Միշտ յիշեցէ՛ք. դուք ստիպուած կ'ըլլաք ձեր մարմինի զօրութեամբ պահպանել այն, ինչին որ ծնունդ կու տաք ձեր մարմինով:

Իմ անապատային կայաններու ընթացքին ես նոյնպէս փորձած եմ վարուիլ ըստ պահուստային ծրագրի: Ես գիտէի՝ Աստուած խոստացած էր ինձի, որ համաշխարհային քարոզական ծառայութիւն պիտի ունենայի, սակայն ատիկա տեղի չէր ունենար, եւ ես «մնացած էի» տեղական եկեղեցւոյ ծառայութեան մէջ: Քանի մը անգամ փորձեցի ինչ որ բան մը ձեռնարկել եւ փախչիլ անապատէն: Ես սուղ վճարեցի այդ փորձերուն համար, եւ այդպէս ալ չհասայ որեւէ արդիւնքի: Հազիւ որ դադարեցուցի իմ փորձերը, Աստուած Ինքը գործեց եւ ամէն ինչ փոխեց:

Ես կը յորդորեմ ձեզ, զուր տառապանքներ մի՛ կրէք՝ ծնելով «Իսմայէլ»: Թոյլ տուէք, որ Աստուած կատարէ այն, ինչ որ խոստացած է ձեզի:

այն աճի, որովհետև երբ ձեր համբերությունը (կամ դիմացկունությունը) ամբողջովին կատարելագործուի, դուք լիարժեք եւ ամբողջական կ'ըլլաք եւ ոչ մէկ բանի կարիք կ'ունենաք» (Յակոբոս 1.3,4, NLT):

Անապատին մէջ մեզի կը շնորհուի հնարաւորութիւն, որ *աւելցնենք* մեր համբերութիւնը կամ դիմացկունութիւնը: Ի՞նչ իմաստով «դիմացկունութիւն» բառը ամենէն յաճախ կ'օգտագործուի այսօր: Այն յաճախակի կ'օգտագործուի դիմացկունութիւնը բարելաւող մարզումներու վերաբերեալ: Աւելցնելով մեր դիմացկունութիւնը՝ մենք կ'աւելցնենք ապագայ մարտահրաւերներ ընդունելու մեր *կարողութիւնը*:

Իմաստը հետեւեալն է. որեւէ փորձառութեան մէջ, որուն մենք կը բախիմք, Աստուած թոյլ կու տայ դժուարութիւններ յատուկ նպատակով, եւ այդ նպատակը մեր *կարողութիւնը* աւելցնելն է: Աստուած թոյլ կու տայ (եւ կրկին, եւ կը շեշտադրեմ «թոյլ տալը») որեւէ դժուարութիւն այսօր, որ նման պիտի ըլլայ այն ճնշման մակարդակին, որուն, ինչպէս Ան գիտէ, մենք պիտի բախիմք վաղը (յիշեցէք օդանաւի կեղծակերպիչի օրինակը): Ահա թէ ինչու փորձութիւնը մշտապէս կը թուայ աւելին, քան մեր ներկայ պատրաստութեան կամ պատասխանատութեան մակարդակը: Ըստ էութեան, Աստուած կ'օգտագործէ մեր ներկայ դժուարութիւնները, որպէսզի զօրացնէ մեզ աւելի մեծ նուաճումներու համար ապագային:

Վերադառնանք իմ մարզումներուն: Ինչպէս արդէն նշեցի, Քիփը այնքան մարզած էր զիս, որ ես կրնայի 60 քիլոկրամ բարձրացնել պառկած դիրքէն: Թէեւ ասիկա մեծ ձեռքբերում էր ինձի համար, բայց ես կը մտածէի՝ արդեօք կրնայի՞ աւելին: Եթէ համեմատենք իմ մարզումները հոգեւոր պատրաստութեան եւ ուժի հետ, ի՞նչ կ'ըլլար, եթէ Տէրը այնպիսի առաջադրանք պատրաստած ըլլար ինձի համար, որուն համար պահանջուէր բարձրացնել աւելի քան 60 քիլոկրամ:

Ես շարունակեցի մարզասրահ յաճախել: Որոշ ժամանակ յետոյ հասայ 90 քիլոկրամի, բայց չաւելցուցի այդ ծանրութիւնը յաջորդ երկու տարուան ընթացքին: Ես կը քարոզէի համաժողովին Քալիֆորնիոյ մէջ, եւ այդ եկեղեցիէն քանի մը ծառայողներ հարցուցին ինձի.

- Ճո՛ն, դուն երբեք 100 քիլոկրամ բարձրացուցա՞ծ ես:
- Ո՛չ, աւելի քան հինգ տարի՝ կը փորձեմ ընել ասիկա, - քիչ մը

հիասթափութեամբ պատասխանեցի ես:

- Մենք կ'օգնենք քեզի, - ըսին անոնք: Եւ անշուշտ, այդ օրը ես բարձրացուցի 100 քիլոկրամ պառկած դիրքէն: Ես այնքա՛ն ոգեշնչուած էի:

Անկէ յետոյ «Մեսինճըր Ինթերնեշընլ»-ի ծառայողական խումբին միացաւ նոր աշխատակից: Ես իմացայ, որ ան ծանրամարտիկ եղած էր, եւ մենք սկսանք միասին մարզուիլ: Անոր օգնութեամբ ես բարձրացուցի 105 քիլոկրամ, եւ մէկ անգամ՝ նոյնիսկ 110 քիլոկրամ: Բայց կրնայի՞ արդեօք ընել աւելին:

Մէկ տարի յետոյ ես կը քարոզէի Տիթորոյ քաղաքի եկեղեցւոյ մէջ: Կիրակնօրեայ հաւաքոյթներէն յետոյ այդ եկեղեցւոյ հովիւը ըսաւ ինձի.

- Ճո՛ւն, մեր եկեղեցւոյ անդամներէն մէկը համազգային համբաւ ունեցող ծանրամարտի մարզիչ է: Վաղը առաւօտեան ես փորձի եմ անոր քով: Կ'ուզե՞ս հետս գալ:

- Անշո՛ւշտ, - մեծ ոգեշնչմամբ պատասխանեցի ես:

Յաջորդ օրը մենք գացինք: Զիս գնահատելէն յետոյ, այդ մարզիչը հարցուց.

- Ուրեմն, դուն ամենաշատը 110 քիլոկրա՞մ բարձրացուցած ես:

- Այո՛, բայց ես ըրած եմ ատիկա միայն մէկ անգամ:

- Լաւ, այսօր դուն կը բարձրացնես աւելին:

«Ի՞նչ»: Ես չըսի ատիկա, բայց մտածեցի. *«Դուն խելագարուա՞ծ ես: Ատիկա անկարելի՛ է»:* Բայց կարճատեւ խորհուրդներէն եւ մարզումէն յետոյ ան այնպէս ըրաւ, որ ես 120 քիլոկրամ բարձրացուցի:

Ես խիստ ոգեւորուած էի: Ես եւ մեր խումբի աշխատակիցը, որ ծանրամարտիկ էր, վերադարձանք Քոլորատօ, եւ այդ մարզիչը շարունակեց աշխատիլ մեզի հետ ելեկտրոնային նամակներու միջոցով: Մենք ջանասիրաբար կը մարզուէինք, եւ յաջորդ տարի ես կրկին այցելեցի Տիթորոյ քաղաքի այդ եկեղեցին: Այդ ժամանակ 42 տարեկան էի:

Այդ Կիրակի ես քարոզեցի Սուրբ Հոգիի զարմանալի յատկանիշներուն մասին: Երկուշաբթի մենք գացինք նոյն մարզասրահը: Այդ մարզիչը ըսաւ.

- Ճո՛ւն, այս գիշեր ես երազ տեսայ, որ դուն պառկած դիրքէն բարձրացուցիր աւելի քան 140 քիլոկրամ:

- Աներեւակայելի՛ է, - պատասխանեցի ես: Հաւանաբար, ես մտածեցի. «Շատ լաւ, բայց ես այսպիսի երազ չեմ տեսած»:

- Ճո՛ւն, երէկ դուն կը քարոզէիր Սուրբ Հոգիի զօրութեան մասին: Ան տուաւ ինձի այդ երազը այս գիշեր: Պառկի՛ր նստարանին վրայ: Մենք կընե՛նք ատիկա:

Այսպիսով, նախավարժանքէն յետոյ սկաւառակները դրուեցան ծանրածողի վրայ, եւ բարձր գոչիւնով ես բարձրացուցի 150 քիլոկրամ:

Ես այնքա՛ն ոգէւորուած էի, որ հեռածայնեցի Լիզային Տիթրոյթի օդանաւակայանէն եւ ըսի.

- Իմ տրամադրութիւնը այնքա՛ն բարձր է, որ կը թուայ, թէ կրնամ տուն հասնիլ առանց օդանաւի:

Այն ժամանակ, երբ բարձրացուցի 150 քիլոկրամը, ես հանգիստ կը մարզուէի 100 քիլոկրամով: Որոշ մօտեցումներու ժամանակ ես մինչեւ տասը անգամ կը բարձրացնէի այդ ծանրութիւնը: Բայց յիշեցէ՛ք, թէ ինչէն ես սկսայ եօթը տարի առաջ: Ի՞նչ կը կատարուէր հետս, եթէ այն ժամանակ, երբ 35 տարեկան էի, Քիվը 100 քիլոկրամ ծանրութիւն դնէր ծանրածողի վրայ՝ 40-ի փոխարէն: Թերեւս ես մահանայի: Ծանրածողը կրնար իյնալ վրաս եւ կոտրել իմ կրծքավանդակը: Պահանջուեցան տարիներ տեւող կանոնաւոր վարժանքներ՝ իմ ներկայ ուժը ստանալու համար: Այն, ինչ արդէն սովորական ծանրութիւն կը համարուէր, կը կործանէր զիս եօթը տարի առաջ:

Ահա թէ ինչու մեր փորձութիւնները, որոնք յաճախ երկարատեւ կ'ըլլան, իրականութեան մէջ հոգեւոր մարզումներ են, որոնք կ'օգնեն պատրաստել մեզ ա՛լ աւելի մեծ փորձութիւններու համար ապագային: Երբ աւելի զօրաւոր կը դառնանք Տիրոջ մէջ, մենք կրնանք ընել աւելին՝ Անոր Թագաւորութիւնը կառուցելու համար:

Յաւալին այն է, որ պիտի ըլլան մարդիկ, որոնք կը կենան Ղաւաւտանի գահին առջեւ, եւ Յիսուսը, արցունքները աչքերուն, կ'ըսէ անոնց. «Ես քեզի համար շատ աւելին պատրաստած էի, բայց դուն չունէիր *կարողութիւն*, որ դիմանայիր այն դժուարութիւններուն, որոնք պիտի գային այդ ամէնուն հետ»: Ասիկա յատկապէս ողբերգական է, քանի որ, ինչպէս մենք գիտենք, Աստուած երբեք չի տար մեզի աւելին, քան, ինչպէս Ինքը գիտէ, մենք կրնանք կրել: Ան մեզի խոստացա՛ծ է ատիկա:

Այնպես որ, եկեք օգտագործենք պատմությունը իմ մարզումներու մասին՝ որպես այլաբանություն: Եթե դուք կրնաք բարձրացնել 60 քիլոկրամնոց հոգեւոր հակառակություն, իսկ Աստուած որոշած է այնպիսի ծրագիր կամ դիրք ձեզի համար, որ ստանձնելու պարագային դուք պետք է *կարենաք* բարձրացնել 80 քիլոկրամնոց հակառակություն, հալածանք, գայթակղություն եւ փորձություններ, Ան թոյլ չի տար, որ ատիկա տեղի ունենայ, քանի որ դուք բաւականաչափ ուժ չունիք ատոր համար: Հնարաւոր է, որ Ան թոյլ տայ 65 քիլոկրամնոց հակառակություն (յիշեցէք, որ Ան ատոր *հեղինակը* չէ), որ կը շարունակէ փորձել ձեզ, բայց ուժասպառ չ'ըներ:

Օրինակ, ենթադրենք, թէ ինչ որ մէկը կը բամբասէ եւ սուտ լուրեր կը տարածէ՝ ձեր մասին: Այդ յարձակումին հակառակելու, դուք ձեզ պաշտպանելու եւ անձնապէս այդ մարդուն մասին բամբասանքներ տարածելու փոխարէն, դուք, հնազանդելով Աստուծոյ խօսքին, որոշում կը կայացնէք ոչինչ ըսել եւ օրինել: Դուք բարեյաջող կ'անցնիք 65 քիլոկրամնոց փորձությունը: Ժամանակը անցած է յաջորդ մակարդակին՝ 70 քիլոկրամին: Եթէ շարունակէք հնազանդիլ Անոր խօսքին հակառակություններու բախելու ժամանակ, ձեր մարզումը առաջ կ'երթայ, մինչեւ որ հասնիք 80 քիլոկրամի մակարդակին: Այժմ դուք պատրաստ էք աւելի բարձր դիրքի համար, որ Աստուած որոշած է ձեզի համար Իր Թագաւորութեան մէջ, եւ որ Իր ծրագիրը ձեր կեանքի համար է:

Այնուամենայնիւ, եթէ դուք, իմանալով, որ կը բամբասեն ձեր մասին, վիրաւորուիք եւ մեղադրանքներով պատասխանէք, պարզ է, թէ ինչ կը կատարուի: Տէրը, արցունքները աչքերուն, կ'ըսէ. «Կը ցաւիմ, բայց դուն պետք է վերադառնաս 60 քիլոկրամնոց հակառակություններուն»: Դուք դեռ «մարգասրահին մէջ» էք, սակայն չունիք առաջընթաց:

Մարզումը կը շարունակուի նոյն մակարդակի վրայ: Յաջորդը՝ Ան թոյլ կու տայ որեւէ նիւթական խնդիր՝ եւս մէկ 65 քիլոկրամնոց փորձություն: Բայց Աստուծոյ մատակարարումը փնտռելու փոխարէն, դուք անմիջապէս կ'ըսէք. «Խնդիր չկայ: Մեր վարկային քարտը լիովին սպառած չէ», եւ Աստուած կը հեռացնէ այդ յաւելեալ ծանրութիւնը՝ ըսելով. «Վերադարձի՛ր 60 քիլոկրամին»:

Ի վերջոյ, կու գայ այն ժամանակը, երբ Աստուած կ'ունենայ ձեր

կարիքը՝ Իր Թագաւորութեան մէջ որոշակի առաջադրանք կատարելու կամ որոշակի դիրք զբաղեցնելու համար, որ կ'ենթադրէ 80 քիլոկրամ-նոց հակառակութիւն: Եթէ դուք մշտապէս ծախողած էք անապատային փորձութիւնները կամ ծանրութիւններ բարձրացնելը, Ան չի կրնար առաջարկել ձեզի ատիկա, քանի որ ձեր հոգեւոր մկանները այնքան զարգացած չեն, որ բարձրացնէք հակառակութիւնը տուեալ իրավիճակին կամ դիրքին մէջ: Ան պէտք է գտնէ ուրիշ անձնաւորութիւն մը, որ կրնայ կատարել այդ առաջադրանքը կամ զբաղեցնել այդ դիրքը:

Աւելի մեծ իշխանութիւն եւ զօրութիւն

Ահա թէ ինչու անապատը անսահման կարելոր է. *այն կը կառուցէ մեր ուժը*:

Անապատին մէջ Յովհաննէս Մկրտիչը զօրացաւ իր հոգիով:

Անապատին մէջ Յիսուսը զօրացաւ Իր հոգիով:

Անոնց հոգեւոր մկանները զարգացան ոչ թէ դիւրին ժամանակներուն մէջ, այլ՝ երբ եկան փորձութիւնները, երբ փորձուեցաւ անոնց հաւատքը:

Յակոբոսը բարի լուր կը յայտնէ մեզի. երբ դուք կ'անցնիք որեւէ փորձութեամբ եւ կ'ընէք ատիկա Աստուծոյ ուզած ձեւով, դուք կազմ ու պատրաստ կ'ըլլաք, այսինքն՝ դուք զօրութիւն կ'ունենաք յաջորդ առաջադրանքի համար, որ Աստուած պիտի յանձնարարէ ձեզի.

«Որովհետեւ դուք գիտէք, որ երբ ձեր հաւատքը կը փորձուի, ձեր համբերութիւնը (կամ՝ դիմացկունութիւնը) աճելու հնարաւորութիւն կ'ունենայ: Այնպէս որ, թոյլ տուէք, որ այն աճի, որովհետեւ երբ ձեր համբերութիւնը (կամ՝ դիմացկունութիւնը) բոլորովին կատարելագործուի, դուք լիարժէք եւ ամբողջական կ'ըլլաք եւ ոչ մէկ բանի կարիք կ'ունենաք» (Յակոբոս 1.3,4, NLT):

Յակոբոսի՝ «Թոյլ տուէք, որ այն աճի» յորդորին մէջ «այն» բառը մեր *կարողութիւնը* եւ *դիմացկունութիւնն* է: Յակոբոսը նոյնպէս կ'ը-

սէ մեզի, թէ ինչ կրնանք ակնկալել, եթէ ճիշդ վարուինք անապատին մէջ. «Աստուած կ'օրհնէ զանոնք, որոնք համբերութեամբ կը դիմանան փորձութեան եւ գայթակղութեան: Ատորմէ յետոյ անոնք կը ստանան կեանքի թագը, որ Աստուած խոստացած է անոնց, որ Չինք կը սիրեն» (Յակոբոս 1.12, NLT):

«Թագ» (կամ պսակ) բառը կը նշանակէ իշխանութիւն, իսկ իշխանութեան հետ կը տրուի նաեւ զօրութիւն: Ինչպէս որ Յիսուսը անապատ գնաց, որպէսզի սատանայէն փորձուէր, եւ Իր հնազանդութեան եւ յարատեւման պատճառով դուրս ելաւ անապատէն՝ աւելի մեծ իշխանութեամբ եւ զօրութեամբ (տե՛ս Ղուկ. 4.1,14), այնպէս ալ մենք կրնանք դուրս ելլել մեր անապատային փուլերէն աւելի մեծ իշխանութեամբ եւ զօրութեամբ:

Չեմ գիտեր՝ ինչ կը մտածէք դուք, բայց ես կ'ուզեմ վստահ ըլլալ, որ իմ հոգեւոր մկանները ի զօրու են դիմանալ այն ամէնուն, ինչ որ Տէրը պատրաստած է ինձի համար:

Ինչ որ մէկը կ'ուզէ՞ մարզուիլ:

ԶՈՒՐ՝ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

«Եթէ մենք կարողութիւն չունինք հաւատալու Աստուծոյն այն ժամանակ, երբ կը թուայ՝ հանգամանքները մեր դէմ են, կը նշանակէ՝ մենք ընդհանրապէս չենք հաւատար Անոր»:

– Չարլզ Սփերձէն

«Ամէն այդ ջուրէն խնողը դարձեալ պիտի ծարաւի, բայց ով որ խմէ այն ջուրէն, որ Ես պիտի տամ անոր, ան յաւիտեան պիտի չծարաւի: Այլ այն ջուրը, որ Ես պիտի տամ անոր, ջուրի աղբիւր պիտի ըլլայ անոր մէջ, որ յաւիտեանական կեանքի համար պիտի բխի»:

– Յովհաննէս 4.13,14



Անձրեւները սակաւ են անապատին մէջ: Ջուր հայթայթելը անապատին մէջ դժուար է, եւ եթէ այն հնարաւոր է գտնել, ապա միայն ջրհորներէն կամ աղբիւրներէն: Անապատը ցամաք ու ծարաւ երկիր է (տե՛ս Սաղմ. 63.1):

«Եթէ մէկը ծարաւ է, թող Իմ քովս գայ եւ խմէ: Ինծի հաւատացողը, ինչպէս Քիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի ջուրերու գետեր պիտի բխին»: Ասիկա ըսաւ... Հոգիին համար...»
(Յովհաննէս 7.37-39):

Ես քանի մը դէպք կը յիշեմ իմ անապատային փորձառութիւններէն, երբ ինծի համար դժուար էր կենարար ջուր ստանալ աղօթքի մէջ: Մէկ անգամ, երբ այդպիսի վիճակի մը մէջ էի, ես վերցուցի իմ վրանը եւ գացի մեր քաղաքի այգիներէն մէկը, որպէսզի մնայի հոն ամբողջ գիշեր՝ մինչեւ յաջորդ առաւօտ: Այդ գիշեր ես աղօթեցի, յետոյ կարդացի, յետոյ սկսայ փառաբանութեան երգեր երգել: Անցաւ գրեթէ երեք ժամ, բայց ոչինչ տեղի կ'ունենար: Ես թարմութիւն չէի զգար. շուրջս բացարձակ չորութիւն էր: Խիստ յուսահատած՝ ի վերջոյ մտայ իմ քնապարկին մէջ եւ փորձեցի քնանալ:

Այդ գիշեր բոլոր դէւերը կարծես խնճոյք կազմակերպած էին. ես չէի կրնար հանգիստ քնանալ: Աջ-ձախ կը դառնայի՝ մտածելով, թէ ինչու Աստուած չէր յայտներ ինծի Իր ներկայութիւնը: Յաջորդ առաւօտեան դուրս ելայ իմ վրանէն եւ սկսայ քալել այգիի արահետներով՝ Հոգիով աղօթելով, բայց տակաւին խիստ չորութիւն կը զգայի: Այդպէս անցաւ

եւս մէկուկէս ժամ: Ի վերջոյ, վեր նայեցայ ու ըսի. «Տէ՛ր, կը կարծեմ՝ ես անապատի մէջ եմ»: Կը մտածէի. «*Ես կրնամ տուն երթալ եւ չփնտռել Ջինք, եւ ատկէ ոչինչ կը փոխուի: Ան բերած է զիս այս անջրդի վայրը, եւ ոչինչ կը փոխուի, քանի տակաւին Ան չէ հանած զիս հոսկէ*»:

Ատիկա սխալ մտածելակերպ էր: Աստուած չ'անցըներ մեզ անապատէն, որպէսզի յուսահատութեան հասցնէ եւ անգործութեան մատնէ այնքան ժամանակ, մինչեւ որ Ինք փոխէ մեր վիճակը: Անապատը պէտք չէ դառնայ ծախողման վայր. այն պէտք է դառնայ յաղթանակի վայր: Յանկարծ ես լսեցի մեղմ ու բարակ ձայն մը. «*Պայքարի՛ր*»: Այդ մէկ բառը կրակի եւ կեանքի կայծ էր, որ անհրաժեշտ էր ինծի: Ես անմիջապէս ըսի. «Աստուծոյ պարգե՛ւ, բորբոքի՛ր իմ մէջ: Կենդանի ջուրերու գետե՛ր, հոսեց՛ք: Իմ մէջ գտնուող ջրիո՛ր, բխի՛ր»: Ես յիշեցի պատմութիւն մը, որ տեղի ունեցաւ Իսրայէլցիներուն հետ անապատին մէջ.

«Եւ անկէ Զրիոր եկան. ասիկա այն ջրիորն է, որուն համար Տէրը ըսած էր Մովսէսին. «Ժողովուրդը ժողովէ՛, ու Ես անոնց ջուր պիտի տամ»: Այն ժամանակ Իսրայէլը այս երզը երգեց.
«Հո՛ր, բխէ՛»» (Թուոց 21.16,17):

Որքան կը կրկնէի այս բառերը Սուրբ Գիրքէն, այնքան իմ աղօթքը անելի եռանդուն կը դառնար, մինչեւ որ սկսայ արջեւ ու ետեւ քալել այգիի արահետներէն մէկուն միջոցով՝ աղօթելով եւ Աստուծոյ Խօսքը խօսելով մեծ զօրութեամբ ու կրակով: Ես լիարժէք թարմութիւն վերապրեցայ եւ կարծես այլ մարդ դարձած ըլլայի: Անոր ներկայութիւնը հետս էր զօրաւոր կերպով: Քանի մը վայրկեան արաջ ես ծանրութիւն ու թուլութիւն կը զգայի, բայց այժմ պատրաստ էի պայքարի եւ կրնայի բախիլ ոեւէ թշնամիի՝ Տիրոջ Խօսքով:

Ատիկա տեսց մօտաւորապէս քսանհինգ վայրկեան, բայց ինծի թուաց, թէ ընդամէնը հինգ վայրկեան անցած էր: Ես լեցուած էի թարմութեամբ եւ պատրաստ էի գրաւել ամբողջ աշխարհը:

Յիսուսը կ'ըսէ, որ կենդանի ջուրերու գետերը պիտի բխին այն մարդուն սրտէն, որ Իր քով կու գայ ու կը խմէ: Անապատին մէջ մենք չենք վերապրիր Հոգիի թափում (անձրեւ): Այդ չոր վայրին մէջ թարմութիւն բերող ջուրը պէտք է հանել մեր սրտէն՝ Աստուծոյ աղբիւրէն կամ ջրիորէն:

Ուշադրութիւն դարձուցէք. Յիսուսը կը նշէ (Յովհաննէս 7.39), որ այն աղբիւրը կամ ջրհորը, որուն մասին Ինք կը խօսի, Տիրոջ Հոգին է, եւ որ հաւատացեալի սրտէն կը բխին գետեր (յոգնակի), ոչ թէ գետ (եզակի):

Ի՞նչ ձեւով Տիրոջ Հոգին գետերու պէս կը հոսի մեր սրտէն: Եսայիա մարգարէն կը բացատրէ Հոգիի գործերու բնոյթը. «Եւ Անոր վրայ կը հանգչի Տիրոջ Հոգին, իմաստութեան եւ հանճարի Հոգին, խորհուրդի եւ զօրութեան Հոգին, գիտութեան եւ Տիրոջ երկիւղի Հոգին» (Եսայիա 11.2):

Սուրբ Հոգին կը կոչուի Իմաստութեան Հոգի, Հանճարի Հոգի, Խորհուրդի Հոգի, Զօրութեան Հոգի, Գիտութեան Հոգի եւ Տիրոջ երկիւղի Հոգի: Քանի որ Յիսուսը ըսաւ, որ Հոգին կ'ըլլայ գետերու պէս, կը նշանակէ՝ գոյութիւն ունի Իմաստութեան գետ, Հանճարի գետ, Խորհուրդի գետ, Զօրութեան գետ, Գիտութեան գետ եւ Տիրոջ երկիւղի գետ: Զարմանալի չէ, որ իմ սիրտը բռնկեցաւ կրակով իմ վրանի քով գտնուող այդ արահետին վրայ:

Ահա եւս քանի մը ճշմարտութիւն, որոնք կը սատարեն այս գաղափարը.

- Առակաց 18.4-ին մէջ գրուած է. «Խորունկ ջուրեր են մարդու բերնին խօսքերը, բխող գետ է իմաստութեան աղբիւրը»:
- Առակաց 16.22-ին մէջ գրուած է. «Կեանքի աղբիւր է խոհեմութիւնը՝ ունեցողին համար»:
- Առակաց 20.5-ին մէջ գրուած է. «Խորունկ ջուրեր են մարդու սրտին մէջի խորհուրդը, բայց խելացի մարդը զանիկա կը հանէ»:

Այս ջուրերը կը գտնուին հաւատացեալի սրտին մէջ, քանի որ հոն կը բնակի Հոգին: Այնուամենայնիւ, միայն Տիրոջ ճանապարհները հասկցող մարդը այդ ջուրերը ջրհորէն կը հանէ: Բանալին այս խօսքին մէջ «հանել» բառն է: Կրկին, կարելոր է յիշել, որ թարմութիւն բերող ջուրերը անապատին մէջ չեն գար Հոգիի անձրեւի միջոցով, այլ կը *հանուին* սրտէն:

- Առակաց 10.11-ին մէջ գրուած է. «Կեանքի աղբիւր է արդարին բերանը»:
- Առակաց 15.23-ին մէջ գրուած է. «Ուրախութիւն է մարդուն համար իր բերանի յարմար պատասխանը»:

Եթէ ես որոշէի հաւաքել իմ վրանը եւ երթալ՝ մտածելով. «Աւելի լաւ է՝ տուն երթամ եւ դադրիմ զԱստուած փնտռելէ. Ան բերած է զիս այս չոր վայրը, եւ ոչինչ կը փոխուի, եթէ Ան դուրս չբերէր զիս հոսկէ», ես կը տանէի իմ ներսի ծանրութիւնը իմ հետ: Բայց քանի որ ես ըսի այն, ինչ որ Աստուած դրաւ իմ սրտին մէջ, ես կրցայ ջուր հանել խորունկ ջրհորներէն: Ես հասայ փրկութեան ստորգետնեայ աւազանին եւ սկսայ թարմութեան ջուր հանել: Ատիկա իսկապէս որ նման էր անապատին մէջ աղբիւրի սառնորակ ջուր խմելուն:

Շատերը կը յանձնուին այս չորութեան ժամանակահատուածներուն մէջ, բայց Աստուած կ'ըսէ. «Շարունակէ՛ առջեւ երթալ: Մի՛ կենար»: Մեր ներսը պէտք է ըլլայ հաստատակամ եւ ուժգին ձգտում, որ թոյլ չի տար մեզի յանձնուիլ այնքան ժամանակ, մինչեւ որ Անոր կամքը կատարուի:

Շատերը կը դադրին աղօթելէ, երբ չորութիւն կը զգան: Անոնք այլեւս չեն աղօթեր, քանի որ ջրհորներէն այլեւս ջուր չի գար, եւ ջուր ստանալը դժուար կը թուայ: Անոնք կը տկարանան, այնինչ Աստուած կը ցանկայ, որ անոնք աւելցնեն իրենց ուժը այն պայքարներու համար, որոնց պիտի բախին ապագային:

Ուրկէ՞ մենք ուժեր կը գտնենք՝ ջուր հանելու համար: Ուրախութենէ՛ն: Եսայիա 12.3-ին մէջ գրուած է. «Եւ դուք ուրախութեամբ ջուր կը քաշէք փրկութեան աղբիւրներէն»: Պատճառը այն է, որ «Տիրոջ ուրախութիւնը ձեր զօրութիւնն է» (Նէեմիա 8.10): Ուրախութիւնը հոգեւոր ուժ է, որ կը զօրացնէ մեզ:

Ի՞նչ է Տիրոջ ուրախութիւնը: Տարիներ շարունակ ես կը մտածէի, որ Տիրոջ ուրախութիւնը կը նշանակէ ունենալ այն ուրախութիւնը, որ Աստուած ունի, բայց չէի կրնար հասկնալ ատիկա: Այնուամենայնիւ, Ան ուրիշ բան կ'ըսէ: Դուք լսա՞ծ էք «ուրախութիւն՝ կերակուր պատրաստելու ժամանակ» արտայայտութիւնը: Կերակուր պատրաստելու մէջ, որպէս այդպիսին, չկայ ուրախութիւն: Մարդիկ նկատի ունին, որ դուք ուրախութիւն կը զգաք, երբ կերակուր կը պատրաստէք: «Տիրոջ ուրախութիւնը» այն ուրախութիւնն է, որ մենք կը զգանք, երբ կը հաղորդակցինք Անոր հետ: Ան ուրախութիւն կը պատճառէ մեզի:

Այն, որ մենք չենք զգար Անոր ներկայութիւնը աղօթքի սենեակին

մէջ, տակաւին չի նշանակեր, որ Ան կը մերժէ մեզ: Այնպէս որ, մեր ուրախութիւնը հիմնուած չէ մեր զգացումներուն վրայ: Փոխարէնը, այն հիմնուած է Աստուծոյ Անձին եւ Անոր հետ հաղորդակցելու արտօնութեան վրայ: Մենք կը տեսնենք աւելի հեռուն, քան սուտը այն մասին, որ մենք մերժուած ենք, եւ կը հասկնանք, որ Ան կը կանչէ մեզ... դէպի խորունկ ջրհորները:

Բանալ խցանուած ջրհորները

Անգամ մը Իսահակը՝ Աբրահամին հրաշքով ծնած որդին, յայտնուեցաւ չորութեան փուլի մէջ.

«Ու երկրին մէջ սով եղաւ՝ բացի այն առաջին սովէն, որ Աբրահամի օրերուն եղած էր... Եւ Տէրը երեւցաւ անոր ու ըսաւ. «Եգիպտոս մի՛ իջներ. բնակէ՛ այն երկրին մէջ, որ քեզի պիտի ըսեմ: Պանդո՛ւխտ եղիր այս երկրին մէջ, եւ Ես քեզի հետ պիտի ըլլամ ու քեզ պիտի օրհնեմ»» (Ծննդոց 26.1-3):

Աստուած յատուկ պատուիրեց Իսահակին չփախչիլ Եգիպտոս, ուր կեանքը յարմարաւէտ էր, այլ մնալ այն վայրին մէջ, որ Ինքը որոշած էր անոր համար: Յաճախ, յայտնուելով չորութեան վայրը, մեր առաջին միտքը այսպիսին է. «Ես պիտի երթամ այստեղէն»: Եթէ առատօտեան աղօթքի ժամանակ մենք չենք զգար Աստուծոյ ներկայութիւնը, մեր միտքը կը սկսի թափառել՝ մտածելով այն գործերուն մասին, որոնք մենք պէտք է ընենք ամբողջ օրուան ընթացքին: Մենք արագօրէն կ'աւարտենք մեր աղօթքը եւ կ'անցնինք մեր գործերու ցուցակին:

Եթէ մենք չորութիւն կը զգանք այն եկեղեցւոյ մէջ, որ կը յաճախենք, առանց նոյնիսկ Աստուծոյն հարցնելու՝ մենք կ'որոշենք. *«Ես պիտի երթամ հոն, ուր կայ հոգեւոր ոգեշնչում եւ տպաւորիչ քարոզներ»:*

Կամ եթէ չորութիւն կը զգանք մեր հասարակական կամ գործարար կեանքին մէջ, մենք կը մտածենք, որ արժէ հեռանալ մեր քաղաքէն՝ տեղափոխուելով աճող տնտեսութիւն ունեցող քաղաք մը: Մենք կը մտածենք. «Եթէ հոս մնամ, ես կը չորնամ, եւ Աստուծոյ ծրագիրը

այդպէս ալ չի կատարուիր իմ կեանքին մէջ»:

Կան այնքան շատ ամերիկացի քրիստոնէաներ, որոնք այսպէս կը մտածեն: Անոնք կը նետուին ընկերային ցանցէն միւսը, մէկ զբաղմունքէ միւսը, մէկ եկեղեցիէն միւսը, մէկ քաղաքէն միւսը՝ փորձելով գտնել այնպիսի վայր, ուր չկայ չորութիւն: Փոխանակ ջրհորներ փորեն եւ թոյլ տան, որ Աստուած գործածէ զանոնք՝ այդ անջրդի վայրին մէջ թարմացնող ջուր բերելու համար, անոնք կը «տեղափոխուին Եգիպտոս»՝ փնտռելով թեթեւութիւն եւ դիւրին կեանք: Անոնք չեն հասկնար, որ այդ չոր փուլերէն շատերուն Աստուած կը պատրաստուի ծնունդ տալ այն տեսիլքին, որ Ան տուած է իրենց: Ես գիտեմ, որ միշտ չէ, որ այդպէս կ'ըլլայ, քանի որ երբեմն Աստուած կը պատրաստէ մեզ նոր տեղ երթալու համար եւ թոյլ կու տայ, որ հինը չորնայ: Կարելորը Աստուծոյ Հոգիով առաջնորդուիլն է: Եթէ Ան ոչինչ կ'ըսէ մնացէ՛ք եւ պայքարեցէ՛ք:

Քանի որ Իսահակը հնազանդեցաւ Աստուծոյ եւ մնաց այն երկրին մէջ, ուր սով էր, տեղի ունեցաւ հետեւեալը.

«Իսահակը այն երկրի մէջ ցանեց եւ այն տարի հարիւրի չափ արդիւնք գտաւ: Եւ Տէրը օրհնեց զինք: Եւ մարդը բարձրացաւ եւ քանի զնաց՝ մեծցաւ, մինչեւ որ շա՛տ մեծցաւ: Եւ ոչխարներ ու արջառներ եւ շատ ծառաներ ունեցաւ, եւ փղշտացիները նախանձեցան անոր: Եւ իր հայր Աբրահամի օրերուն իր հօրը ծառաներու փորած բոլոր ջրհորները փղշտացիները գոցեցին եւ հողով լեցուցին... Եւ Իսահակը դարձեալ այն ջրհորները փորեց, որ իր հօր օրերուն փորած էին, եւ որ փղշտացիները գոցած էին Աբրահամի մեռնելէն յետոյ: Եւ իր հօր դրած անուններուն պէս անոնց անուններ դրաւ» (Ծննդոց 26.12-15,18):

Իսահակը գտաւ այն ջուրը, որուն կարիքը ունէր իր ցանքերուն համար, երբ կրկին փորեց իր հօր ջրհորները, որոնք փղշտացիները խցանած էին: Ինչպէս եւ Իսահակի պարագային, այն ջուրը, որ մեզի խիստ անհրաժեշտ է, որպէսզի Աստուծոյ անապական սերմը աճի եւ հասուննայ մեր սրտերուն մէջ, յաճախ պէտք է վերցուի խցանուած ջրհորներէն: Փղշտացիները կը պատկանէին այս աշխարհին եւ ատոր

Ինչպէս անցնիլ անապատը

#10 Ուրախութեան գաղտնի դեղամիջոց

Երբ դուք անապատի մէջ էք, շատ դիւրին է կեդրոնանալ միայն ձեր հանգամանքներու վրայ: Ես կ'ուզեմ փոքրիկ գաղտնիք մը բանալ ձեզի, որ իսկապէս օգնած է ինձի գոյատեւել եւ նոյնիսկ ծաղկունք ապրիլ անապատային փուլերուն մէջ: Ես կ'անուանեմ այն իմ Ուրախութեան գաղտնի դեղամիջոցը:

Երբ գրեթէ կեանքիս մէջ ոչինչ կ'ոգտուորէ զիս, երբ կը թուայ, թէ ոչինչ տեղի կ'ունենայ, երբ ես շարունակ կ'աղօթեմ, բայց ոչ մէկ արդիւնք կը տեսնեմ, կը սկսիմ մտածել այն մասին, թէ ինչ ըրաւ Յիսուսը: Ես կը յիշեմ, որ Ան բառացիօրէն փրկեց զիս դժոխքէն, ուր կրակը երբեք չի դադրիր վառելէն, եւ ծծումբի հոտը երբեք չ'անցնիր: Չարչարանքները հոն երբեք չեն դադրիր: Դժոխքը ստեղծուած է ոչ թէ ինձի համար, այլ՝ սատանայի: Այնուամենայնիւ, սատանան խաբեց մարդկութիւնը եւ իրեն հետ միասին հոն կը տանի բոլորին: Չնայած ատոր, Յիսուսը տուաւ ինձի Իր կեանքը. իմ Արարիչը տուաւ *Իր* կեանքը՝ *զիս* այդ վայրէն փրկելու համար:

Երբ ես կը սկսիմ այսպէս մտածել, երբ կ'ուղղեմ իմ հայեացքը Անոր, երբ գոհութեամբ կը նայիմ կեանքին, երբ այն կը դիտարկեմ յաւիտենութեան տեսանկիւնէն, յանկարծ իմ իրավիճակը այլեւս այդքան կարեւոր չի թուար: Ասիկա իմ Ուրախութեան գաղտնի դեղամիջոցն է. ես կը վերյիշեմ այն ամէնը, ինչին համար պէտք է շնորհակալ ըլլամ, եւ հայեացքս ուղղեմ Յիսուսին:

համակարգին: Յաճախ, երբ մենք չափազանց շատ կը մօտենանք այս աշխարհի համակարգին, չենք ալ հասկնար, թէ ինչպէս մեր ջրհորները կը խցանուին: Անչափ կարեւոր է բանալ մեր ջրհորները, որպէսզի ստանանք մեզի անհրաժեշտ ոռոգումը:

Ես համոզուած եմ, որ այս աշխարհի մշակութային արժէքներու

ներթափանցունը Քրիստոսի մարմինին մէջ «խցանած» է շատ ջրհորներ: Հնարաւոր է արդեօք, որ եկեղեցին, որ պէտք է հոսող ջուրի աղբիւր ըլլայ, անջրդի վայր դարձած է, քանի որ առիթ տուած է թշնամիին հրապուրել զինք՝ խցանելով իր ջրհորները:

Հարցը այն է, թէ կրնա՞յ արդեօք Աստուած վերականգնել Իր եկեղեցին թարմ ջուրով: Պատասխանն է՝ անշո՛ւշտ: Եսայիան հիասքանչ կերպով կը խօսի այս մասին:

«Տէրը շարունակ կ'առաջնորդէ քեզ՝
տալով քեզի ջուր, երբ չորութեան մէջ ըլլաս,
եւ վերականգնելով քու ուժը:
Դուն կ'ըլլաս ջրարբի պարտէզի պէս՝ նման մշտահոս
աղբիւրի:
Քու մարդոցմէ ոմանք կը վերակառուցեն քու քաղաքներու
լքուած ակերակները:
Այդ ժամանակ դուն յայտնի կ'ըլլաս՝ որպէս պարիսպներ վե-
րակառուցող եւ տուներ վերականգնող» (Եսայիա 58.11,12,
NLT):

Իսահակը որոշեց չձգտիլ իր ցանկութիւններուն եւ հաճոյքներուն եւ չզնաց այն երկիրը, ուր կեանքը դիւրին էր: Եթէ մենք նոյնպէս չձգտինք մեր ցանկութիւններուն եւ հաճոյքներուն, չապրինք միայն մեր ուզածով, այլ պատուենք Աստուծոյ, մենք նման կ'ըլլանք ջրարբի պարտէզի եւ կենդանի ջուրի աղբիւրի, որուն ջուրերը չեն դադրիր հոսիլ: Եթէ վարուինք Աստուծոյ ուզած կերպով, Ան մեր միջոցով կու տայ Իր կենդանի ջուրը չորացած ու ծարաւ մարդոց:

Աստուած կ'առաջնորդէ մեզ, որ բանանք բոլոր ջրհորները, որոնք այս աշխարհը խցանած է: Կրկին, ասոր համար անհրաժեշտ է հաստատականութիւն եւ թերեւս աւելի շատ ժամանակ, քան քանի մը ժամ, օր, շաբաթ, ամիս եւ նոյնիսկ՝ տարի:

Ջերմեռանդության կրուստ

Կը կարծեմ՝ ես յստակ ցոյց տուի այս գիրքին մէջ, որ անապատ կոչուող հասկացութիւնը այլաբանութիւն է, որ կրնայ վերաբերիլ բազմաթիւ հանգամանքներու: Բոլոր այդ հանգամանքներու ընդհանուր յայտարարը այն է, որ մենք ինչ որ չափով զրկանք ու չորութիւն կը զգանք: Յաճախ անապատի ազդակ կրնայ ըլլալ այնպիսի իրավիճակը, որուն մէջ մեր կոչումը կատարելու եւ նոյնիսկ Աստուծոյ հետ հաղորդակցելու խանդավառութիւնը եւ ձգտումը կը թուլնան կամ իսպառ կ'անհետանան:

Թոյլ տուէք կարճ անդրադառնալ իմ երկրորդ խոշոր անապատային փորձառութեան, որուն ժամանակ ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի:

Ֆլորիտայի մէջ գտնուող այդ եկեղեցւոյ մէջ առաջին ինը ամիսները պարզապէս աներեւակայելի էին. ծառայութիւնը կ'ընդարձակուէր, եւ երիտասարդական խումբը կ'աճէր: Ես ոգեշնչուած էի եւ լեցուած էի ուժերով ու ջերմեռանդութեամբ: Բայց յանկարծ, պարզ երկնքի մէջ ճայթած ամպրոպի պէս, ամէն ինչ ընդհատեցաւ, եւ իմ ջերմեռանդութիւնն ու ձգտումը բոլորովին անհետացան:

Ես կ'աղօթէի աւելի շատ, քան նախկինին երբեք աղօթած էի, բայց կը թուար՝ ոչինչ տեղի կ'ունենար: Բացի այդ՝ այն տեսիլքը, որ ունէի երիտասարդական ծառայութեան համար, կը սկսէր մարիլ (հին գինին կը թափէր): Որքան աւելի կ'աղօթէի, այնքան այդ տեսիլքը աւելի կը սպառէր: Արտաքուստ ոչինչ փոխուած էր, բայց իմ ներսը ինչ որ բան կը փոխուէր:

Ի լրումն այդ ամէնուն, ամբողջ այդ ընթացքին մենք կը կրէինք այնպիսի փորձութիւններ, ինչպիսիք մեր կեանքին մէջ երբեք չէին եղած: Ո՞րն էր ամենամեծ փորձութիւնը: Իմ անմիջական ղեկավարը գործ կը պատրաստէր՝ զիս աշխատանքէն հեռացնելու համար: Անոր որդին մեր երիտասարդական ծառայութեան մէջ էր, եւ երեկոյ մը՝ երիտասարդական ծառայութենէն յետոյ, ան մօտեցաւ կնոջս եւ ըսաւ.

- Տիկին՝ Լիզա, ինչպէ՞ս ապրիմ ճոնին քարոզներուն համաձայն, եթէ իմ ծնողները կ'ընեն տունը (կարիք չկայ նշել այն, ինչ որ ան

ըսաւ. ես միայն կ'ըսեմ, որ ատիկա լաւ բան մը չէր):

Լիզան ապշած էր, սակայն ան իմաստուն պատասխան տուաւ.

- Հաւատարիմ մնա՛ Աստուծոյ Խօսքին, եւ թո՛ղ տուր, որ Աստուած աշխատի քու ծնողներուն հետ:

Այդ օրէն սկսեալ, իմ ղեկավարը որոշեց զրկել զիս հեղինակութենէն եւ ազատիլ ինձմէ: Ան աննկատ, բայց ծաւալուն յարձակում սկսաւ իմ դէմ: Ան յաջողութեամբ անհամաձայնութիւն ստեղծեց եկեղեցւոյ աւագ հովիւին եւ իմ միջեւ: Վերջաւորութեան, տասնվեց շաբաթ շարունակ ես ոչ մէկ անգամ հանդիպեցայ իմ հովիւին եւ չգրուցեցի անոր հետ:

Ամիսներ տեւող խարդաւանանքներէն յետոյ մեր աւագ հովիւը որոշեց հեռացնել զիս աշխատանքէն: Կիրակի առաւօտեան ան յայտարարեց, որ երիտասարդական ծառայութեան մէջ լուրջ փոփոխութիւններ տեղի պիտի ունենան: Հովիւի երկու եղբայրները ըսին, որ երկուշաբթի օրը զիս պիտի հեռացնեն աշխատանքէն:

Աստուած հրաշք գործեց, եւ մեր աւագ հովիւը մտափոխուեցաւ: Կիրակնօրեայ առաւօտեան ծառայութեան ժամանակ եղած այդ յայտարարութենէն յետոյ՝ նախքան Երկուշաբթի առաւօտեան նշանակուած մեր հանդիպումը, Աստուած խօսեցաւ անոր հետ:

- Ճո՛ւն, Աստուած ուղարկած է քեզ մեր քով, եւ դուն չես հեռանար այստեղէն, մինչեւ Ան չըսէ, որ եկած է քու երթալու ժամանակը:

Այդ հանդիպումէն վեց ամիս յետոյ իմ ղեկավարի արարքները բացայայտուեցան, եւ զինք անմիջապէս հեռացուցին եկեղեցւոյ ծառայողական խումբէն: Անոր արարքները շատ ատելի ծանր էին, քան այն, ինչ որ մեզմէ շատերը կը պատկերացնէին:

Իմ կեանքի այդ փուլին մէջ ես բախած էի ոչ միայն այս եւ այլ արտաքին պայքարներուն, այլեւ՝ բազմաթիւ ներքին պայքարներու, որոնց նմանը իմ կեանքին մէջ չէր եղած: Կրկին, ես մտածեցի, որ թերեւս խնդիրը իմ մէջ էր, եւ սկսայ խոստովանիլ ամէն մէկ մեղք, որ կրցայ յիշել, եւ որ կրնայի գործած ըլլալ, բայց թէ՛ յարձակումները, թէ՛ չորութիւնը չէին դադրեր:

Օր մը, երբ կրկին կը փորձէի հասկնալ, թէ իմ գործած մեղքերէն որն էր այդ ամէնուն պատճառը, Տէրը ըսաւ. «Դուն չես յայտնուած այս

անապատին մէջ մեղանջելու պատճառով: Ես կը պատրաստեմ քեզ այն փոփոխութեան համար, որ կու գայ քու կեանքին մէջ»: Ասիկա այն «նոր գինին» էր, որուն մասին ես կը խօսէի 5-րդ գլուխին մէջ:

Այն բանէն յետոյ, երբ արդէն մէկ տարի շարունակ կ'անցնէի այդ անապատով, Տէրը առաջնորդեց զիս կերակուրէն ծոմ վերցնելու: Քանի մը օր տեսող ծոմէն յետոյ իմ շուրթերէն դուրս ելաւ աղօթք մը, որ լսեցի իմ ականջներով՝ միայն բերանովս արտաբերելէն յետոյ: Այդ աղաղակը, որ դուրս ելաւ իմ սրտէն, շրջանցեց միտքս: Ես ջերմեռանդօրէն կը բացականջէի. «Տէ՛ր, կարեւոր չէ՞ ես կ'ըլլամ անապատի՞ մէջ, ուր ոչ ոք կայ, թէ՞ կը քարոզեմ միլիոնաւոր մարդոց. ես կ'ընեմ նոյնը երկու վայրերուն մէջ ալ. ես կը ձգտիմ Քու սրտին»:

Յանկարծ իմ ներսը ըսես լոյս վառեցաւ, եւ ես հասկցայ, թէ ինչ կ'ընէր Ան. «Աստուա՛ծ, Ղուն ճիշդ ասիկա կ'ընէիր իմ մէջ», - ըսի ես: - «Ղուն այնպիսին դարձուցած ես զիս, որ այժմ Ղուն ես իմ ժառանգութիւնը եւ առաջին սէրը, ոչ թէ իմ ծառայութիւնը կամ որեւէ այլ բան: Եւ երբ փոփոխութիւնը գայ, ես այն կուռք չեմ դարձնէր: Ես չեմ ձգէր Քեզ՝ իմ առաջին սէրը, եւ չեմ սիրէր ծառայութիւնը՝ Քեզ սիրելու փոխարէն: Իմ սիրտը կը մնայ ճիշդ դիրքի մէջ»:

Յանկարծ ես յիշեցի, թէ Աստուած ինչ ըսաւ Ղաւիթին մասին.

«Եւ զինք փոխելով՝ Ղաւիթը անոնց համար թագաւոր կանգնեցուց, որ անոր համար ալ վկայութիւն տուաւ եւ ըսաւ.

«Յեսսէի որդի Ղաւիթը գտայ՝ Իմ սրտի պէս մարդ, որ ան Իմ ամբողջ կամքը կ'ընէ»» (Գործք 13.22, NLT):

Թոյլ տուէք կրկին նշել կարեւոր փաստ մը. Սաւուղ թագաւորը երբեք չէր անցած անապատով: Սկիզբը ան խոնարհ կը թուար. ան մարգարէէն պահուըտած էր ճանապարհորդական իրերու մէջ, երբ զինք թագաւոր հռչակեցին: Այնուամենայնիւ, քանի մը յաջողութիւններէն յետոյ անոր անմաքրութիւնները ի յայտ եկան: Ան յաղթեց խոշոր պատերազմին մէջ, բայց վարեց այն իր ուզած ձեւով եւ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ հրամաններուն: Ըսես ատիկա բաւական չէր, ան արձան կառուցեց իրեն համար: Ատիկա տակաւին անոր բազ-

մաթիւ անօրէն արարքներու սկիզբն էր: Ի վերջոյ, ան կործանեցաւ այն անմաքրութիւններուն պատճառով, որոնց դէմ այդպէս ալ ոչինչ ձեռնարկեց:

Գոյութիւն ունի երկու իրողութիւն, որոնք կը բացայայտեն, թէ ինչ կայ ձեր ներսը: Ատոնցմէ մէկը մաքրող կրակն է, որուն մասին արդէն խօսեցանք: Միւսը յաջողութիւնն է: Տարբերութիւնը այն է, որ յաջողութիւնը կը բացայայտէ ձեր անմաքրութիւնները անոնց, որոնք կը գտնուին ձեր շուրջը, այնինչ դուք տակաւին կրնաք կուրօրէն չտեսնել ատոնք: Բազմաթիւ ծառայողներ իրենց կեանքի վաղ տարիներուն թոյլ չեն տար, որ մաքրող կրակը հեռացնէ իրենց անմաքրութիւնները: Այնուամենայնիւ, ինչպէս եւ Սաւուղը, անոնք կը կանչուին եւ որոշ ժամանակ յետոյ կը գրաւեն ծառայողական պաշտօններ: Ցաւօք, անոնք այդպէս ալ չեն ստանար անհրաժեշտ պատրաստութիւն ատոր համար: Եւ յաջողութիւնը, ի յայտ բերելով անոնց անմաքրութիւնները, ի վերջոյ կը կործանէ այն աշխատանքը, որուն համար անոնք կանչուած էին:

Սաւուղը կը սիրէր իր «ծառայութիւնը» այն աստիճան, որ մարդիկ կը սպաննէր՝ այն պահպանելու համար: Դաւիթը չէր ձգտեր գահին. ան կը ձգտէր Աստուծոյ սրտին: Իր անապատային փորձառութեան ընթացքին Դաւիթը գտաւ իր ուրախութեան ճշմարիտ աղբիւրը, որ Աստուած է: Երկու անգամ ան կրնար սպաննել Սաւուղը՝ գահին տիրանալու համար, եւ անոր կողքին գտնուող մարդիկ կը խրախուսէին, որ ան այդպէս վարուէր: Եթէ Դաւիթի դրդապատճառները ըլլային նոյնը, ինչ Սաւուղինը, ան սպանութեան կը դիմէր, որպէսզի ստանար այն, ինչ որ Աստուած խոստացած էր իրեն Սամուէլ մարգարէին միջոցով:

Կան տղամարդիկ եւ կիներ, որոնք պատրաստ են չարախօսել, բամբասել եւ ստել, որպէսզի ստանան այն, ինչ որ Աստուած խոստացած է իրենց. մտածեցէք, թէ որքան զաւեշտալի է աստիկա: Անոնք նման են Սաւուղին. անոնք պատրաստ են գրեթէ ամէն ինչի, որպէսզի ստանան կամ պահպանեն իրենց ժառանգութիւնը: Աստուած կը փնտռէ Դաւիթներու, որոնց սիրտը կը ձգտի Իրեն, ոչ թէ դիրքի, ազդեցութեան, դրամի կամ փառքի: Հին գինիի տիկի վերամշակման արդիւնքով Աստուծոյ բնաւորութիւնը աւելի խորունկ կ'արտայայտուի

մեր մէջ: Աստուծոյ բնաւորութիւնն է, որ կրնայ պահել Հոգիի նոր գինիի ճնշումը (Անոր օծութիւնն ու ներկայութիւնը): Մեր բնաւորութիւնը կը ձեւաւորուի, երբ մենք կը փնտռէք Ձինք, Որուն կը ցանկանք հետեւիլ:

Դուք կրնաք հարցնել. «Որքա՞ն ժամանակ կը պահանջուի ատոր համար»:

Իմ պատասխանը այսպիսին է. դուք պէտք չէ մտահոգուիք այն բանով, թէ որքան ժամանակ կը պահանջուի ատոր համար: Շարունակեցէ՛ք փորել, մինչեւ որ ջուրը հոսի: Պիտի ըլլան շատ դէպքեր, երբ պատասխանը չի գար մէկ աղօթքի ընթացքին: Դուք ստիպուած կ'ըլլաք շարունակել այն, ինչ որ սկսած էք, յաջորդ աղօթքի ժամանակ եւ թերեւս ատոր յաջորդող բազմաթիւ աղօթքներու ժամանակ:

Երբ ես կ'ապրէի Տալլասի մէջ եւ կը ծառայէի որպէս աւագ հովիւի եւ անոր կնոջ օգնական, իմ մտերիմ ընկերներէն մէկը, որ եկեղեցւոյ աշխատակազմի ղեկավարն էր, եւ ես միասին կ'աղօթէինք գրեթէ ամէն առաւօտ: Մենք կու գայինք մեր աղօթքի սենեակ առաւօտեան ժամը 07:00-էն եւ յաճախ կը զգայինք, որ Աստուած ներկայ էր եւ կը գործէր մեզի համար: Բայց շատ անգամ, երբ կը մօտենար ժամը 08:30-ը (աշխատանքային օրուան սկիզբը), եւ մենք ստիպուած էինք երթալ մեր գրասենեակ, մենք գրեթէ հիասթափութիւն կը զգայինք, քանի որ չկար ձեղքում... չկային թարմութիւն բերող ջուրեր: Զրհորները տակաւին չէին բացուած:

Յաջորդ առաւօտեան մենք կը մտնէինք այդ սենեակ եւ կը շարունակէինք գրեթէ նոյն տեղէն, ուր կանգ առած էինք: Երբեմն ասիկա կը տւելր երկու օր, այլ պարագաներուն՝ երեք օր: Ես կը յիշեմ՝ մէկ անգամ ամբողջ շաբաթ մը անցաւ՝ առանց թարմութիւն բերող ջուրերու: Այնուամենայնիւ, երբ ձեղքումը կու գար, մենք կը ստանայինք զօրութիւն եւ թարմութիւն:

Ճամբորդելով Ամերիկայով մէկ գտնուող եկեղեցիներով՝ ես կը հանդիպիմ բազմաթիւ քրիստոնէաներու, որոնք թոյլ տուած են, որ իրենց ջրհորները խցանուին, եւ յարմարաւէտ կերպով հաստատուած են այդ վիճակին մէջ: Տագնապալին այն է, որ ես կը զգամ՝ այդ վիճակին մէջ կը գտնուի ոչ թէ փոքրամասնութիւնը, այլ՝ մեծամասնութիւնը: Ի՞նչ տեղի կ'ունենար, եթէ այդ մարդիկ բորբոքէին այն

երկնային պարգեւը, որ իրենց ներսն է, եւ թոյլ տային, որ այն ազատօրէն գործէր: Կը փոխուէին մարդիկ, ընտանիքներ, եկեղեցիներ. կը փոխուէր Ամերիկան ամբողջութեամբ:

Աստուծոյ պարգեւը անգործութեան մատնուած է շատերու կեանքին մէջ: Բայց նոյնիսկ եթէ կը թուայ, թէ ջրհորները փակուած են, Հոգին կը սպասէ:

Շարունակեցէ՛ք փորել: Ղուք պիտի գտնէք թարմ ջուր անապատին մէջ:

ՊԱՏՐԱՍՏԵՑԷՔ՝ Ք ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Դժուարությունը մշտապես անսպասելի եւ անցանկալի է: Այն զաւթիչ է եւ գող է, բայց Աստուծոյ ձեռքերուն մէջ դժուարությունը կը դառնայ այն գործիքը, որուն միջոցով կը յայտնուի Անոր գերբնական գորությունը»:

– Չարլզ Սթենլի

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Որդին Ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, եթէ որ չտեսնէ այն, ինչ որ Հայրը կ'ընէ»:

– Յովհաննէս 5.19

Անապատը այն վայրն է, ուր կը պատրաստուի Տիրոջ ճանապարհը, ուր ամէն լեռ կը ցածնայ, եւ ամէն ձոր կը բարձրանայ: Այս քաջ յայտնի հատուածին մէջ Եսայիան շատ յստակ կը նկարագրէ այս իրողութիւնը.

«Անապատին մէջ կանչողի ծայնը.
«Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը
եւ ուղի՛ղ ըրէ՛ք ամայութեան մէջ շաւիղը
մեր Աստուծոյն համար:
Ամէն ձոր բարձրանայ,
եւ ամէն լեռ ու բլուր ցածնայ,
եւ ծուռը ուղիղ դառնայ, եւ խորտուքորտ
տեղերը հարթայատակ՝ հաւասար պիտի ըլլան:
Եւ պիտի յայտնուի Տիրոջ փառքը,
եւ ամէն մարմին մէկտեղ պիտի տեսնեն,
որովհետեւ Տիրոջ բերանը խօսած է»:

Մէկ ծայն կ'ըսէ՝ կանչէ՛:
Եւ ան ըսաւ՝ ի՞նչ կանչեմ:
«Այս՝ թէ ամէն մարմին խոտ է,
եւ անոր ամբողջ վայելչութիւնը՝
դաշտի ծաղիկի պէս:
Խոտը կը չորնայ, ծաղիկը՝ կը թառամի,

որովհետև Տիրոջ ոգին (կամ՝ շունչը) փչեց անոր վրայ:

Իրաւ ժողովուրդը խոտ է:

Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի,

բայց մեր Աստուծոյ Խօսքը յաւիտեան կը մնայ»» (Եսայիա 40.3-8):

Ի՞նչ կը նշանակէ ասիկա այն մարդոց համար, որոնք ներկայիս անապատի մէջ են:

Քրիստոսի մարմինին մէջ բոլորս ունինք պարտականութիւններ, որոնք Աստուած որոշած է մեզի համար: Այնուամենայնիւ, մինչև Աստուած թոյլ տայ, որ կատարենք ատոնք, մենք պէտք է ստուգուինք եւ պատրաստուինք անապատին մէջ, ուր մեր մարմինը կը խաչուի: Հոն մենք նաեւ կը սորվինք սպասել Տիրոջը, լուռ մնալ, մինչև որ լսենք Անոր ձայնը եւ հասկնանք, թէ ինչ կ'ընէ Ան, որպէսզի հնազանդօրէն կատարենք Անոր կամքը:

Կը ցանկամ պատմել աւելին իմ կեանքէն, որպէսզի ցոյց տամ, որ ճանապարհը անապատի մէջէն միշտ չէ, որ ուղիղ է՝ մեկնման կէտէն դէպի ժամանման կէտը, այլ կրնայ բաղկացած ըլլալ որոշ շփոթեցնող զարտոտիներէն եւ ջրագրուած հանգիստի կանգառներէն:

1979 թուականին, «Փուրտեու» համալսարանին մէջ սորվելու ժամանակ, եւ վերստին ծնայ մեր համալսարանի տղաներու հանրակացարանին մէջ: Չորս ամիս յետոյ լեցուեցայ Սուրբ Հոգիով, եւ Աստուած սկսաւ խօսիլ հետս Իրեն ծառայելու մասին: Կը հաւատացնեմ ձեզի, որ ծառայութիւնը բոլորովին չէր մտներ ծրագիրներուս մէջ. եւ չէի ուզեր որեւէ առնչութիւն ունենալ ատոր հետ: Բոլոր ծառայողները, որոնց եւ կը ճանչնայի իմ պատանելութեան տարիներուն, այնպիսի մարդիկ չէին, որոնց եւ կը ցանկայի նմանիլ: Ես գիտեմ, որ ատիկա կանխակալ կարծիք էր, բայց ինձի համար անոնք իրականութենէն հեռու մարդիկ էին, որոնք ունէին տարօրինակ երեխաներ եւ կ'ապրէին խարխուլած տուներու մէջ: Անշուշտ, յետագային եւ հասկցայ, որ իմ պատկերացումները խեղաթիւրուած էին, քանի որ կային բազմաթիւ խելամիտ ծառայողներ, որոնք ունէին հրաշալի

երեխաներ եւ կ'ապրէին բարեկարգ տուներու մէջ: Երբ ես նորահավատ էի, կը կարծէի, որ ծառայող ըլլալը կը նշանակէ ապրիլ ոչ լիարժէք կեանքով կամ երթալ Ափրիկէ, ապրիլ հիւղակի մէջ եւ չունենալ նոյնիսկ մէկ զոյգ կօշիկ:

Ես մեծցած եմ փոքրիկ քաղաքի մէջ, որուն բնակչութիւնը բաղկացած էր 3.000 մարդէ: Միակ ծառայողները, որոնց կը ճանչնայի, իմ կաթողիկէ քահանան էր (ինչ որ տարբերակ չէր ինձի համար, քանի որ անոնց չէր թոյլատրուած ամուսնանալ) եւ փոքրիկ եկեղեցւոյ մը հովիւ: Վերջինս երկու երեխայ ունէր, որոնք իմ տարիքին էին եւ տարօրինակ էին, եւ երբ անոնց տունը կ'երթայի, ես ինչ որ տհաճ հոտ կը զգայի: Մէկ անգամ, երբ անոնց տունն էի, այդ տհաճ հոտը այնքան ուժգին էր, որ ես պահեցի շունչս՝ որքան որ կրցայ, մինչեւ որ ինչ որ պատրուակ յօրինեցի՝ այդտեղէն երթալու համար: Այնպէս որ, դուք կրնաք հասկնալ, թէ ինչու ես չունէի մեծ հետաքրքրութիւն ծառայող դառնալու հանդէպ: Ես չէի ուզեր քահանայ ըլլալ եւ ո՛չ ալ ունենալ տարօրինակ երեխաներ եւ ապրիլ գարշահոտ տունի մէջ: Ես նոյնպէս չէի ուզեր միսիոներ դառնալ, երթալ Ափրիկէ եւ աւարտել կեանքս ինչ որ հիւղակի մը մէջ:

Այդ ժամանակ ես կը ծրագրէի աւարտել «Փուրտու» համալսարանի մեքենաշինական բաժանմունքը, իսկ յետոյ ստանալ Կառավարման մագիստրոսի աստիճան «Հարուըրտ» համալսարանէն: Անկէ յետոյ աշխատանքի կ'ընդունուէի որեւէ խոշոր ամերիկեան ընկերութեան մէջ, կը հասնէի ղեկավարող պաշտօնի, շատ դրամ կը վաստկէի եւ կ'աշակցէի իմ եկեղեցիին իմ զոհաբերութիւններով: Ես այդպէս կը ծրագրէի կեանքս եւ կ'անտեսէի Աստուծոյ շնչոցները՝ ծառայութեան վերաբերեալ (այս ծրագրին մէջ ոչ մէկ վատ բան կայ. պարզապէս Աստուած այլ բան որոշած էր ինձի համար):

Չորս ամիս յետոյ՝ Կիրակի առաւօտեան, ես եկեղեցւոյ մէջ էի եւ կը լսէի իմ հովիւի քարոզը, երբ Աստուծոյ Հոգին աւելի խիստ զգուշացուց զիս. «Ես կանչած եմ քեզ, որպէսզի քարոզես: Ո՞րն է քու պատասխանը»:

Այդ անգամ ես յստակ լսեցի Անոր ձայնը եւ պատասխանեցի.

«Տէ՛ր, նոյնիսկ եթէ ստիպուած ըլլամ ապրիլ Ափրիկէի մէջ՝ առանց կօշիկներու եւ խոտէ պատրաստուած հիւղակի մէջ, ես կը քարոզեմ եւ կը հնազանդիմ Քեզի»: Աստուած գիտէ, թէ ինչպէս գրաւէ մեր ուշադրութիւնը: Նախորդ ամիսներու ընթացքին, երբ Անոր մղումները այդքան արտայայտիչ չէին, ես արդէն իսկ կը հաշուէի ծառայութեան գինը: Այժմ, բոլորովին գիտակցելով իմ որոշումը, ես պատրաստ էի հաճեցնել Ձինք՝ անկախ այն գինէն, որ պէտք է վճարէի:

Տէրը սկսաւ պատրաստել զիս: Իմ ներսի կրակը կը վառէր: Ես սկսայ պատմել մեր հանրակացարանի տղաներուն Յիսուսին մասին, եւ շատերը փրկուեցան: Մօտաւորապէս մէկուկէս տարի յետոյ ես Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասեր սկսայ մեր հանրակացարանին մէջ, եւ այդ դասերուն կը յաճախէին ուսանողներ ամբողջ համալսարանէն: Ամէն շաբաթ նոր մարդիկ կ'ընդունէին Քրիստոսը, կը բժշկուէին եւ ազատութիւն կը ստանային:

Ես լիովին փոխեցի իմ առաջնահերթութիւնները: Քարոզելու ցանկութիւնը այնքան ուժգին դարձած էր իմ մէջ, որ կ'ուզէի ձգել «Փութեռ» համալսարանը՝ չաւարտելով մեքենաշինութեան բաժանմունքի վերջին տարին, եւ Աստուածաշունչեան դպրոց երթալ: Իմ տրամաբանութիւնը հետեւեալն էր. ինչո՞ւ պէտք էր ուսումնասիրել թուաբանութիւն եւ ֆիզիք, եթէ ես կանչուած էի քարոզելու, իսկ մարդիկ կը մահանային եւ դժոխք կ'երթային: Յիսուսը շուտով պիտի վերադառնար. այնպէս որ, ես պէտք է հնարաւորինս շուտ երթայի հունձքի դաշտերը:

Երեկոյ մը, երբ կը կատարէի իմ տնային աշխատանքները, որոնց արդէն ատելութեամբ կը վերաբերէի, ես բարձրացուցի զլուխս իմ դասագրքէն եւ նայեցայ դարակը դրուած Աստուածաշունչին: Արդէն յոգնած էի իմ դասերէն: Ես շարտեցի իմ ջերմային ուժաբանութեան դասագիրքը պատին: Որոշում կայացուցի, որ այլեւս պիտի չսպասէի. ես պիտի ձգէի համալսարանը եւ պիտի ընդունուէի Աստուածաշունչեան դպրոց:

«Եռածայնեցի այն մարդուն, որ կ'աշակերտէր ինձի. ան հետագօտող էր «Փութեռ» համալսարանին մէջ եւ իմ մտերիմ ընկերն էր:

Ես համարձակ յայտարարեցի.

- Տո՛ւն, ես պիտի ձգեմ ուսումն եւ Աստուածաշնչեան դպրոց պիտի ընդունուիմ:

Ան իմաստուն ձեւով պատասխանեց.

- Եկո՛ւր գրօսանքի երթանք այսօր երեկոյեան եւ աղօթենք ատոր համար:

Մենք այդպէս ալ ըրինք, եւ Աստուած խօսեցաւ հետս. «Իմ որոշած ժամանակին դուն պիտի ծառայես... Աւարտէ՛ քու ուսումը»:

Որոշ ժամանակ յետոյ իմ մտքին մէջ պայքար սկսաւ. ես կը մտածէի՝ արդե՞ք Տէրը տարբեր երկիրներ պիտի ուղարկէր փոքրիկ քաղաքի մէջ մեծցած տղան: Եւ լսեցի Անոր ձայնը. «Ո՞վ ծրագրած է եւ որոշած է այն ծառայութիւնը, որուն համար դուն կանչուած ես, դո՞ւն, թէ՞ Ես»:

«Դուն», - պատասխանեցի ես:

«Չե՞ս կարծեր, որ Ես աւելի շատ կը մտահոգուիմ այդ ծառայութեան ծնունդով, քան դուն»:

Այսպիսով, ես հանդարտեցայ եւ աւարտեցի մեքենաշինական բաժանմունքը: Աւարտելէն անմիջապէս յետոյ աշխատանքի ընդունուեցայ «Ռոքուլը ինթերնեշնլ» ընկերութեան մէջ որպէս մեքանիկական ինժեներ ԱՄՆ ռազմածովային ուժերուն պատկանող նախագիծի մը մէջ: Ես տեղափոխուեցայ այն քաղաքը, ուր պէտք է աշխատէի, եւ հրաշալի եկեղեցի գտայ: Մէկ տարի յետոյ Լիզան եւ ես ամուսնացանք:

Ես միացած էի այդ եկեղեցիին, երբ տակաւին ամուրի էի, եւ կը ծառայէի ամէն տեղ, ուր ծառայողի կարիքը կար: Ատիկա շարունակուեցաւ նաեւ մեր ամուսնութենէն յետոյ: Ես կարգուկանոնի ծառայող էի, ընդգրկուած էի բանտերու ծառայութեան մէջ, թե՛նիս խաղալ կը սորվեցնէի հովիւի երեխաներուն եւ կ'օգնէի անոր շատ այլ հարցերու մէջ: Այդ եկեղեցին Աստուածաշնչեան դպրոց ունէր, եւ ես կը յաճախէի երեկոյեան դասերուն:

Երկու տարի յետոյ եկեղեցին աշխատանքի ընդունեց զիս՝ որպէս աւագ հովիւի եւ անոր ընտանիքի օգնական: Ես ըսի հովիւին եւ

միւս ծառայողներուն, որ կրնայի աշխատիլ միայն մէկ տարի, քանի որ կանչուած էի քարոզելու համար: Պարտականութիւններու կարգին էր լուալ իմ հովիւի եւ անոր կնոջ ինքնաշարժները եւ լիցքաւորել վառելիքով, փայլեցնել իմ հովիւի կօշիկները, կատարել մանր առաջադրանքներ, դպրոցէն տուն տանիլ անոնց երեխաները, լողալ սորվեցնել անոնց երկու նախադպրոցական երեխաներուն, ընդունիլ հիւր քարոզիչները եւ այլն: Ես մնացի այդ պաշտօնին վրայ չորս ու կէս տարի՝ մէկ տարուան փոխարէն:

Արդէն եօթը տարի անցած էր այն պահէն, երբ ընդունած էի Աստուծոյ կանչը: Երբ համալսարանն էի, տեսնելով, թէ ինչպէս ուսանողները կը փրկուէին, կը բժշկուէին եւ կ'ազատագրուէին, ես կը կարծէի, թէ ինծի ընդամէնը օրեր կը բաժնէին լրիւ ժամանակուան ծառայութենէն: Ես նոյնիսկ գաղափար չունէի այն ընթացքի մասին, որուն միջոցով Աստուած կը տանէր զիս:

Այդ եկեղեցւոյ մէջ ծառայելու ընթացքին ես երեք անգամ անյաջող կերպով փորձեցի անցնիլ լրիւ ժամանակուան ծառայութեան: Երբ օդանաւով Տալլաս կը վերադառնայի Ասիայէն (ատիկա երրորդ անգամն էր, որ ես կը փորձէի տեսնել, թէ արդեօ՞ք ատիկա էր այն վայրը, որ Աստուած որոշած էր ինծի համար) եւ կը կարդայի Յովհաննէսի Աւետարանը, ես հասայ խօսքի մը, որ կարծես դուրս թռաւ էջէն. «Աստուած ուղարկեց մարդ մը՝ Յովհաննէս Մկրտիչը» (Յովհաննէս 1.6, NLT): Ես լսեցի Աստուծոյ ձայնը. «Դուն կ'ուզես ուղարկուիլ *Ճոն Պիվիրի*՞ կողմէն, թէ՞ *Իմ կողմէն*»:

«Ես կ'ուզեմ ուղարկուիլ Քու կողմէն»:

Եւ Տէրը ըսաւ. «Լաւ է, որովհետեւ եթէ ուղարկուիս Ճոն Պիվիրի կողմէն, դուն պիտի երթաս Ճոնի իշխանութեամբ, իսկ եթէ ուղարկուիս Իմ կողմէն, դուն կ'երթաս Իմ իշխանութեամբ»:

Անկէ յետոյ ես հանդարտեցայ եւ կեդրոնացայ այն վայրի վրայ, ուր Աստուած նշանակած էր զիս: Այնուամենայնիւ, որոշ ժամանակ յետոյ իմ անհանգստութիւնը վերադարձաւ: Իմ անապատային պատրաստութիւնը տակաւին չէր աւարտած. այն տակաւին ընթացքի մէջ էր:

Արդեօ՞ք Աստուած «դարակի մէջ դրած էր զիս» այդ եօթը տա-

րուան ընթացքին՝ սպասելով թափուր ծառայողական պաշտօնի: Ո՛չ, եւ հազար անգամ ո՛չ: Ես տարուած էի այդ անապատը, որպէսզի իմ մէջ Աստուածապաշտ բնաւորութիւն ծեւաւորուէր... որպէսզի *պատրաստուէր Անոր ճանապարհը*: Իմ բնաւորութիւնը պէտք է հասունանար, որպէսզի ես ճիշդ վարուէի այն ծառայութեան մէջ, որուն համար կանչուած էի: Յետագային ես հասկցայ, որ ամէն մէկ նոր հոգեւոր մակարդակին կը նախորդէ պատրաստութեան ընթացք՝ այդ մակարդակին համար:

Մոռցէ՛ք ձեր ուժերով ծառայելու մասին

Անկախ այն բանէն, թէ որքան լաւ են մեր մտադրութիւնները, առանց Աստուծոյ մասնակցութեան՝ մենք չենք կրնար յաւիտենական արժէք ունեցող որեւէ բան ընել, նոյնիսկ՝ Յիսուսին անունով: Ինքը Տէրը ըսաւ. «Ճշմարի՛տ, Ճշմարի՛տ կ'ըսեն ձեզի, թէ Որդին Ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, եթէ որ չտեսնէ այն, ինչ որ Հայրը կ'ընէ. որովհետեւ ինչ որ Ան կ'ընէ, Որդին ալ նոյն բանը Անոր պէս կ'ընէ» (Յովհաննէս 5.19): Ինչպիսի՛ պնդում: Յիսուսը՝ Աստուծոյ մարմնաւորուած եւ օծուած Որդին, ըսաւ, որ *Ինքը ոչ մէկ* արժէքաւոր բան կրնար ընել՝ Իր նախաձեռնութեամբ: Ես կը բերեմ քանի մը օրինակ՝ ցոյց տալու համար, թէ ինչ նկատի ունիմ.

Յիսուսը կը սիրէր Ղազարոսը եւ անոր երկու քոյրերը՝ Մարթան եւ Մարիամը, որոնք կ'ապրէին Բեթանիայի մէջ: Սակայն Ղազարոսը խիստ հիւանդացաւ, եւ տեղի ունեցաւ հետեւեալը.

«Եւ անոր քոյրերը մարդ ուղարկեցին Անոր քով եւ ըսին. «Տէ՛ր, ահա ան, որուն Դուն կը սիրես, հիւանդացած է»: Յիսուսն ալ, երբ որ լսեց, ըսաւ. «Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ, այլ՝ Աստուծոյ փառքին համար, որ Աստուծոյ Որդին Անորմով փառաւորուի»: Եւ Յիսուսը կը սիրէր Մարթան, անոր քոյրը եւ Ղազարոսը: Եւ երբ որ լսեց, թէ ան հիւանդ է, այն ժամանակ երկու օր մնաց հոն, ուր որ էր» (Յովհաննէս 11.3-6):

Թէեւ Յիսուսը Մեսիան էր, Ան մտերիմ ընկերներ ունէր: Ան կը սիրէր Ղազարոսը եւ հաճոյքով կը հաղորդակցէր անոր ընտանիքին հետ: Այնուամենայնիւ, մենք կը տեսնենք, որ Յիսուսը երկու օր ոչինչ ըրաւ այն բանէն յետոյ, երբ լսեց Իր ընկերոջ հիւանդութեան մասին: Ինչո՞ւ Ան անմիջապէս Բեթանիա չգնաց: Պատճառը այն էր, որ Ան Աստուծո՛մէ պատուէր չէր ստացած: Յիսուսը հնազանդ կը սպասէր, մինչեւ որ երթալու պատուէր ստանար Աստուծոյ Հոգիէն: Երբ ատիկա տեղի ունեցաւ, Ան գնաց:

Անգամ մը Տէրը ցոյց տուաւ ինձի, որ եթէ Ղազարոսը իմ ընկերը ըլլար, ես անմիջապէս ինքնաշարժով կ'երթայի անոր տունը եւ ձեռքերս անոր վրայ կը դնէի՝ առանց նոյնիսկ մտածելու Հոգիի առաջնորդութիւնը խնդրելու մասին: ՂԺբախտաբար, շատերս այսպիսին ենք: Մենք կը մտածենք, որ քանի որ Աստուած միշտ մեզի հետ է, կարիք չկայ, որ խնդրենք Անոր առաջնորդութիւնը նման իրավիճակներու մէջ: Սակայն մենք պէտք է կանգ առնենք եւ զգայուն ըլլանք Աստուծոյ Հոգիին հանդէպ: Աստուած գիտէ, թէ Ինքը ինչ կ'ուզէ, եւ եթէ մենք սպասենք, մինչեւ որ ստանանք Անոր հրահանգները կամ իմանանք, թէ ինչ կայ Անոր սրտին մէջ ինչ որ հարցի վերաբերեալ, Ան պիտի ըսէ մեզի, թէ ինչ ընենք:

Թերեւս մտածենք, որ նոյնիսկ եթէ մենք մարդոց ձեռնադրենք՝ առանց Հոգիի առաջնորդութեան, Աստուած պարտաւոր է նոյն պահուն բժշկել զանոնք: Եթէ այդպէս է, մի՞թէ չ'արժեր երթալ բոլոր հիւանդանոցները եւ պարպել:

Որոշ պարագաներուն Աստուածաշունչը կ'ըսէ, որ Յիսուսը «բժշկեց բոլորը», բայց միշտ չէ, որ այդպէս կ'ըլլար: Օրինակ, ինչո՞ւ Յիսուսը չբժշկեց բոլոր հիւանդ, կոյր, կաղ եւ անդամալոյծ մարդիկ Բեթհեզդայի աւազանին մէջ, այլ՝ միայն մէկ մարդ, որ երեսունութ տարի անդամալոյծ էր (տե՛ս Յովհ. 5-րդ գլուխ): Հնարաւոր է, որ Աստուծոյ Հոգին չառաջնորդեց Ձինք միւսները բժշկելու համար:

Որպէս մէկ այլ օրինակ՝ գրուած է ծնած օրէն կաղ մարդու մը մասին, որուն ամէն օր կը տանէին տաճարի դարպասին քով: Անկասկած, Յիսուսը անցած էր անոր քովէն ամէն անգամ, երբ տաճար

մտած էր: Ինչո՞ւ չէր բժշկած զինք: *Քանի որ Անոր Հայրը չէր պատուիրած Անոր բժշկել այդ մարդը:*

Աելի ուշ՝ այն բանին յետոյ, երբ Յիսուսը Երկինք համբարձաւ, Պետրոսը եւ Յովհաննէսը գացին տաճար եւ, Հոգիի առաջնորդութեամբ, բժշկեցին այդ մարդը՝ արթնութեան սկիզբ տալով (տե՛ս Գործք 3-րդ գլուխ):

Երբ Յիսուսը կը ծառայէր, չունէր որեւէ յստակ բանաձեւ. ոմանց Ան կը բժշկէր թուքի միջոցով, ոմանց կը ձեռնադէր, իսկ ոմանց ալ պարզապէս խօսք կ'ըսէր: Անգամ մը Ան թուքով հեղուկ շինեց եւ քսեց մարդու մը աչքերուն: Կային մարդիկ, որոնց Ան ուղարկեց քահանաներու քով, եւ այսպէս շարունակ: Նման ուշագրաւ բազմազանութեան պատճառը այն է, որ Յիսուսը միայն կ'ընէր այն, ինչ որ կը տեսնէր, որ Հայրը կ'ընէր: Աստուած գիտէր ճիշդ ժամանակը ամէն իրավիճակի համար եւ այն ձեւը, որուն միջոցով ամէն մէկը կրնար բժշկութիւն ստանալ:

Աստուած յատկապէս ասիկա կը կամենայ Իր բոլոր ծառաներուն համար... դարձնել մեզ այնպիսին, որ մենք ընենք միայն այն, ինչ որ կը տեսնենք՝ Յիսուսը կ'ընէ, եւ վարուինք Անոր առաջնորդութեամբ, ոչ թէ կատարենք այն, ինչ որ կը մտածենք կամ կը ցանկանք: Յիսուսը կ'ըսէ Յովհաննէս 20.21-ին մէջ. «Ինչպէս Իմ Հայրը Զիս ուղարկեց, Ես ալ ձեզ կ'ուղարկեմ»: Յիսուսը ոչինչ ըրաւ՝ առանց Իր Հօր առաջնորդութեան: Մենք պէտք է նոյն ձեւով հետեւինք Յիսուսի օրինակին: Մենք պէտք է ապրինք Անոր պէս՝ առաջնորդուելով Սուրբ Հոգիով եւ վարուելով միայն՝ ըստ Անոր առաջնորդութեան: Ատոր համար անհրաժեշտ է, որ մեր մարմինը հնազանդի Աստուծոյ Հոգիին՝ Քրիստոսի Հոգիին: Եւ ամենաբարենպաստ միջավայրը, ուր մենք կրնանք սորվիլ ապրիլ Հոգիի առաջնորդութեամբ, անապատն է: Այս դժուարութիւններով լեցուն վայրին մէջ կը պատրաստուի Տիրոջ ճանապարհը:

Քառասուն տարի տեւող անապատային պատրաստութենէն յետոյ Աստուած Մովսէսին ըսաւ.

««Ուստի, եկո՛ւր, հիմա քեզ փարաւոնին քով ուղարկեմ, եւ հանե՛լ Իմ ժողովուրդը՝ Իսրայէլի որդիները, Եգիպտոսէն»: Եւ Մովսէսը ըսաւ Աստուծոյ. «Ես ո՞վ եմ, որ փարաւոնին քով երթամ եւ Իսրայէլի որդիները Եգիպտոսէն հանեմ»: Եւ ըսաւ, թէ. «Ես քեզի հետ պիտի ըլլամ»» (Ելից 3.10-12):

Այժմ համեմատենք ասիկա այն բանին հետ, թէ Աստուած ինչ ըսաւ այն մարդոց մասին, որ իրենք զիրենք ուղարկած էին.

«Ես այդ մարգարէները չեմ ուղարկած, բայց իրենք կը վազեն, եւ Ես անոնց հետ չեմ խօսած, բայց իրենք կը մարգարէանան... Ահա Ես այն սուտ երազներ մարգարէացողներուն դէմ եմ,- կ'ըսէ Տէրը,- որ կը պատմեն անոնց եւ կը մոլորեցնեն Իմ ժողովուրդը իրենց ստութիւններով ու իրենց սնապարծութեամբ, եւ Ես զանոնք չեմ ուղարկած եւ անոնց չեմ պատուիրած, եւ շահ ու օգուտ չունին այս ժողովուրդին համար,- կ'ըսէ Տէրը» (Երեմիա 23.21,32):

Որքա՛ն խիստ է: Ոչ ոք կը ցանկայ նման ուղերձ ստանալ Տիրոջմէն:

Քառասուն տարեկանին, երբ Մովսէսը առաջին անգամ փորձեց ազատել Իսրայէլի զաւակները, ան անկարող էր օգնել կամ *օգուտ տալ* անոնց, քանի որ *Աստուած չէր ուղարկած զինք*: Նոյնիսկ ունենալով փայլուն ուսում, առաջնորդական հմտութիւններ եւ իմաստութիւն, որոնք ան ստացած էր Եգիպտոսէն, առանց Աստուծոյ աջակցութեան եւ Անոր որոշած ժամանակին՝ Մովսէսը չկրցաւ կատարել այն, ինչի համար, որ *ինչպէս ինքը գիտէր*, Աստուած կանչած էր զինք: Անոր անյաջող փորձի հետեւանքով մահացաւ Եգիպտացի կեղեքիչներէն միայն մէկը: Թէեւ ան ազնուագոյն մտադրութիւններ ունէր, իր առաքելութիւնը կատարելու առաջին փորձը աւելի շատ վնաս հասցուց, քան թէ օգուտ տուաւ: Քառասուն տարի տեւող անապատային պատրաստութենէն յետոյ ի յայտ եկաւ նոր Մովսէս, որ ոչինչ պիտի ընէր՝ Աստուծոյ պատուէրներէն բացի: Այժմ, Աստուծոյ

որոշած ժամանակ, Մովսէսի առաջնորդութեան ներքոյ ամբողջ բանակ մը յայտնուեցաւ Կարմիր ծովուն տակ: Ահա տարբերութիւնը մեր ուժի եւ Աստուծոյ զօրութեան միջեւ. մէկ զինուորը՝ ամբողջ բանակի համեմատ:

Յովհաննէս Մկրտիչը երեսուն տարի պատրաստուեցաւ ծառայութեան մը համար, որ տեւեց ընդամէնը վեց ամիս, սակայն Յիսուսը ըսաւ, որ Յովհաննէսը ամենամեծ մարգարէն էր կնոջմէ ծնածներուն մէջ:

Ուշագրաւ է, որ Աստուած վեց ամսուան մէջ կրնայ ընել աւելին *Իր կողմէն ուղարկուած* տղամարդու կամ կնոջ միջոցով, քան ինչ որ մէկը *իր ուժերով*, չնայած որ վաթսուն տարի շարունակ ջանասիրաբար կը գործէ:

Յատկապէս այս մասին կը խօսի Յիսուսը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի, թէ Որդին Ինքնիւրմէ բան մըն ալ չի կրնար ընել, եթէ որ չտեսնէ այն, ինչ որ Հայրը կ'ընէ. որովհետեւ ինչ որ Ան կ'ընէ, Որդին ալ նոյն բանը Անոր պէս կ'ընէ» (Յովհաննէս 5.19):

Կրկին կարդանք Եսայիա մարգարէի խօսքերը.

«Անապատին մէջ կանչողի ձայնը.

«Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը
եւ ուղի՛դ ըրէ՛ք ամայութեան մէջ շաւիղը
մեր Աստուծոյն համար:

Ամէն ձոր բարձրանայ,
եւ ամէն լեռ ու բլուր ցածնայ,
եւ ծուռը ուղիղ դառնայ, եւ խորտուբորտ
տեղերը հարթայատակ՝ հաւասար պիտի ըլլան:
Եւ պիտի յայտնուի Տիրոջ փառքը,
եւ ամէն մարմին մէկտեղ պիտի տեսնեն,
որովհետեւ Տիրոջ բերանը խօսած է»:

Մէկ ձայն կ'ըսէ՝ կանչէ՛:

Եւ ան ըսաւ՝ ի՞նչ կանչեմ:

«Այս՝ թէ ամէն մարմին խոտ է,

Եւ անոր ամբողջ վայելչութիւնը՝
դաշտի ծաղիկի պէս:
Խոտը կը չորնայ, ծաղիկը՝ կը թառամի,
որովհետեւ Տիրոջ ոգին (կամ՝ շունչը) փչեց անոր վրայ:
Իրաւ ժողովուրդը խոտ է:
Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի,
բայց մեր Աստուծոյ Խօսքը յաւիտեան կը մնայ»» (Եսայիա
40.3-8):

Աստուած կ'ըսէ, որ անապատը այն վայրն է, ուր կը պատրաս-

Ինչպէս անցնիլ անապատը

#11 Ձեր ճամպրուկները հաւաքած պահեցէ՛ք

Թէեւ ես ոչ մէկ պարագայի կ'առաջարկէի, որ այդպէս վա-
րուիք, երբ ձեր անապատային ընթացքը կ'երկարի եւ կը
թուայ, թէ երբեք պիտի չաւարտի, թերեւս դուք որոշէք բանալ
ձեր ճամպրուկները եւ հաստատուիլ հոն: Վստահեցէ՛ք ինծի՝
երբ Աստուած որոշէ տեղափոխել ձեզ, Ան կրնայ ընել ատի-
կա մէկ ակնթարթի մէջ: Յիշեցէ՛ք Յովսէփին պատմութիւնը.
Կը թուայ՝ ան պիտի մնար բանտը մինչեւ կեանքի աւարտը,
սակայն առանց որեւէ զգուշացման՝ մէկ օրուան մէջ ան հա-
սաւ այն երագանքին, որ Աստուած տուած էր իրեն: Այո՛, ճիշդ
այդպէս. ընդամենը մէկ օրուան մէջ:

Իմ անապատներէն մէկուն ընթացքին կը թուար, որ ես
պիտի մնայի յաջորդ քառասուն տարիներու մէջ: Բայց յան-
կարծ Տէրը խիստ անսպասելի ըսաւ, որ պէտք է ձգեմ իմ
ներկայ ծառայութիւնը եւ շրջիկ քարոզիչ դառնամ: Այդ փոփո-
խութիւնը անմիջապէս տեղի չունեցաւ, բայց երբ տեղի ունե-
ցաւ, այն եկաւ պտտահողմի պէս: Եւ ես պատրաստ էի անցնիլ
դէպի իմ կոչման նոր փուլ: Իմ ճամպրուկները հաւաքուած էին:

տուի Տիրոջ ճանապարհը: Տիրոջ ճանապարհը մարդկային ուժը չէ: Ան կ'ըսէ, որ մարմինի հպարտութիւնը կը ցածնայ, խոնարհները (որոնք կը սպասեն Տիրոջը) կը բարձրանան, ծուռ (խորամանկ, ոչ ճիշդ եւ անազնիւ) տեղերը կ'ուղղուին, եւ խորտուբորտ (սէրէ զուրկ, կոպիտ ու խիստ) տեղերը կը հարթուին:

Ուսանողական տարիներուն, երբ նոր սկսած էի հետեւիլ Յիսուսին, ես ստացած էի բազմաթիւ օրհնութիւններ եւ «յաջողութեան» հասած էի՝ ծառայելով մարդոց, սակայն իմ կեանքին մէջ կային լեռներ, որոնք պէտք է ցածնային, եւ ծուռ ու խորտուբորտ տեղեր, որոնք պէտք է ուղիղ եւ հարթ դառնային: Աստուած գիտէր, որ ես պէտք է որոշ ժամանակ անցընէի անապատին մէջ՝ իմ թերութիւնները շտկելու համար:

Որեւէ անապատային փորձառութեան ժամանակ խիստ կարելոր է թոյլ տալ, որ Աստուած գործէ մեր կեանքին մէջ այնպէս, ինչպէս Ինքը կը կամենայ: Երբ տակաւին կը ծառայէի իմ հովիւին Տալլասի մէջ, օր մը Տէրը խօսեցաւ հետս. «Ճո՛ւն, մի՛ կորսնցներ այն, ինչ որ Ես կը ցանկամ կատարել քու մէջ այսօր՝ միայն սպասելով քու քարոզչական ծառայութեան, որ պիտի գայ վաղը»: Անկեղծ ըսելու համար՝ ես այնքա՛ն կը ցանկայի քարոզել, որ իմ կեանքի այդ հատուածին կը վերաբերէր որպէս անիմաստ վատնուած ժամանակի:

Կարիք չկայ, որ իյնանք այս ծուղակին մէջ: Հասկցէ՛ք, որ Աստուած *ժամանակ չի վատներ*: Ան կ'օգտագործէ *ժամանակը արդիւնաւէտ կերպով*: Հասկցէ՛ք՝ այն, թէ ուր կը գտնուիք հիմա, ձեր կոչման կարելոր մասն է: Այն ձեր պատրաստութեան վայրն է: Այն ճանապարհն է խոստումէն դէպի յառաջխաղացումը, այսինքն՝ խոստման իրականացումը: Թոյլ տուէ՛ք, որ Տէրը անհանգստանայ այն մասին, թէ ինչպէս այդ ամէնը կը յաջողի եւ կ'ամբողջանայ... իսկ դուք պարզապէս քալեցէ՛ք Անոր հետ: Ան է Աստուած՝ մեր Զօրագլուխը եւ Կատարողը: Մենք պարզապէս պէտք է վստահինք Անոր եւ հնազանդինք այն ամէնուն, ինչ որ Ան ցոյց կու տայ մեզի *այսօր*:

Ամէն անգամ, երբ ես կը մտածէի, որ հասկցած էի, թէ ինչպէս Ան պիտի հաստատէր զիս քարոզչական ծառայութեան մէջ, Ան սիրով

կ'ըսէր. «Ճո՛ւն, դուն գտած ես եւս ուրիշ ճանապարհ մը, որուն միջոցով աստիկա տեղի չ'ունենար»: Ատիկա ճիշդ էր. Ան տուաւ ինծի այդ ծառայութիւնը լիովին անսպասելի կերպով: Աստուած կը դարձնէ մեզ գոհացող (ոչ թէ ինքնագոհ), որպէսզի մենք լիարժէք ապրինք մեր ներկայով:

Ըրէ՛ք ամէն ինչ Աստուծոյ ուզած ծելով

Երբ Աստուած կու տայ իր իշխանութիւնը եւ զօրութիւնը ռեւէ մարդու, որքան աւելի մեծ է շնորհուած իշխանութիւնը, այնքան աւելի մեծ է դատաստանը Տիրոջ Հոգիին չինազանդելու համար: Աստուած չդատեց Մովսէսը քառասուն տարեկանին, երբ ան վարուեցաւ իր ուզած ծելով, քանի որ անոր կեանքին մէջ տակաւին չկային Աստուծոյ իշխանութիւնն ու զօրութիւնը: Այնուամենայնիւ, յետագային ամէն ինչ փոխուեցաւ: Երբ Իսրայէլը Սին անապատն էր, ժողովուրդը վիճեց Մովսէսին հետ եւ տրտնջաց այն վայրին պատճառով, ուր բերած էր զանոնք: Անոնք ծարաւ էին եւ ջուր կ'ուզէին: Եւ Աստուած ըսաւ Մովսէսին, թէ ան ինչ պէտք է ըներ.

«Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին հետ՝ ըսելով. «Վերցո՛ւր գաւազանը եւ ժողովուրդը ժողովէ՛ դուն եւ քու եղբայրդ Ահարոնը, եւ խօսեցէ՛ք ապառաժին անոնց աչքերուն առջեւ, եւ ան պիտի տայ իր ջուրը, եւ դուն ապառաժէն ջուր պիտի հանես անոնց համար եւ պիտի խմցնես ժողովուրդն ու անասունները» (Թուոց 20.7,8):

Աստուած պատուիրեց Մովսէսին խօսիլ ապառաժին, որպէսզի այն ջուր տայ: Բայց կարդացէք, թէ ինչ ըրաւ Մովսէսը.

«Եւ Մովսէսը իր ձեռքը բարձրացուց եւ գաւազանով երկու անգամ ապառաժին զարկաւ, եւ շատ ջուր դուրս ելաւ, եւ ժողովուրդն ու անոնց անասունները խմեցին: Եւ Տէրը

խօսեցաւ Մովսէսին եւ Ահարոնին հետ. «Որովհետեւ Ինծի չհաւատացիք՝ Ձիս Իսրայէլի որդիներու աչքերու առջեւ փառաւորելու, անոր համար դուք այս ժողովուրդը չէք տանիր այն երկիրը, որ անոնց տուի»» (Թուոց 20.11,12):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Աստուած ջուր տուաւ միլիոնաւոր մարդոց, որոնք կը նայէին Մովսէսին: Ջարմանալի՜ է: Ջուր՝ ապառաժէն. ո՞վ լսած է նման զօրաւոր հրաշքի մասին քսանմէկերորդ դարին: Այսպիսով, թէւ Մովսէսը չհնազանդեցաւ Աստուծոյ հրահանգներուն այն մասին, թէ ինչպէս դուրս բերէ ջուրը ապառաժէն, այդ աներեւակայելի հրաշքը, միեւնոյնն է, տեղի ունեցաւ: Ջուրը նախատեսուած էր ժողովուրդին համար՝ ի պատասխան անոնց կարիքին: Աստուած չզրկեց ժողովուրդը ջուրէն՝ Մովսէսը պատժելու համար: Այնուամենայնիւ, այդ արարքը անհետեւանք չմնաց. Աստուած թոյլ չտուաւ Մովսէսին առաջնորդել ժողովուրդը դէպի Խոստման երկիր:

Ասիկա փայլուն օրինակ է այն մասին, որ Աստուծոյ գերբնական օծութիւնը նախատեսուած է մարդոց կարիքներու համար, ոչ թէ այդ պարգեւը ունեցողին մեծարելու համար: Թերեւս Մովսէսը բարկացած էր ժողովուրդին վրայ եւ քիչ մը բարկացած էր Աստուծոյ վրայ, քանի որ ստիպուած էր հովուել նման անկարգ ժողովուրդին: Մովսէսը հարուածեց ապառաժին, ինչպէս որ ան ըրած էր Սին անապատին մէջ նախորդ անգամ (տե՛ս Ելից 17.1-7): Կամ, թերեւս, Մովսէսը սկսած էր աւելի թեթեօրէն վերաբերիլ իր առաջնորդելու կարողութեան. թերեւս ան կը կարծէր, որ Աստուած կը պատուէր այն, ինչ որ ինքը ճիշդ պիտի համարէր: Ան կրկին վարուեցաւ իր ուզած կերպով, սակայն հետեւանքները զգալիօրէն ծանր էին: Մովսէսը կ'ապրէր Աստուծոյ զօրութեամբ եւ կարողութեամբ. անոր ուժերուն աղբիւրը իր կախուածութիւնն էր Աստուծոյ: Այն, որ Մովսէսը Աստուծոյ անկախ վարուեցաւ ժողովուրդին առջեւ, արագահաս դատաստանի պատճառ դարձաւ:

Ահա թէ ինչու Յակոբոս 3.1-ին մէջ գրուած է. «Իմ եղբայրներ, թող ձեզմէ շատերը չդառնան ուսուցիչներ՝ գիտնալով, որ մենք

աւելի խիստ դատաստան պիտի ընդունինք» (NKJV): Որքան աւելի է պատասխանատուութիւնը կամ փառքը, այնքան աւելի մեծ է դատաստանը:

Անապատը կը պատրաստէ մեզ, որ վարուինք Տիրոջ զօրութեան եւ փառքի մէջ՝ առանց դատաստանի ենթարկուելու անհնազանդութեան պատճառով: Չոր անապատային փորձառութեան մէջ հպարտութիւնը կը ցածցնայ, իսկ խոնարհութիւնը՝ կը բարձրանայ: Ճշմարտապէս խոնարհ մարդը կ'ապրի այնպէս, ինչպէս Յիսուսը. ան կ'աղաղակէ. «Ես ոչինչ կ'ընեմ, մինչեւ որ տեսնեմ՝ Աստուծոյ Հոգին ինչ կ'ընէ: Ես ոչինչ եմ՝ իմ զօրութեամբ եւ կարողութեամբ»:

Հնարաւոր է արդեօք, որ մեր օրերուն Աստուած չի յայտնէր Իր փառքը եւ զօրութիւնը շատերուն միջոցով, քանի որ Ան կը պաշտպանէ մեզ աւելի մեծ դատաստանէն: Ես կը հաւատամ, որ անապատին մէջ Ան կ'առանձնացնէ մարմնաւոր բնութիւնը հոգիէն՝ դրդելով մեզ կանչել Ջինք եւ լսել Իրեն: Այդ պարագային, երբ գայ Անոր փառքի յայտնուելու ժամանակը, մենք պատիւ կը բերենք Անոր անուան վարուելով միայն *Անոր ուզած կերպով*:

Լսեցէ՛ք Հոգիի ծայնը: Թո՛ղ տուէք Անոր ցոյց տալ ձեզի, թէ ինչպէս Ան կը ցանկայ, որ կատարէք այն գործը, որ պատրաստած է ձեզի համար: Տեսէ՛ք եւ լսեցէ՛ք, թէ Տէրը ինչ կ'ընէ եւ կ'ըսէ:

«Ես կը բարձրանամ իմ դիտանոցը եւ կը կանգնիմ իմ պահակակէտին վրայ: Այդտեղ կը սպասեմ, որ տեսնեմ, թէ Տէրը ինչ կ'ըսէ, եւ ինչպէս Ան կը պատասխանէ իմ բողոքին: Եւ Տէրը ըսաւ ինձի. «Գրէ՛ Իմ պատասխանը պարզ կերպով՝ տախտակներու վրայ, որպէսզի վագողը կարենայ ճշգրիտ ուղերձ տանիլ միւսներուն: Այս տեսիլքը ասպագայ ժամանակուան համար է: Այն կը նկարագրէ վերջը, եւ այն կը կատարուի: Եթէ թուայ, թէ կը դանդաղի, համբերատար սպասէ՛, քանի որ այն անպայման պիտի իրականանայ: Այն չ'ուշանար: Նայի՛ր հպարտներուն: Անոնք կը վստահին իրենց, եւ անոնց կեանքը անազնիւ է: Բայց արդարները կ'ապրին Աստուծոյ հանդէպ ունեցած իրենց հաւատարմութեամբ»» (Ամբակում 2.1-4, NLT):

Մարգարէն ըսաւ. «Ես կը նայիմ, որ տեսնեմ, թէ Տէրը ինչ կ'ըսէ ինձի»: Այն ձեւերէն մէկը, որոնցմով Աստուծոյ Հոգին կը խօսի, տեսիլքն է: Յիսուսը ըսաւ, որ Ինքը միայն կ'ընէր այն, ինչ որ կը տեսնէր, թէ Հայրը կ'ընէ: Ամբակումը ըսաւ, որ ինքը գրի կ'առնէ իր տեսածը եւ որոշուած ժամանակին կը վագէ իր տեսածով: Ան շարունակեց՝ ըսելով, որ հպարտ (գոռոզ) մարդը ուղիղ չէ (այսինքն՝ այդ մարդը չի սպասեր Տիրոջ Խօսքին, այլ կը վագէ՝ չունենալով տեսիլք այն մասին, թէ Աստուած ինչ կ'ըսէ): Բայց արդարը կ'ապրի իր հաւատքով, ոչ թէ այլ մարդու հաւատքով:

Հաւատքը կու գայ, երբ մենք կը լսենք այն, ինչ որ Աստուած կ'ըսէ, իսկ յետոյ կը հնազանդինք ատոր: Ահա թէ ինչու Աստուած անապատ տարաւ Իսրայէլի զաւակներուն, «...որ սորվեցնէ քեզի, որ մարդիկ չեն ապրիր միայն հացով, այլ կ'ապրին ամէն մէկ խօսքով, որ կու գայ Տիրոջ բերանէն» (Երկրորդ Օրինաց 8.3, NLT): Ուշադրութիւն դարձուցէք, որ գրուած է «կու գայ», ոչ թէ «եկաւ»:

Աստուծոյ Խօսքը կը խրախուսէ մեզ. «Տեսէ՛ք, որ չմերժէք Զինք, Որ կը խօսի [ներկայ ժամանակով]: Որովհետեւ եթէ անոնք չխուսափեցան, որ մերժեցին Զինք, Որ խօսեցաւ երկրի վրայ, առաւել եւս մենք չենք խուսափիր, եթէ շրջուինք Անորմէ, Որ կը խօսի Երկնքէն» (Եբրայեցիս 12.25, NKJV): Եւ երբեք մի՛ մոռնաք, որ այն, ինչ որ Ան կը խօսի, մշտապէս պիտի համապատասխանէ Աստուածաշունչին:

Այնուամենայնիւ, եթէ դուք հատուածներ կը փնտռէք Աստուածաշունչէն, որպէսզի հաստատէք այն, ինչ որ դուք կը ցանկաք ընել, ատիկա Աստուծոյ ճանապարհը չէ: Յիսուսը կրնար ըսել Ինքնիրեն. «Ես օծուած եմ՝ հիւանդները բժշկելու համար. այնպէս որ, անմիջապէս կ'երթամ եւ կը ձեռնադրեմ Ղազարոսին, ինչպէս որ ըրած եմ նախկինին»: Փոխարէնը՝ Ան սպասեց, որ Աստուծոյ Հոգին շարժէր, եւ միայն ատկէ յետոյ Ինքը նոյնպէս շարժեցաւ:

Անապատը այն վայրն է, ուր Աստուած կը բերէ մեզ, որպէսզի սորվեցնէ, որ Իրեն համար ինչ որ բան մը ընելու որեւէ փորձ՝ առանց Իր առաջնորդութեան եւ կարողութեան, ապարդիւն է: Երբ մենք իրականութեան մէջ հասկնանք, որ մարմինը յաւիտենական արժէք ունեցող ոչ մէկ բան կրնայ ընել, մենք պատրաստ կ'ըլլանք

կատարել այն երազանքները եւ ծրագրերը, որոնք Ան վստահած է մեզի: Անապատը պատրաստութեան վայր է. այն խոստման իրականացման ընթացքն է: Եկէք հետեւինք Յիսուսի օրինակին եւ առաջնորդուինք Հոգիով, որպէսզի ամէն ինչ կատարենք *Աստուծոյ* ուզած ձեւով, ոչ թէ՝ *մեր*:

ՅԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

«Մեր բոլոր տրտմութիւնները, ինչպէս եւ մենք, մահկանացու են: Չկան անմահ տրտմութիւններ՝ անմահ մարդոց համար: Ատոնք կու գան, բայց օրհնեա՛լ ըլլայ Աստուած, ատոնք նաեւ կ'երթան: Երկնքի թռչուններու պէս ատոնք կը թռչին մեր գլխավերելը, բայց չեն կրնար բնակիլ մեր մէջ: Մենք կը տառապինք այսօր, սակայն կը ցնծանք վաղը»:

– Չարլզ Սփերձէն

«Երբ մարդիկ չեն ընդունիր Աստուածային առաջնորդութիւնը, անոնք կը վայրենիանան: Բայց ան, որ կը հնազանդի օրէնքին, ուրախ է»:

– Առակաց 29.18, NLT

Թ էն մենք կը յայտնուինք անապատի մէջ, այն մեր վերջնական նպատակավայրը չէ: Ճիշդ վարուելու պարագային, մենք կ'ունենանք յաղթանակ անապատին մէջ եւ դուրս կ'ելլենք ատոր սահմաններէն:

Իմ անապատներէն մէկուն մէջ իմ ջերմեռանդութիւնը բոլորովին սպառած էր: Ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի, եւ կը թուար՝ այդ անապատը չափէն աւելի երկար էր: Ես արդէն կը սկսէի կասկածիլ, որ այդ վիճակը ընթացքին կրնար փոխուիլ: Բայց օր մը՝ կարճ ժամանակ վերջ այն բանէն յետոյ, երբ խնդիրներ սկսան իմ անմիջական ղեկավարին հետ, որ կը փորձէր վարկաբեկել զիս եւ հեռացնել աշխատանքէն, Աստուծոյ Հոգին ցոյց տուաւ, որ իմ կեանքին մէջ փոփոխութիւն պիտի գայ: Այդ ժամանակ էր, որ Աստուած յայտնեց ինձի, որ ես պիտի ուղարկուէի «եկեղեցիներ եւ համաժողովներ Ամերիկայի բոլոր քաղաքներուն մէջ՝ արեւելեան ափէն մինչեւ արեւմտեան ափը եւ Քանատայի սահմանէն մինչեւ Մեքսիքայի սահմանը, դէպի Ալիսաքա եւ Հաուայեան կղզիներ...»:

Այնուամենայնիւ, ինչպէս արդէն նշեցի, ատիկա տեղի չունեցաւ յաջորդ օրը եւ նոյնիսկ՝ այդ շաբթուան ընթացքին: Անցաւ վեց ամիս՝ ամանց որեւէ յաւելեալ հաստատման: Եւ յանկարծ օր մը իմ աւագ հովիւը եկաւ հաւաքոյթի մը եւ ըսաւ, որ Տէրը ցոյց տուած էր իրեն, որ իր հովիւներէն մէկը (իսկ մենք տասնմէկ էինք եկեղեցւոյ աշխատակազմին մէջ) շուտով լրիւ զբաղուածութեամբ շրջիկ քարոզիչ պիտի դառնայ եւ այլեւս պիտի չծառայէ եկեղեցւոյ մէջ:

- Ճոն Պիվի՛ր, այդ հովիւը դո՛ւն ես, - ըսաւ ան:

Բայցեւայնպէս, ժամանակը կ'անցնէր (անցաւ եւս վեց ամիս, եթէ ճշգրիտ ըլլամ), եւ ես դեռ անապատի մէջ էի: Եւ յանկարծ, ընդամէնը երեք շաբթուան ընթացքին, ես ստացայ քարոզելու եօթը հրաւեր տարբեր եկեղեցիներէ: Այդ եկեղեցիներէն մէկը ընդամէնը մէկ ժամուան հեռաւորութեան վրայ էր Քանատայի սահմանէն, միւսը Ֆլորիտայի Հարաւային ափն էր, երրորդը ընդամէնը մէկ ժամուան հեռաւորութեան վրայ էր Խաղաղ Ովկիանոսէն, իսկ չորրորդը Մեքսիքայի սահմանին քովն էր: Ես զացի իմ հովիւին գրասենեակը եւ հարցուցի, թէ ինչ պէտք է ընեմ: Ան ծիծաղեցաւ ու ըսաւ.

- Ճո՛ն, ես ըսի քեզի, որ Տէրը ցոյց տուած է ատիկա ինձի: Կ'երեւի, որ քու ժամանակը հոս աւարտած է:

Շուտով (1990թ. Յունուարին), ընծայման հաւաքոյթի մը ժամանակ, հովիւը ձեռնադրեց Լիզային եւ ինձի, եւ մինչեւ օրս մենք լրիւ զբաղուածութեամբ շրջիկ քարոզիչներ ենք: Պէտք է ըսեմ, որ Աստուծոյն սպասելու արդիւնքով մենք տեսած ենք *աւելի շատ* (եւ չեմ կրնար չափէն աւելի շեշտել «աւելի շատ» արտայայտութիւնը) պտուղ, քան՝ եթէ անձնապէս սկսէինք ծառայել այն ժամանակ, երբ, իմ կարծիքով, ես արդէն պատրաստ էի:

Ես կը ցանկամ տեսնել նոյն արդիւնքը ձեր կոչման մէջ: Ասիկա է պատճառը, որ վաթսուն տարեկան մարդ մը, որ ի սրտէ կը սիրէ Աստուծոյ ժողովուրդը, հնարաւորինս անկեղծօրէն կը պատմէ ձեզի իր մասին: Ես կը ցանկամ, որ դուք բարեյաջող կատարէք ձեր կոչումը: Այնպէս որ, մինչեւ աւարտելը, թոյլ տուէք բաժնեկցիլ ձեզի հետ շարք մը կարեւոր ամփոփիչ մտքերով:

Ճիշդ մտադրութիւն եւ նպատակ

Մենք պէտք է կեդրոնանանք Աստուծոյ մտադրութեան վրայ, ոչ թէ այն հակառակութիւններուն, որոնք կը փորձեն խոչընդոտել մեր առաջընթացը: Մենք պէտք է ճիշդ տեսիլք ունենանք, եթէ կ'ուզենք հասնիլ ճիշդ նպատակին: Սարսափելի կ'ըլլայ անցնիլ ամբողջ վազքուղի եւ սխալ եզրագիծ հատել: Ողբերգութիւն կ'ըլլայ ուղղել գէնքը սխալ թիրախի եւ խոցել այն:

Փարիսեցիները շատ նախանձաւոր ու ջանասէր էին, բայց անոնց դրդապատճառները շահադիտական էին: Անոնք չունէին ճիշդ տեսիլք, այդ պատճառով ալ չխոցեցին ճիշդ թիրախը:

Ո՞րն է Աստուծոյ կոչումը եւ մտադրութիւնը մեզի՝ Իր ժողովուրդին համար: Եփեսացիներու 1.11-ին մէջ գրուած է. «...նախասահմանուած՝ համաձայն Անոր նպատակին, Որ կը գործէ ամէն բան ըստ Իր կամքի խորհուրդին» (NKJV):

Շատերը անորոշութիւն կը զգան՝ լսելով «նախասահմանուած» կամ «նախասահմանութիւն» բառը: Որպէսզի հասկնանք այս գաղափարը, դիտարկենք այս բառի նախածանցը եւ արմատը: «Նախ» նախածանցը պարզապէս կ'ենթադրէ այնպիսի բան, որ եղած է ինչ որ բան սկսելէն առաջ: «Սահմանել» բառը կը վերաբերի ամառը որոշելուն: Այս երկուքը միասին կը նշանակէ «որոշել ամառը մինչեւ սկիզբը»: Այսպիսով, Եփեսացիներու 1.11-ը ցոյց կու տայ, որ Աստուած սահմանած է մարդկութեան նպատակը նախքան մեզ ստեղծելը:

Հռովմայեցիս 8.28,29-ին մէջ գրուած է.

«Բայց գիտենք, որ զԱստուած սիրողներուն բոլոր բաները գործակից կ'ըլլան դէպի բարին՝ անոնց, որ նախասահմանելով կանչուած են: Որովհետեւ անոնց, որ առաջուրնէ ճանչցաւ, առաջուրնէ ալ սահմանեց Իր Որդիի պատկերին կերպարանակից ըլլալու, որ Ան անդրանիկ ըլլայ շատ եղբայրներու մէջ»:

Աստուծոյ նպատակը, որ Ան որոշած է մեզի համար ժամանակներու սկիզբէն, այն է, որ մենք՝ զԱստուած սիրողներս, կերպարանակից ըլլանք Յիսուս Քրիստոսի պատկերին: Որեւէ բան, որ տեղի կ'ունենայ մեր կեանքին մէջ եւ ծառայութեան մէջ, պէտք է ունենայ այս նպատակը կամ դիտաւորութիւնը: Աստուծոյ գլխաւոր մտադրութիւնը ձեզ ստեղծելու համար այն չէ, որ դուք միանաք որեւէ յաջողակ ծառայողական խումբի, միլիոնաւոր տոլարներ նուիրաբերէք Աստուծոյ Թագաւորութեան, յայտնի դերասան դառնաք կամ յաջողակ աշխատանքային գործունէութիւն եւ ապագայ կառուցէք: Նոյնպէս, Անոր գլխաւոր մտադրութիւնը հիւանդները բժշկելը, մարդասիրական

առաքելութիւններ իրականացնելը, սեռական նպատակով ապօրինի առեւտուրի (թրաֆիքինկի) զոհերուն փրկելը, մարդոց կախուածութիւններէն ազատելը եւ կորսուածները Քրիստոսին համար շահիլը չէ: Որքան ալ պատուաւոր եւ Աստուածահաճոյ ըլլան բոլոր այս ձգտումները, մենք պէտք է գիտակցինք, որ եղած են շատերը, որոնք ըրած են այս ամէնը, սակայն չեն հատած վերջնագիծը: Անոնք բարեյաջող չեն աւարտած իրենց ընթացքը, քանի որ անոնց ուշադրութիւնը ուղղուած եղած է ծառայութեան, ոչ թէ Աստուծոյ սրտին կամ ծառայութեան իրական նպատակին:

Այժմ անհրաժեշտ է պատասխանել հետեւեալ հարցին. «Ինչո՞ւ Աստուած նախասահմանած է մեզ՝ կերպարանուելու Յիսուս Քրիստոսի պատկերին: Ո՞րն է Անոր նպատակը»: Պատասխանը պարզ է. քանի որ Ան սիրեց մեզ եւ փափաքեցաւ հաղորդակցիլ մեզի հետ, որպէսզի «նոր եկող դարերուն յաւիտեան ցոյց տայ Իր շնորհքի գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսին՝ մեր վրայ ցոյց տուած քաղցրութեամբ» (Եփեսացիս 2.7):

Լիզան եւ ես Լեքսի անունով շուն մը ունինք: Այն հաճելի, աշխոյժ եւ զուարճալի է, սակայն մեր հաղորդակցութիւնը անոր հետ սահմանափակ է: Երբեմն ինծի համար տհաճ է, որ ես չեմ կրնար գրուցել անոր հետ: Սակայն մեր յարաբերութիւնները մեր որդիներուն հետ լիովին ուրիշ են: Որքան աւելի անոնք կը մեծնան, այնքան աւելի զարմանալի կը դառնար մեր հաղորդակցութիւնը անոնց հետ: Անոնք այնքա՛ն մեծ ներդրում ունեցան մեր կեանքին մէջ: Ահա թէ ինչու Աստուած ստեղծեց մեզ: Ան չի ցանկար ցածորակ հաղորդակցութիւն, որ ես կը հանդուրժեմ Լեքսիի հետ: Ան կը ցանկայ ունենալ որդիներ եւ դուստրեր, որպէսզի սիրտէ սիրտ հաղորդակցի անոնց հետ:

Ասիկա էր Աստուծոյ նպատակը ճիշդ ամենասկիզբէն: Երբ Տէրը ստեղծեց մարդը եւ դրաւ Եդեմի պարտէզին մէջ, Ան կը զբօսնէր ու կը հաղորդակցէր Ադամին հետ, քանի որ կը սիրէր զինք: Ադամի ծառանգներէն մէկը հասկցաւ Աստուծոյ մտադրութիւնը: Անոր մասին գրուած է. «Ենովքը Աստուծոյ հետ վարուեցաւ եւ չէր գտնուեր, որովհետեւ Աստուած առաւ զինք» (Ծննդոց 5.24): Եբրայեցիս թուղթի հեղինակը կը գրէ, որ Ենովքը «...վկայուեցաւ, որ հաճելի էր Աստուծոյ» (Եբրայեցիս

11.5): Ինչո՞ւ Ենովքը հաճելի էր Աստուծոյ: Արդեօ՞ք պատճառը անոր ծառայութիւնն էր: Ո՛չ, այլ՝ որ ան մտերմօրէն կը հաղորդակցէր Անոր հետ:

Այն ամէնը, ինչ որ Աստուած ըրած է անցեալին, կ'ընէ հիմա եւ պիտի ընէ ապագային, այս նպատակով է: Այնպէս որ, անապատի նպատակն է՝ ուղղորդել մեզ, որ կերպարանակից ըլլանք Յիսուս Քրիստոսի պատկերին:

Եթէ մենք կորսնցնենք Աստուծոյ նպատակը մեզի համար, մենք անգուսպ կը դառնանք եւ հոգեւորապէս կը հետադիմենք: Եթէ մենք կորսնցնենք Աստուծոյ նպատակը՝ որպէս եկեղեցի, մենք կը չորնանք եւ կը սեղմուինք՝ վերածուելով այս աշխարհի սկզբունքներով առաջնորդուող հաստատութեան: Մենք կը շեշտադրենք արդիւնքները՝ աւելի մեծ թիւերն ու շինութիւնները, ոչ թէ Քրիստոսի պատկերով կերպարանուած աշակերտներ պատրաստելը (տե՛ս Մատթ. 28.19):

Կրկին կարդանք Առակաց 29.18-ը. «Ուր չկայ յայտնութիւն, ժողովուրդը անգուսպ կը դառնայ» (NKJV):

Աստուած կը խօսի այն մասին, որ երբ մենք յայտնութիւն ունենանք, այն թոյլ չի տար մեզի բաւարարուիլ ցածրակարգ կոչումով, որ չ'ենթադրեր Անոր պատկերին եւ նմանութեան կերպարանակից ըլլալը: Այն թոյլ չի տար մեզի գոհունակութիւն զգալ, քանի տակաւին մենք չենք կերպարանուած Անոր պատկերով եւ չենք նայիր Անոր երես առ երես՝ տեսնելով Անոր յայտնուած փառքը: Այն թոյլ չի տար մեզի ընդունիլ որեւէ բան՝ Անոր կատարեալ կամքէն բացի: Այն թոյլ չի տար մեզի անհոգ ըլլալ եւ վարուիլ այս աշխարհի պէս եւ մարմնական բնութեան ճանապարհներով:

Խօսելով տեսիլքի մասին՝ Յիսուսը ըսաւ. «Մարմինի ճրագը աչքն է. արդ, եթէ որ քու աչքը պարզ ըլլայ, քու ամբողջ մարմինը լուսաւոր կ'ըլլայ: Բայց, եթէ որ քու աչքը չար ըլլայ, քու ամբողջ մարմինը խաւար կ'ըլլայ» (Մատթ. 6.22,23): Ան չէր խօսեր մեր նիւթական աչքի մասին, այլ՝ մեր սրտի աչքի կամ մեր ընկալման մասին:

Դուք կը դառնաք այնպիսին, ինչպիսին որ կ'ընկալէք իրականութիւնը ձեր սրտին մէջ. «Քանի որ ան այնպիսին է, ինչպէս որ կը մտածէ իր սրտին մէջ» (Առակաց 23.7, NKJV):

Այն, թե ինչպես կը դիտարկէք ձեր հանգամանքները, պիտի որոշէ, թե ինչպես պիտի անցնիք ատոնցմով: Տասներկու լրտեսները, որոնք հետախուզեցին Խոստման երկիրը, տեսան նոյն բաները՝ նոյն պարսպապատ քաղաքները, նոյն հսկաները եւ Քանան բնակող ազգերու նոյն բանակները: Այնուամենայնիւ, անոնցմէ երկուքը՝ Յեսուն եւ Քաղէբը, տեսան այդ ամէնը լիովին այլ կերպով: Այդ երկուքը ընկալեցին իրավիճակը այնպէս, ինչպէս որ Աստուած կը տեսնէր այն, իսկ միւս տասն ընկալեցին Խոստման երկիրը ըստ իրենց փորձառութեան կամ կարողութիւններուն: Քանի որ անոնց աչքերը չար էին, անոնց վարքը (կամ, Յիսուսի խօսքերով՝ «ամբողջ մարմինը») նոյնպէս վատ մէկն էր: Անոնք խօսեցան եւ վարուեցան հակառակ Աստուծոյ կամքին, եւ Ան ըսաւ, որ անոնց բերած լուրը «չար» էր կամ «վատ» էր:

«Ըսէ՛ անոնց. «Ես կենդանի եմ,- կ'ըսէ Տէրը,- որ ինչպէս դուք Իմ ականջներուն առջեւ խօսեցաք, այնպէս ալ պիտի ընեմ ձեզի: Այս անապատի մէջ պիտի իյնան ձեր դիակները, եւ ձեր ամբողջ հաշուին համենատ ձեզմէ բոլոր համարուածները՝ քսան տարեկանէն վեր եղողները, որ դուք Ինծի դէմ տրտնջացիք, բնաւ պիտի չմտնէք այն երկիրը, որուն համար երդում ըրի ձեզի անոր մէջ բնակեցնելու՝ բացի Յեփոնէի որդի Քաղէբէն ու Նաւէի որդի Յեսունէն»» (Թուրց 14.28-30):

Ի՞նչ դրդեց տասը լրտեսներուն չար լուր բերել, որուն պատճառով անոնք այդպէս ալ չստացան Աստուծոյ խոստումը: Անոնց ընկալումը իրենց տեսածի վերաբերեալ: Անոնք ունէին ոչ թէ մարգարէական, այլ բնական տեսողութիւն, եւ անոնց բերած լուրը հիմնուած էր իրենց տեսողութեան վրայ:

Անապատը յաղթական կերպով անցնելու համար մենք պէտք է ամէն ինչ տեսնենք այնպէս, ինչպէս Աստուած կը տեսնէ: Երբ Աստուած Խոստման երկիր ուղարկեց լրտեսները, Իսրայէլի գաւակները արդէն մէկ տարիէն աւելի կը տրտնջային: Անոնց ընկալումը արդէն իսկ բացասական էր. անոնք չունէին յայտնութիւն եւ անգուսպ դարձած էին: Այնպէս որ, երբ Աստուած թոյլ տուաւ անոնց տեսնել կաթ ու մեղր բխող երկիրը, անոնք անտեսեցին բոլոր բարի բաները, որոնք կային հոն: Փո-

խարէնը՝ անոնք կեդրոնացան այդ երկրի հսկաներուն վրայ:

Այն մարդիկ, որոնք կը տեսնեն միայն անապատը (եւ ատոր հետ կապուած դժուարութիւնները), կը մահանան իրենց անապատին մէջ: Այն մարդիկ, որոնք կը յառեն իրենց հայեացքը խոստացողին եւ այն տեսիլքին, որ Ան տուած է իրենց, կ'անցնին անապատը՝ դառնալով սրբացած զինուորներ, որոնք պատրաստ են գրաւել իրենց առջեւ գտնուող խոստման երկիրը եւ ապրիլ ատոր մէջ՝ Աստուծոյ փառքին համար:

«Անոր համար չենք թուլնար (վիատիր կամ անգուսպ դառնար)... Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենագերագանց յաւիտենական փառքի մեծութիւն կը գործէ մեզի համար, որ այս երեւցող բաներուն մտիկ չենք ըներ, այլ՝ աներեւոյթներուն (ընկալելով ամէն ինչ Աստուծոյ նման), որովհետեւ երեւացողները ժամանակաւոր են, իսկ չերեւացողները՝ յաւիտենական» (Բ. Կորնթացիս 4.16-18):

Անապատին մէջ անցուցած ժամանակը եւ կրած չարչարանքները թեթեւ ու ակնթարթային դժուարութիւն կը համարուին այն բանին համեմատ, ինչ մենք պիտի շահինք: Անշուշտ, երբ դուք անապատի մէջ էք, դժուար է թեթեւօրէն վերաբերիլ այդ իրավիճակին, եթէ դուք չունիք տեսիլք այն մասին, թէ ինչ կը սպասուի ձեզի անապատէն դուրս ելլէն յետոյ:

Երբ ես կ'անցնէի անապատով, այն ոչ մէկ պարագային «ակնթարթ մը» կը թուար: Երբեմն կը մտածէի. «*Ասիկա երբեք կ'աւարտի՞*: Այն, ինչ որ Աստուած խոստացած է, կը կատարուի՞»: Այդպիսի պահերուն ես պէտք է արագօրէն վանէի ինձմէ նման մտքերը եւ խրախուսէի զիս Տիրոջ մէջ: Ես կը յիշէի այն մարգարէութիւնները, որոնք ստացած էի, եւ կը պատերազմէի ատոնցմով (տե՛ս Ա. Տիմոթ. 1.18): Այդ մարգարէութիւնները Աստուծոյ տեսիլքն էին իմ կեանքի համար, եւ Ան կը յայտնէր ինձի այդ տեսիլքը Իր Հոգիով՝ Իր Խօսքին միջոցով:

Անապատին մէջ պատերազմի դաշտը մեր անձն է: Անձը բաղկացած է մտքէն, զգացումներէն եւ կամքէն: *Կամքը* ձեր անձի այն մասն է, որ կ'որոշէ՝ դուք պիտի ընտրէք Աստուծոյ՞ ճանապարհը, թէ՞ ձեր մարմինի, դուք ամէն ինչին պիտի նայիք Աստուծոյ՞ ուզած կերպով, թէ՞

պիտի նայիք ձեր նեղութեան անապատին մէջ: Պետրոս կը գրէ. «Սիրելի՛ ընկերներ, ես կը զգուշացնեմ ձեզ՝ որպէս «ժամանակաւոր բնակիչներ եւ օտարականներ», հեռու մնալ աշխարհիկ ցանկութիւններէն, որոնք կը պատերազմին ձեր անձերուն դէմ» (Ա. Պետրոս 2.11, NLT):

Որոշիչ գործօնը այն է, թէ ինչին ուղղուած է ձեր ուշադրութիւնը՝ Տիրոջը, թէ՞ ձեր անձին: Այն մարմնական ցանկութիւնները, որոնք կը պայքարին ձեր մտքին մէջ եւ զգացումներուն, պիտի ձգտին ձեր անձնական շահերուն եւ պիտի հեռացնեն ձեզ Աստուածային տեսիլքէն, քանի որ Աստուծոյ ճանապարհը ոչ թէ սեփական անձին հետեւիլն է, այլ՝ սեփական անձը *ուրանալը*:

Այն «աւետարանը», որ քարոզուած եւ ընդունուած է շատերուն կողմէն մեր օրերուն, կը դրդէ անհոգ մարմնական կեանքի: Այսօրուան տարածուած ուղերձներէն շատերը չեն խրախուսեր մեզ խաչել մեր մարմինը: Ատոնք կը խրախուսեն փայփայել մեր մարմինը ու կատարել ատոր ցանկութիւնները, թէեւ իրականութեան մէջ այդ ցանկութիւնները հակառակ են մեր վերջնական նպատակին, որ Յիսուս Քրիստոսի պատկերին կերպարանակից ըլլալն է: Յաճախ այդ ուղերձներու հիմնական նիւթն է. «Աստուած ի՞նչ կրնայ ընել ինձի համար», ոչ թէ. «Ի՞նչ կը ցանկայ Ան ինձմէ»: Հեշտասիրութիւն քարոզող «աւետարանը» չի շեշտադրուիր, որ հետեւելով Քրիստոսին՝ մենք պիտի բախինք իրական չարչարանքներու: Այն դրդած է շատերուն ինքնաբաւ կեանք վարել: Նման աւետարանը չի սպառազիններ հաւատացեալները՝ Աստուծոյ զինուորներ ըլլալու համար:

Պօղոս առաքեալը կը խօսի այս մասին՝ գրելով իր աշակերտ Տիմոթէոսին.

«Իսկ դուն նեղութիւնները կրէ՛ ինչպէս Քրիստոս Յիսուսին բարի զինուոր: Ոչ մէկ զինուորութիւն ընող այս աշխարհի գործերով կը զբաղի, որպէսզի զօրապետին հաճոյ ըլլայ» (Բ. Տիմոթէոս 2.3,4):

Հեշտասիրութիւն քարոզող «աւետարանի» պատճառով, երբ կը հանդիպինք հակառակութեան կամ նեղութեան, երես առ երես բախելու այդ դժուարութեան եւ այն յաղթահարելու փոխարէն մենք

փախուստի ճանապարհ կը փնտռենք: Հեշտասիրութիւն քարոզող «աւետարանը» կը ծնի ոչ թէ երկնային կամ մարգարէական տեսիլք, այլ՝ եսակեդրոն տեսիլք:

Պօղոս նոյնպէս կը գրէ.

«Ուստի, ո՛վ Ազրիպպաս արքայ, ես անհնազանդ չեղայ այն երկնային տեսիլքին: Այլ՝ առաջ անոնց, որ Դամասկոս ու Երուսաղէմ եղողներուն, եւ ամբողջ Հրէաստանի երկիրը, եւ հեթանոսներուն պատմեցի ապաշխարել եւ դառնալ Աստուծոյն՝ ապաշխարութեան արժանի գործեր գործելով: Ասոր համար հրեաները, զիս տաճարին մէջ բռնելով, կ'ուզէին սպաննել» (Գործք 26.19-21):

Այս աշխարհին մէջ կան շատ տեսիլքներ, բայց կայ միայն մէկ «երկնային տեսիլք», որ Հօր կամքն է: Ուշադրութիւն դարձուցէք, թէ Պօղոս ինչ կ'ըսէ. «Քանիներ հրեաներէն ձերբակալեցին զիս՝ այս բաները քարոզելու համար, եւ փորձեցին սպաննել»: Ան կը ձգտէր երկնային տեսիլքին եւ կը բախէր մեծ հակառակութեան: Եթէ ան հաւատարմ հեշտասիրութիւն քարոզող «աւետարանին», ինչպէս որ շատերը կը քարոզեն եւ կը հաւատան այսօր, այդպէս ալ չէր իրականացներ այդ տեսիլքը: Ան նոյնիսկ չէր հասներ Ազրիպպաս թագաւորին քով, քանի որ ատորմէ շատ աւելի վաղ ան պիտի ձգտէր լիովին խուսափիլ հակառակութենէն, որուն կը բախէր:

Երեմիան եւս մարդ մըն էր Աստուածաշունչին մէջ, որ կը ձգտէր երկնային տեսիլքին, եւ իր հնազանդութեան վերջաւորութեան մեծ բանաւոր ու մտաւոր հալածանք կը կրէր: Օր մը ան յոգնեցաւ ատորմէ եւ սկսաւ քիչ մը տրտնջալ. «Ինչո՞ւ համար յաջող է ամբարիշտներու ճանապարհը, հանգիստ են բոլոր նենգութիւն գործողները» (Երեմիա 12.1):

Աստուած կարեկցանքով չպատասխանեց անոր: Ան ըսաւ. «Եթէ դուն հետեւակներու հետ վազեցիր, եւ անոնք քեզ յոգնեցուցին, ապա ինչպէ՞ս պիտի մրցէիր ձիերուն հետ» (Երեմիա 12.5): Ուրիշ ձեւով ըսելու համար՝ «Երեմիա՛, եթէ դուն կը յոգնիս սատանայի հետեւակէն, ի՞նչ պիտի ընես, երբ բախիս անոր հեծելազօրին»:

Ինչպես անցնիլ անապատը

#12 Խնամքով նշումներ ըրե՛ք

Ես կը գրեմ այս գիրքը յիսունինը տարեկանին. ժամանակը այնքա՛ն արագ կ'անցնի: Ետ նայելով՝ կը հասկնամ, որ ես կտրուկ աճ ունեցած եմ անապատներուն մէջ ըլլալու ժամանակ, թէեւ այդ պահերուն ինձի կը թուար, թէ յետընթաց կ'ապրէի՝ առաջընթացի փոխարէն: Ահա թէ ինչու մեր հին ընկեր Յոբը կը գրէ. «Ես առջեւ կ'երթամ... Ան հոն չէ... Բայց Ան գիտէ իմ ճանապարհը. երբ Ան աւարտէ զիս փորձելը, ես դուրս պիտի գամ ոսկիի պէս» (Յոբ 23.8,10, NKJV):

Կրնամ համոզուածութեամբ ըսել, որ իմ գիրքերու նիւթերու 90 տոկոսը (իսկ ես արդէն քսան գիրք գրած եմ) ես սորված եմ ոչ թէ առատութեան ժամանակ, այլ՝ չորութեան, որ անցուցած եմ անապատին մէջ: Այնպէս որ, իմ խորհուրդը ձեզի. խնամքով նշումներ ըրէք, երբ անապատին մէջ էք: Այն, ինչ որ դուք սորվիք այդ փուլերուն մէջ, մեծ զօրութիւն պիտի տայ մարդոց (ինչպէս եւ ձեզի՝ ապագային): Եւ ով գիտէ... թերեւս օր մը դուք գիրք գրէք ձեր փորձառութիւններուն մասին:

Իմ ընկե՛ր, կը ցանկամ մարգարէանալ ձեր կեանքին մէջ ճիշդ հիմա: Լրջօրէն ուշադրութիւն դարձուցէք այն բանին, ինչ որ պիտի ըսեմ: Աստուծոյ կողմէն որոշուած ժամանակին Ան նշանակալի բան պիտի կատարէ ձեր կեանքին մէջ, ինչ որ ազդեցութիւն պիտի ձգէ շատերուն վրայ: Այսինքն, եթէ դուք թոյլ տաք Անոր իրագործել այն նպատակը, որուն համար կը գտնուիք անապատին մէջ: Շատերը պիտի կրեն ատոր ազդեցութիւնը, եւ դուք կը ցնծաք ամբողջ յաւիտենութեան ընթացքին՝ տեսնելով ձեր հնազանդութեան պտուղը: Իմ ընկե՛ր, դուք դուրս պիտի գաք ոսկիի պէս՝ փորձուած, զօրաւոր եւ հաւատարիմ:

Պատերազմը բաղկացած է մարտերի

Մենք պետք է յիշենք, որ չկան մեծ յաղթանակներ՝ առանց մեծ մարտերու: Երեմիայի իրավիճակը շարունակ կը վատթարանար: Բանաւոր վիրաւորանքներուն աւելցաւ բանտարկութիւնը, իսկ որոշ ժամանակ յետոյ զինք իջեցուցին փոսը՝ ձգելով, որ մահանար հոն: Այնուամենայնիւ, Աստուած ազատեց զինք իր բոլոր նեղութիւններէն եւ հալածանքներէն:

Այսօր Քրիստոսի մարմինի մեծ մասը կ'առնչուի մտաւոր յարծակումներու հետ, ոչ թէ ֆիզիքական հալածանքներու, որոնց կը բախէր Պօղոսը: Ինչպէ՞ս մենք կը վարուինք, եթէ հակառակութեան ձեւը փոխուի: Մեր այսօրուան նեղութիւնները պէտք է զօրացնեն մեզ, որպէսզի ապագային դիմանանք աւելի մեծ մարտերու:

Անապատը զինուորական ճամբար է՝ ապագայ մարտերու համար: Ինչպէս որ զինուորական ճամբար կ'ուղարկենք նորակոչիկ զինուորները՝ պատերազմի պատրաստուելու համար, այնպէս ալ Աստուած անապատ կ'ուղարկէ Իր հաւաքագրած զինուորները, որպէսզի պատրաստ զանոնք՝ կատարելու իրենց կոչումը Իր Թագաւորութեան կառուցման մէջ: Մեծագոյն խոչընդոտները, որոնք զինուորները պէտք է յաղթահարեն այդ ճամբարին մէջ, իրենց վախերը, տկարութիւններն ու վիատութիւններն են: Նմանապէս, մեծագոյն մարտերը, որոնց մենք կը բախինք անապատին մէջ, տեղի կ'ունենան մեր ներսը:

Մեծագոյն խոչընդոտներէն մէկը, որոնց մենք կը բախինք, վիատութիւնն է: Մէկ անգամ, երբ կ'աղօթէի, Տէրը հարցուց ինձի, թէ ո՞րն է համարձակութեան հականիշը:

«Անշո՛ւշտ, վախը», - պատասխանեցի ես:

«Վիատութիւնը», - շշնջաց Ան:

Ես երբեք չէի մտածած այս բառին վերաբերեալ այդ լոյսին ներքոյ: Եւ անմիջապէս հասկցայ, որ Աստուծոյ Խօսքին մէջ Յետուին ութ անգամ ըսուած «զօրացի՛ր եւ քա՛ջ եղիր» խօսքերը նաեւ յորդոր էին չվիատելու համար (տե՛ս Թուոց 13.20, Բ. Օրինաց 31.6,7,23, Յետու 1.6,7,9,18): Տէրը գիտէր, որ ատիկա պիտի ըլլար անոր լրջագոյն մարտահրաւերներէն մէկը: Վիատութիւնը կու գայ անապատներուն մէջ եւ

մարտերու ժամանակ, երբ մենք կը կեդրոնանանք մեր վրայ, ոչ թե՛ Աստուծոյ եւ մեր առաքելութեան:

Թշնամիի նպատակն է՝ ուղղել ձեր ուշադրութիւնը ձեր վրայ. ան փորձեց այս մարտավարութիւնը Յիսուսին դէմ անապատին մէջ: Յիսուսը անօթի էր, քանի որ քառասուն օր ոչինչ կերած էր, եւ սատանան ըսաւ անոր. «Եթէ Աստուծոյ Որդի ես, ըսէ՛, որ այս քարերը հաց ըլլան...» (Մատթէոս 4.1-11): Գայթակղութիւնը հետեւեալն էր. օգտագործել Աստուծոյ զօրութիւնը Աստուծոյ մատակարարման ծրագրէն անջատ՝ մարմինի ցանկութիւնները կատարելու համար: Մենք պէտք է յիշենք, որ երբ Աստուած որեւէ պարգեւ կու տայ, մարդը նաեւ կը ստանայ լուրջ պատասխանատուութիւն. ան պէտք չէ սխալ գործածէ այն, այլ՝ տնտեսէ այնպէս, ինչպէս Աստուած կը կամենայ: Աստուած անպայման պիտի հոգար Յիսուսին կարիքները, բայց այնպէս, ինչպէս Ինքը նախատեսած էր: Երբ սատանան գնաց, հրեշտակները եկան եւ ծառայեցին Յիսուսին:

Կրկին տեսնենք, թէ Յիսուսը ինչ կ'ըսէ Իր ծառայութեան վերաբերեալ.

«Յիսուսը պատասխանեց եւ ըսաւ անոնց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի, թէ Որդին Ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, եթէ որ չտեսնէ այն, ինչ որ Հայրը կ'ընէ. որովհետեւ ինչ որ Ան կ'ընէ, Որդին ալ նոյն բանը Անոր պէս կ'ընէ»»
(Յովհաննէս 5.19):

Ուշադրութիւն դարձուցէք «տեսնել» բառին: Յիսուսը բան մըն ալ չի կրնար ընել՝ առանց Աստուծոյ կամքին:

Չորրութեան ժամանակներուն մեր գայթակղութիւններէն մէկը մեր ուզած ձեւով վարուիլն է, ոչ թէ Աստուծոյ կամքին սպասելը: Օրինակ, ատիկա կրնայ նշանակել օգտագործել Աստուծոյ զօրութիւնը՝ որոշուած ժամանակէն շուտ Աստուծմէ ինչ որ բան ստանալու համար: Կրնա՞ք պատկերացնել, որ մարտի դաշտին մէջ ռեւէ զինուոր չկռուի համաձայն իր սպայի հրամաններուն: Ատիկա կրնայ ծանր հետեւանքներ ունենալ թէ՛ զինուորի, թէ՛ անոր զինակիցներուն համար: Զինուորական ճամբարին մէջ եւ իր ամբողջ մարզման ընթացքին զինուորը

կը սորվի հնագանդիլ հրամաններուն, որպէսզի անմտօրէն վնաս չհասցնէ իրեն եւ իւրայիններուն մարտի ժամանակ:

Կարելոր է, որ չմոռնանք այն, ինչ որ Երկինքը յայտնած է մեզի: Պիտի ըլլան պահեր, երբ մենք կը մտածենք. «Ես պէտք է պատասխան ստանամ ճի՛շդ հիմա», կամ «Ես պէտք է քայլ առնեմ ճի՛շդ հիմա. եթէ ես ոչինչ ընեմ, ամէն ինչ կը կործանի»: Եթէ կը թուայ, թէ Աստուած ոչինչ կ'ըսէ ձեզի, չի նշանակեր, որ Ան չի խօսիր ձեզի հետ: Ես նկատի ունիմ, որ Աստուած լրջօրէն ներգրաւուած է մեր կեանքին մէջ՝ բազմաթիւ ձեւերով: Այդ պարագային, այն ուղերձը, որ Ան կը «փոխանցէ» ձեզի, հետեւեալն է. «Կարիք չկայ, որ որեւէ բան ընես հիմա»: Նման իրավիճակներուն մէջ մենք պէտք է սպասենք Տիրոջը եւ չփորձենք անձնապէս փոփոխութիւն յառաջացնել.

«Սպասէ՛ Տիրոջը, թող սիրտդ պինդ եւ գօրաւոր ըլլայ, եւ սպասէ՛ Տիրոջը» (Սաղմոս 27.14):

Եթէ մենք կեդրոնանանք մեր կարիքներուն վրայ, ոչ թէ՛ Անոր վրայ, վիատութիւնը եւ ծանրութիւնը կը հաստատուին մեր սրտին մէջ: Մենք չենք կրնար թոյլ տալ մեզի շեղիլ՝ կեդրոնանալով մեր «թեթեւ նեղութեան» վրայ: Փոխարէնը, մենք պէտք է ուղղենք մեր հայեացքը այն յաւիտենական փառքի մեծութեան, որ կը գործուի մեզի համար այդ նեղութեան մէջ (տե՛ս Բ. Կորնթ. 4.17):

Ասիկա է մեր առջեւ դրուած ուրախութիւնը, եւ ասիկա պէտք է դառնայ մեր տեսիլքը:

Մեր առջեւ դրուած ուրախութիւնը

«Բոլորովին ուրախութիւն յամարեցէ՛ք, եղբայրնէ՛րս, երբ կերպ-կերպ փորձանքներու մէջ ինչաք՝ զհտնալով, որ ձեր հաւատքի փորձառութիւնը համբերութիւն կը գործէ: Իսկ համբերութիւնը թող կատարեալ գործ ունենայ, որ կատարեալ եւ ամբողջ ըլլաք եւ ոչ մէկ բանի պակասութիւն ունենաք» (Յակոբոս 1.2-4):

Ուրախութիւնը հոգեւոր ուժ է, որ թոյլ կու տայ մեզի դիմանալ դժուարութիւններուն եւ փորձութիւններուն: Ուշադրութիւն դարձուցէք, որ գրուած է. «Բոլորովին ուրախութիւն համարեցէ՛ք», ոչ թէ «Համարեցէ՛ք ասիկա մասամբ՝ ուրախութիւն, իսկ մասամբ՝ տրտմութիւն»: Մեր սրտին մէջ պէտք չէ ուրախութեան եւ տրտմութեան խառնուրդ ըլլայ: Մտածեցէ՛ք այս մասին հետեւեալ կերպով: Պատկերացուցէք, որ շղթայ մը ունիք, որուն իննսունինը օղակները բաղկացած են ուրախութենէն, եւ միայն մէկը՝ տրտմութենէն: Այդ շղթային ամրութիւնը կ'որոշուի այդ մէկ օղակով: Շղթան պէտք է բաղկացած ըլլայ ուրախութեան հարիւր օղակէ եւ տրտմութեան ոչ մէկ օղակէ, որպէսզի դուք ունենաք այն զօրութիւնը, որ անհրաժեշտ է ձեր իրավիճակին մէջ:

Մենք գիտենք, որ դիւրին է «բոլորովին ուրախութիւն համարել» այն իրավիճակները, որոնց մէջ ամէն ինչ հրաշալի է: Բայց այս հատուածին մէջ նման բան գրուած չէ: Մենք պէտք է «բոլորովին ուրախութիւն համարենք» փորձութիւններու ժամանակը՝ անապատը, հալածանքը, նեղութիւնը, դժուարութիւնները եւ որեւէ տեսակի հակառակութիւն: Աստուած կ'ըսէ ասիկա, քանի որ Ան գիտէ, որ «Տիրոջ ուրախութիւնը ձեր զօրութիւնն է» (Նէեմիա 8.10): Անոր հետ մտերիմ յարաբերութիւններ ունենալու ուրախութիւնն է, որ կը զօրացնէ մեզ:

Իմ կինը եւ իմ ընտանիքը՝ որդիներս, հարսերս եւ թոռներս, ուրախութիւն կը պատճառեն ինձի: Երբ հեռու կ'ըլլամ տունէն, ես կը նայիմ անոնց լուսանկարներուն, եւ ատիկա ամէն անգամ ուրախութիւն կը պատճառէ իմ սրտին: Ատիկա նոյնպէս ուժ կու տայ ինձի:

Նէեմիան կը խօսէր ճիշդ այս մասին: Ժողովուրդը կ'անցնէր դժուարին փուլով, եւ Նէեմիան բացականչեց. «Մի՛ տրտմիք ձեր դժուարութեան պատճառով. ուղղեցէ՛ք ձեր հայեացքը Տիրոջը: Քանի որ երբ մօտենաք Անոր, ուրախութիւնը կը լեցնէ ձեր սիրտը, եւ դուք կը զօրանաք» (իմ շրջասութիւնը):

Փառաբանութիւնը մշտապէս կ'ուղղէ ձեր ուշադրութիւնը Տիրոջ վրայ: Նեղութիւններու մէջ դիւրին է մոռնալ Աստուծոյ կարողութեան մասին՝ այն ճնշումին պատճառով, որ մենք կը զգանք: Դաւիթը գրեց իր սաղմոսներու մեծ մասը, երբ նեղութիւններու մէջ էր: Փառք տալով

Աստուծոյ՝ ան կրցաւ զօրաւոր մնալ խիստ անբարենպաստ հանգամանքներու մէջ:

Եսայիա 61.3-ին մէջ Աստուած կ'ըսէ, որ Ան կու տայ մեզի «փառք... մոխիրի տեղ, ուրախութեան իւր՝ սուգի տեղ, զոհութեան պատմուճան՝ մարած սրտի տեղ»:

Կը յիշեմ դէպք մը, երբ խիստ չորութիւն կը զգայի, եւ ես նոր ծելուով հասկցայ այս խօսքը: Ես մինակ էի տունը, եւ իմ վրայ ծանրութիւն եկաւ: Վերցուցի Աստուածաշունչս, բայց շատ դժուարութեամբ կը կարդայի: Ես սկսայ աղօթել, եւ ամէն ինչ աւելի վատացաւ: Իմ ներսը լսեցի Աստուծոյ Հոգիին. «Միացո՛ւր քու փառաբանութեան լսասկաւառակներէն մէկը»: Ես գացի այն սենեակը, ուր տեղադրուած էր մեր ձայնային նուագարկիչը, միացուցի փառաբանութեան երաժշտութիւնը եւ սկսայ երգել: Պէտք էր աւելին, եւ ես *փորձեցի* պարել Տիրոջ առջեւ: Ես այնպիսի՛ ծանրութիւն կը զգայի իմ սրտին մէջ, որ կարծես պարէի հեղուկ արձիճի մէջ: Ես իրական պայքարի մէջ էի:

Երբ երգերը աւարտեցան, ես մղում զգացի, որ կրկին նուագարկէի այդ լսասկաւառակը: Երկրորդ անգամ ես ուշադրութիւն դարձուցի իմ երգած բառերուն: Յանկարծ ակնթարթ մը իմ սրտին մէջ տեսայ Յիսուսը՝ գահին վրայ, եւ Անոր մեծ սէրը: Իմ սիրտը լեցուեցաւ ուրախութեամբ, եւ ես սկսայ պարել՝ լիովին անկաշկանդ: Ես նկատեցի, որ իմ հայեացքը հեռացաւ ինձմէ եւ ուղղուեցաւ Յիսուսի մեծութեան: Յաջորդ երեսուն վայրկեաններու ընթացքին ես կ'երգէի, կը պարէի եւ վայրենիի պէս կը վազէի մեր փոքրիկ տունով մէկ: Ծանրութիւնը հեռացաւ, եւ ես լեցուեցայ կեանքով ու զօրութեամբ, որոնք չկային ընդամէնը երեսուն վայրկեան առաջ:

Փառաբանութեան ընթացքին իմ ուշադրութիւնը կրկին ուղղուեցաւ Անոր: Ես վերապրեցայ այն, ինչին մասին որ կը գրէ Եսայիան. «Դուք ուրախութեամբ ջուր կը քաշէք փրկութեան աղբիւրներէն» (Եսայիա 12.3): Տիրոջ ուրախութեան միջոցով ես սկսայ զօրութիւն քաշել փրկութեան ջրհորներէն:

Փառաբանութիւնը կ'օգնէ մեզի պահել մեր հայեացքը մեր առջեւ դրուած ուրախութեան վրայ, ոչ թէ՛ մեզի շրջապատող հանգամանքներու:

«Ուստի մենք ալ, որ վկաներու այսքան բազմութիւն ունինք՝ մեզ շրջապատած, մէկ կողմ նետենք ամէն ծանրութիւն եւ մեզ դիրաւ պաշարող մեղքը եւ համբերութեամբ վագենք մեր առջեւ դրուած ասպարէզի ընթացքը: Մտիկ ընենք հաւատքի Զօրագլուխին եւ Կատարողին՝ Յիսուսին, որ Իր առջեւ դրուած ուրախութեան փոխարէն խաչը յանձն առաւ, եւ ամօթը արհամարհելով՝ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ: Ուրեմն, մտածեցէ՛ք Անոր վրայ, որ Իր դէմ եղած այսպիսի հակառակութիւն քաշեց մեղաւորներէն, որ դուք ձեր անձերով չյոգնիք՝ թուլցած: Տակաւին մինչեւ արիւն թափելու չափ պատերազմելով հակառակ չէք կեցած մեղքին» (Եբրայեցիս 12.1-4):

Յիսուսը կրեց մեծագոյն նեղութիւնը, որուն նմանը ոչ ոք կրած է կամ պիտի *կրէ*՝ պահելով Իր հայեացքը Իր առջեւ դրուած ուրախութեան վրայ, որ խաչելութեան յաջորդող յարութիւնն էր: Անոր ուրախութիւնը այն փառքն էր, որ պիտի հետեւէր Իր հնազանդութենէն բխող չարչարանքներուն եւ, ի վերջոյ, պիտի բերէր բազմաթիւ որդիներ եւ դուստրեր Իր Թագաւորութեան մէջ, որոնց կարգին էք նաեւ դուք եւ ես:

Ահա թէ ինչպէս մենք կը քալենք Անոր հետքերով: Անձը ուրանալէն եւ մարմինը խաչելէն յետոյ մեզի կը սպասէ *յարութեան կեանքը*: Մարմինով չարչարուելուն կը հետեւի մեզի այնքան անհրաժեշտ հասունութիւնը, որուն շնորհիւ մենք աւելի մտերիմ կը դառնանք Յիսուսին հետ: Անապատի դժուարութիւններուն կը հետեւի աւելի մեծ փառք: Պօղոսը կը գրէ. «Որովհետեւ այնպէս կը դատեմ, որ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատուելու այն գալու փառքին հետ, որ մեր մէջ պիտի յայտնուի» (Հռովմայեցիս 8.18):

Աստուծոյ փառքը կը յայտնուի եկեղեցւոյ մէջ մինչեւ Անոր վերադարձը: Անոր փառքը այնքա՛ն մեծ կ'ըլլայ, որ այն փրկութեան կը բերէ ամբողջ քաղաքներ եւ պետութիւններ: Այս աշխարհը երբեք տեսած չէ Անոր զօրութեան նման դրսեւորում, որ կը յայտնուի Քրիստոսի այն հետեւորդներուն միջոցով, որոնք թոյլ կու տան Աստուծոյն մաքրել զիրենք: Անոր Հոգիին այս թափումը, որ կը բերէ մեծ հունձք, մարդկային աջակցութեան կարիք պիտի չունենայ: Աստուծոյ զօրութիւնը եւ փառքը կ'աջակցին աստոր:

«Սիրելիներ՛ր, օտար բան մի՛ համարէք այն բորբոքած նեղութիւնը, որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ, իբր թէ օտար բան կը պատահի ձեզի: Այլ ուրախ եղէք, իբրեւ թէ Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Անոր փառքի յայտնութեան ժամանակին ալ ցնծալով ուրախանաք» (Ա. Պետրոս 4.12,13):

Կրկին, ո՞րն է մեր առջեւ դրուած ուրախութիւնը: Անոր փառքը, որ կը յայտնուի այն մարդոց կեանքին մէջ, որոնք չարչարանք կրած են՝ Քրիստոսին հնազանդելու պատճառով: Ուշադրութիւն դարձուցէք, որ ձեր չարչարուելու չափը հաւասար է այն ուրախութեան չափին, որ դուք կը վերապրիք, եւ մտապահեցէք, որ որքան մեծ է հակառակութիւնը, այնքան մեծ է փառքը:

Կորսնցուցէ՛ք ձեր կեանքը

Իմ ընկեր՛ր, մի՛ դադրիք Աստուծոյն հետեւելէ, երբ հակառակութիւնը կու գայ: Ես գիտեմ, որ Ան կ'առաջնորդէ ձեզ դէպի դժուարին իրավիճակներ, քանի որ որքան մեծ է պայքարը, այնքան մեծ կ'ըլլայ յաղթանակը ե՛ւ Աստուծոյ Թագաւորութեան համար, ե՛ւ ձեզի համար: Բայց այդ պայքարներու ընթացքին մշտապէս յիշեցէ՛ք այս հաւաստիացումը.

«Ձեզի ուրիշ փորձութիւն չէ պատահած՝ բացի մարդկային փորձութենէն, բայց Աստուած հաւատարիմ է, որ չի ձգեր ձեզ ձեր կարողութենէն վեր փորձուելու, այլ՝ փորձութեան հետ ելքն ալ կը պատրաստէ, որ կարենաք համբերել» (Ա. Կորնթացիս 10.13):

Անկախ այն բանէն, թէ ինչպիսին կը թուայ փորձութիւնը, դուք կրնաք անցնիլ այն յաջողութեամբ եւ փառքով: Հակառակ պարագային, չէիք բախիր այդ փորձութեան. Աստուած ատիկա թոյլ չէր տայ:

Եթէ *սիրէք* ձեր կեանքը, դուք կը յանձնուիք դժուարին պահերուն: Դուք կը դադրիք Անոր հետեւելէ, եւ ձեր կեանքը անպտուղ կ'ըլլայ:

Յայտնութիւն 12.11-ին մէջ գրուած է. «Եւ անոնք յաղթեցին անոր

Գառան արհւնով եւ իրենց վկայութեան խօսքով եւ չսիրեցին իրենց հոգին (կամ կեանքը) մինչեւ մահ»:

Այն մարդիկ, որոնք կը սիրեն իրենց կեանքը, աւելի մտահոգուած են իրենցնով, քան Աստուծոյ կամքով, իսկ Յիսուսը կ'ըսէ. «Ով որ իր անձը կ'ուզէ ապրեցնել, կը կորսնցնէ զանիկա, եւ ով որ իր անձը կորսնցնէ Ինծի համար, կը գտնէ զանիկա» (Մատթէոս 16.25):

Դուք պիտի կարենաք դիմանալ այն ամէնուն, ինչ որ առջեւն է, միայն եթէ կորսնցնէք ձեր կեանքը: Ես կ'ուզեմ յորդորել ձեզ, որ շարունակէք առջեւ երթալ, «մինչեւ որ Հոգին թափի մեր վրայ Երկինքէն: Այդ ժամանակ անապատը կը դառնայ պտղաբեր դաշտ, եւ պտղաբեր դաշտը առատ հունձք կու տայ» (Եսայիա 32.15, NLT):

Անապատը այն վայրը չէ, ուր պէտք է վար դնենք մեր զէնքերը եւ յանձնուինք: Անապատին մէջ մենք պէտք է զօրաւոր, խիզախ եւ համարձակ ըլլանք, որպէսզի կատարենք Տիրոջ կամքը: Անապատը այն վայրն է, ուր մենք պէտք է հաստատակամօրէն հնազանդինք Տիրոջը եւ հակառակինք սատանային:

Եթէ հիմա դուք անապատի մէջ էք, Աստուած բերած է ձեզ այս վայրը, որպէսզի իմանաք, թէ ինչ կայ ձեր սրտին մէջ: Յաճախ այն, ինչ որ ես կը համարէի սատանայի գայթակղութիւնները, իրականութեան մէջ իմ կեանքի ծածուկ բնագաւառներն էին, որոնք պէտք էր հնազանդեցնել Քրիստոսին:

Շարունակելով ձգտիլ երկնային մրցանակին՝ յիշեցէ՛ք այս խօսքերը.

«Շնորհակալութիւն Աստուծոյն, որ ամէն ժամանակ մեզ յաղթող կ'ընէ Քրիստոսին մէջ» (Բ. Կորնթացիս 2.14):

«Ապա ո՞վ կը բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն՝ տառապա՞նք, թէ՞ նեղութիւն, թէ՞ հալածանք, թէ՞ սով, թէ՞ մերկութիւն, թէ՞ վտանգ, թէ՞ սուր... Բայց այս բոլոր բաներուն մէջ առաւել եւս կը յաղթենք Անոր միջոցով, որ մեզ սիրեց» (Հռովմայեցիս 8.35,37):

«Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ տուաւ մեզի յաղթութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով» (Ա. Կորնթացիս 15.57):

Մի՛ դադրիք Աստուծոյն հետեւելէն: Մի՛ յանձնուիք: Պահեցէ՛ք այն տեսիլքը, որ Ան տուած է ձեզի՝ անկախ այն բանէն, թէ ինչպիսին կը թուան հանգամանքները:

Յովսէփի իրավիճակը անյոյս կը թուար, երբ զինք նետեցին փոսը եւ յետագային, արդէն օտար երկրին մէջ զինք բանտարկեցին: Կը թուար՝ անոր կեանքը աւարտած էր: Ի՞նչ ապագայ ան կրնար ունենալ: Յիշեցէ՛ք. «Մարդոց կողմէն անկարելի է, այլ ոչ թէ Աստուծոյ կողմէն, որովհետեւ ամէն բան կարելի է Աստուծոյ կողմէն» (Մարկոս 10.27):

Նոյնը կը վերաբերի ձեզի: Որքան ալ դժուար ըլլայ, յիշեցէ՛ք. «Ամէն բան կարելի է (կամ՝ հնարաւոր է) հաւատացողին» (Մարկոս 9.22):

Պահեցէ՛ք ձեր հայեացքը ձեր առջեւ դրուած ուրախութեան վրայ, որ Անոր փառքը՝ յայտնուած է ձեր մէջ: Դուք զօրութիւն կ'ունենաք, որ յաղթահարէք այն նեղութիւնները, որոնց կը բախիք: Շարունակեցէ՛ք փնտռել Ձինք ձեր ամբողջ սրտով եւ հաւատացէ՛ք, որ Ան կը խօսի ձեզի հետ Իր Հոգիով՝ Իր Խօսքին միջոցով: Եթէ այդպէս վարուիք, դուք կ'ունենաք յաղթանակ անապատին մէջ:

«Եւ Անոր, որ կրնայ անարատ պահել ձեզ
եւ անկեղծ կանգնեցնել
Իր առջեւ՝ անբիծ ցնծութեամբ,
այն միակ իմաստուն Աստուծոյն
եւ մեր Փրկիչին
փառք եւ մեծութիւն,
զօրութիւն եւ իշխանութիւն
ե՛ւ հիմա, ե՛ւ բոլոր դարերուն մէջ:
Ամէ՛ն» (Յուդա 1.24,25):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ` ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք կ'ընթերցեք այս գիրքը «Անապատ» դասընթացքի հետ (ինչ որ հրաշալի գաղափար է), ես կ'առաջարկեմ, որ դիտեք ամեն շաբաթուան համար նախատեսուած ուսումնական տեսանիւթը եւ քննարկեք համապատասխան հարցերը ձեր փոքր խումբին մէջ: «Անապատ» դասընթացքի ուսումնական տեսանիւթերը կը կրկնեն եւ կ'ընդլայնեն այս գիրքի գլխաւոր գաղափարները. այնպէս որ, հրաշալի կ'ըլլայ, եթէ բոլոր մասնակիցները ե՛ւ դիտեն ուսումնական տեսանիւթերը, ե՛ւ կարդան այս գիրքը:

Այս ամէնը ձե՛զի համար է:

Ղաա 1

Կարդացէ՛ք Գլուխ 1-ը

1. Ո՞րն է տարբերութիւնը Աստուծոյ ամենագոյութեան եւ Անոր յայտնուած ներկայութեան միջեւ: Ինչո՞ւ կարելոր է, որ մենք հասկնանք տարբերութիւնը այս երկու իրողութիւններուն միջեւ:
2. Ինչո՞ւ կարելոր է հասկնալը, թէ ինչ փուլի մէջ կը գտնուինք, եւ իմանանք՝ մենք անապատի՞ մէջ ենք, թէ՞ ոչ:
3. Ձեր կարծիքով, ինչո՞ւ սատանան կ'օգտագործէ անապատը, որպէսզի գայթակղեցնէ մեզ՝ դրդելով յօժարական մեղանչել կամ ձգել մեր հաւատքը:
4. Ինչո՞ւ Աստուած թոյլ կու տայ, որ մենք երկարածգենք մեր ժամանակը անապատին մէջ:

Դաս 2

Կարդացէ՛ք Գլուխներ 2-ը եւ 3-ը

1. Անապատը շարք մը նպատակներ ունի: Այս դասին մէջ յիշատակուած եօթ նպատակներէն ամենաշատը ի՞նչ տպաւորուեցաւ ձեր մէջ եւ ինչո՞ւ:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ անապատին մէջ Աստուծոյ հնազանդիլը հոգեւոր աճ կը բերէ:
3. Անապատը սեփական անծի բացայայտման ժամանակն է: Նշեցէ՛ք որոշ բաներ, որոնք սորված էք անապատին մէջ ձեր մասին եւ Աստուծոյ հետ ձեր ընթացքին մասին:
4. Ինչպէ՞ս դուք սորված էք զօրանալ Աստուծոմով այս խոնարհեցնող ժամանակահատուածին մէջ:

Դաս 3

Կարդացէ՛ք Գլուխ 4-ը

1. Խոստման եւ ատոր իրականացման միջեւ մշտապէս ընթացք կայ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ այս ընթացքը կարեւոր է:
2. Դուք հետեւեա՞ծ էք այն աշխատանքին, որ խոստման ընթացքը կը կատարէ ձեր կեանքին մէջ:
3. Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստուած խոստում կու տայ՝ նախքան անցնիք ատոր պատրաստուելու ընթացքը:
4. Ինչո՞ւ կարեւոր է, ունենալ խոստում Աստուծոմէ՛ ձեր կեանքին համար, ոչ թէ պարզապէս ձեր կողմէն կազմուած հնգամեայ ծրագիր:

Դաս 4

Կարդացէ՛ք Գլուխներ 5-ը եւ 6-ը

1. Ի՞նչ կերպով Սաուուդի եւ Դաւիթի կեանքերու համեմատութիւնը կ'օգնէ մեզի հասկնալ Աստուծոյ անապատային մաքրման կարեւորութիւնը:
2. Մաքրուելով՝ ոսկին աւելի դիւրաբեկ կը դառնայ. իր հերթին, Աստուծոյ մաքրման ընթացքը կը դարձնէ մեզ աւելի զգայուն Իրեն հանդէպ: Նկարագրեցէ՛ք, թէ ինչ կը նշանակէ ըլլալ աւելի զգայուն Աստուծոյ հանդէպ:
3. Երբ Աստուծոյ մաքրման ընթացքը կը բացայայտէ ծածուկ մեղք կամ թուլութիւն, ինչպիսի՞ն պէտք է ըլլայ մեր արձագանգը:
4. Ի՞նչ կերպով այս մաքրման ընթացքը կ'օգնէ մեզի աւելի պարզօրէն յայտնել Յիսուսին:

Դաս 5

Կարդացէ՛ք Գլուխ 7-ը

1. Ինչո՞ւ Աստուած կ'ատէ տրտունջը: Ինչպիսի՞ տեղ ունի տրտունջը ձեր կեանքի ներկայ փուլին մէջ:
2. Ո՞րն է տարբերութիւնը Մաղաքիայի գիրքին մէջ տրտնջացող մարդոց եւ Երեմիայի տրտունջին միջեւ: Ինչո՞ւ Աստուած բարկացաւ առաջին խումբին վրայ, սակայն պատասխանեց Երեմիայի բողոքներուն:
3. Դատաստանը կը նշանակէ որոշում, ոչ թէ դատապարտութիւն: Երբ դատաստանը կը սկսի Աստուծոյ տունին մէջ, Ան կ'որոշէ, թէ ով արժանի է ծառայելու Իրեն: Ձեր

կարծիքով, Աստուած ի՞նչը հաշուի կ'առնէ՝ կայացնելով այս որոշումը:

4. Աստուած կը փնտռէ այնպիսի անօթներ, որոնք յարմար են ծառայութեան համար: Ինչպէ՞ս կը նկարագրէք տարբերութիւնը կանչուած եւ ընտրուած ըլլալու միջեւ:

Դաս 6

Կարդացէ՛ք Պիուխ 8-ը

1. Ո՞րն էր ձեր սկզբնական արծագանգը, երբ լսեցիք, որ չարչարանքը պարգեւ է: Ի՞նչ կերպով ձեր պատկերացումը փոխուեցաւ այս դասին վերջաւորութեան:
2. Աստուած թոյլ չի տար, որ դուք փորձուիք աւելի, քան կրնաք դիմանալ: Արդեօ՞ք ատիկա կը խրախուսէ ձեզ, եւ ինչպէ՞ս:
3. Աստուած չի ձգեր, որ ձեր ուժը մնայ միեւնոյն մակարդակին վրայ: Համաձայն այս պնդման՝ ինչպիսի՞ն է Աստուծոյ ծրագիրը ձեզի համար:
4. Գոյութիւն ունին ճնշումներ, որոնց մենք պիտի բախինք ապագային: Եւ ներկայիս Աստուած թոյլ կու տայ մեզի անցնիլ այնպիսի փորձութիւններով, որոնք նման են այդ ճնշումներուն: Աստուած ի՞նչ ըսած է ձեզի ձեր ապագային մասին, եւ արդեօ՞ք ատիկա կ'օգնէ ձեզի իմաստաւորել այն ճնշումները, որոնք կը կրէք՝ հիմա փորձուելով:

Ղաա 7

Կարդացէ՛ք Գլուխ 9-ը

1. Աստուծոյ հետեւիլը միշտ չէ, որ տրամաբանական կը թուայ: Ինչո՞ւ դժուար է վստահիլ Աստուծոյ, երբ Ան կը «խախտէ» մեր կողմէն ընդունուած գործելաոճերը:
2. Ի՞նչ կը զգաք դուք, երբ Աստուած չի գործեր ձեր կողմէն որոշուած ժամանակ: Ի՞նչ ճնշումներ եւ գայթակղութիւններ կը զգաք, երբ կը թուայ՝ Աստուծոյ խոստումը կ'ուշանայ:
3. Կրնա՞ք ըսել, որ համոզուած էք հետեւեալ ճշմարտութեան մէջ. *«Եթէ մարմինը ծնունդ տայ ինչ որ բանի, մարմինն ալ ստիպուած պիտի ըլլայ պահպանել աստիկա»*: Ինչո՞վ աստիկա կը տարբերի այն բաներէն, որոնց Աստուած ծնունդ կու տայ ձեր միջոցով:
4. Ի՞նչը կը վստահեցնէ ձեզի, որ դուք կ'երթաք Աստուծոյ կողմէն որոշուած ճանապարհով:

Ղաա 8

Կարդացէ՛ք Գլուխ 10-ը

1. Անապատը այն վայրերէն է, որոնց մէջ Աստուած կը յայտնէ Ինքզինքը: Այդ պարագային, ինչո՞ւ Աստուած նաեւ հեռու կը թուայ, երբ մենք անապատի մէջ ենք:
2. Ի՞նչ կը նշանակէ առաջին հերթին ձգտիլ Աստուծոյ, ոչ թէ Անոր օրհնութիւններուն:
3. Ինչո՞ւ վտանգաւոր է, երբ ձեր խոստումը կամ կոչումը կը դառնայ աւելի կարեւոր ձեզի համար, քան Ինքը՝ Աստուած:

4. Երբ դուք կը տեսնէք, թէ ինչպէս Աստուած կը յայտնէ Ինքզինքը Աստուածաշունչի հերոսներուն, որքանո՞վ ատիկա կը փոխէ ձեր սպասումները ձեր անապատային ընթացքէն:

Դաս 9

Կարդացէ՛ք Պիուխ 11-ը

1. Ինչո՞ւ կարելոր է, որ զգուշանանք, թէ մենք ուրկէ մխիթարութիւն կը ստանանք, յատկապէս՝ հոգեւոր չորութեան ժամանակ:
2. Ինչպէ՞ս կ'ամրանան մեր հոգեւոր արմատները, երբ աւելի կը խորասուզուինք աղօթքի եւ Սուրբ Գիրքի մէջ, յատկապէս այն ժամանակ, երբ չենք ցանկար ընել ատիկա:
3. Արդե՞ծք խրախուսական է գիտնալ, որ մեծագոյն յարձակումը ձեր հունձքին վրայ կու գայ անմիջապէս ատոր յայտնուելէն առաջ:
4. Ինչո՞ւ Աստուծոյ հաւատարմութեան շուրջ մտորելը կը վերափոխէ ձեր ժամանակը անապատին մէջ:

Դաս 10

Կարդացէ՛ք Պիուխ 12-ը

1. Ի՞նչ կերպով անապատը պատրաստած է ձեզ՝ ձեր կեանքի յաջորդ փուլը անցնելու համար:
2. Ինչո՞ւ փոփոխութիւնը դժուարութեամբ կը տրուի: Ո՞րն է յաճախ ձեր ամենամեծ խոչընդոտը՝ փոփոխութեան յարմարելու համար:

3. Ի՞նչը ամենաշատ տպաւորեց ձեզ գինիի տիկերը թարմացնելու ընթացքին մէջ: Ինչո՞ւ յատկապէս ատիկա գրաւեց ձեր ուշադրութիւնը:
4. Նորը վերցնելու համար մենք պէտք է ձգենք հինը: Ի՞նչ պէտք է ձգէք դուք, որպէսզի կարենաք ընդունիլ նորը:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Փրկութիւն՝ բոլորին համար

«Եթէ բերանովդ Յիսուսին Տէր դաւանիս եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած յարութիւն տուաւ Անոր մեռելներէն, կ'ապրիս: Քանի որ, սրտով կը հաւատանք արդարանալու համար, եւ բերանով կը դաւանինք փրկուելու համար»:

– Հռովմայեցիս 10.9,10

Աստուած կը ցանկայ, որ դուք լիարժէք կեանք ունենաք: Ան ի սրտէ մտահոգուած է ձեզմով եւ կը ցանկայ, որ դուք կատարէք Իր ծրագիրը ձեր կեանքին համար: Այնուամենայնիւ, կայ միայն մէկ ճանապարհ դէպի ձեր նախասահմանութիւնը. դուք պէտք է փրկութիւն ստանաք Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսին միջոցով:

Յիսուսի մահուան եւ յարութեան շնորհիւ Աստուած ճանապարհ պատրաստեց, որպէսզի դուք մուտք գործէք Իր Թագաւորութիւնը՝ որպէս Իր սիրելի որդի կամ դուստր: Յիսուսի զոհը խաչին վրայ ձրիաբար պարգեւած է ձեզի յաւիտենական եւ առատ կեանք: Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է ձեզի. դուք չէք կրնար որեւէ բան ընել, որ վաստկիք փրկութիւնը կամ արժանանաք ատոր:

Այս սուղ պարգեւը ստանալու համար, առաջին հերթին պէտք է խոստովանիք ձեր Արարիչէն անկախ ապրելու մեղքը, քանի որ ասիկա ձեր գործած բոլոր մեղքերու արմատն է: Ապաշխարութիւնը փրկութիւն ստանալու խիստ կարեւոր պայման է: Պետրոսը յստակ նշեց ասիկա Գործք առաքելոց գիրքին մէջ այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկութիւն ստացաւ. «Ուրեմն, զոջացէ՛ք եւ ե՛տ դարձէ՛ք, որ ձեր մեղքերը ջնջուին» (Գործք 3.19): Աստուածաշունչը կը յայտնէ, որ մեզմէ ամէն մէկը ծնած է որպէս մեղքի ստրուկ: Այս ստրկութիւնը սկիզբ առած է Ադամի մեղքէն, որ առաջինը զիտակցաբար անհնազանդ եղաւ Աստու-

ծոյ: Ապաշխարելով՝ դուք որոշում կը կայացնէք այլեւս չհնազանդիլ ձեր անձին եւ սատանային, որ սուտի հայրն է, այլ հնազանդիլ ձեր նոր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, Որ տուած է Իր կեանքը ձեզի համար:

Դուք պէտք է յանձնէք Յիսուսին ձեր կեանքի իշխանութիւնը: Յիսուսը որպէս Տէր ընդունիլը կը նշանակէ, որ դուք թոյլ կու տաք Անոր ղեկավարել ձեր ամբողջ կեանքը (հոգին, անձը եւ մարմինը) եւ այն ամէնը, ինչ որ կը պատկանի ձեզի. Ան բացարձակ իշխանութիւն կը ստանայ ձեր կեանքին մէջ: Այն պահուն, երբ ընէք ասիկա, Աստուած կ'ազատէ ձեզ խաւարէն եւ կը տեղափոխէ Իր Թագաւորութեան լոյսի եւ փառքի մէջ: Պարզ ըսելու համար՝ դուք անցում կը կատարէք խաւարէն դէպի լոյսը եւ կը դառնաք Անոր գաւազն:

Եթէ կ'ուզէք փրկութիւն ստանալ Յիսուսին միջոցով, կրկնեցէ՛ք այս աղօթքը.

«Երկնային Աստուած, ես կը գիտակցիմ, որ մեղաւոր եմ եւ ինկած եմ Քու արդարութեան չափանիշէն: Ես արժանի եմ յաւիտեան դատապարտուելու իմ մեղքերուն համար: Շնորհակալութիւն, որ չես ձգեր զիս այս վիճակին մէջ, քանի որ ես կը հաւատամ, որ Դուն ուղարկեցիր Յիսուս Քրիստոսը՝ Քու միածին Որդին, Որ ծնաւ կոյս Մարիամէն, որպէսզի մահանար ինձի համար եւ իմ դատաւճիռը կրէր խաչին վրայ: Ես կը հաւատամ, որ երրորդ օրը Ան յարութիւն առաւ եւ այժմ նստած է Քու աջ կողմը՝ որպէս իմ Տէր եւ Փրկիչ: Այսօր ես կ'ապաշխարեմ Քեզմէ անկախ ըլլալէն եւ յաւիտեան կը յանձնեմ իմ կեանքը Յիսուսի իշխանութեան:

Յիսուս, ես կը դաւանիմ, որ Դուն իմ Տէրը ու Փրկիչն ես: Եկո՛ւր իմ կեանքին մէջ Քու Հոգիով եւ դարձո՛ւր ինձի Աստուծոյ գաւազն: Ես կ'ուրանամ խաւարի գործերը, որոնց ժամանակ մը կը յարէի, եւ այսօրունէ այլեւս չեմ ապրիր ինձի համար: Քու շնորհքով ես կ'ապրիմ Քեզի համար, քանի որ Դուն գոհած ես կեանքդ ինձի համար, որ ես յաւիտեան ապրիմ:

Շնորհակալութիւն, Տէ՛ր: Այժմ իմ կեանքը լիովին Քու ձեռքերուն մէջ է, եւ համաձայն Քու Խօսքին՝ ես երբեք չեմ ամչնար, Յիսուսի անունով: Ամէ՛ն»:

Բարի գալու՛ստ Աստուծոյ ընտանիք: Ես կը խրախուսեմ ձեզ, որ պատմէք այս հրաշալի լուրը ոեւէ հաւատացեալի: Նոյնպէս կարելոր է, որ միանաք որեւէ տեղական եկեղեցիի, որ կը հաւատայ Աստուածաշունչին, եւ հաղորդակցեցէ՛ք այն մարդոց հետ, որոնք կը խրախուսեն ձեզ հաւատքի մէջ: Կրնաք կապ հաստատել մեր ծառայութեան հետ (այցելեցէ՛ք MessengerInternational.org), եւ մենք կ'օգնենք ձեզի եկեղեցի գտնել հոն, ուր կ'ապրիք:

Դուք հազիւ նոր ոտք դրիք ամենազարմանալի ճանապարհին: Կը Մաղթեմ ձեզի առատ յայտնութիւններ, շնորհք եւ ընկերութիւն Աստուծոյ հետ ձեր կեանքին մէջ:



«Մեսինճըր Ինթերնեշընլ» ծառայութեան նպատակն է՝ օգնել անհատներուն, ընտանիքներուն, եկեղեցիներուն եւ ազգերուն գիտակցիլ եւ վերապրիլ Աստուծոյ Խօսքի վերափոխող զօրութիւնը: Շնորհիւ այս գիտակցման՝ կը փոխուին թէ՛ մարդիկ, թէ՛ ամբողջ բնակավայրեր, եւ հասարակութիւնը գործուն կերպով կը պայքարի այս աշխարհը կեղեքող անարդարութեան դէմ:



CloudLibrary.org կայքը արեւանց հարթակ է, որ թոյլ կու տայ ամբողջ աշխարհի տարածքին գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն ստանալ անվճար թուայնացած ուսումնական նիւթեր՝ իրենց լեզուներով:

Այցելեցէ՛ք CloudLibrary.org կայքը եւ օգտուեցէ՛ք ճոն եւ Լիզա Պիվիրներու շարք մը այլ նիւթերէն աւելի քան 100 լեզուներով:


Ելեկտրոնային գիրքեր, օտիոյ եւ վիտիոյ ուսուցումներ, օտիոյ գիրքեր, Աստուածաշունչեր...

Կը ցանկաք աւելի՞ն:
Տեսաճրեցէ՛ք պատկերակը. Cloud Library.org



ՅԱԿԻՏԵՆՈՒԹԵԱՄԲ ՇԱՐԺՈՂՆԵՐԸ

Կեանք, որ նշանակություն ունի այսօր ԵՆ յաւիտեան



Կեանքը այս երկրի վրայ՝ ընդամենը գոյորջի է, սակայն շատերը այնպես կ'ապրին, ըսես անկէ յետոյ ոչինչ տեղի պիտի ունենայ: Բայց այն, թէ ինչպէս կ'ապրինք այս կեանքը, կ'որոշէ, թէ ինչպէս պիտի անցընենք յաւիտենությունը: Սուրբ Գիրքը կը յայտնէ մեզի, որ հաւատացեալներուն համար կան վարձատրութեան տարբեր աստիճաններ. ոմանց ձեռքբերումները ամբողջովին կ'այրուին դատաստանի ժամանակ, իսկ միւսներուն կը շնորհուի Զրիստոսի հետ թագաւորելու արտօնութիւնը:

Ճոն Պիվիրը, համաձայն Բ. Կորնթացիս 5.9-ի սկզբունքներու, կը յիշեցնէ, որ բոլոր հաւատացեալները պիտի կանգնին Զրիստոսի առջեւ, որպէսզի ընդունին այն, ինչին արժանացած են կեանքի ընթացքին: Մեզմէ շատերը ցնցուած կ'ըլլան՝ գիտնալով, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսուած է այնպիսի բաներու վրայ, որոնք պիտի չարժանանան յաւիտենական վարձատրութեան:

Այդ պարագային, ինչպէ՞ս կրնանք արդիւնաւետ կեանք ունենայ: «Յաւիտենութեամբ շարժողները» գիրքը կը սորվեցնէ բացայայտել ձեր կոչումը եւ բազմապատկել այն, ինչ որ Աստուած տուած է ձեզի: Նայելով կեանքին յաւիտենութեան տեսանկիւնէն՝ դուք զօրութիւն կը ստանաք, որպէսզի գործէք մնայուն նպատակներու համար:

Դուք կրնաք ներբեռնել այս գիրքը, ինչպէս նաեւ դիտել եւ ներբեռնել ճոն Եւ Լիզա Պիվիրներու բազմաթիւ այլ ուսմունքներ՝ այցելելով «Մեսինճըր Ինթերնեշնլ» ծառայութեան անվճար համացանցային կայքը.



CloudLibrary.org

ԴՈՒՔ ՁԵՉ ՄՈՌՑՈՒՄԻ ԿՐ ՉԳԱՔ ՁԵՐ ԿԵԱՆՔԻ ԴԺՈՒՄՈՒՆԻՆ ՓՈՒԼԻՆ ՄԵՋ՝ ՄՏԱԾԵԼՈՎ. «ԱՍՏՈՒՄԻՃ, Ո՞ՒՐ ԵՍ»

Թերեւս անցեալին Աստուած կը խօսէր ձեզի հետ, բայց այժմ Ան կը լռէ: Թերեւս անցեալին դուք առաջ կը շարժէիք հաւատքի մէջ, բայց այժմ չէք գտներ Աստուծոյ ներկայութիւնը: Բարի գալուստ անապատ՝ այն վայրը, որ Աստուծոյ խոստում ստանալու եւ ատիկա իրականացնելու միջեւ է:

Այնուամենայնիւ, բարի լուր մը կայ. անապատը պարզապէս ամայի եւ աննպատակ վայր չէ: Աստուած կ'օգտագործէ անապատը, որպէսզի պատրաստէ եւ սպառազինէ ձեզ ձեր կոչման համար, այն պարագային, երբ դուք ճիշդ անցնիք այն: Հակառակ ընդունուած կարծիքին, դուք չէք անցնիր ձեր կեանքի այս փուլը՝ պարզապէս Աստուծոյ սպասելով: Դուք պետք է կատարէք ձեր բաժին աշխատանքը, որպէսզի անցնիք այն, եւ ձեր աշխատանքը շատ մեծ է: Երբ դուք չէք ցանկար ժամանակ վատնել՝ շարունակ նոյն տեղը մնալով, կարելոր է գիտնալ, թէ ինչ է անապատը:

Այս բացայայտումներով լեցուն գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պիվիրը կ'ուսուցանէ ձեզի՝ օգտագործելով կարելոր Աստուածաշնչեան յայտնութիւններ եւ խորիմաստ պատմութիւններ, որոնք պիտի օգնեն ձեզի անցնելու կեանքի ամայի եւ դժուար փուլերը եւ ստանալու այն, ինչ որ Աստուած պատրաստած է ձեզի համար:



ՃՈՆ ՊԻՎԻՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ եւ հանրաճանաչ հեղինակ է, որ համարձակ եւ առանց փոխզիջման կը քարոզէ Աստուծոյ խօսքը: Ծնընդ եւ կինը՝ Լիզան, հիմնադրած են «Սեսինճըր Ինթերնեշնլ» ծառայութիւնը, որուն նպատակն է՝ պատրաստել քրիստոսի հետեւորդներ, որոնք փոխզիջման չեն երթար եւ կը վերափոխեն այս աշխարհը: Երբ ան տանն է՝ Զոլորատոյի մէջ, ան սեղանի քարտային խաղեր կը խաղայ իր չորս որդիներուն հետ կամ կը փորձէ համոզել Լիզան, որ կոլֆ խաղայ իրեն հետ:



Անվճար ներբեռումներու եւ տեսանկյուններու դիտելու համար այցելեցէ՛ք CloudLibrary.org կայքը:



Այս գիրքը նուէր է հեղինակէն եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԵ

Պրիւնտըրտիւն Եֆեզոս
ԿՐ ՓՈՒԼԻՆ ԸՄՈՒՄ
Տեսանկյուններ

